Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Հրատարակության է պատրաստուած
«Գանձասար» աստուածաբանական
կենտրոնի կողմից

ՎԷՄ
ԵՐԵՒԱՆ 2000

ՊՏՀ 23/28
ԳՍՊ 86.37
Ա 490

Ա 490 *Աղօթագիրք.– Եր.:– ՎԷՄ, 2000.– 507 էջ*

Աղօթքներ, հոգեւոր կեանքի խրատներ, Ս. Գրքի մեկնութիւններ, Եկեղեցու սրբազան խորհուրդների բացատրութիւններ, քրիստոնէական կենցաղավարութեան կանոններ եւն:

Նրանց համար, ովքեր ցանկանում են ծանօթանալ աղօթքի գիտութեանը եւ անձնական փորձառութեամբ հմտանալ աստուածպաշտութեան մէջ:

Ա $\frac{0403000000}{0146\ (01)\ 2000}$ 2000 թ. ԳՍՊ 86.37

ISBN 99930-853-0-8

© ՎԷՄ, 2000 թ.

Նուիրւում է մեր Տէր Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ծննդեան 2000-ամեակին:

Տէր, ուղղեա՛ զգնացս մեր
ի ճանապարհս խաղաղութեան.
Տէր, ուղղեա՛ եւ առաջնորդեա՛ հոգւոց մերոց
եւ ամենայն հաւատացելոց՝
գնալ յարդարութեան ճանապարհս
եւ ի կեանս յաւիտենից. ամէն:

Մեկենասութեամբ՝

Տ. ՎՐԹԱՆԷՍ
աւագ քահանայ
ԳԱԼԱՅՃԵՄԱՆԻ
ԵՒ
երեցկին
ՄՆԱՀԻՏ
ԳԱԼԱՅՃԵՄԱՆԻ

ԱՄԷՆՕՐԵԱՅ
ԱՂՕԹՔՆԵՐ

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր. եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն, զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

ՄԱՂԹԱՆՔ

Լուսով Քո, Քրիստո՛ս, ամենեքեան լուսաւորեցաք, եւ ի սուրբ Խաչ Քո, Փրկի՛չ, հաւատացեալքս ապաւինեցաք: Լո՛ւր մեզ, Աստուա՛ծ Փրկիչ մեր, տո՛ւր մեզ զխաղաղութիւն Քո եւ արա՛ առ մեզ զողորմութիւն Քո, մարդասէ՛ր Տէր:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ

Օրհնեալ ես Դու, Տէ՛ր Աստուած հարցն մերոց, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Առաւօտեան ժամ

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը, Քո արքայութիւնը թող գայ, Քո կամքը թող լինի երկրի վրայ, ինչպէս որ երկնքում է: Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ այսօր. եւ թո՛ղ մեզ մեր պարտքերը, ինչպէս եւ մենք ենք թողնում մեր պարտապաններին: Եւ մի՛ տանիր մեզ փորձութեան, այլ փրկի՛ր մեզ չարից, քանզի Քոնն է արքայութիւնը եւ զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս. ամէն:

ՄԱՂԹԱՆՔ

Քո լոյսով լուսաւորուեցինք բոլորս, Քրիստո՛ս, եւ Քո սուրբ Խաչին ապաւինեցինք հաւատացեալներս, Փրկի՛չ: Լսի՛ր մեզ, Աստուա՛ծ Փրկիչ մեր, տո՛ւր մեզ Քո խաղաղութիւնը եւ ողորմի՛ր մեզ, մարդասէ՛ր Տէր:

ԵՐԵՔ ՄԱՆԿԱՆՑ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Օրհնեալ ես Դու, Տէ՛ր Աստուած մեր հայրերի, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց Քոց, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան Քոյ, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան Քոյ, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես, որ նստիս ի քրովբէս եւ հայիս յանդունդս, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես ի վերայ հաստատութեան երկնից, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ՃԺԸ

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի Քո, Տէ՛ր, ըստ բանի Քում իմաստո՛ւն արա վիս:

Մտցեն աղօթք իմ առաջի Քո, Տէ՛ր, եւ բանիւ Քո փրկեա՛ զիս:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս Քո, յորժամ ուսուցես ինձ զարդարութիւնս Քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս Քո, զի ամենայն պատուիրանք Քո արդարութեամբ են:

Եւ օրհնեալ է Քո սուրբ փառքի անունը, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես Քո սուրբ փառքի տաճարում, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես Քո արքայութեան աթոռի վրայ, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես, որ նստում ես քերովբէների վրայ եւ նայում անդունդներին, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես երկնքի հաստատութեան վրայ, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ՃԺԸ

Թող Քեզ մերձենան իմ խնդրուածքները, Տէ՛ր, ըստ Քո խօսքի իմաստո՛ւն դարձրու ինձ:

Թող Քո առջեւ մտնեն իմ աղօթքները, Տէ՛ր, եւ Քո խօսքով փրկի՛ր ինձ:

Թող իմ շուրթերը երգեն Քո օրհնութիւնը, երբ սովորեցնես ինձ Քո արդարութիւնը:

Թող իմ լեզուն խօսի Քո խօսքերը, քանզի Քո բոլոր պատուիրաններն արդարութեամբ են:

Եղիցի ձեռն Քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս Քո ընտրեցի:

Ցանկացայ փրկութեան Քում, Տէ՛ր, եւ օրէնք Քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զՔեզ, եւ իրաւունք Քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ, խնդրեա՛ զծառայս Քո, զի զպատուիրանս Քո ես ոչ մոռացայ:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ա

Գոհանամք զՔէն, Տէ՛ր Աստուած մեր, որ երեւելի լուսով Քով զուարճացուցեր զամենայն արարածս Քո. իսկ իմանալի լուսով պատուիրանաց Քոց զամենեսեան լուսաւորեցեր զհաւատացեալս ի Քեզ: Զօրացո՛ եւ զմեզ, Տէ՛ր, ի պահպանութիւն պատուիրանաց Քոց ի տուընջեանս յայսմիկ եւ յամենայն ժամանակի: Որպէս զի լուսաւորեալ մտօք միշտ զհաճոյս Քո արասցուք եւ հանդերձեալ բարեացդ հասցուք ընդ ամենայն սուրբս Քո շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառնդ մերոյ եւ Փրկչիդ

Թող Քո ձեռքը փրկի ինձ, քանզի Քո պատուիրաններն ընտրեցի:

Քո փրկութիւնը ցանկացայ, Տէ՛ր, եւ Քո օրէնքներն իմ խօսքերն էին:

Թող ապրի իմ անձը, օրհնի Քեզ, եւ Քո օրէնքները կօգնեն ինձ:

Մոլորուեցի ես կորսուած ոչխարի պէս, փնտրի՛ր Քո ծառային, քանզի չմոռացայ ես Քո պատուիրանները:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ա

Գոհանում ենք Քեզանից, Տէ՛ր Աստուած մեր, որ Քո երեւելի լոյսով ուրախացրեցիր Քո բոլոր արարածներին. իսկ Քո պատուիրանների իմանալի լոյսով լուսաւորեցիր բոլոր նրանց, ովքեր հաւատում են Քեզ: Զօրացրո՛ւ եւ մեզ, Տէ՛ր, պահելու Քո պատուիրաններն այսօր եւ ամէն ժամ: Որպէսզի լուսաւորուած մտքով միշտ Քո կամքը կատարենք եւ գալիք բարիքներին հասնենք Քո բոլոր սուրբերի հետ՝ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհով եւ մարդասիրութեամբ, որին վայել է փառք, իշ-

Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Բ

Խաղաղութի՛ւն մեր եւ կեա՛նք, որ ի Հօրէ առաքեցար, Միածին Որդի՛ Աստուծոյ, Տէ՛ր մեր եւ Փրկի՛չ Յիսուս Քրիստոս, տո՛ւր մեզ զխաղաղութիւն Քո, զոր շնորհեցեր սրբոց Քոց առաքելոց փչմամբ Քո ի նոսա զկենդանացուցիչ եւ զամենազօր Հոգիդ Քո Սուրբ: Որպէս զի մեք խաղաղացեալք յամենայն աշխարհական սահեցմանց՝ լիցուք տաճար եւ բնակարան աստուածային շնորհացդ եւ գոհանալով փառաւորեսցուք զՔեզ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյդ, Քրիստո՛ս Աստուած մեր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Գ

Աստուա՛ծ մշտնջենաւոր, Աստուա՛ծ յաւիտենական, որ ի ստորին աշխարհս լոյս ծագեցար եւ լուսաւորեցեր զմեզ ի խաւարային մեղաց մերոց. որ վասն մեր ի չափաւորութիւն եկիր, անչա՛փդ Աստուած, եւ հեղեալ ծաւալութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Աղօթք Բ

Խաղաղութի՛ւն մեր եւ կեա՛նք, որ առաքուեցիր Հայր Աստծուց, Միածին Որդի՛ Աստուծոյ, Տէ՛ր մեր եւ Փրկի՛չ Յիսուս Քրիստոս, տո՛ւր մեզ Քո խաղաղութիւնը, որ շնորհեցիր Քո սուրբ առաքեալներին՝ փչելով նրանց մէջ Քո կենդանացուցիչ եւ ամենազօր Սուրբ Հոգին: Որպէսզի եւ մենք, խաղաղուելով ամէն տեսակ աշխարհիկ փորձութիւններից, աստուածային շնորհներիդ տաճար եւ բնակարան դառնանք եւ գոհանալով փառաւորենք Քեզ, Քրիստո՛ս Աստուած մեր, Հօր եւ Սուրբ Հոգուս հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Աղօթք Գ

Աստուա՛ծ մշտնջենաւոր, Աստուա՛ծ յաւիտենական, որ այս ընկած աշխարհում լոյս ծագեցիր եւ լուսաւորեցիր մեզ մեր խաւարային մեղքերից. որ մեզ համար չափաւորութեան մէջ մտար, անչա՛փդ Աստուած, եւ Սուրբ Հոգուդ

ցեր զշնորհս Հոգւոյդ Սրբոյ յարարածս Քո. այժմ եւ յաւիտեանս ժամանակաց բարեբանեալ ես, ամենամե՛ծդ Աստուած, ընդ Հօր եւ Ամենասուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Դ

Սուրբ ես, Տէ՛ր, եւ ի սուրբս հանգուցեալ. եւ մեք սուրբ վկայիւքս աղաչեմք զՔեզ, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ աղաչանօք ամենայն սրբոց Քոց մի՛ մերժեր զմեզ յողորմութենէ Քումմէ, այլ կեցո՛ զմեզ աղօթիւք սոցին, զի Դու ես բազումողորմ Աստուած, եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ե

Զառաւօտու աղօթս եւ զբանաւոր պաշտօնս ընկալ, ամենակա՛լ, ամենամե՛ծդ Աստուած, ի Քո անապական եւ յերկնային խորանդ: Ծագեա՛ առ մեզ զարդարութեան եւ զիմաստութեան զլոյս Քո, արա՛ զմեզ որդիս լուսոյ եւ որդիս տուրնջեան, որպէս զի ի գալ աւուրս եր-

շնորհները հեղելով ծաւալեցիր Քո արարածների մէջ. այժմ եւ ժամանակների յաւիտեաններում բարեբանուած ես, ամենամեծդ Աստուած, Հօր եւ Ամենասուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Դ

Սուրբ ես, Տէ՛ր, եւ սուրբերի մէջ բնակուող. եւ մենք սուրբ վկաներով աղաչում ենք Քեզ, սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ եւ Քո բոլոր սուրբերի աղաչանքներով մի՛ մերժիր մեզ Քո ողորմութիւնից, այլ սրանց աղօթքներով փրկի՛ր մեզ, քանզի բազումողորմ Աստուած ես Դու, եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ե

Ամենակալ, ամենամեծ Աստուած, ընդունի՛ր առաւօտեան այս աղօթքները եւ բանաւոր պաշտամունքը Քո անապական եւ երկնային խորանների մէջ: Ծագեցրո՛ւ մեզ վրայ Քո արդարութեան եւ իմաստութեան լոյսը, դարձրո՛ւ մեզ լոյսի եւ ցերեկուայ որդիներ, որպէս-

կիւղածութեամբ վարեսցուք զկեանս մեր եւ առանց դայթակղութեան կատարեսցուք: Զի Դու ես օգնական եւ Փրկիչ մեր, եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ճաշու ժամ (Միջօրէ)

Հայր մեր, որ յերկինս ես...:

ՄԱՂԹԱՆՔ

Յամենայն ժամու աղաչանք իմ այս են. ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս, Տէ՛ր, եւ յօտարէն պահեա՛ զծառայս Քո, մարդասէր Տէ՛ր:

ՍԱՂՄՈՍ Ծ

Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմութեան Քում, ըստ բազում գթութեան Քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ:

Առաւե՛լ լուա զիս յանօրէնութենէ իմմէ եւ ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, եւ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

զի այսօր երկիւղածութեամբ վարենք մեր կեանքը եւ առանց դայթակղութեան աւարտենք: Քանզի Դու ես մեր օգնականը եւ Փրկիչը, եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ճաշու ժամ (Կէսօր)

Հայր մեր, որ երկնքում ես...:

ՄԱՂԹԱՆՔ

Ամենայն ժամ այս է իմ աղաչանքը. մաքրի՛ր ինձ իմ մեղքերից, Տէ՛ր, եւ պահպանի՛ր քո ծառաներին փորձութիւնից, մարդասէ՛ր Տէր:

ՍԱՂՄՈՍ Ծ

Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, ըստ Քո մեծ ողորմութեան, ըստ Քո առատ գթութեան քաւի՛ր իմ անօրէնութիւնները:

Առաւե՛լ լուա ինձ իմ անօրէնութիւններից եւ մաքրի՛ր ինձ իմ մեղքերից:

Իմ անօրէնութիւնները ես ինքս գիտեմ, եւ իմ մեղքերն իմ առջեւ են ամէն ժամ:

Քեզ միայն մեղայ, Տէ՛ր, եւ չար առաջի Քո արարի: Որպէս արդար եղիցես ի բանս Քո եւ յաղթող՝ ի դատել Քեզ:

Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու, Տէ՛ր, զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ Քով յայտնեցեր ինձ:

Ցօղեա՛ յիս մշտկաւ, եւ սուրբ եղէց, լուա՛, եւ քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի՛ արա ինձ զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծացեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո՛ զերեսս Քո ի մեղաց իմոց եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն:

Սի՛րտ սուրբ հաստեա յիս, Աստուա՛ծ, եւ հոգի՛ ուղիղ նորոգեա ի փորի իմում:

Մի՛ ընկենուր զիս, Տէ՛ր, յերեսաց Քոց, եւ զՀոգի Սուրբ Քո մի՛ հաներ յինէն:

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան Քոյ եւ Հոգւով զետութեան Քոյ հաստատեա՛ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս Քո, եւ ամբարիշտք առ Քեզ դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ, Աստուա՛ծ, Աստուա՛ծ փրկութեան իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան Քում:

Քո դէմ միայն մեղանչեցի, Տէ՛ր, եւ Քո առջեւ չարիք գործեցի: Այնպէս որ արդար կլինես Քո խօսքերում եւ յաղթող՝ դատելիս:

Անօրէնութեամբ յղացաւ եւ մեղքի մէջ ծնեց ինձ իմ մայրը:

Դու, Տէ՛ր, ճշմարտութիւնը սիրեցիր, անյայտներն ու ծածկուածները Քո իմաստութեամբ յայտնեցիր ինձ:

Ցօղի՛ր ինձ մշտիկով, եւ մաքուր կլինեմ, լուա՛, եւ ձիւնից էլ սպիտակ կլինեմ:

Լսե՛լ տուր ինձ ցնծութիւն եւ ուրախութիւն, եւ կցնծան ոսկորներն իմ տառապած:

Դարձրո՛ւ երեսդ իմ մեղքերից եւ քաւի՛ր իմ բոլոր անօրէնութիւնները:

Սուրբ սի՛րտ հաստատիր իմ մէջ, Աստուա՛ծ, եւ ուղիղ հոգի՛ նորոգիր իմ ներսում:

Մի՛ զրկիր ինձ, Տէ՛ր, Քո երեսից, եւ մի՛ հանիր ինձանից Քո Սուրբ Հոգին:

Տո՛ւր ինձ Քո փրկութեան ցնծութիւնը եւ Քո տիրական Հոգով զօրացրո՛ւ ինձ:

Անօրէններին կսովորեցնեմ Քո ճանապարհը, եւ ամբարիշտները դէպի Քեզ կդառնան:

Փրկի՛ր ինձ արիւնահեղութիւնից, Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ փրկութեան, կցնծայ իմ լեզուն Քո արդարութեամբ:

Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Քո:

Թէ կամեցեալ էիր, պատարագս մատուցանէաք, բայց Դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ:

Բարի՛ արա, Տէ՛ր, կամօք Քովք Սիոնի, եւ շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Ցայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան Քո զուարակս:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ա

Առաջնորդեա՛ մեզ, Տէ՛ր Աստուած մեր, եւ ուսո՛ մեզ գնալ ի ճանապարհս Քո արդարութեամբ, պահեա՛ ի խաղաղութեան զկեանս մեր եւ զգնացս ի հաճոյս Քո: Ժամանեցո՛ զհոգեւոր եւ զմարմնաւոր ընթացս ծառայից Քոց անարատ ճանապարհաւդ յաւիտենական ի կեանսդ շնորհօք Միածնի Քոյ՝ Տեառն մերոյ

Տէ՛ր, եթէ իմ շուրթերը բանաս, իմ բերանը կերգի Քո օրհնութիւնները:

Թէ կամենայիր, զոհեր կմատուցէինք, բայց ողջակէզներն իսկ Քեզ հաճելի չեղան:

Զոհն Աստծուն խոնարհ հոգին է, սուրբ սիրտն ու խոնարհ հոգին Աստուած չի արհամարհում:

Բարի՛ արա, Տէ՛ր, Քո կամքով Սիոնին, եւ թող շինուեն Երուսաղէմի պարիսպները:

Այնժամ կհաճանես արդարութեան զոհերը, երբ զուարակները որպէս ուխտի պատարագներ բարձրացնեն Քո սեղանին:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ա

Առաջնորդի՛ր մեզ, Տէ՛ր Աստուած մեր, եւ սովորեցրո՛ւ մեզ արդարութեամբ գնալ Քո ճանապարհներով, պահի՛ր մեր կեանքը խաղաղութեան մէջ եւ մեր ընթացքը՝ Քո կամքի համաձայն: Քո ծառաների հոգեւոր եւ մարմնաւոր կեանքի ընթացքը Քո անարատ ճանապարհով հասցրու յաւիտենական կեանքի Քո Միածնի՝

եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ եղեւ մեզ առաջնորդ կենաց եւ յոյս փրկութեան: Ընդ որում օրհնեա՛լ ես, Հա՛յր ամենակալ, հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւովդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Բ

Խաղաղութեամբ Քով, Հոգի՛դ Սուրբ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ ի վերո՛ւ, քան զամենայն միտս եւ զխորհուրդս, մխիթարեա՛ զանձինս ծառայից Քոց՝ ընդունելով զաղաչանս մեր. անցո՛ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ Քով:

Ներեա՛ եւ լո՛ւր մեզ, քաւեա՛ եւ թո՛ղ զմեղս մեր, արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Որդւոյն Միածնի այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Գ

Զգեցո՛ մեզ, Տէ՛ր Աստուած մեր, զէն արդարութեան՝ զօրաւոր եւ յաղթող լինիլ ընդդէմ սատանայական պատերազմաց. եւ զամենայն հրեղէն նետս նորա շիջուցանելով՝ անկասկած

մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհնեբով, որ մեզ համար եղաւ կեանքի առաջնորդ եւ փրկութեան յոյս: Որի հետ օրհնեալ ես, Հա՛յր ամենակալ, Քո կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգով այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Բ

Խաղաղութեամբ Քո, Հոգի՛ Սուրբ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ վերո՛ւ է բոլոր մտքերից եւ խորհուրդներից, մխիթարի՛ր Քո ծառաների անձերը՝ ընդունելով մեր աղաչանքները. Քո բարերարութեամբ հեռացրո՛ւ մեզանից մեր յանցանքների պատուհասի ցասումը:

Ների՛ր եւ լսի՛ր մեզ, քաւի՛ր եւ ների՛ր մեր մեղքերը, արժանաւորի՛ր գոհութեամբ փառաւորելու Քեզ Հօր եւ Միածին Որդու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Գ

Տէ՛ր Աստուած մեր, զգեստաւորի՛ր մեզ արդարութեան զէնքերով՝ զօրաւոր եւ յաղթող լինելու սատանայական պատերազմների դէմ. եւ նրա բոլոր հրեղէն նետերը յանգցնելով՝ ապա-

լեցուք յիրաց խաւարային գնացից, ի գայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր: Եւ զգաստացեալք վայելչական տուընջեամբս՝ առաքինութեամբ կացցուք ի փրկութիւն անձանց մերոց՝ ի պատիւ եւ ի փառս Սրբոյ Երրորդութեանդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Դ

Երկնաւոր խաղաղութեամբ Քով պարապեալ պահեա՛ զանձինս մեր, Տէ՛ր զօրութեանց: Վասն զի Դու ես Աստուած խաղաղութեան, եւ բաց ի Քէն զայլ ոք ոչ գիտեմք եւ զանուն Քո ամենազօր կարդամք յօգնականութիւն անձանց մերոց: Նայեա՛ յերկրպագութիւնս մեր եւ ուսո՛ մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան: Եւ գոհութեամբ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ե

Խաղաղութեամբ Քով, Քրիստո՛ս Փրկիչ մեր, որ ի վեր է, քան զամենայն միտս եւ զքանս, ամրացո՛ զմեզ եւ անսրկիւղ պահեա յա-

հով լինենք դեւերի խաւարային ընթացքից, կէսօրուայ դիւային գայթակղութիւնից: Եւ վայելչաբար զգաստանալով այս օրուայ ընթացքում՝ առաքինութեամբ մնանք մեր անձերի փրկութեան համար՝ ի պատիւ եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեանդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Դ

Զօրութիւնների՛ Տէր, Քո երկնային խաղաղութեամբ պարապելով պահի՛ր մեզ: Քանզի Դու խաղաղութեան Աստուած ես, եւ Քեզանից բացի այլ մէկի չենք ճանաչում եւ օգնականութեան ենք կանչում Քո ամենազօր անունը: Նայի՛ր մեր երկրպագութեանը եւ սովորեցրո՛ւ մեզ գործել ճշմարիտ արդարութիւնը: Եւ գոհութեամբ փառաւորենք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Աղօթք Ե

Խաղաղութեամբ Քո, Քրիստո՛ս Փրկիչ մեր, որ վեր է բոլոր մտքերից ու խօսքերից, ամրացրո՛ւ մեզ եւ անսրկի՛ւղ պահիր ամենայն չա-

մենայն չարէ: Հաւասարեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս Քո, որք հոգւով եւ ճշմարտութեամբ Քեզ երկիր պագանեն: Վասն զի Ամենասուրբ Երրորդութեանդ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երեկոյեան ժամ

Հայր մեր, որ յերկինս ես...:

ՄԱՂԹԱՆՔ

Փա՛ռք Քեզ, Աստուա՛ծ, փա՛ռք Քեզ. յաղագս ամենայնի, Տէ՛ր, փա՛ռք Քեզ:

ՍԱՂՄՈՍ Ղ

Որ բնակեալ է յօգնութիւն Բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ:

Ասասցէ Տեառն. «Ընդունելի իմ ես, ապաւէն իմ, Աստուա՛ծ». եւ ես յուսամ ի Նա:

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին եւ ի բանից խռովութենէ:

Ի թիկնամէջս Իւր ընկալցի զքեզ, ի հովանի թեւոց Նորա յուսասցիս:

բից: Հաւասարեցո՛ւ մեզ Քո ճշմարիտ երկրպագուներին, ովքեր հոգով եւ ճշմարտութեամբ երկրպագում են Քեզ: Քանզի Ամենասուրբ Երրորդութեանդ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երեկոյեան ժամ

Հայր մեր, որ երկնքում ես...:

ՄԱՂԹԱՆՔ

Փա՛ռք Քեզ, Աստուա՛ծ, փա՛ռք Քեզ. ամէն ինչի համար, Տէ՛ր, փա՛ռք Քեզ:

ՍԱՂՄՈՍ Ղ

Ով ապրում է Բարձրեալի օգնութեամբ, Աստուծոյ հովանու տակ կբնակուի երկնքում:

Կասի Տիրոջը. «Իմ պաշտպանն ու պահպանն ես, Աստուա՛ծ». եւ ես յոյս դրել եմ Նրա վրայ:

Նա կփրկի ինձ որսողի որոգայթից եւ խռովութեան խօսքերից:

Իր թիկունքի վրայ կվերցնի քեզ, Նրա թեւերի հովանուն կյուսաս:

Որպէս զէն՝ շուրջ եղիցի զքեւ ճշմարտութիւն Նորա:

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի եւ ոչ ի նետէ, որ թռչի ի տուէ, յիրէ, որ շրջի ի խաւարի, ի գայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր:

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք, եւ բիւրք՝ ընդ աջմէ քումմէ, եւ առ քեզ ինչ ոչ մերձեսցին:

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու եւ զհատուցումն մեղաւորաց տեսցես, զի Դու, Տէ՛ր, յոյս իմ ես:

ԶԲարձրեալն արարեր ապաւէն քեզ, ոչ հասցեն առ քեզ չարք, եւ տանջանք մի՛ մերձեսցին ի յարկս Քո:

Հրեշտակաց Իւրոց պատուիրեալ է վասն քո՝ պահել զքեզ յամենայն ճանապարհս քո:

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո:

Ի վերայ իժից եւ քարբից գնասցես դու, առ ոտն կոխեսցես զառիւծն եւ զվիշապն:

«Քանզի յիս յուսացաւ, եւ փրկեցից զնա, հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն Իմ:

Կարդասցէ առ Իս, եւ Ես լուայց նմա եւ առ նմա եղէց ի նեղութեան:

Կզրահապատի քեզ Նրա ճշմարտութիւնը:

Զեռ վախենայ գիշերուայ զարհուրանքից եւ ոչ էլ՝ ցերեկը սլացող նետից, խաւարում շրջող չարքից, կէսօրուայ դիւային գայթակղութիւնից:

Քո [ձախ] կողմում հազարներ կընկնեն, եւ բիւրեր՝ աջ կողմումդ, եւ քեզ ոչինչ չի մերձենայ:

Այլ դու աչքերովդ միայն կնայես եւ կտեսնես մեղաւորների պատիժը, քանզի Դու, Տէ՛ր, իմ յոյսն ես:

Բարձրեալին քեզ ապաւէն արեցիր, չարիք քեզ չի պատահի, եւ տանջանքներ չեն մերձենայ քո յարկին:

Իր հրեշտակներին պատուիրել է քեզ համար, որ պահեն քեզ քո բոլոր ճանապարհներում:

Իրենց բազուկներին կվերցնեն քեզ, որպէսզի ոտքդ քարի երբեք չդիպչի:

Իժերի եւ քարքերի վրայ կքայլես եւ ոտնակոխ կանես առիւծն ու վիշապը:

«Քանզի Ինձ ապաւինեց, կփրկեմ նրան, հովանի կլինեմ նրան, քանի որ ճանաչեց Իմ անունը:

Կկանչի Ինձ, եւ Ես կլսեմ նրան եւ նրա մօտ կլինեմ նեղութեան մէջ:

Փրկեցից եւ փառաւոր արարից զնա, երկայն աւուրբք լցուցից եւ ցուցից նմա զփրկութիւն իմ»:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ա

Քեզ երկիր պագանելով, Տէ՛ր Աստուած մեր, գոհանամք զՔէն յաղագս խաղաղութեամբ անցուցանելոյ ի մէնջ զերկարութիւն տուընջեանս: Տո՛ւր մեզ, Տէ՛ր, աղաչեմք զՔեզ, զերեկս եւ զառաջիկայ գիշերս առանց մեղաց եւ առանց գայթակղութեան անցուցանել, հաստատուն կալ եւ մնալ ի հաւատ, ի յոյս, ի սէր եւ ի պատուիրանապահութեան Քոյ՝ խնդրելով զխաղաղութիւն ամենայն աշխարհի եւ Եկեղեցւոյ Քում սրբոյ զհաստատութիւն եւ անձանց մերոց զփրկութիւն: Որպէս զի ընդունելով ի քէն զհայցուածս մեր՝ եւ զմեծ վայելչական փառաբանութիւն միշտ ի բարձունս առաքեսցուք ամենազօր տէրութեանդ, Քրիստո՛ս Աստուած մեր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Կփրկեմ, կփառաւորեմ նրան, բազում օրերով կլցնեմ [նրա կեանքը] եւ ցոյց կտամ նրան Իմ փրկութիւնը»:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ա

Տէ՛ր Աստուած մեր, երկրպագելով գոհանում ենք Քեզանից՝ այս օրուայ ընթացքը մեզանից խաղաղութեամբ անցկացնելու համար: Շնորհի՛ր մեզ, Տէ՛ր, աղաչում ենք Քեզ՝ այս երեկոյ եւ առաջիկայ գիշերը առանց մեղքերի եւ գայթակղեցեան անցկացնել, միշտ հաստատուն մնալ հաւատի, յոյսի, սիրոյ եւ Քո պատուիրանապահութեան մէջ՝ խնդրելով խաղաղութիւնը ողջ աշխարհի համար, Քո սուրբ Եկեղեցու անսասանութիւնը եւ մեր անձերի փրկութիւնը: Որպէսզի ընդունելով Քեզանից մեր խնդրանքները՝ նաեւ մեծ վայելչական փառաբանութիւն միշտ ի բարձունս առաքենք ամենազօր տէրութեանդ, Քրիստո՛ս Աստուած մեր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Աղօթք Բ

Հա՛յր գթած, բարեխնամող, Արարի՛չ ամենայն արարածոց, ընկա՛լ զպաղատանս ծառայից Քոց ի ժամ երեկոյիս, որ առատդ ես առ ամենեսեան պարգեւօք բարերարութեան Քոյ: Ողորմեա՛, Տէ՛ր, ամենայն աշխարհի եւ Եկեղեցւոյ Քում սրբոյ, հիւանդաց, վշտացելոց, ճանապարհորդաց, նաւորդաց, խոստովանողաց, ապաշխարողաց եւ հոգւոցն հանգուցելոց: Զի Դու՝, Տէ՛ր ամենակալ, գիտես զպէտս մեր եւ զկարիս առաւել, քան զոր խնդրեմք եւ իմանամք, եւ Քեզ ընդ Որդւոյ եւ Ամենասրբոյ Հոգւոյդ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հանգստեան ժամ
(յառաջ քան զննջելն)

Հայր մեր, որ յերկինս ես...:

ՄԱՂԹԱՆՔ

Անձն իմ ի ձեռս Քո է յամենայն ժամ, եւ ի սուրբ Խաչ Քո յուսացեալ եմ, Թագաւո՛ր երկ-

Աղօթք Բ

Հա՛յր գթած, բարեխնամող, Արարի՛չ բոլոր արարածների, ընդունի՛ր Քո ծառաների պաղատանքներն այս երեկոյեան ժամին, որ առատ ես բոլորի նկատմամբ Քո բարերարութեան պարգեւներով: Ողորմի՛ր, Տէ՛ր, ամբողջ աշխարհին, Քո սուրբ Եկեղեցուն, հիւանդներին, վշտացածներին, ճանապարհորդներին, նաւորդներին, խոստովանողներին, ապաշխարողներին եւ հանգուցեալների հոգիներին: Քանզի Դու՝, Տէ՛ր ամենակալ, գիտես մեր պէտքերն ու կարիքներն առաւել, քան խնդրում եւ իմանում ենք, եւ Քեզ Որդու եւ Ամենասուրբ Հոգու հետ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հանգստեան ժամ
(քնելուց առաջ)

Հայր մեր, որ երկնքում ես...:

ՄԱՂԹԱՆՔ

Իմ անձը Քո ձեռքում է ամենայն ժամ, եւ Քո սուրբ Խաչին եմ ապաւինել, Թագաւո՛ր երկ-

նաւոր. զբաղմութիւն սրբոց Քոց բարեխօս ունիմ առ Քեզ: Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զապաւինեալս ի Քեզ, այլ պահեա՛ պատուական եւ սուրբ Խաչիւ Քոմով ի խաղաղութեան:

ՍԱՂՄՈՍ ԻԲ

Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասեսցէ:

Ի վայրի դալարուոջ, անդ բնակեցոյց զիս եւ առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս եւ առաջնորդեսց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան Իւրոյ:

Թէպէտ եւ գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեսցի ի չարէ, զի Դո՛ւ, Տէ՛ր, ընդ իս ես:

Ցուպ Քո եւ գաւազան՝ նոքա միխիթարեսցեն զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց:

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ Քո որպէս անապակ արբեցոյց զիս:

նաւոր. Քո սուրբերի բազմութիւնը բարեխօս ունեմ Քեզ մօտ: Որ ներողամիտ ես բոլորի նկատմամբ, մի՛ անտեսիր Քեզ ապաւինածիս, այլ Քո պատուական եւ սուրբ Խաչով պահի՛ր խաղաղութեան մէջ:

ՍԱՂՄՈՍ ԻԲ

Տէրը կհովուի ինձ, եւ ինձ ոչինչ չի պակսի:

Այնտեղ, դալար վայրում ինձ բնակեցրեց եւ հանդարտ ջրերի մօտ ինձ սնուցեց:

Ինձ դէպի իմ անձը դարձրեց եւ առաջնորդեց արդարութեան ճանապարհով իր անուան համար:

Թէպէտ եւ ես գնամ մահուան ստուերներում, չեմ վախենայ չարից, քանզի Դո՛ւ, Տէ՛ր, ինձ հետ ես:

Քո ցուպը եւ գաւազանը՝ նրանք կմխիթարեն ինձ:

Իմ առաջ պատրաստեցիր սեղանը՝ դէմ յանդիման իմ նեղիչներին:

Օծեցիր գլուխս իւղով, Քո բաժակը որպէս անապակ դինի ինձ արբեցրեց:

Ողորմութիւն Քո, Տէ՛ր, զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց՝ բնակել ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ԻԶ

Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց, Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց:

Ի մերձենալ առ իս չարաց՝ ուտել զմարմին իմ, նեղիչք իմ եւ թշնամիք իմ՝ նոքա տկարացան եւ անկան:

Թէ պատրաստեսցի ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ, թէ յարիցէ ի վերայ իմ ճակատամարտ, սակայն եւ այսուիկ ի Քեզ, Տէ՛ր, յուսացայ:

Զմի խնդրեցի ի Տեառնէ եւ զսոյն աղաչեմ՝ բնակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց:

Տեսանել ինձ զվայելչութիւն Տեառն եւ հրամանս տալ ի տաճարի Նորա:

Քո ողորմութիւնք, Տէ՛ր, ինձ հետ թող լինի իմ կեանքի բոլոր օրերում՝ երկար օրեր բնակուելու Տիրոջ տանը:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ԻԶ

Տէրն է իմ լոյսը եւ կեանքը, ես ումի՞ց վախենամ, Տէրն է իմ կեանքի ապաւէնը, ես ումի՞ց դողամ:

Երբ չարերը՝ իմ նեղիչները եւ թշնամիները, մօտեցան մարմինս ուտելու, նրանք տկարացան եւ ընկան:

Եթէ պատերազմ պատրաստուի իմ դէմ, իմ սիրտը չի երկնչի, թէ ճակատամարտ բարձրանայ ինձ վրայ, սակայն, այսուհանդերձ, Քեզ կապաւինեմ, Տէ՛ր:

Մի բան խնդրեցի Տիրոջից եւ նոյնն եմ աղաչում՝ կեանքիս բոլոր օրերը բնակուեմ Տիրոջ տան մէջ:

Տեսնելու Տիրոջ վայելչութիւնը եւ Նրա տաճարի մէջ հրամայելու:

Ծածկեաց զիս ի խորանի Իւրում յաւուր չարի, ընդ յարկաւ արար զիս ի ծածկոյթ խորանի Իւրում:

Ի վիմէ բարձր արարեր զիս եւ այժմ բա՛րձր արա զգլուխ իմ ի վերայ թշնամեաց իմոց:

Շուրջ եղէց եւ մատուցից ի խորանի Նորա պատարագ օրհնութեան, օրհնեցից եւ սաղմոս ասացից Տեառն:

Լո՛ւր, Տէ՛ր, ձայնի իմում, զի կարդացի առ Քեզ, ողորմեա՛ ինձ եւ լո՛ւր ինձ, զի Քեզ ասաց սիրտ իմ, եւ խնդրեցին երեսք իմ զերեսս Քո, Տէ՛ր, խնդրեցին:

Մի՛ դարձուցաներ զերեսս Քո յինէն եւ մի՛ խոտորիր բարկութեամբ ի ծառայէ Քումմէ:

Օգնակա՛ն իմ լեր, Տէ՛ր, եւ մի՛ անարգեր զիս եւ մի՛ թողուր զիս, Աստուա՛ծ Փրկիչ իմ:

Հայր իմ եւ մայր իմ թողին զիս, եւ Տէր ընկալաւ զիս:

Օրէնսդէ՛տ արա զիս, Տէ՛ր, ի ճանապարհի Քում, առաջնորդեա՛ ինձ ի շաւիղս Քո ուղիղս:

Վասն թշնամեաց իմոց մի՛ մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց:

Յարեան ի վերայ իմ վկայք մեղաց եւ ստեցին ինձ յանօրէնութեան իւրեանց:

Զար օրն ինձ ծածկեց Իր խորանում, Իր խորանի թաքստոցում ինձ պատսպարեց:

Ժայռից վեր բարձրացրեցիր ինձ եւ այժմ բարձրացրո՛ւ իմ գլուխը թշնամիներիս վրայ:

Կշրջեմ եւ Նրա խորանում կմատուցեմ օրհնութեան պատարագ, կօրհնեմ եւ սաղմոս կասեմ Տիրոջը:

Լսի՛ր, Տէ՛ր, իմ ձայնը, քանզի Քեզ կանչեցի, ողորմի՛ր ինձ եւ լսի՛ր ինձ, քանզի Քեզ դիմեց իմ սիրտը, եւ իմ հայեացքը, Տէ՛ր, փնտրեց Քո հայեացքը:

Մի՛ դարձրու Քո երեսն ինձանից եւ բարկութեամբ մի՛ լքիր Քո ծառային:

Տէ՛ր, իմ օգնակա՛նը եղիր, մի՛ անարգիր ինձ եւ մի՛ թողնիր ինձ, Աստուա՛ծ Փրկիչ իմ:

Իմ հայրը եւ մայրը թողեցին ինձ, եւ Տէրն ինձ ընդունեց:

Օրէնսդէ՛տ արա ինձ, Տէ՛ր, Քո ճանապարհի մէջ, առաջնորդի՛ր ինձ Քո ուղիղ շաւիղներով:

Մի՛ մատնիր ինձ իմ նեղիչների ձեռքը իմ թշնամիների պատճառով:

Մեղքերի վկաները բարձրացան ինձ վրայ եւ իրենց անօրէնութեամբ ստեցին իմ մասին:

Հաւատացի տեսանել զբարութիւն Տեառն յերկրին կենդանեաց:

Համբե՛ր Տեառն եւ քաջալերեա՛ց, զօրասցի սիրտ քո, եւ համբե՛ր Տեառն:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ա

Տէ՛ր բարերար, որ մեծաւ գթութեամբ Քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութեամբ աշխատելոցն եւ կոչեցեր առ Քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն եւ զտաժանեալսն մեղօք՝ հանգիստ նոցա խոստանալով: Շնորհեա՛ եւ մեզ, Տէ՛ր, անխռով խաղաղութեամբ զգիշերս անցուցանել եւ ի ծանրութենէ մեղաց զաշխատեալքս ապահովեա՛ ողորմութեամբ Քով եւ արժանաւորեա՛ մշտնջենաւոր հանգստեանն ընդ ամենայն սուրբս Քո: Եւ գոհանալով փառաւորեսցուք զՔեզ ընդ Հօր եւ Ամենասուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հաւատացի, որ կտեսնեմ Տիրոջ բարութիւնը կենդանեաց երկրում:

Սպասի՛ր Տիրոջը եւ քաջալերուի՛ր, թող զօրանայ քո սիրտը, եւ սպասի՛ր Տիրոջը:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ա

Տէ՛ր բարերար, որ մեծ գթութեամբ պատրաստեցիր յաւիտենական հանգիստը առաքինութեամբ վաստակածների համար եւ քաղցր ձայնով կանչեցիր Քեզ մօտ մեղքով ծանրաբեռնուածներին եւ տառապածներին՝ հանգիստ խոստանալով նրանց: Շնորհի՛ր եւ մեզ, Տէ՛ր, անխռով խաղաղութեամբ անցկացնել այս գիշերը, մեղքի ծանրութիւնից յոգնածներիս անխռո՛վ պահիր եւ արժանացրո՛ւ յաւիտենական հանգստին Քո բոլոր սուրբերի հետ: Եւ գոհանալով փառաւորենք Քեզ Հօր եւ Ամենասուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Բ

Պարգեւատո՛ւ բարեաց եւ աղբի՛ւր խաղաղութեան, Տէ՛ր Աստուած մեր, յամենայն սատանայական խռովութեանց խաղաղացո՛ զմիտս մեր եւ զխորհուրդս ի գիշերիս յայսմիկ եւ յամենայն ժամանակի: Որպէս զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս՝ ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութեան Քոյ, զոր պատրաստեցեր ի սկզբանէ աշխարհի սրբոց Քոց: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Գ

Շնորհատո՛ւ բարեաց, ամենայնի առատ անմահ Տէ՛ր, աղաչեմք զՔեզ, փարատեա՛ յանձանց մերոց զաղջամղջին եւ զխաւարային խորհուրդս: Ի պատրանաց բանսարկուին պահեա՛ զմեզ եւ շնորհեա՛ մեզ հաւատով ապաւինիլ յԱմենասուրբ Երրորդութիւնդ՝ ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Բ

Պարգեւատո՛ւ բարիքների եւ աղբի՛ւր խաղաղութեան, Տէ՛ր Աստուած մեր, խաղաղեցրո՛ւ մեր միտքն ու խորհուրդները ամէն տեսակ սատանայական խռովութիւններից այս գիշեր եւ ամենայն ժամ: Որպէսզի այս անցաւոր կեանքից առաջնորդուելով հասնենք երկնքի յաւիտենական արքայութեանդ, որ աշխարհի սկզբից պատրաստեցիր Քո սուրբերի համար: Եւ նրանց հետ գոհանալով փառաւորենք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղօթք Գ

Շնորհատո՛ւ բարիքների, ամենաառատ անմահ Տէ՛ր, աղաչում ենք Քեզ, փարատի՛ր մեզանից մութ ու խաւարային խորհուրդները: Պահպանի՛ր մեզ բանսարկուի պատրանքներից եւ շնորհի՛ր մեզ հաւատով ապաւինել Ամենասուրբ Երրորդութեանդ՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղօթք Դ

Տէ՛ր Աստուած մեր, Դու պահեա՛ զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ եւ յամենայն ժամանակի: Ընդ սուրբ երկիւղ Քո բեւեռեալ պահեա՛ զմիտս եւ զխորհուրդս մեր: Որպէս զի յամենայն ժամ Քեւ պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն եւ Քեզ հանցուք զօրհնութիւն եւ զփառս՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ե

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա՛ զանձինս մեր, Տէ՛ր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ի տուէ եւ ի գիշերի, յարթնութեան եւ ի հանգստեան մերում, զի Դու ես արարիչ լուսոյ եւ հաստիչ գիշերի: Եւ այժմ, աղաչեմք զՔեզ, Տէ՛ր Աստուած մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա՛ խաղաղութեամբ անցուցանել եւ հասանիլ ի պաշտօն առաւօտու, յերկրպագութիւն եւ ի փառաբանութիւն Ամենասուրբ Երրորդութեանդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Դ

Տէ՛ր Աստուած մեր, խաղաղութեա՛մբ պահիր մեզ այս գիշեր եւ ամենայն ժամ: Քո սուրբ երկիւղի վրայ բեւեռած պահի՛ր մեր մտքերն ու խորհուրդները: Որպէսզի միշտ Քեզանով պահպանուած լինենք թշնամու որոգայթներից եւ օրհնենք ու փառաւորենք Քեզ՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Ե

Տէ՛ր զօրութիւնների, խաղաղութեան հրեշտակի յանձնի՛ր մեզ, որ գայ եւ անխռով պահի մեզ օր ու գիշեր, արթնութեան եւ քնի մէջ, քանզի Դու ես լոյսի արարողը եւ գիշերուայ ստեղծողը: Եւ այժմ, աղաչում ենք Քեզ, Տէ՛ր Աստուած մեր, շնորհի՛ր խաղաղութեամբ անցկացնել այս գիշերուայ հանգիստը եւ հասնել առաւօտեան պաշտամունքի, երկրպագելու եւ փառաբանելու Ամենասուրբ Երրորդութեանդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մաղթանք զօրաւորք արհաւրաց գիշերայնոց՝ սրբոյ Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ

ԲԱՆ ԺԲ

Ընկա՛լ քաղցրութեամբ, Տէ՛ր Աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս, մատի՛ր զթութեամբ առ պատկառեալս դիմօք, փարատեա՛, ամենապարգե՛ւ, զամօթական տխրութիւնս, բա՛րձ յինէն, ողորմա՛ծ, զանբերելի ծանրութիւնս, անջրպետեա՛, հնարաւո՛ր, զմահացու կրթութիւնս, աւարեա՛, մի՛շտ յաղթող, զխաբողին հաճութիւնս, բացադրեա՛, վերնայի՛ն, զմոլելոյն մառախուղ, կնքեա՛, կեցուցի՛չ, զկորուսչին ընթացմունս, ցրուեա՛, ծածկատե՛ս, զըմբռնողին չար գտմունս, խորտակեա՛, անքնի՛ն, զմարտողին դիմեցմունս: Տեառնագրեա՛ Քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս, պարփակեա՛ Քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս, գծագրեա՛ Քո Արեամբդ զմուտ սեմոց սենեկիս, կերպացո՛ զՔո նշանդ ի հետս ելից մաղթողիս, ամրացո՛ Քո աջովդ զհանգստեանս

Սուրբ Գրիգոր Նարեկացու ասած զօրաւոր աղաչանքներն ընդդէմ գիշերային արհաւիրքների

ԲԱՆ ԺԲ

Քաղցրութեա՛մբ ընդունիր, Տէ՛ր Աստուած հզօր, դառնացողիս աղաչանքը, գթութեա՛մբ մօտեցիր ամօթահարիս, փարատի՛ր, ամենապարգե՛ւ, ամօթական տխրութիւնս, վերցրո՛ւ ինձանից, ողորմա՛ծ, անտանելի ծանրութիւնս, անջրպետի՛ր, ամենահնա՛ր, մահացու կրթութիւնս, առգրաւի՛ր, միշտ յաղթո՛ղ, խաբողի ցանկութիւնները, հեռացրո՛ւ, վերնայի՛ն, ցնորական մառախուղը, արգելի՛ր, կեցուցի՛չ, կորուսչի յարձակումները, ցրի՛ր, ծածկատե՛ս, որսողի չարահնարութիւնները, խորտակի՛ր, անքնի՛ն, մարտնչողի ներգործութիւնները: Տեառնագրի՛ր Քո անուամբ տանս երդիկի լուսանցոյցը, պարփակի՛ր Քո ձեռքով տաճարիս առաստաղը, գծագրի՛ր Քո Արեամբ սենեակիս շեմի մուտքը, տպաւորի՛ր դրսից Քո նշանը աղօթողիս դռան վրայ, ամրացրո՛ւ Քո աջով*

* տեառնագրել - խաչակնքել, տէրունական նշանով կնքել

խշտի, մաքրեսցե՛ս ի հաղբից զծածկարան անկողնոյս, պահեսցե՛ս Քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս, անխարդա՛խ արասցես զՔո շնորհեալ շունչ մարմնոյս, կացուսցե՛ս շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ, կարգեսցե՛ս ի դիմի ընդդէմ դիւացն դասու:

Տո՛ւր հանգիստ բերկրութեան մահահանդոյնս նիրհման ի խորութեան գիշերիս՝ բարեխօսութեամբ հայցուածոց սրբուհւոյ Աստուածածնիդ եւ ամենայն ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ՝ ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից՝ յիշատակաւ Քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ: Եւ սթափեալ վերստին ի ննջմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնութեամբ, հոգենորոգ զուարթութեամբ ի Քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց Քեզ, ամէնօրհնեա՛լ Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել: Զի Դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:

հանգստեանս խշտին, մաքրի՛ր որոգայթներից անկողնիս ծածկարանը, պահպանի՛ր Քո կամքով հոգուս տառապեալ անձը, անվնասելի՛ դարձրու Քո՝ մարմնիս շնորհած շունչը, շրջափակի՛ր ինձ երկնային զօրքերովդ, կարգի՛ր ընդդէմ դեւերի դասի:*

Տո՛ւր բերկրալի հանգիստ՝ գիշերուայ խորութեան մէջ մահահանդոյն ննջելիս՝ սուրբ Աստուածածնիդ եւ բոլոր ընտրեալների աղերսների բարեխօսութեամբ: Ամփոփելով պարուրի՛ր մտքիս զգայարանների տեսութեան պատուհանը՝ անզարհուրելի զետեղմամբ՝ ծփական խռովութիւններից, կենցաղական զբաղմունքներից, անրջական երազներից, խօլական ցնորքներից՝ Քո յոյսի յիշատակով անվնաս պաշտպանելով: Եւ վերստին սթափուելով ծանր նինջից, ամենազգաստ արթնութեամբ, հոգենորոգ զուարթութեամբ ի Քեզ արձանացած, աղաչանքներիս այս ձայնը Քո հաւատքի բուրմամբ, անճառ փառքերի ամէնօրհնեա՛լ Թագաւոր, Քեզ փառաբանողների երկնագումար խմբերին երգակցելով՝ երկինք առաքեմ: Քանզի Դու փառաւորուած ես բոլոր արարածների կողմից յաւիտեանս յաւիտենից. ամէն:

* խշտի - խստակրօն, գետնատարած անկողին

ԲԱՆ ԽԱ

Ա

Որդի՛ Աստուծոյ կենդանւոյ, օրհնեա՛լ յամենայնի, Հօրդ ահաւորի անքնի՛ն ծնունդ, որ տկարանայ առ ի Քէն եւ ոչ ինչ, որ ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան Քոյ փառաց հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, եւ թագաւորէ ձեռն Քո ամենակար, քաւի՛չդ ամենայնի:

ԲԱՆ ԽԱ

Ա

Որդի՛ կենդանի Աստուծոյ, օրհնեա՛լ ամէն ինչում, ահաւոր Հօրդ անքնի՛ն ծնունդ, Քեզ համար չկայ ոչինչ անհնար. Քո ողորմութեան փառքի անստուեր շողի ծագումից հալչում են մեղքերը, հալածւում են դեւերը, ջնջւում են յանցանքները, խզւում են կապանքները, խորտակւում են շղթաները, կենդանանում են մահացածները, բժշկւում են հարուածները, առողջանում են վէրքերը, վերանում են ապականութիւնները, տեղի են տալիս տխրութիւնները, նահանջում են հեծութիւնները, փախչում է խաւարը, պարզւում է մէգը, ցրւում է մառախուղը, փարատւում է մռայլը, սպառւում է աղջամուղջը, վերանում է մութը, հեռանում է գիշերը, տարագրւում է տագնապը, չքանում է չարիքը, հալածւում են յուսահատութիւնները, եւ թագաւորում է Քո ձեռքն ամենակալ, քաւի՛չդ ամենայնի:

Բ

Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել, թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ, զի Դու միայն ես յերկնի անճառ եւ յերկրի՝ անզնին, ի տարր գոյի եւ յեզրս ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի եւ յամենայնի ամենայն լրմամբ, օրհնեալ ի բարձունս. եւ Քեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ փա՛ռք յաւիտեանս. ամէն:

Մաղթանք ի դիւաց պահպանութեան՝ սրբոյ Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ

ԲԱՆ ՂԴ

Ա

Աստուա՛ծ յաւիտենական, բարերա՛ր եւ ամենակա՛լ, ստեղծի՛չ լուսոյ եւ յօրինի՛չ գիշերոյ, կեա՛նք ի մահու, եւ լո՛յս ի խաւարի, յո՛յս ակնունողաց եւ երկայնմտութի՛ւն տարակուսելոց, որ ամէնարուեստ իմաստութեամբ Քով դարձուցանես յայդ զստուերս մահու, աննուա՛զ ծագումն եւ անմո՛ւտ արե-

Բ

Որ չեկար կորստեան մատնելու մարդկանց հոգիները, այլ ապրեցնելու, ների՛ր իմ անթիւ չարիքները Քո մեծ ողորմութեամբ, քանզի միայն Դու ես երկնքում անճառ եւ երկրում՝ անզնին, գոյի տարրերում եւ աշխարհի չորս ծագերում, սկիզբն ամէն ինչի եւ ամէն ինչում ողջ կատարելութեամբ, օրհնեալ բարձունքներում, եւ Քեզ Հօրդ եւ Սուրբ Հոգուդ հետ փա՛ռք յաւիտեանս. ամէն:

Սուրբ Գրիգոր Նարեկացու աղօթքը դեւերից պահպանելու համար

ԲԱՆ ՂԴ

Ա

Աստուա՛ծ յաւիտենական, բարերա՛ր եւ ամենակա՛լ, ստեղծո՛ղ լոյսի եւ յօրինո՛ղ գիշերի, կեա՛նք՝ մահուան մէջ, եւ լո՛յս՝ խաւարում, յո՛յս ակնկալողների, եւ համբերութի՛ւն տարակուսեալների, որ ամէնարուեստ Քո իմաստութեամբ մահուան ստուերը փոխում ես այդի, աննուա՛զ ծագում եւ անմո՛ւտ արեգակ,

գակն, քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան Քոյ խաւար գիշերոյ, որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց՝ երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց: Որ լսես զՀեծութիւն կապելոց եւ հայիս յաղօթս խոնարհաց եւ ընդունիս զխնդրուածս նոցա, Աստուա՛ծ իմ եւ Թագաւո՛ր իմ, կեա՛նք իմ եւ ապաւէ՛ն իմ, յո՛յս իմ եւ վստահութի՛ւն իմ, Յիսո՛ւս Քրիստոս, Աստուա՛ծդ ամենայնի, սո՛ւրբդ՝ հանգուցեալ ի հոգիս սրբոց, մխիթարութի՛ւն վշտաց եւ քաւարա՛ն մեղուցելոց, որ գիտես զամենայն յառաջ, քան զլինել նոցա, առաքեա՛ զպահպանողական զօրութիւն աջոյ Քոյ եւ փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի եւ ի դիւէ չարէ: Որպէս զի, զյիշատակ սոսկալի եւ սուրբ Քո անուանդ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ, որ կարդան զՔեզ ի բոլոր սրտէ:

Բ

Եւ ի դրոշմէ Խաչի Քոյոյ նշանիդ, զոր ասուածային Արեամբ Քո ներկեալ նորոգեցեր եւ ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտե-

քանզի գիշերուայ խաւարը չի կարող ծածկել Քո տէրութեան փառքը, որին ծնրադիր երկրպագում են բոլոր արարածները՝ երկնայինները, երկրայիններն եւ սանդարամետականները: Որ լսում ես կապեալների հեծութիւնը, նայում խոնարհների աղօթքին եւ ընդունում նրանց խնդրուածքները, Աստուա՛ծ իմ եւ Թագաւո՛ր իմ, կեա՛նք իմ եւ ապաւէ՛ն իմ, յո՛յս իմ եւ վստահութի՛ւն իմ, Յիսո՛ւս Քրիստոս, Աստուա՛ծ ամենայնի, Սո՛ւրբդ՝ սուրբերի հոգում բնակուող, մխիթարութի՛ւն վշտերի եւ քաւարա՛ն մեղաւորների, որ ամէն ինչ գիտես նախապէս, առաքի՛ր պահպանող զօրութիւնը Քո աջի եւ փրկի՛ր գիշերուայ երկիւղից եւ չար դեւից: Որպէսզի, Քո սոսկալի եւ սուրբ անուան յիշատակը միշտ համբուրելով հոգուս շուրթերով, շնչիս փափագով, ապրեմ պահպանուած բոլոր նրանց հետ, ովքեր կանչում են Քեզ ամբողջ սրտով:

Բ

Արդ, Խաչի Քո նշանի դրոշմից, որն, ասուածային Արեամբդ ներկելով, Դու նորոգեցիր, նոյն որդեգրութեան շնորհով մեզ մկրտե-

ցեր եւ ի փառս պատկերի Քոյ նկարեալ յօրինեցեր, այսու պարգեւօք աստուածականօք ամաչեսցէ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձցին որոգայթքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին զէնքն սայրասուրք, մերժեսցի մէգն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մառախուղն: Բազուկ Քո հովանացի, եւ աջ Քո կնքեսցէ, վասն զի գթած ես եւ ողորմած, եւ անուն Քո կոչեցեալ է ի վերայ ծառայից Քոց: Եւ Քեզ ընդ Հօր Հոգւովդ Սրբով փա՛ռք եւ իշխանութի՛ւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոց ի Քրիստոս

Ա

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ Քեզ, Հա՛յր եւ Որդի՛ եւ Սո՛ւրբ Հոգի, անեղ եւ անմա՛հ բնութիւն, Արարի՛չ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց, ողորմեա՛ Քո աքաղաղոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ցիր եւ Քո փառքի պատկերով նկարելով յօրինեցիր, այս աստուածային պարգեւներով թող ամօթահար լինի սատանան, քակտուեն մեքենայութիւնները, վերանան որոգայթները, պարտուեն մարտնչողները, կորչեն սայրասուր զէնքերը, ցնդի մշուշը, փարատուի խաւարը, պարզուի մառախուղը: Քո բազուկը թող հովանի լինի, եւ Քո աջը թող կնքի, քանզի գթած ես եւ ողորմած, եւ Քո անունով են կոչուում ծառաներդ: Եւ Քեզ Հօր եւ Սուրբ Հոգու հետ փա՛ռք եւ իշխանութի՛ւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Աղօթք՝ Քրիստոսին հաւատացող իւրաքանչիւր անձի

Ա

Հաւատքով խոստովանում եւ երկրպագում եմ Քեզ, Հա՛յր եւ Որդի՛ եւ Սո՛ւրբ Հոգի, անեղ եւ անմա՛հ բնութիւն, հրեշտակների եւ մարդկանց եւ բոլոր եղածների՝ Արարիչ, ողորմի՛ր Քո աքաղաղներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Բ

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ Քեզ, անքաժանելի լո՛յս, միասնական Սո՛ւրբ Երրորդութիւն եւ Մի Աստուածութիւն, արարի՛չ լուսոյ եւ հալածի՛չ խաւարի, հալածեա՛ ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեանց եւ լուսաւորեա՛ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝ աղօթել Քեզ ի հաճոյս եւ ընդունել ի Քէն զխնդրուածս իմ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Գ

Հա՛յր երկնաւոր, Աստուա՛ծ ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ Քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղա՛յ յերկինս եւ առաջի Քո, ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին եւ զգեցո՛ զիս զպատմուճանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Դ

Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ եւ առեր մար-

Բ

Հաւատքով խոստովանում եւ երկրպագում եմ Քեզ, անքաժանելի լո՛յս, միասնական Սո՛ւրբ Երրորդութիւն եւ Մի Աստուածութիւն, արարի՛չ լոյսի եւ հալածի՛չ խաւարի, հալածի՛ր իմ հոգուց մեղքերի եւ անգիտութեան խաւարը եւ լուսաւորի՛ր իմ միտքն այս ժամին՝ աղօթելու Քեզ հաճոյ եւ ընդունելու Քեզանից իմ խնդրուածքները. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Գ

Հա՛յր երկնաւոր, Աստուա՛ծ ճշմարիտ, որ առաքեցիր Քո սիրելի Որդուն մոլորուած ոչխարիս փնտրելու համար, մեղա՛յ երկնքի եւ Քո առաջ, ընդունի՛ր ինձ ինչպէս անառակ որդուն եւ հագցրո՛ւ ինձ առաջին պատմուճանը, որից մերկացայ մեղքով. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Դ

Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ իջար հայրական ծոցից եւ մարմին առար սուրբ Կոյս

մին ի սրբոյ Կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար եւ թաղեցար եւ յարեար ի մեռելոց եւ համբարձար փառօք առ Հայր, մեղա՛յ յերկինս եւ առաջի Քո, յիշեա՛ զիս որպէս զաւազակն, յորժամ գաս արքայութեամբ Քով. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ե

Հոգի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ իջեր ի Ցորդանան եւ ի Վերնատունն եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ Աւազանին, մեղա՛յ յերկինս եւ առաջի Քո, մաքրեա՛ զիս վերստին աստուածային հրով Քով, որպէս հրեղէն լեզուօք՝ սուրբ զառաքեալսն. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Զ

Անե՛ղ բնութիւն, մեղա՛յ Քեզ մտօք իմովք, հոգւով եւ մարմնով իմով, մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ Քում սրբոյ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Մարիամից մեր փրկութեան համար, խաչուեցիր, թաղուեցիր եւ յարութիւն առար մեռելներից եւ փառքով համբարձուեցիր առ Հայր, մեղա՛յ երկնքի եւ Քո առաջ, յիշի՛ր ինձ, ինչպէս աւազակին, երբ գաս Քո արքայութեամբ. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Ե

Հոգի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ իջար Ցորդանան եւ Վերնատուն եւ լուսաւորեցիր ինձ սուրբ Աւազանի մկրտութեամբ, մեղա՛յ երկնքի եւ Քո առաջ, մաքրի՛ր ինձ վերստին Քո աստուածային հրով, ինչպէս հրեղէն լեզուներով՝ սուրբ առաքեալներին. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Զ

Անե՛ղ բնութիւն, մեղա՛յ Քեզ իմ մտքով, հոգով եւ մարմնով, յանուն Քո սուրբ անուան մի՛ յիշիր իմ նախկին մեղքերը. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Է

Տեսո՛ղ ամենայնի, մեղա՛յ Քեզ խորհրդով, բանիւ եւ գործով, ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց եւ գրեա՛ զանուն իմ ի Դպրութեան կենաց. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ը

Քննո՛ղ գաղտնեաց, մեղա՛յ Քեզ կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, թողութի՛ւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ Աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ Քոյ զգայարանօք իմովք եւ ամենայն անդամօք մարմնոյս. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Թ

Ամենախնա՛մ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ Քո սուրբ՝ ո՛չ եւս հայիլ յայրատ, եւ ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ո՛չ խորհել զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ո՛չ գնալ ի ճանապարհս անօրէնու-

Է

Ամէն ինչ տեսնո՛ղ, մեղա՛յ Քեզ խորհրդով, խօսքով եւ գործով, ջնջի՛ր ձեռագիրն իմ յանցանքների եւ գրի՛ր իմ անունը Կեանքի գրքում. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Ը

Գաղտնիքնե՛ր քննող, մեղա՛յ Քեզ կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, թողութի՛ւն շնորհիր մեղաւորիս, քանզի սուրբ Աւազանի ծնունդից մինչեւ այսօր մեղանչել եմ Աստուածութեանդ առաջ իմ զգայարաններով եւ մարմնիս բոլոր անդամներով. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Թ

Ամենախնա՛մ Տէր, իմ աչքերին պահապա՛ն դիր Քո սուրբ երկիւղը՝ այլեւս անպատկառ չնայելու, եւ ականջներիս՝ չախորժելու լսել չար խօսքեր, եւ բերանիս՝ սուտ չխօսելու, եւ սրտիս՝ չարը չխորհելու, եւ ձեռքերիս՝ անիրաւութիւն չգործելու, եւ ոտքերիս՝ անօրինութեան ճանապարհով չգնալու. այլ ուղղի՛ր սրանց շարժու-

թեան, այլ ուղղեա՛ զշարժումն սոցա՝ լինել միշտ ըստ պատուիրանաց Քոց յամենայնի. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ժ

Հո՛ւր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ Քոյ, զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ եւ սրբեսցէ զխիղճ մտաց իմոց եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ եւ վառեսցէ զլոյս զիտութեան Քոյ ի սրտի իմում. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԱ

Իմաստութի՛ւն Հօր Յիսուս, տո՛ւր ինձ զիմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի Քո յամենայն ժամ, ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ զիս. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԲ

Կամեցո՛ղ բարեաց, Տէ՛ր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց Քոց բարեմը՝ միշտ լինելու ըստ Քո պատուիրանների. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Ժ

Հո՛ւր կենդանի Քրիստոս, Քո սիրոյ հուրը, որ գցեցիր երկրի վրայ, բորբոքի՛ր իմ անձում, որպէսզի այրի իմ հոգու ախտերը եւ սրբի իմ մտքի խիղճը, եւ մաքրի իմ մարմնի մեղքերը եւ վառի Քո գիտութեան լոյսն իմ սրտում. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԱ

Հօր իմաստութի՛ւն Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւնը՝ ամէն ժամ Քո առջեւ բարին խորհելու, խօսելու եւ գործելու, եւ փրկի՛ր ինձ չար խորհուրդներից, խօսքերից եւ գործերից. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԲ

Բարի՛ք կամեցող, Տէ՛ր կամարար, մի՛ թող ինձ իմ անձի կամքով գնալ, այլ առաջնորդի՛ր ինձ

սիրաց. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԳ

Արքա՛յ երկնաւոր, տո՛ւր ինձ զարքայութիւն Քո, զոր խոստացար սիրելեաց Քոց, եւ զօրացո՛ զսիրտ իմ՝ ատել զմեղս եւ սիրել զՔեզ միայն եւ առնել զկամս Քո. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԴ

Խնամո՛ղ արարածոց, պահեա՛ նշանաւ Խաչի Քոյ զհոգի եւ զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց եւ ի մարդոց անիրաւաց եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԵ

Պահապա՛ն ամենայնի Քրիստոս, աջ Քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի՛ երբեք սասանեցայց. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

միշտ լինել ըստ Քո բարեսէր կամքի. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԳ

Արքա՛յ երկնաւոր, տո՛ւր ինձ Քո արքայութիւնը, որ խոստացար Քո սիրելիներին, եւ զօրացրո՛ւ իմ սիրտը՝ ատելու մեղքը եւ միայն Քեզ սիրելու եւ Քո կամքը կատարելու. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԴ

Խնամո՛ղ արարածների, պահի՛ր Քո Խաչի նշանով իմ հոգին եւ մարմինը մեղքերի պատրանքներից, դեւերի փորձութիւններից, անիրաւ մարդկանցից եւ հոգու եւ մարմնի բոլոր վտանգներից. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԵ

Պահապա՛ն ամենայնի Քրիստոս, Քո աջը թող հովանի լինի ինձ վրայ ցերեկ եւ գիշեր, տանը նստելիս, ճանապարհ գնալիս, ննջելիս եւ արթնանալիս, որպէսզի երբեք չսասանուեմ. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԶ

Աստուա՛ծ իմ, որ բանաս զձեռս Քո եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ Քով, Քեզ յանձն առնեմ զանձն իմ, Դո՛ւ հոգա եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչեւ յաւիտեան. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԷ

Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո՛ զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն եւ բեւեռեա՛ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ գեհենոյն եւ զսէր արքայութեանն, զի զղջացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԸ

Աղբի՛ւր անմահութեան, աղբերացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան՝ որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԶ

Աստուա՛ծ իմ, որ բացում ես ձեռքերդ եւ լցնում բոլոր արարածներիդ Քո ողորմութեամբ, Քեզ եմ յանձնում իմ անձը, Դո՛ւ հոգա եւ պատրաստիր իմ հոգու եւ մարմնի կարիքները այսուհետեւ մինչեւ յաւիտեան. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԷ

Մոլորեալներին դարձի՛ բերող, ե՛ւ դարձրու ինձ իմ չար սովորութիւններից բարի սովորութեան եւ բեւեռի՛ր իմ հոգում մահուան սոսկալի օրը եւ գեհենի երկիւղը եւ արքայութեան սէրը, որպէսզի զղջամ մեղքերս եւ գործեմ արդարութիւն. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԸ

Աղբի՛ւր անմահութեան, բխեցրո՛ւ իմ սրտից ապաշխարութեան արտասուքներ, ինչպէս պոռնիկին, որպէսզի լուանամ իմ հոգու մեղքերն աշխարհից ելնելուց առաջ. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԹ

Պարգևի՛չ ողորմութեան, պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով եւ սուրբ Մարմնոյ եւ Արեան Քոյ հաղորդութեամբ գալ առ Քեզ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ի

Բարերա՛ր Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արարացես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն, որք են ի ներքոյ երկնից. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԱ

Լո՛յս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց Քոց ի կոչման աւուրն եւ հանգչիլ յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչեւ յՕր մեծի գալստեան Քոյ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԹ

Պարգևի՛չ ողորմութեան, պարգևի՛ր ինձ ուղղափառ հաւատքով եւ բարի գործով եւ Քո սուրբ Մարմնի եւ Արեան հաղորդութեամբ գալ Քեզ մօտ. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Ի

Բարերա՛ր Տէր, ինձ բարի հրեշտակի՛ յանձնիր՝ իմ հոգին քաղցրութեամբ աւանդելու եւ անխռով անցնելու դեւերի չարիքի միջով, որոնք երկնքի ներքոյ են. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԱ

Լո՛յս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորի՛ր իմ հոգուն կոչման օրը ուրախութեամբ տեսնել Քո փառքի լոյսը եւ բարիքների յոյսով բնակուել արդարների օթեւաններում մինչեւ Քո գալստեան մեծ Օրը. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԲ

Դատաւո՛ր արդար, յորժամ գաս փառօք Հօր՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի Քում, այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն եւ լսելի՛ արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԳ

Ամէնողո՛րմ Տէր, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց ի Քեզ, իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց. շնորհեա՛ եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց զթողութիւն որ առ իս յանցանաց, եւ դարձո՛ զնոսա ի չարեացն, զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ Քում արժանի եղիցին. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԴ

Փառաւորեա՛լ Տէր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս Քոյ եւ կատարեա՛ ի բարի զխնդրուածս իմ՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին եւ

ԻԲ

Դատաւո՛ր արդար, երբ գաս Հօր փառքով՝ դատելու կենդանիներին եւ մեռեալներին, մի՛ մտնիր դատաստանի մէջ Քո ծառայի հետ, այլ փրկի՛ր ինձ յաւիտենական հրից եւ արժանի՛ արա ինձ լսել արդարներին երկնքի արքայութիւն հրաւիրող երանաւէտ ձայնը. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԳ

Ամէնողո՛րմ Տէր, ողորմի՛ր բոլոր Քեզ հաւատացողներին, իւրայիններիս եւ օտարներին, ծանօթներին եւ անծանօթներին, կենդանիներին եւ մեռեալներին. թողութի՛ւն շնորհիր նաեւ իմ թշնամիներին եւ ինձ ատողներին իմ դէմ [գործած] յանցանքների համար եւ ե՛տ դարձրու նրանց չարիքից, որ պահում են իմ դէմ, որպէսզի արժանի լինեն Քո ողորմութեանը. եւ ողորմի՛ր Քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԴ

Փառաւորեա՛լ Տէր, ընդունի՛ր Քո ծառայի աղաչանքները եւ ի բարի՛ կատարիր իմ խնդրուածքները՝ բարեխօսութեամբ սրբուհի Աստուածած-

Յովհաննու Մկրտչին եւ սրբոյն Ստեփանոսի Նախավկային եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ սրբոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց, միանձանց եւ ամենայն սրբոց Քոց երկնաւորաց եւ երկրաւորաց. եւ Քեզ փա՛ռք եւ երկրպագութի՛ւն՝ անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, յաւիտեանս. ամէն:

* * *

Օրհնութիւն սեղանոյ

Օրհնեա՛, Քրիստո՛ս Աստուած մեր, հոգեւոր օրհնութեամբ զկերակուրս եւ զըմպելիս ծառայից Քոց եւ շնորհեա՛ առողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ, որպէս զի պարկեշտութեամբ վայելելով ի մարմնաւոր պիտոյիցս՝ անանց բարեացդ եւ երկնից արքայութեանդ հաղորդս լիցուք ընդ ամենայն սուրբս Քո: Եւ գոհութեամբ փառաւորեսցուք զՔեզ ընդ Հօր եւ Ամենասուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հայր մեր, որ յերկինս ես...:

նի եւ Յովհաննէս Մկրտչի եւ սուրբ Ստեփանոս Նախավկայի եւ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի եւ սուրբ առաքեալների, մարգարէների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնաւորների, կոյսերի, միանձանց եւ Քո բոլոր երկնաւոր եւ երկրաւոր սուրբերի. եւ Քեզ՝ անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, փա՛ռք եւ երկրպագութի՛ւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

* * *

Սեղանի օրհնութիւն

Օրհնի՛ր, Քրիստո՛ս Աստուած մեր, հոգեւոր օրհնութեամբ քո ծառաների կերակուրները եւ ըմպելիքները եւ շնորհի՛ր հոգու եւ մարմնի առողջութիւն, որպէսզի պարկեշտութեամբ վայելելով այս մարմնաւոր պէտքերից՝ քո բոլոր սուրբերի հետ հաղորդ լինենք անանց բարիքներիդ եւ երկնքի արքայութեանը: Եւ գոհութեամբ փառաւորենք Քեզ Հօր եւ Ամենասուրբ Հոգուդ հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հայր մեր, որ երկնքում ես...:

Ապա օրհնող սեղանոյն ասէ.

Ճաշակեսցուք խաղաղութեամբ զկերակուրս, որ պատրաստեալ է մեզ ի Տեառնէ. օրհնեալ է Տէր ի պարգեւս Իւր. ամէն:

Գոհութիւն զկնի ճաշու

Փա՛ռք Քեզ, Տէ՛ր, փա՛ռք Քեզ, Թագաւո՛ր փառաց, որ ետուր մեզ կերակուր ուրախութեան եւ լցուցեր զսիրտս մեր ի լիութենէ ամենաբաւական ողորմութեան Քոյ: Լցո՛ եւ այժմ զմեզ Հոգւովդ Քով Սրբով, որպէս զի գտցուք առաջի Քո հաճոյք եւ մի՛ ամաչեցեալք, զի Դու գաս եւ հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր: Եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հայր մեր, որ յերկինս ես...:

Զկերողքս Աստուած օրհնեսցէ, սպասաւորաց եւ երախտաւորացն վարձս բարեաց պարգեւեսցէ. եւ օրհնեսցէ զամենեսեան Քրիստոս Աստուած, որ զմեզ կերակրեաց եւ լիացոյց, Նմա փա՛ռք յաւիտեանս. ամէն:

Ապա սեղան օրհնողն ասում է.

Խաղաղութեամբ ճաշակե՛նք այս կերակուրները, որոնք մեզ համար պատրաստուած են Տիրոջ կողմից. օրհնեա՛լ է Տէրն Իր պարգեւներում. ամէն:

Գոհութիւն ճաշից յետոյ

Փա՛ռք Քեզ, Տէ՛ր, փա՛ռք Քեզ, փառա՛ց Թագաւոր, որ տուեցիր մեզ ուրախութեան կերակուր եւ Քո ամենաբաւ ողորմութեան լիութեամբ լցրեցիր մեր սրտերը: Այժմ լցրո՛ւ մեզ նաեւ Քո Սուրբ Հոգով, որպէսզի ընդունելի լինենք Քո առաջ եւ ոչ՝ ամօթահար, քանզի Դու գալիս ես եւ հատուցում իւրաքանչիւրին ըստ իր գործերի: Եւ Քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հայր մեր, որ երկնքում ես...:

Ուտողներին Աստուած թող օրհնի, սպասաւորներին եւ երախտաւորներին բարիքների վարձատրութիւն պարգեւի. եւ թող օրհնի բոլորին Քրիստոս Աստուած, որ մեզ կերակրեց եւ լիացրեց, Նրան փա՛ռք յաւիտեանս. ամէն:

ԴԱՒԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ

ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած եւ Տէր եւ Հայր եւ խնամակալ առաւել այսր ստեղծուածոց:

Ո՛վ արարիչ եւ հաստիչ եւ պահապան ազգիս քրիստոնէից, Յիսո՛ւս Քրիստոս, Որդի՛ եւ Բա՛ն Հօր:

Ո՛վ դատաւոր եւ այցելու եւ քննիչ եւ հատուցանող իւրաքանչիւր մտածութեանց եւ բանից եւ գործոց, Հոգի՛դ Աստուած:

Ո՛վ Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ՝ Երրորդութիւն անբաժանելի: Զխոստովանութիւն ուղղափառ դաւանութեանդ Քոյ, զոր աւանդեցեր մեզ, հաստատուն եւ աներկեւա՛ն պահեա ի մեզ: Մի՛ որպէս մեքս իմանամք եւ ասեմք փանաքիմաց բայիւք մերովք, այլ որպէս Դու իսկ գիտես անճառելի եւ խորին Քո իմաստութեամբ եւ որպէս եղ անփոփոխելի Քոյին բնութեամբդ, զնոյնն մատակարարեա՛ եւ ծանո՛ մեզ: Եւ ի նոյնն բա՛ց զբերանս մեր ի խոստովանութիւն: Վասն զի մեք մերովս գիտութեամբ եւ քննութեամբ եւ ոչ զտրուպսն

ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած եւ Տէր եւ Հայր եւ խնամակալ այս բոլոր ստեղծուածների:

Ո՛վ արարիչ, ստեղծիչ եւ պահապան քրիստոնեաներիս, Յիսո՛ւս Քրիստոս, Հօր Որդի՛ եւ Բա՛ն:

Ո՛վ դատաւոր, այցելու, քննիչ եւ հատուցող՝ իւրաքանչիւր մտածութեան, խօսքի եւ գործի, Հոգի՛դ Աստուած:

Ո՛վ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի՝ անբաժանելի Երրորդութիւն: Քո ուղղափառ դաւանութեան խոստովանութիւնը, որ աւանդեցիր մեզ, հաստատուն եւ անպղտո՛ր պահիր մեր մէջ: Ո՛չ այնպէս, ինչպէս մենք ենք հասկանում եւ խօսում մեր աղքատամիտ խօսքերով, այլ ինչպէս որ Դու իսկ գիտես Քո անճառելի եւ խորին իմաստութեամբ եւ ինչպէս որ կաս Քո անփոփոխելի բնութեամբ, նոյնը մատակարարի՛ր եւ ճանաչեցրո՛ւ մեզ: Եւ նոյնով բա՛ց մեր բերանները՝ [հաւատքի] խոստովանութեան: Քանզի մենք մեր իմացութեամբ եւ քննութեամբ՝ Քո արարածների ետիններին իսկ չենք կարող խ-

յարարածոց Քոց կարասցուք տիրապէս գիտել, թող թէ՝ զԱրարիչդ արարածոցս: Զի որքան ինչ միանգամ ասեմք զՔեզ, որ ինչ շուրջ է զՔեւ, ասեմք եւ ոչ զբնութիւնդ Քո ճառեմք: Եւ յայսոսիկ եթէ, մարդկեղէն տկարութեամբ խօսելով զանճառ փառաց Քոց, եւ անգիտութեամբ զառանցեմք ինչ կամ յանցանեմք՝ մարդիկ գոլով եւ դիւրագայթ՝ ի բանս, Դո՛ւ, որպէս մարդասէր եւ ներող, գթա՛ եւ թո՛ղ մեզ: Եւ դի՛ր դուռն ամուր շրթանց մերոց ճշմարտութիւնդ Քո, զի մի՛ երբեք բացցուք զսա առանց հաճոյից կամաց Քոց: Եւ զհասարակաց լրութիւն այսր Եկեղեցւոյ Քում սրբոյ հովուաց եւ հօտից՝ խնամեսցես ի մարմնի եւ պահեսցես ուղղափառ խոստովանութեամբ՝ ըստ առաքելական աւանդութեանցն, մինչեւ ի միւսանգամ գալուստ Քո յերկնից: Եւ յայնժամ նորոգեա՛ զմարմին խոնարհութեան մերոյ ըստ անեղծ փառաց Քոց, Քրիստո՛ս Աստուած մեր: Եւ Քեզ ընդ Հօր Քոյ եւ Ամենասուրբ Հոգւոյդ փա՛ռք, իշխանութի՛ւն, տէրութի՛ւն եւ արքայութի՛ւն եւ երկրպագութի՛ւն ի բնաւից արարածս այժմ եւ յանվախճան յաւիտեանս եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

կապէս ճանաչել, ուր մնաց թէ՝ արարածների Արարչիդ: Քանզի որքան էլ երբեւէ ասում ենք Քո մասին, խօսում ենք Քո շուրջ եւ ոչ թէ ճառում Քո էութիւնից: Եւ այս բաներում եթէ, մարդկեղէն տկարութեամբ խօսելով Քո անճառ փառքի մասին, անգիտութեամբ զառանցում ենք ինչ-որ բան կամ յանցում՝ մարդ լինելով եւ դիւրագայթ՝ խօսքերում, Դո՛ւ, որպէս մարդասէր եւ ներող, գթա՛ եւ ների՛ր մեզ: Եւ որպէս ամուր դուռ դի՛ր մեր շուրթերին Քո ճշմարտութիւնը, որպէսզի երբեք չբացենք այն առանց Քո կամքի հաճութեան: Եւ Քո այս սուրբ Եկեղեցու հովիւների եւ հօտի ընդհանուր ամբողջութիւնը խնամի՛ր մարմնի մէջ եւ պահի՛ր ուղղափառ խոստովանութեամբ՝ ըստ առաքելական աւանդութեան, մինչեւ Քո վերստին գալուստը երկնքից: Եւ այնժամ նորոգի՛ր մեր խոնարհութեան մարմինն ըստ Քո անեղծ փառքի, Քրիստո՛ս Աստուած մեր: Եւ Քեզ Հօր եւ Ամենասուրբ Հոգուդ հետ փա՛ռք, իշխանութի՛ւն, տէրութի՛ւն եւ արքայութի՛ւն եւ երկրպագութի՛ւն համայն արարածների կողմից այժմ եւ անվախճան յաւիտեաններում եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ԲԱՆ ԽԴ

Ա

Աստուա՛ծ անսահման, ծնո՛ւնդ Աստուծոյ՝ հարազատ, անթարգմանելի, Արարի՛չ բնաւին եղելոց, Քրիստո՛ս թագաւոր, լոյս՝ ի խաւարի սրտից մթացելոց, ընդ մեզ՝ լրմամբ, եւ ընդ Առաքչիդ՝ իսկութեամբ, մերայնովս զՔոյինսդ ծանուցանող հրաշապէս: Հայր Քո օրհնեալ, երկնաւոր, անճառ, որ առաքեացդ զՔեզ ի վերուստ, Ում փառակիցդ ես արարչութեամբ. այնքան հոգացաւ փրկութեան իմոյ տարագրեալ գերւոյ, մինչեւ զՔեզ իսկ մատնեաց մարդկան: Իսկ Դու, կարող գոլով ի վեր քան զվիշտս զտնտեսութեանն աւարտեալ խորհուրդ, հաճեցար ընդ պարտեցելումս զմահուն ճաշակել բաժակ՝ անթերի մարդկութեամբ եւ անպակաս Աստուածութեամբ: Եւ Հոգիդ Սուրբ կենդանարար՝ որպէս Քո եւ Հօր Քոյ իսկակից եւ համապատիւ էութեամբ՝ Մեծոդին եւ Մնի-

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ԲԱՆ ԽԴ

Ա

Աստուա՛ծ անսահման, անբացատրելի հարազատ ծնո՛ւնդ Աստուծոյ, Արարի՛չ բոլոր արարածների, Քրիստո՛ս թագաւոր, լո՛յս՝ մթնած սրտերի խաւարի մէջ, մեզ հետ՝ կատարելապէս, եւ Առաքչիդ հետ՝ իսկութեամբ, որ մեր [բնութեամբ] Քոնն ես ծանուցում հրաշապէս: Օրհնեալ է Հայրդ երկնաւոր եւ անճառ, որ առաքեց Քեզ ի վերուստ, Ում փառակիցդ ես արարչութեամբ. տարագիր գերուս փրկութեան համար Նա այնքան հոգաց, որ մինչեւ անգամ Քեզ մատնեց մարդկանց: Իսկ Դու, կարող լինելով առանց վշտի կատարել փրկագործութեան խորհուրդը, հաճեցար մահուան բաժակն ըմպել մեղապարտիս հետ՝ անթերի մարդկութեամբ եւ անպակաս Աստուածութեամբ: Եւ Հոգիդ Սուրբ կենդանարար, ինչպէս որ՝ Քեզ, այնպէս եւ իսկակից է Հօրդ եւ էութեամբ համապատիւ՝ Մեծոդիդ եւ Մնուածիդ: Մի Երրոր-

ցելոյդ: Մի Երրորդութիւն կատարեալ՝ ի Դիմաց Երից անորոշելի հատուածոց, անսկիզբն եւ անժամանակ, բնաւին բարերար, համայն կենդանարար, բոլորից խաղաղարար, ստեղծիչ գոյից եւ յօրինիչ ամենից, անքակութեամբ եւ միով բնութեամբ փառաւորեալ:

Բ

Իսկ եթէ Հայրն գթած, երկնաւոր, հզօր՝ մին յէութենէ, վասն մահապարտիս յանցանաց մատոյց միայնակ Մնուանդ յանքնին ծոցոյն՝ ոչ անխայեալ յՈրդիդ՝ ի համապատիւդ եւ ի սիրելիդ, այլ կամաւ նուիրեաց մահու չարողացն զինու՝ ըստ մարգարէութեանն Զաքարիայ, վասն զի «Զարթնուլ սրոյն ի վերայ հովուին եւ հարկանել նոյն Ինքն Հօտապետին եւ ցրուել ոչխարացն հօտին», որպէս օրինակն նուրբ նախագրին եւ ուխտագրութիւն խորանին եւ նուիրումն արեան սպանդին եւ առակ խորհրդոյ աբրահամեան պատարագին, զփրկութիւն Թշուառացելոյս ի կամաց Կեցուցչիդ յառաջագոյն նկարագրէր. եւ արդ, հի՞մն տրամիս, ա՜նձն իմ, կործանեալ՝ ոչ յաստուա-

դութիւն կատարեալ՝ հատուածների չբաժանուող Երեք Դէմքերով, անսկիզբ եւ անժամանակ, բացարձակ բարերար, համայն կենդանարար, բոլորի խաղաղարար, ստեղծիչ գոյութեանց եւ յօրինող ամենայնի, անքակտելիօրէն եւ մի բնութեամբ փառաւորուած:

Բ

Իսկ եթէ գթած երկնաւոր Հայրը հզօր՝ մէկն էութիւնից, մահապարտիս յանցանքների համար զոհաբերեց Իր անքնին ծոցի միակ Մնուանդը՝ չխնայելով Իրեն համապատիւ սիրելի Որդուն, այլ կամովին նուիրեց Նրան մահուան զէնքերով չարչարողներին՝ ըստ Զաքարիայի մարգարէութեան, թէ՝ «Պիտի ելնի սուրը Հովուի վրայ, եւ պիտի զարկուի Ինքը Հօտապետը, եւ ոչխարների հօտը պիտի ցրուի», ինչպէս նախագրողի նուրբ օրինակը եւ խորանի ուխտը եւ սպանդի արեան նուիրումը եւ աբրահամեան պատարագի խորհուրդի օրինակը, որոնք նախապէս նկարագրեցին Թշուառիս փրկութիւնը՝ Կեցուցչիդ կամքով. եւ արդ, ինչո՞ւ ես տրտմում, ա՜նձ իմ, որ քո ինքնակամ

ծուստ հնարաւորութեանց, այլ՝ ի քումդ ինքնագործ հակամիտութեանց. կամ ընդէ՞ր զիս խռովես՝ յուսահատութեամբ սատանայականաւ զմիտս հարեալ: Ցուսա՛ յԱստուած, խոստովա՛ն լեր Նմա, եւ Նա հոգայ վասն քո՝ ըստ դաւթեան սաղմոսին եւ այլ մարգարէի կենսախրախոյսն բանի:

Զ

Իսկ յեղանակ խնամարկելոյ Հաստողին ի վեր է, քան զսահման կշռութեան մտաց հրեշտակաց եւ երկրականաց, եւ եթէ բիւրս կրկնեսցի, ոչ լինի չափեալ, քանզի Անբովանդակելոյն եւ բարերարելն է անճառելի: Նա զի՝ Ոմն օրհնեալ, զՈմն օրհնաբանեալ յերրորդական համագոյութենէն առաքեաց, իսկ Նա ի հաճութիւն կամաց Առաքչին մեռաւ. եւ Միւսն ահաւոր ի յերկուցն հաւանութիւն մեծաշնան բաղձանօք մաղթէ: Իսկ համաբարոյ միակամութեանն ցուցակ՝ առ ի զնոյն բարի ներգործել, որպէս հոգին՝ կենդանւոյն եւ բանն՝ բանականին, պայծառութիւն՝ փառացն եւ կերպարան՝ էութեանն: Առ կեանսն՝ փոյթ, առ ողորմութեանն՝ ընտրութեամբ ես կործանուել եւ ոչ՝ Աստուծոյ կամեցողութեամբ. կամ ինչո՞ւ ես խռովում ինձ՝ մտատանջուելով սատանայական յուսահատութեամբ: Ցուսա՛ առ Աստուած եւ խոստովանի՛ր Նրան, եւ Նա քեզ համար կհոգայ՝ ըստ դաւթեան սաղմոսի եւ մարգարէի կենսախրախոյս խօսքի:

Զ

Իսկ Ստեղծողի խնամարկութեան չափն աւելի վեր է, քան հրեշտակների եւ մարդկանց մտքի կշռութեան սահմանը, եւ թէ բիւր անգամ կրկնուի, դարձեալ չի չափուի, զի Անբովանդակելիի բարերարութիւնն էլ անճառելի է: Քանզի Նա՝ Մէկը՝ օրհնեալ համագոյական Երրորդութիւնից, առաքեց Միւսին օրհնաբանուած, իսկ Նա մեռաւ ի հաճութիւն Իր Առաքչի կամքի. եւ Միւսն ահեղ, երկուսի հաւանութեամբ բարեխօսում է մեծաշնան բաղձանքով: Եւ ինչպէս հոգին՝ կենդանութեան, խօսքը՝ բանականութեան, պայծառութիւնը՝ փառքի, եւ կերպարը էութեան համար է, այս օրինակով էլ Նրանց համաբարի միակամութիւնը՝ միեւնոյն բարին ներգործելու: Փոյթ՝ ապրեցնելու,

թիւնն՝ սթափ, առ ձեռնկալութիւնն՝ պատրաստ, առ փրկութիւնն՝ կազմ, առ առատութիւնն՝ յորդ, առ յաճախութիւնն՝ զեղուն, առ անբաւութիւնն՝ լի, առ աննուազութիւնն՝ փարթամ, առ երկայնմտութիւնն՝ ճոխ, առ անհասութիւնն՝ բարձրեալ. Մի երրորդութիւն կատարեալ ի յԱնձանց Երից՝ օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Աղօթք առ Որդին Միածին

Այլ շուրջ պատեալ ի տարակուսանացս յամենայն կողմանց՝ սրտիւ շաղախեալքս եւ ունկնդրութեան կարօտեալքս նայիմք առ Քեզ, փոքր տկար բնութեանս քահանայապե՛տդ Յիսուս: Ո՛վ, որ վասն մեր մեղս եղեր, զի մեք լիցուք վասն Քո արդարութիւն: Ո՛վ, որ վասն մեր երկրաւոր եղեր, զի մեք լիցուք վասն Քո երկնաւորք: Ո՛վ, որ վասն մեր հաց եղեր, զի մեք, ի ճաշակելն զՔեզ, սրբեսցուք: Տո՛ւր զպարարեալ վշտաք մարմին Քո՝ ամենայնիւ սթափ՝ ողորմելու, պատրաստ՝ օգնութեան ձեռք կարկառելու եւ փրկելու, առատութեամբ՝ յորդ, շատութեամբ՝ զեղուն, անբաւութեամբ՝ լի, աննուազութեամբ՝ փարթամ, ներողամտութեամբ՝ ճոխ, եւ անհասութեամբ՝ բարձրեալ. Մի կատարեալ Երրորդութիւն Երեք Անձերից՝ օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Աղօթք Միածին Որդուն

Այլ ամէն կողմից տարակուսանքներով շրջապատուած՝ սրտով պղծուածներս եւ ունկնդրութեան կարօտեալներս Քեզ ենք նայում, մեր տկար բնութիւնը կրած քահանայապե՛տդ Յիսուս: Ո՛վ Դու, որ մեզ համար մեղապարտ եղար, որպէսզի մենք Քեզանով արդարանանք: Ո՛վ Դու, որ մեզ համար երկրաւոր եղար, որպէսզի մենք Քեզանով երկնաւորներ լինենք: Ո՛վ Դու, որ մեզ համար հաց եղար, որպէսզի մենք, Քեզ ճաշակելով, սրբուենք: Տո՛ւր Քո ցաւերով լի մարմինը՝ որպէս ամենայն սրտի

նայն սրտի սրբարար կերակուր: Մատռուակեա՛ զարեան Քոյ վտակ՝ անմեղ կայլակեալ՝ որդւոց մարդկան անմեղութեան զմայլումն: Զգեա՛ զփրկական Քո զխաչդ հողելոցս ի ծով աշխարհիս՝ առ Քեզ վերածիչ: Կարօտացաք շնորհի, սփռեա՛, լքաք ի գործոց, քաւեա՛, խարխափեմք զխաւար, ճառագայթեա՛, կործանեցաք ի հաւատոց, հաստատեա՛: Դո՛ւ ես յոյս, Դո՛ւ ես լոյս, Դո՛ւ ես կեանք, Դո՛ւ ես քաւութիւն, Դու ի՛նքն եւ անմահութիւն: Քեզ սպասեն յեցեալքս ի շնորհս Քո, ի Քէն կարօտին առնուլ փրկութիւն խառնեալքս ի մարմինդ Քո, զՔեզ ունին քաւիչ քահանայ՝ գնեալ արեամբ հօտս Քո: Հայեա՛ց յամենեսեան, սփոփեա՛ զտարակուսանս մեր Քոյին վաստակովքդ, հանդարտեցո՛ զխռովութիւնս մեր Քոյին խաղաղութեամբդ, հանգո՛ զաշխատանս մեր ի Քո օթեւանսդ, ուր Դու գնացեր, ո՛վ Տէր, եւ խոստացար: Արժանացո՛ զքոյսս փառաւորել զՔեզ այդր ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ յաւիտեանս. ամէն:

սրբարար կերակուր: Մատռուակի՛ր անմեղ հոսող Քո արեան վտակը՝ ի յագուրդ անմեղութեան մարդկանց որդիների: Մեկնի՛ր աշխարհի ծովում թաղուածներիս Քո փրկական խաչը՝ առ Քեզ վեր հանող: Կարօտեցինք շնորհի, սփռի՛ր, լքուած մնացինք գործերից, քաւի՛ր, խարխափում ենք խաւարում, ճառագայթի՛ր, ընկանք հաւատից, հաստատի՛ր: Դո՛ւ ես յոյս, Դո՛ւ ես լոյս, Դո՛ւ ես կեանք, Դո՛ւ ես քաւութիւն, Դո՛ւ ինքն իսկ անմահութիւն: Քեզ են սպասում Քո շնորհներին ապաւինողները, Քեզանից փրկութիւն ստանալու են կարօտ Քո մարմնին միաւորուածները, Քեզ ունի որպէս քաւիչ քահանայ Քո արեամբ գնուած Քո հօտը: Նայի՛ր ամենքին, սփոփի՛ր մեր տարակուսանքները Քո չարչարանքներով, հանդարտեցրո՛ւ մեր խռովութիւնները Քո խաղաղութեամբ, հանգստացրո՛ւ մեր հոգնութիւնները Քո օթեւաններում, ուր Դու գնացիր, ո՛վ Տէր, եւ խոստացար: Արժանացրո՛ւ իւրայիններիդ փառաւորել Քեզ այդտեղ Հօր եւ Սուրբ Հոգու հետ յաւիտեանս. ամէն:

Մաղթանք առ Սուրբ Հոգին Աստուած

Գա՛նձ լուսոյ, փառակի՛ց Որդւոյ, անճա՛ռ զօրութիւն, ահե՛ղ մեծութիւն, անբա՛ւ բնութիւն: Լո՛յս՝ ի լուսոյ, Ոգի՛ բարձրելոյ, պատկե՛ր անփոփոխ, պա՛րզ, անզննելի՛: Հաստի՛չ հոգւոց, հանդերձի՛չ մարմնոց, անո՛ւն պաշտելի, ճշմարի՛տ, բարի՛, անեղծանելի՛: Էակի՛ց ընդ Հօր եւ Տէ՛ր բոլորից, ահա՛ ընկալցիս զերկրպագութիւն Քում դաւանողացս Քեզ ի հաճութիւն, աղաչե՛մք:

Մաղթանք Սուրբ Հոգի Աստծուն

Գա՛նձ լոյսի, փառակի՛ց՝ Որդուն, անճա՛ռ զօրութիւն, ահե՛ղ մեծութիւն, անբա՛ւ բնութիւն: Լո՛յս՝ լոյսից, Ոգի՛ Բարձրեալի, պատկե՛ր անփոփոխ, պա՛րզ, անզննելի՛: Արարի՛չ հոգիների, ստեղծո՛ղ մարմինների, անո՛ւն պաշտելի, ճշմարի՛տ, բարի՛, անեղծանելի՛: Հօր հետ էակից եւ Տէ՛ր բոլորի, աղաչո՛ւմ ենք՝ ահա ընդունի՛ր Քեզ դաւանողներիս երկրպագութիւնն ի հաճութիւն Քեզ:

ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ

Աղօթք ապաշխարութեան

Տէ՛ր երկնի եւ երկրի Յիսուս Քրիստոս, իշխա՛ն կենաց եւ մահու, դատաւո՛ր կենդանեաց եւ մեռելոց, յո՛յս եւ ապաւէ՛ն հոգւոյ իմոյ, Քեզ մատուցանեմ զերկրպագութիւնս եւ զմաղթանս աղօթից իմոց: Լո՛ւր ինձ եւ քաւեա՛ զմեղս իմ, որ միա՛յնդ ես առանց մեղաց, որ միա՛յնդ ես սուրբ եւ ի սուրբս հանգուցեալ, որ միա՛յնդ ես գթած եւ ողորմած: Ողորմեա՛ ինձ, Ստեղծի՛չ իմ, եւ օրհնեա՛ զիս: Հաշտեա՛ց ընդ իս, ապրեցուցի՛չ իմ, եւ յիշեա՛ զիս որպէս զաւազակն յարքայութեան Քում: Դա՛րձ առ իս, Աստուա՛ծ Փրկիչ իմ, եւ դարձո՛ զսրտմտութիւնս Քո յինէն: Մի՛ բարկութեամբ Քով խրատեր զիս եւ մի՛ սրտմտութեամբ Քով յանդիմաներ:

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ եւ մի՛ յիշեր զչարիս իմ եւ մի՛ պարտաւորեր զիս ըստ իմում անօրէնութեանս: Մի՛ ըստ մեղաց իմոց արասցես եւ մի՛ ըստ անօրէնութեան իմում հատուցցես ինձ: Մի՛ ընկենուր զիս յերեսաց Քոց եւ մի՛ դատապարտեր զիս, զի ես ինձէն գիտեմ,

Ապաշխարութեան աղօթք

Տէ՛ր երկնքի եւ երկրի Յիսուս Քրիստոս, իշխա՛ն կեանքի եւ մահուան, դատաւո՛ր կենդանիների եւ մեռեալների, յո՛յս եւ ապաւէ՛ն իմ հոգու, Քեզ եմ մատուցում իմ աղօթքի երկրպագութիւնը եւ աղերսները: Լսի՛ր ինձ եւ քաւի՛ր իմ մեղքերը, որ միա՛կդ ես առանց մեղքերի, որ միա՛կդ ես սուրբ եւ սուրբերի մէջ ես բնակւում, որ միա՛կդ ես գթած եւ ողորմած: Ողորմի՛ր ինձ, Ստեղծի՛չ իմ, եւ օրհնի՛ր ինձ: Հաշտուի՛ր ինձ հետ, կենսատո՛ւ իմ, եւ արքայութեանդ մէջ յիշի՛ր ինձ, ինչպէս աւազակին: Դարձի՛ր դէպ ինձ, Փրկի՛չ իմ Աստուած, եւ դարձրո՛ւ ինձանից Քո ցասումը: Բարկութեամբդ մի՛ խրատիր ինձ եւ Քո ցասումով մի՛ յանդիմանիր:

Մի՛ բարկացիր ինձ վրայ յաւիտեան եւ մի՛ յիշիր իմ չարիքները եւ մի՛ մեղադրիր ինձ ըստ իմ անօրէնութիւնների: Մի՛ վարուիր ինձ հետ ըստ իմ մեղքերի եւ մի՛ հատուցիր ինձ ըստ իմ անօրէնութեան: Մի՛ զրկիր ինձ Քո երեսից եւ մի՛ դատապարտիր ինձ, քանի որ ես ինքս գի-

զի յանցաւոր եմ ի մանկութենէ իմմէ եւ անպատասխանի եմ առաջի Քո:

Այլ Դո՛ւ, Թագաւո՛ր հզօր եւ անոխակալ, որ զյանցանս թողեր կնոջն մեղաւորի, թո՛ղ եւ ինձ զպարտիս՝ մեղուցեալ եւ անօրինեալ Քո ծառայիս: Քանզի Քո առատ բարերարութիւնդ յայնժամ երեւի, յորժամ ինձ ողորմիս, որ չեմ արժանի ողորմութեան Քում, յորժամ ինձ ցուցանես զգթութիւնդ, որ արժանի եմ բիւրոց տանջանաց, զի զամենայն աւուրս իմ անցուցի ի չարիս եւ ոչ կացի ի հրամանի Քում:

Արդ, քաղցրացի՛ր ինձ, բարի եւ քա՛ղցր Թագաւոր, եւ հաշտեա՛ց ընդ բազմամեղիս եւ մի՛ դարձուցաներ զերեսս Քո յինէն եւ մի՛ խոտորիր բարկութեամբ ի ծառայէ Քումմէ: Մի՛ անարգեր զիս եւ մի՛ թողուր զիս, Աստուա՛ծ Փրկիչ իմ, զի թէպէտ ես զտաճար Հոգւոյդ Սրբոյ ապականեցի անառակ գնացիւք, այլ Դու գթա՛ յիս, Ստեղծի՛չ իմ ողորմած եւ անյիշաչար, եւ մի՛ ապականեր զհոգի իմ յաւիտենական այրմամբ ի գեհեան հրոյն: Երկայնամի՛տ լեր առ իս, մարդասէ՛ր, եւ շնորհեա՛ ինձ ժամանակ ապաշխարութեան եւ զղջումն արտասուաց եւ զօրացո՛ զսիրտ իմ՝ խորհել իմաստուն եմ, որ յանցաւոր եմ իմ մանկութիւնից եւ անպատասխան եմ Քո առջեւ:

Բայց Դո՛ւ, Թագաւո՛ր հզօր եւ անոխակալ, որ մեղաւոր կնոջ յանցանքները ներեցիր, ների՛ր իմ՝ մեղաւոր եւ անօրէն Քո ծառայի, պարտքերը: Քանզի Քո առատ բարերարութիւնն այնժամ է երեւում, երբ ողորմում ես ինձ, որ արժանի չեմ Քո ողորմութեանը, երբ ինձ ցոյց ես տալիս գթութիւնդ, որ արժանի եմ բիւր տանջանքների, քանի որ իմ բոլոր օրերն անցկացրեցի չարութեան մէջ եւ չմնացի Քո հրամանով:

Արդ, քաղցրացի՛ր իմ նկատմամբ, բարի եւ քա՛ղցր Թագաւոր, հաշտուի՛ր բազմամեղիս հետ եւ մի՛ դարձրու Քո երեսն ինձանից եւ բարկութեամբ մի՛ հեռացիր Քո ծառայից: Մի՛ անարգիր ինձ եւ մի՛ լքիր ինձ, իմ Փրկի՛չ Աստուած, քանի որ թէպէտ ես Սուրբ Հոգուդ տաճարն ապականեցի անառակ վարքով, բայց Դու գթա՛ ինձ, Ստեղծի՛չ իմ՝ ողորմած եւ անյիշաչար, եւ մի՛ ապականիր իմ հոգին գեհենի հրում յաւիտենական այրմամբ: Երկարամի՛տ եղիր իմ հանդէպ, մարդասէ՛ր, եւ շնորհի՛ր ինձ ապաշխարութեան ժամանակ եւ արցունքով զղջում եւ զօրացրո՛ւ սիրտն իմ՝ իմաստութեամբ խոր-

թեամբ զօրէնս Քո ի տուէ եւ ի գիշերի, գործել զբարի եւ առնել զարդարութիւն առաջի Քո:

Համբառնամ առ Քեզ զաչս իմ եւ բոլորով սրտիւ իմով կարդամ առ Քեզ, Տէ՛ր Քրիստոս, միածին Որդի՛ Աստուծոյ, որ, յաղթեալ ի մարդասիրութենէ Քումմէ, կամաւ խոնարհեցար յանճառ փառացդ եւ առեր զծառայի կերպարան եւ չարչարանաց խաչի եւ մահու համբերեցեր վասն փրկութեան ստեղծուածոց Քոց:

Արդ, որ այսպիսի սէր ունիս առ ազգս մարդկան եւ կամիս, զի ամենայն մարդ կեցցէ եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ, զթա եւ յի՛ս՝ ի բազմամեղս, մարդասէ՛ր Տէր, եւ կամեա՛ց ընդ իմ փրկութիւն եւ արա՛ ինձ ողորմութիւն, որ առաւել եմ ողորմելի, քան զամենայն մարդիկ: Զի ոչ սիրեցի զՔեզ ի բոլոր սրտէ իմմէ եւ ոչ պահեցի զպատուիրանս Քո յամենայն զօրութենէ իմմէ, այլ ունայնութեամբ անցուցի զաւուրս իմ եւ կատարեցի զկամս սրտի իմոյ: Աւուրք իմ պակասեցան, եւ անօրէնութիւնք իմ առաւելան, եւ ոչ գոյ ինձ յոյս փրկութեան եւ տեղի ապաւինի բաց ի Քէն, զի միայն ի Քո բարերարութիւնդ յուսացեալ եմ եւ ի Քո առատ ողորմութիւնդ ապաւինեալ:

հելու Քո օրէնքների մասին օր ու գիշեր, բարութիւն եւ արդարութիւն գործելու Քո առջեւ:

Բարձրացնում եմ դէպի Քեզ իմ աչքերը եւ իմ ամբողջ սրտով կանչում Քեզ, Տէ՛ր Քրիստոս, Միածի՛ն Որդի Աստուծոյ, որ Քո մարդասիրութիւնից յաղթուելով՝ կամովին խոնարհուեցիր անճառ փառքիցդ եւ առար ծառայի կերպարանք, խաչի ու մահուան չարչարանքներին համբերեցիր Քո ստեղծածների փրկութեան համար:

Արդ, որ այսպիսի սէր ունես մարդկանց հանդէպ եւ կամենում ես, որ ամէն մարդ ապրի եւ հասնի ճշմարիտ գիտութեանը, գթա եւ ի՜նձ՝ բազմամեղիս, մարդասէ՛ր Տէր, եւ կամեցի՛ր իմ փրկութիւնը եւ արա՛ ինձ ողորմութիւն, որ առաւել ողորմելի եմ, քան բոլոր մարդիկ: Քանի որ Քեզ չսիրեցի իմ ողջ սրտով եւ Քո պատուիրանները չպահեցի իմ ողջ զօրութեամբ, այլ ունայնութեամբ անցկացրեցի իմ օրերն ու կատարեցի իմ սրտի կամքը: Իմ օրերը պակասեցին, եւ իմ անօրէնութիւնները շատացան, եւ Քեզանից բացի ինձ համար չկայ փրկութեան յոյս եւ ապաւինութեան տեղ, քանի որ միայն Քո բարերարութեանն եմ յուսացած եւ Քո առատ ողորմութեանն ապաւինած:

Եւ արդ, բղխմամբ արտասուաց աղաչեմ զՔեզ՝ մինչչեւ է ժամանակ դարձի իմոյ հասեալ, եւ մինչչեւ եմ իսպառ կորուսեալ, շնորհեա՛ ինձ ապաշխարութիւն եւ յառաջ քան զվախճանն իմ արձակեա՛ զիս ի կապանաց մեղաց իմոց եւ անտե՛ս արա զանթիւ անօրէնութիւնս իմ:

Որ ամենայն բարութեանց ես տէր եւ իշխան ես թողուլ զմեղս, ծածկեա՛ զամենայն յանցանս իմ Քոյով բարեգթութեամբդ եւ մխիթարեա՛ զվշտացեալ եւ զտարակուսեալ հոգի իմ եւ առաջնորդեա՛ ինձ յայսմհետէ ըստ կամաց Քոց քաղաքավարիլ զայլ եւս պանդխտութեան իմոյ ժամանակս. եւ մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ, մինչեւ տարեալ հանգուսցես յօթեւանս արքայութեանդ երկնից:

Լո՛ւր, Տէ՛ր, աղօթից անարժան ծառայիս Քոյ, եւ խոնարհեցո՛ զունկն Քո ի պաղատանս իմ, որ ասացեր՝ «Հայցեցէ՛ք եւ գտջիք, բախեցէ՛ք, եւ բացցի ձեզ»: Եւ այժմ բա՛ց ինձ, Տէ՛ր, զդուռն ողորմութեան Քոյ, որ ողբալով կարդամ առ Քեզ, եւ մի՛ անտես առներ զաղաչանս մեղուցեալ անձին իմոյ, որ ոչ եկիր կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն:

Եւ արդ, արտասուքների բխմամբ աղաչում եմ Քեզ՝ քանի դեռ իմ դարձի ժամանակը չի հասել, քանի դեռ իսպառ կորստեան չեմ մատնուել, շնորհի՛ր ինձ ապաշխարութիւն եւ իմ վախճանից առաջ արձակի՛ր ինձ իմ մեղքերի կապանքներից եւ անտեսի՛ր իմ անթիւ անօրէնութիւնները:

Որ բոլոր բարիքների տէրն ես եւ մեղքերը ներող իշխան, ծածկի՛ր իմ բոլոր յանցանքները Քո բարեգթութեամբ եւ մխիթարի՛ր իմ վշտացած ու տարակուսած հոգին եւ առաջնորդի՛ր ինձ այսուհետեւ ըստ Քո կամքի ապրել իմ պանդխտութեան մնացած ժամանակը. եւ մի՛ թող ինձ իմ անձի կամքով [ապրելու], մինչեւ տանես բնակեցնես երկնքիդ արքայութեան օթեւաններում:

Լսի՛ր, Տէ՛ր, Քո անարժան ծառայի աղօթքներն ու խոնարհեցրո՛ւ Քո ունկն իմ պաղատանքներին, որ ասացիր. «Փնտրէ՛ք եւ կգտնէք, բախեցէ՛ք, եւ կբացուի ձեր առջեւ»: Եւ այժմ բա՛ց իմ առջեւ, Տէ՛ր, Քո ողորմութեան դուռը, որ ողբալով կանչում եմ Քեզ, եւ մի՛ անտեսիր իմ մեղաւոր անձի աղաչանքները, որ չեկար կանչելու արդարներին, այլ՝ մեղաւորներին ապաշխարութեան:

Եւ արդ, խոնարհեալ անձամբ, բեկեալ սրտիւ եւ ամօթալից երեսօք պաղատիմ անոխակալ տէրութեանդ Քոյ եւ յառաջ քան զդնիլ ատեանին աղաչեմ եւ նախ քան զփակիլ դրանն եւ հատանիլ անդարձ վճռոյն զարտասուս իմ արկանեմ առաջի Քո, ողորմա՛ծ Տէր, քա՛ղցր եւ անյիշաչա՛ր եւ երկայնամի՛տ՝ առ արարածս Քո: Մի՛ ընդ յիմար կուսանսն դատապարտեր զիս՝ փակելով զդուռն ողորմութեան Քոյ, եւ մի՛ ընդ չար եւ վատ ծառային առաքեր զիս ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց: Մի՛ մերժեր զիս ի դասուց սիրելեաց Քոց եւ մի՛ տարագիր առներ յերանաւէտ կենացն յաւիտենից: Մի՛ անբաժին հաներ զիս ի հայրենի ժառանգութենէն, զոր պատրաստեալ ես ի սկզբանէ աշխարհի սրբոց Քոց, եւ մի՛ զրկեր զիս յերկնաւոր հարսնարանէն:

Եւ վասն մեծ եւ փառաւորեալ թագաւորութեանդ Քոյ մի՛ մատներ ի դատաստան ընդ ծառայիս Քոյ եւ մի՛ հատուցաներ ինձ ըստ բազում անօրէնութեան իմում: Այլ շնորհեա՛ ինձ ընդ արժանաւորսն եւ ընդ կատարեալ հոգիսն աշակողմեան դասուն վերանալ լուսեղէն ամպօք ընդ առաջ Քոյ յօդս եւ ընդ սիրելիս եւ

Եւ արդ, խոնարհուած հոգով, փշրուած սրտով, ամօթալից երեսով պաղատում եմ Քո անոխակալ տէրութեանը եւ ատեան դնելուց առաջ աղաչում եւ, նախքան դռան փակելը եւ անփոփոխելի վճիռ կայացնելը, իմ արտասուքը Քո առջեւ հեղում, ողորմա՛ծ Տէր, քա՛ղցր եւ անյիշաչա՛ր եւ ներողամի՛տ՝ արարածներիդ հանդէպ: Ցիմար կոյսերի հետ մի՛ դատապարտիր ինձ՝ փակելով ողորմութեանդ դուռը, եւ չար ու ծոյլ ծառայի հետ մի՛ առաքիր ինձ արտաքին խաւարն, ուր աչքերի լաց է եւ ատամների կրճտում: Մի՛ հեռացրու ինձ Քո սիրելիների դասից եւ տարագիր մի՛ արա երանաւէտ յաւիտենական կեանքից: Անբաժին մի՛ հանիր ինձ հայրենի ժառանգութիւնից, որ պատրաստել ես Քո սուրբերի համար աշխարհի սկզբից, եւ մի՛ զրկիր ինձ երկնաւոր հարսնարանից:

Եւ յանուն Քո մեծ ու փառաւորեալ թագաւորութեան դատաստան մի՛ մտիր Քո ծառայի հետ եւ մի՛ հատուցիր ինձ ըստ իմ բազում անօրէնութիւնների: Այլ շնորհի՛ր ինձ աշակողմեան դասի արժանաւոր եւ կատարեալ հոգիների հետ լուսեղէն ամպերին [բազմած] բարձրանալ օդի միջով Քեզ ընդառաջ, Քո սիրելիների եւ կա-

ընդ կամարաս Քո ի յարազուարճ ուրախութիւնսն ուրախացո՛ եւ առատապարգեւ փառօքդ փառաւորեա՛ զիս յերամս արդարոց՝ ընդ նոսին հանգուցանելով ի Վերինդ Երուսաղէմ, յարքայութեանդ Քում յերկինս: Զի ընդ նոսին համաձայնեալ փառաւորեցից զՔեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Աղօթք

Ո՛վ, որ անեղդ ես եւ անստեղծ եւ Արարի՛չ ամենայն արարածոց, զոր ոչ երկիրս ստանալ հանդուրժէ, եւ ոչ երկինք բովանդակեն, այլ ի վեր ես քան զերկինս եւ անդր քան զծագս, եւ ամենայն երեւելիքս եւ աներեւոյթքս ընդ Քեզ եմք բովանդակեալ: Դու տիրես ամենայնի, եւ Քո հրամանդ կառավարէ զամենայն արարածս, Դու աղքատացուցանես եւ Դու մեծացուցանես, հարկանես եւ Դու բժշկես, Դու ես սփոփիչ վտանգելոյս ի սատանայէ եւ առողջացուցիչ հիւանդացելոյս մեղաց, Դու ես ընդունիչ աղօթից եւ կատարիչ խնդրուա-

մարանների հետ ուրախացրո՛ւ յարազուարճ ուրախութիւններում եւ առատապարգեւ փառքովդ փառաւորի՛ր ինձ արդարների երամներում՝ նրանց հետ բնակեցնելով Քո երկնային արքայութեան մէջ՝ Վերին Երուսաղէմում: Որպէսզի նրանց հետ ձայնակցելով փառաւորեմ Քեզ Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Աղօթք

Ո՛վ անեղ եւ անստեղծ, Արարի՛չ բոլոր արարածների, Ում ո՛չ երկիրը կարող է տանել, եւ ո՛չ էլ երկինքը՝ ընդգրկել, այլ վեր ես, քան երկինքը, եւ [երկրի] ծագերից էլ այն կողմ, եւ բոլոր երեւելիները եւ աներեւոյթները Քեզանով են բովանդակուած: Դու տիրում ես բոլորին, եւ Քո հրամանը կառավարում է բոլոր արարածներին, Դու աղքատացնում ես եւ Դու՝ հարստացնում, հարուածում եւ Ինքդ բժշկում, Դու ես սատանայից վտանգուածիս սփոփիչը եւ մեղքերով հիւանդացածիս առողջացնողը, Դու ես աղօթքներն ընդունողը եւ խնդրուածքները կատարո-

ծաց: Խոնարհեցո՛, Տէ՛ր, զունկն Քո եւ լո՛ւր Քոյոյ ծառայիս, տե՛ս, Տէ՛ր, զտառապանս իմ եւ ընկա՛լ զիս զթութեամբ, մի՛ բարկութեամբ Քով խրատեր զիս եւ մի՛ սրտմտութեամբդ Քով յանդիմաներ, զի Աստուած ես զթութեանց, զթա՛ եւ յիս՝ ի մեղաւորս, որ բազում հեծեծանօք եւ պաղատանօք մաղթեմ եւ աղաչեմ զՔեզ: Զի կարեվէր եմ մեղօք եւ ցաւագնեալ՝ անօրէնութեամբ, չարաչար ախտիւք եմ ի յանցանս եւ պիղծ խորհրդովք՝ յամբարշտութիւնս, ժահահոգւովս եմ աղտեղեալ եւ մեղսաթաթաւ մարմնովս՝ զազրացեալ, ամօթով երեսօք կամ առաջի Քո եւ ամօթով՝ առաջի տեսողաց:

Եւ արդ, Դո՛ւ, Տէ՛ր, քա՛ղցր եւ ներո՛ղ, երկայնամիտ վասն մեղաւորաց կոչեցար, որ ասացեր, թէ՝ ի դառնալ անօրինին ոչ յիշեցից զամենայն անօրէնութիւնս նորա, զոր արար: Եւ արդ, ապա եկեալ անկեալ եմ առաջի Քո ծառայս մեղուցեալ եւ ժտեալ խնդրեմ ի Քէն ողորմութիւն. մի՛ յիշեր զմեղս իմ բազում եւ մի՛ զանօրէնութիւնս իմ յանդիմաներ, եթէ կամաւ եւ եթէ ակամայ ինչ մեղայ, եթէ բանիւք եւ եթէ գործովք եւ եթէ անդէպ մտածու-

ղը: Խոնարհեցրո՛ւ, Տէ՛ր, Քո ունկը եւ լսի՛ր Քո ծառային, տե՛ս, Տէ՛ր, իմ տառապանքները եւ ընդունի՛ր ինձ գթութեամբ, ինձ մի՛ խրատիր Քո բարկութեամբ եւ Քո ցասումով մի՛ յանդիմանիր, քանզի Աստուած ես գթութեան, գթա՛ եւ ինձ՝ մեղաւորիս, որ բազում հեծեծանքներով եւ պաղատանքներով աղերսում եւ աղաչում եմ Քեզ: Քանզի կարեվէր եմ մեղքերով եւ ցաւահարուած՝ անօրէնութեամբ, չարաչար ախտերով՝ յանցանքների մէջ, եւ պիղծ խորհուրդներով՝ ամբարշտութեան մէջ, գարշ հոգովս՝ աղտոտուած, եւ մեղսաթաթախ մարմնովս՝ զազրացած, ամօթահար երեսով կանգնած Քո առաջ եւ ամօթով՝ տեսնողների առաջ:

Եւ արդ, Դո՛ւ, Տէ՛ր՝ քաղցր եւ ներող, որ ներողամիտ կոչուեցիր մեղաւորների պատճառով, որ ասացիր, թէ՝ երբ անօրէնը դառնայ, չեմ յիշի անօրէնութիւնները, որ արեց: Եւ արդ, ահա մեղաւոր ծառաս եկել ընկել եմ Քո առաջ եւ թախանձելով ողորմութիւն եմ խնդրում Քեզանից. մի՛ յիշիր իմ բազում մեղքերը, իմ անօրէնութիւնները երեսովս մի՛ տուր, որ թէ՛ կամովի, թէ՛ ակամայ մեղանչեցի, թէ՛ խօսքով, թէ՛ գործով եւ թէ՛ անտեղի մտածութիւններով պղծուեցի,

թեամբք պղծեցայ, եթէ յանդիտութենէ եւ եթէ
ի ծուլութենէ եւ ի մոռացութենէ գործեցի, զի
Դո՛ւ, Տէ՛ր, սովոր ես գթալ եւ ողորմել եւ թո-
ղուլ զմեղս բազումս եւ քաւել զամենայն հոյլս
անօրէնութեան. որ զպոռնիկս սրբեցեր, զաւա-
զակն ազատեցեր, զմաքսաւորն արդարացու-
ցեր եւ զծանրաբեռնեալսն մեղօք թեթեւացու-
ցեր: Վասն զի Աստուած ես ողորմած եւ գթաս
ի մեղուցեալսն, որք հաւատով կարդան առ
Քեզ. գթա՛, Տէ՛ր, եւ յիս՝ ի բազմամեղս, եւ ապ-
րեցո՛ ի թիւնից թշնամւոյն: Փարատեցո՛, Տէ՛ր,
զխաւար յածող հայեցուածոցս իմոց եւ բա՛ց
զականջս իմ խլացեալս յանդէպ լսելոյ, բժշկեա՛
զվիրաւորեալ լեզուս ի բամբասանաց եւ սրբեա՛
զսիրտս իմ ի չար խորհրդոց:

Քե՛զ ցանկամ, Տէ՛ր բարերար, եւ փափա-
գեմ գթածի Հօր իմոյ. գթա՛ ի վերայ իմ՝ մե-
ղաւորիս, եւ ընկա՛լ իբրեւ զանառակ որդին:
Ցագեցո՛ ի քաղց իմ ի սիրոյդ Քումմէ եւ լցո՛
զծարաւիս յառատաբուղխ շնորհէդ, զի ցանկ
առ Քեզ խնդրեմ մերձենալ եւ բաղձամ ի Քեզ
հայել ի յարաժամ, միշտ շնորհաց Քոց փափա-
գեմ եւ հանապազ ողորմութեան Քումն կարօ-
տիմ: Մի՛ ընդ պատժեալսն պարտաւորեալ եւ

թէ՛ անդիտութեան եւ թէ՛ ծուլութեան եւ թէ՛
մոռացութեան պատճառով [մեղք] գործեցի,
քանզի Դո՛ւ, Տէ՛ր, սովոր ես գթալ ու ողորմել,
ներել բազում մեղքերը եւ քաւել անօրէնու-
թիւնների ամբողջ բազմութիւնը. որ սրբեցիր
պոռնիկին, ազատեցիր աւազակին, արդարաց-
րիր մաքսաւորին եւ թեթեւացրիր մեղքերով
ծանրաբեռնուածներին: Քանզի ողորմած Աս-
տուած ես եւ գթում ես մեղաւորներին, ովքեր
հաւատքով դիմում են Քեզ. գթա՛, Տէ՛ր, եւ ինձ՝
բազմամեղիս, եւ փրկի՛ր թշնամու թոյնից: Տէ՛ր,
փարատի՛ր խաւարն իմ մոլորուած աչքերից,
բա՛ց իմ խլացած ականջները լսելու համար,
բժշկի՛ր բամբասանքներից վիրաւորուած իմ լե-
զուն եւ սրբի՛ր իմ սիրտը չար խորհուրդներից:

Քե՛զ եմ ցանկանում, բարերա՛ր Տէր, եւ փա-
փագում իմ գթած Հօրը. գթա՛ ինձ՝ մեղաւորիս,
եւ ընդունի՛ր ինչպէս անառակ որդուն: Քո սի-
րով յագեցրո՛ւ իմ քաղցը, ծարաւս լցրո՛ւ Քո
առատաբուխ շնորհով, քանզի անդադար Քեզ
մերձենալ եմ փնտրում եւ Քեզ նայել յարաժամ
ենչում, միշտ փափագում Քո շնորհները եւ
հանապազ կարօտում Քո ողորմութիւնը:
Ցանցաւոր մի՛ համարիր պատժուածների հետ

մի՛ ընդ ատելիսն դատապարտեր, այլ ընդ կամարարս կամաց Քոց ընկա՛լ եւ ընդ պահողս պատուիրանաց Քոց պահեա՛: Զի եթէ առանց ներելոյ զյանցանս իմ քննեսցես, ընդունայն են ինձ յարութեան խոստմունք, զի ի հուր գեհենին է ժառանգութիւն իմ: Զի եթէ զդատապարտութիւն եւ զանդէպ մտածութիւնս իմ գատիցիս, ապա երանեմ ես չեղելոյն յորովայնէ, այլ նայեա՛ ի մաղթանս իմ եւ ի պաղատանս եւ մի՛ մերժեր ի յողորմութենէդ Քումմէ, որ ողորմութեան Քում բաղձամ եւ Քոյոյ գթութեանդ կարօտիմ: Զի միշտ զմարմինս իմ պղծեցի եւ հանապազ զոգիս աղտեղացուցի ոչ չարաչար վարիւք միայն, այլ եւ՝ զազիր խորհրդովք:

Եւ արդ, լուա՛ ի մեղաց եւ մաքրեա՛ ի գեռաթաթախ տղմոյս: Զքեզ խնդրեցի եւ զքեզ աղաչեմ, լի՛ց զկարօտութիւնս իմոյ փափագմանս, խառնեա՛ զիս ի դասս սրբոց եւ ի ժողովս արդարոց, որք ի բաղձալի տեսութենէդ Քումմէ վայելեն յարաժամ: Ես ոչ համարձակերես իբրեւ զբարեգործ ոք հայցեմ, այլ աղերսիւ ժամիմ իբրեւ զպարտապան եւ զբազմամեղ: Ոչ ունելով համարձակիմ իբրեւ զմաքուր, այլ

եւ մի՛ դատապարտիր ատելիների հետ, այլ ընդունի՛ր Քո կամքը կատարողների եւ պահի՛ր Քո պատուիրանները պահողների հետ: Քանզի եթէ իմ յանցանքներն առանց ներելու քննես, ընդունայն է ինձ համար յարութեան խոստումը, որովհետեւ գեհենի հրի մէջ է իմ ժառանգութիւնը: Քանզի եթէ դատես իմ անտեղի եւ դատապարտելի մտածութիւնները, ապա երանի թէ չծնուէի որովայնից, այլ նայի՛ր իմ աղերսներին եւ պաղատանքներին եւ մի՛ մերժիր ինձ Քո ողորմութիւնից, քանզի ես Քո ողորմութիւնն եմ փափագում եւ Քո գթութիւնը կարօտում: Քանզի մշտապէս իմ մարմինը պղծեցի եւ հանապազ հոգիս աղտոտեցի ոչ միայն չար վարքով, այլեւ՝ զազիր խորհուրդներով:

Եւ արդ, լուա՛ մեղքերից եւ մաքրի՛ր այս գարշաշաղախ տիղմից: Քեզ խնդրեցի եւ Քեզ եմ աղաչում, լցրո՛ւ իմ փափագման կարօտութիւնը, խառնի՛ր ինձ սուրբերի դասին եւ արդարների ժողովին, ովքեր յարաժամ վայելում են Քո ցանկալի տեսութիւնը: Ես չեմ հայցում, ինչպէս համարձակերես բարեգործ մէկը, այլ՝ աղերսելով թախանձում, ինչպէս պարտապանը եւ բազմամեղը: Չեմ համարձակւում ինչ-

ի մաքրութենէդ Քումմէ զժահահոտութիւնս իմ մաքրել աղաչեմ, զի անթիւ ունիմ զմեղաց իմոց զբազմութիւնս, եւ հոյլք անօրէնութեանս իմոյ հեղձուցանեն զիս հանապազ, միշտ զսիրտս իմ ճմլեցուցանեն եւ զմարմին եւ զոսկերս իմ հալեն եւ մաշեն. եւ վասն այսորիկ ժամիմ հանապազ պաղատել, աղաչել եւ մաղթել, զի Դու ես Հայր իմ եւ Տէր, արարիչ իմ եւ ստեղծիչ, առ ո՞ երթայց եւ կամ յումմէ՞ խնդրեցից օգնութիւն: Քեզ մեղայ եւ առ Քեզ խոստովանիմ եւ զՔեզ աղաչեմ՝ մի՛ ի Քումմէ ողբորմութենէդ զիս մերժեր եւ մի՛ յերեսաց Քոց ընկենուր: Մաղթեմ Քեզ՝ Տեառն բարերարիդ եւ բազմագութ իմոյ Արարչիդ՝ մի՛ յաւիտենական ամօթովն ամաչեցուցաներ զիս եւ մի՛ ի մեծի Աւուրդ դատապարտեր, մի՛ ի տիեզերական հրապարակիդ զիս յանդիմաներ, մի՛ անողորմ տանջանօքդ տանջեր եւ մի՛ սոսկալի գեհենիւդ պատուհասեր: Այլ ապրեցո՛ ի հրացան հնոցացն եւ ի հրահոսան գետոցն հրեղինաց, յորդանցն չարաժանեաց եւ յանշոյլ խաւարէն եւ դառն դատաստանացն եւ յաններելի տանջանացն, յանլոյծ կապանացն եւ ի հանապազորդ նեղութեանցն, ի միշտ ողբոցն եւ ի կրճեպէս մաքուրը, այլ՝ աղաչում՝ մաքրի՛ր իմ զարշահոտութիւնը Քո մաքրութեամբ, քանզի անթիւ են իմ մեղքերի բազմութիւնները, եւ իմ անօրէնութեան ամբոխներն ինձ հանապազ հեղձում են, սիրտս ճմլում եւ մարմինս ու ոսկորներս հալեցնում ու մաշեցնում. ուստի հանապազ թախանձում եմ՝ պաղատելով, աղաչելով եւ աղերսելով, քանզի Դու իմ Հայրն ես ու Տէրը, արարիչը եւ ստեղծողը, ո՞ւմ մօտ գնամ կամ ումի՞ց խնդրեմ օգնութիւն: Քո դէմ մեղանչեցի եւ Քեզ եմ խոստովանում ու աղաչում՝ մի՛ մերժիր ինձ Քո ողորմութիւնից եւ մի՛ զրկիր Քո երեսից: Աղաչում եմ Քեզ՝ բարերար Տիրոջդ եւ իմ բազմագութ Արարչիդ՝ յաւիտենական ամօթով ինձ մի՛ ամաչեցրու եւ դատաստանի մեծ Օրը ինձ մի՛ դատապարտիր, տիեզերական հրապարակիդ առաջ ինձ մի՛ յանդիմանիր, անողորմ տանջանքներով մի՛ տանջիր եւ սոսկալի գեհենովդ մի՛ պատուհասիր: Այլ փրկի՛ր հրացայտ հնոցներից եւ հրեղէնների հրահոսան գետերից, չարաժանիք որդերից, անթափանց խաւարից, դառը դատաստաններից եւ աններելի տանջանքներից, անքակտելի կապանքներից եւ հանապազորդ նեղութիւն-

լոյն ատամանցն: Այլ գթա՛ ի վիրաւորեալս մեղօք եւ բժշկեա՛ զհիւանդացեալս անօրէնութեամբ: Ընկա՛լ իբրեւ զհայհոյողն եւ զհալածիչն եւ փարատեա՛ զմեղաց իմոց զբազմութիւն, սրբեա՛ ի պղծութենէս իբրեւ զպոռնիկն եւ արդարացո՛ իբրեւ զմաքսաւորն: Ողորմեա՛ ինձ իբրեւ քանանացւոյն եւ շնորհեա՛ զյանցանս իմ իբրեւ զաւազակին: Բնակեցո՛ զիս ի դասս սրբոց եւ ի խորանս արդարոց կամարարաց, յանանց կենացն վայելչութիւնս եւ ի յանբաւ բարութեանցն ուրախութիւնսն ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, Որում փա՛ռք յաւիտեան:

ԱՂՕԹՔ ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻ

Տէ՛ր ամենակալ, Աստուա՛ծ Աբրահամու, Իսահակայ, Յակովբայ եւ զաւակի նոցա արդարոց. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Որ արարեր զերկինս եւ զերկիր եւ զամենայն զարդ նոցա. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի Քոյ, փակեցեր զխաբս, կնքեցեր ահաւոր եւ փառա-

ներից, միշտ ողբալուց եւ ատամներ կրճատացնելուց: Այլ գթա՛ մեղքերով վիրաւորուածիս եւ բժշկի՛ր անօրէնութեամբ հիւանդացածիս: Ընդունի՛ր ինչպէս հայհոյողին եւ հալածչին, փարատի՛ր իմ մեղքերի բազմութիւնը, սրբի՛ր ինձ պղծութիւնից, ինչպէս պոռնիկին, եւ արդարացրո՛ւ, ինչպէս մաքսաւորին: Ողորմի՛ր, ինչպէս քանանացուն, եւ ների՛ր իմ յանցանքներն, ինչպէս աւազակին: Բնակեցրո՛ւ ինձ սուրբերի դասի եւ Քո կամարար արդարների խորանների մէջ, անանց կեանքի վայելչութեան եւ անբաւ բարիքների ուրախութեան մէջ՝ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, Որին փա՛ռք յաւիտեան:

ՄԱՆԱՍԷ ԹԱԳԱՒՈՐԻ ԱՂՕԹՔԸ

Տէ՛ր Ամենակալ, Աստուած Աբրահամի, Իսահակի, Յակոբի եւ նրանց արդար զաւակների. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Որ արարեցիր երկինքն ու երկիրը եւ նրանց բոլոր զարդերը. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Որ կապեցիր ծովը Քո հրամանի խօսքով, փակեցիր անդունդները, կնքեցիր Քո ահաւոր

ւորեալ անուամբ Քով. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Որ ամենայն ինչ սարսի եւ դողայ յերեսաց ահի զօրութեան Քոյ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան Քոյ, եւ սաստիկ է բարկութիւն սպառնալեաց Քոց ի վերայ մեղաւորաց, անչափ եւ անքննին են ողորմութիւնք աւետեաց Քոց. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Դո՛ւ, Տէ՛ր, բարձրեալ, գթած, երկայնամիտ, բազումողորմ եւ զղջանաս ի վերայ չարեաց մարդկան. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Դո՛ւ, Աստուա՛ծ, ո՛չ եդեր ապաշխարութիւն վասն արդարոցն Աբրահամու, Իսահակայ եւ Յակովբայ, որք ոչ մեղան Քեզ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ՝ մեղաւորիս, զի մեղայ աւելի, քան զաւազ ծովու, եւ բազմացան անօրէնութիւնք իմ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Չեմ արժանի հայիլ եւ տեսանել զբարձրութիւնս երկնից ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

եւ փառաւորեալ անուամբ. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Որ ամէն ինչ սարսում է եւ դողում Քո զօրութեան ահից. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Անբաւ է Քո սրբութեան փառքի մեծավայելչութիւնը, սաստիկ է Քո սպառնալիքների բարկութիւնը մեղաւորների հանդէպ, անչափ են եւ անքննելի Քո աւետիսների ողորմութիւնները. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Դո՛ւ, Տէ՛ր, բարձրեալ, գթած, համբերող, բազումողորմ ես եւ ափսոսում ես մարդկանց չարիքների համար. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Դո՛ւ, Աստուա՛ծ, չկարգեցիր ապաշխարութիւն արդարների՝ Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի համար, որոնք չմեղանչեցին Քո հանդէպ. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Այլ ապաշխարութիւն կարգեցիր ինձ՝ մեղաւորիս համար, քանզի մեղանչեցի աւելի, քան ծովի աւազները, եւ բազմացան իմ անօրէնութիւնները. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Արժանի չեմ նայելու եւ տեսնելու երկնքի բարձունքները իմ բազում անօրէնութիւնների պատճառով. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց երկաթից, եւ ո՛չ գոյ ինձ հանգիստ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Բարկացուցի զսրտմտութիւն եւ զչար առաջի Քո արարի, կանգնեցի պատկեր եւ բազմացուցի զցասումն անձին իմոյ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Եւ արդ, Տէ՛ր, խոնարհեցուցանեմ զծունկս սրտի իմոյ եւ հայցեմ ի քաղցրութենէ Քումմէ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, եւ զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Աղաչեմ եւ խնդրեմ ի Քէն, թո՛ղ ինձ, Տէ՛ր, թո՛ղ ինձ եւ մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ, Տէ՛ր, եւ մի՛ յիշեր զչարիսն իմ եւ մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալսն ի ներքոյ երկրի չարեօք. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Զի Դո՛ւ, Աստուա՛ծ, Աստուած ապաշխարողաց ես եւ յի՛ս ցոյց զբարերարութիւնդ Քո, որ անարժան եմ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Կորացել եմ ես երկաթէ կապանքների բռնութիւնից եւ չունեմ հանգիստ. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Սաստկացրեցի զայրոյթդ եւ չարիք գործեցի Քո առջեւ, կռապատկեր կանգնեցրեցի եւ աւելացրեցի ցասումդ իմ անձի հանդէպ. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Եւ արդ, Տէ՛ր, խոնարհեցնում եմ իմ սրտի ծունկը եւ հայցում Քո քաղցրութիւնից. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, իմ անօրէնութիւնները ես ինքս գիտեմ. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Աղաչում եւ խնդրում եմ Քեզ, ների՛ր ինձ, Տէ՛ր, ների՛ր ինձ, եւ կորստեան մի՛ մատնիր ինձ ըստ իմ անօրէնութեան. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Տէ՛ր, յաւիտեան մի՛ բարկանա ինձ վրայ եւ մի՛ յիշիր իմ չարիքները եւ մի՛ դատապարտի՛ր ինձ նրանց հետ, ովքեր չարիքներով գերեզման մտան. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Քանի որ Դու, Աստուա՛ծ, ապաշխարողների Աստուածն ես, ցո՛յց տուր Քո բարերարութիւնը եւ ինձ՝ անարժանիս. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան Քում, եւ ես օրհնեցից զՔեզ զամենայն աւուրս կենաց իմոց. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

ԶՔեզ, Տէ՛ր, օրհնեն ամենայն զուարթունք երկնից, եւ Քո են փառք յաւիտեանս. ամէն:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

Աղօթք զկնի «Տէր ամենակալին»

Աղաչեմ եւ խնդրեմ ի Քէն՝ թո՛ղ ինձ, Տէ՛ր, զմեղս իմ: Աստուա՛ծ, քաւեա՛ զիս՝ զմեղաւորս, եւ կեցո՛ զիս: Ամենօրհնեալ սրբուհի Կո՛յս Աստուածածին, բարեխօսեա՛ առ Տէր վասն իմ՝ մեղաւորիս: Ամենա՛յն սուրբք, բարեխօսեցէ՛ք առ Տէր: Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, ընկա՛լ զաղաչանս ի Քեզ ապաւինելոյս: Ցաղթող զօրութեամբ սուրբ եւ պատուական խաչիւ Քո պահեա՛ զմեզ ի խաղաղութեան: Առաքեա՛, Տէ՛ր, զհրեշտակ խաղաղութեան Քոյ եւ պահպանեա՛ զմեզ ի տուէ եւ ի գիշերի եւ մարդասիրութեամբ Քո յիշեա՛ զմեզ, Տէ՛ր, եւ ողորմեա՛:

Աստուա՛ծ ամենագութ եւ ողորմած յամենայնի, որ գթացար ի ստեղծուածս Քո եւ գթաս միշտ, զի թէպէտ եւ մեք հանապազ մեղան-

Ապրեցրո՛ւ ինձ ըստ Քո մեծ ողորմութեան, եւ ես կօրհնեմ Քեզ իմ կեանքի բոլոր օրերում. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Քեզ են, Տէ՛ր, օրհնում երկնքի բոլոր հրեշտակները, եւ Քոնն է փառքը յաւիտեանս. ամէն:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

Աղօթք «Տէր ամենակալից» յետոյ

Աղաչում եւ խնդրում եմ Քեզ՝ Տէ՛ր, ների՛ր իմ մեղքերը: Աստուա՛ծ, քաւի՛ր ինձ՝ մեղաւորիս, եւ ապրեցրո՛ւ ինձ: Ամէնօրհնեալ սրբուհի Կո՛յս Աստուածածին, բարեխօսի՛ր Տիրոջը ինձ՝ մեղաւորիս համար: Բոլո՛ր սուրբեր, բարեխօսեցէ՛ք Տիրոջը: Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, ընդունի՛ր Քեզ ապաւինածիս աղաչանքները: Քո սուրբ եւ պատուական խաչի յաղթող զօրութեամբ պահի՛ր մեզ խաղաղութեան մէջ: Առաքի՛ր, Տէ՛ր, Քո խաղաղութեան հրեշտակին, պահպանի՛ր մեզ օր ու գիշեր եւ Քո մարդասիրութեամբ յիշի՛ր մեզ, Տէ՛ր, եւ ողորմի՛ր:

Աստուա՛ծ ամենագութ եւ ամէն ինչում ողորմած, որ գթացիր Քո ստեղծուածներին եւ գթում ես միշտ, քանզի թէպէտ եւ մենք հա-

չեմք, սակայն Դու քաղցրութեամբ շնորհեցեր զդարձ եւ զապաշխարութիւն մեղսասէր բնութեանս: Որ ընկալար զդարձ եւ զապաշխարութիւն մեծի մարգարէին Դաւթի եւ նովաւ սահմանեցեր զդարձ ամենայն մեղուցելոց, նորին բարեխօսութեամբ ընկա՛լ զդարձ իմ եւ ողորմեա՛ ինձ:

Որ շնորհեցեր ապաշխարութիւն եւ դարձ Թագաւորին Մանասէի, որ առաւելաւ չարեօք եւ մարդասիրութեամբ Քո արժանի եղեւ թողութեան, նորին աղաչանօք լո՛ւր ինձ եւ ողորմեա՛:

Որ զզղջումն դարձի ապաշաւանաց Նինուէացւոց քաղաքին ընկալար եւ ապրեցուցեր ի մահուանէն, նոցին խնդրուածովք փրկեա՛ զիս յաւիտենից մահուանէն:

Որ զպոռնիկն Ռախաբ արդարացուցեր հաւատովք, շնորհեա՛ ինձ, Ցիսո՛ւս, Քեզ արդարանալ ի մեղաց:

Որ աւետարանական կոչմամբ հրամանի Քոյ համարձակութիւն ետուր ամենայն մեղուցելոց, զոր ոչ կարեմ թուել բանիւք, զի մեծ է ողորմութիւն Քո, եւ ոչ ոք բանիւ կարէ պատմել զմեծութիւն ողորմութեան Քոյ, աղաչեմ զՔեզ՝ եւ յի՛ս ցոյց զբարութիւն ողորմութեան

նապազ մեղանչում ենք, սակայն Դու մեր մեղասէր բնութեանը դարձ եւ ապաշխարութիւն քաղցրութեամբ շնորհեցիր: Որ ընդունեցիր մեծ մարգարէ Դաւթի դարձն ու ապաշխարութիւնը եւ նրա միջոցով դարձ սահմանեցիր բոլոր մեղաւորներին, նրա բարեխօսութեամբ ընդունի՛ր իմ դարձը եւ ողորմի՛ր ինձ:

Որ դարձ եւ ապաշխարութիւն շնորհեցիր Մանասէ թագաւորին, որ յոյժ մեղանչեց, եւ Քո մարդասիրութեամբ թողութեան արժանի եղաւ, նրա աղաչանքներով լսի՛ր ինձ եւ ողորմի՛ր:

Որ Նինուէ քաղաքի ապաշխարութեան դարձի զղջումն ընդունեցիր եւ մահուանից փրկեցիր, նրանց խնդրուածքներով փրկի՛ր ինձ յաւիտենական մահուանից:

Որ պոռնիկ Ռախաբին հաւատքով արդարացրեցիր, շնորհի՛ր ինձ, Ցիսո՛ւս, Քեզանով արդարանալ մեղքերից:

Որ Քո աւետարանական հրամանի կանչով համարձակութիւն տուեցիր բոլոր մեղաւորներին, որը չեմ կարող խօսքով պատմել, քանզի մեծ է Քո ողորմութիւնը, եւ ոչ ոք չի կարող խօսքով պատմել Քո ողորմութեան մեծութիւնը, աղաչում եմ Քեզ՝ ինձ եւս ցոյց տուր Քո ողոր-

Քոյ, զի անսպառ են պարգեւք Քո: Զի թէպէտ
եւ ես քան զամենեսեան առաւել մեղայ, սա-
կայն ըստ ամենայնի անոխակալ գթութեամբդ,
որ վասն իմ եղեր մարդ, եւ զՔեզ ետուր ընդ
իմ դատապարտութեան, զի զերծուցեալ փրկես-
ցես յաւիտենից ի հրոյն, Տէ՛ր իմ եւ յո՛յս:

Որ Պետրոսի թողեր զուրացութիւն եւ Պո-
ղոսի՝ զհալածանսն, եւ պոռնկին՝ զմեղսն, եւ
մաքսաւորին՝ զզրկանսն, եւ խաչահանուացն,
որք դարձան զպատիժսն, եւ ամենեցուն ողոր-
մեցար, Տէ՛ր, զի վասն ամենեցուն խոնարհե-
ցար, աղաչեմ զՔեզ, զի եւ յի՛ս ժամանեսցեն
պարգեւք թողութեան Քոյ: Աստուա՛ծ, Ստեղ-
ծի՛չ իմ, նորոգեա՛ զիս հոգւով եւ մարմնով հզօր
եւ հատու բանիւ Քո:

Որ ասացեր անկելոյն, թէ՝ «Թողեալ լիցին
քեզ մեղք քո», եւ աւազակին, թէ՝ «Այսօր ընդ
Իս իցես ի դրախտին», ցո՛յց յիս զսէր զօրու-
թեանդ եւ զսէր գթութեանդ, զի Դու ես ապա-
ւէն իմ եւ յոյս բարի եւ Փրկիչ յաղթող, Տէր
տէրանց եւ Աստուած ամենայն միխիթարու-
թեանց: Քեզ փա՛ռք յաւիտենից յաւիտեանս.
ամէն:

մութեան բարութիւնը, քանզի անսպառ են Քո
պարգեւները: Քանի որ թէպէտ եւ ես ամենքից
առաւել մեղանչեցի, սակայն ըստ ամենայնի
անոխակալ գթութեամբդ, որ ինձ համար մարդ
եղար, Տէ՛ր իմ եւ յո՛յս, Քեզ [մահուան] մատ-
նեցիր իմ դատապարտութեան փոխարէն, որ-
պէսզի ազատելով փրկես յաւիտենական հրից:

Որ ներեցիր ուրացութիւնը Պետրոսին, հա-
լածանքները՝ Պողոսին, մեղքերը՝ պոռնկին,
զրկանքները՝ մաքսաւորին, եւ խաչողներին,
որոնք ազատուեցին պատիժներից, եւ ողորմե-
ցիր բոլորին, Տէ՛ր, քանզի բոլորի համար խո-
նարհուեցիր, աղաչում եմ Քեզ, որ ինձ եւս
հասնեն Քո ներման պարգեւները: Աստուա՛ծ,
Ստեղծի՛չ իմ, Քո հզօր եւ հատու խօսքով նո-
րոգի՛ր ինձ հոգով եւ մարմնով:

Որ ընկածին ասացիր, թէ՝ «Քո մեղքերը ներ-
ւում են քեզ», եւ աւազակին, թէ՝ «Այսօր ինձ
հետ դրախտում կլինես», ցո՛յց տուր ինձ զօ-
րութեանդ եւ գթութեանդ սէրը, քանզի Դու ես
իմ պաշտպանը, բարի յոյսն եւ յաղթող Փրկի-
չը, տէրերի Տէրն ու բոլոր միխիթարութիւննե-
րի Աստուածը: Քեզ փա՛ռք յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:

ԲԱՆ ԻԷ

Բ

Մեղա՛յ մեծիդ բարերարութեան, անարգս մեղա՛յ, մեղա՛յ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղա՛յ, մեղա՛յ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարեւ մեղա՛յ, մեղա՛յ սիրոյդ վերնում գթութեան, յայտնապէս մեղա՛յ, մեղա՛յ ստացողիդ յոչէութենէ, ստուգապէս մեղա՛յ, մեղա՛յ գերունակ գոգոյդ գրգանաց, անբաւս մեղա՛յ, մեղա՛յ աննուազ լուսոյդ վայելման, նենգողս մեղա՛յ, մեղա՛յ ճաշակման անճառդ կենաց, բազումս մեղա՛յ, մեղա՛յ անհաս պարգեւացդ ձրից, հանապազ մեղա՛յ, մեղա՛յ գովեալ Մարմնոյդ Աստուծոյ, մահու չափ մեղա՛յ, մեղա՛յ պաշտելի Արեան Արարչիդ, իսկապէս մեղա՛յ: Ահա՛ արդարեւ օրհնեալ է հատուած բանի յուսադրական սրտի այսր «մեղայի». սոյն սա պատուելի աւանդ, անմոռաց պատուէր, հայրենեացն տուր, նախահարցն օրէն, համայնից թոշակ, անհերքելի բան, զօրաւոր պատասխանի, կենդանութեան կամուրջ,

ԲԱՆ ԻԷ

Բ

*Մեղա՛յ մեծիդ բարերարութեանը, անարգս մեղա՛յ. մեղա՛յ ծագմանդ ճառագայթներին, խաւարս մեղա՛յ. մեղա՛յ շնորհներիդ անբաւ երախտիքներին, արդարեւ մեղա՛յ. մեղա՛յ վերին գթառատ սիրուդ, յայտնապէս մեղա՛յ. մեղա՛յ ոչէութիւնից արարողիդ, ստուգապէս մեղա՛յ. մեղա՛յ գերունական ծոցիդ գգուանքներին, անսահման մեղա՛յ. մեղա՛յ աննուազ լոյսիդ վայելմանը, նենգողս մեղա՛յ. մեղա՛յ Քո անճառ կեանքի ճաշակմանը, բազմիցս մեղա՛յ. մեղա՛յ անհաս շնորհներիդ պարգեւներին, հանապազ մեղա՛յ. մեղա՛յ գովեալ Մարմնիդ Աստուծոյ, մահու չափ մեղա՛յ. մեղա՛յ պաշտելի Արեանն Արարչիդ, իսկապէս մեղա՛յ: Ահա՛ արդարեւ օրհնեալ է սրտի համար յուսադրական այս բառը՝ «մեղան». սա պատուելի աւանդ է, անմոռաց պատուէր, հայրենական տուրք, նախահայրերի օրէնք, համայնից պաշար, անհերքելի խօսք, զօրաւոր պատասխան, կենդանու-

ախորժելի՝ Վերնոյն, սիրելի՝ սրբոց, անխզելի
կապ, հրաշալի բարբառ, անշրջելի պատճառ,
բաղձալի աղերս, փափագելի սեղան, սրտաբեկ
հնչումն, անհնարից ճարակ, կարծրութեան վա-
նիչ, աստուածապաշտից սահման, հեթանոսաց
գիրք, վաղնջուց կանոն, քրիստոնէից՝ հարա-
զատ, արարչութեանն յաղթող, անջրպետ հզօր,
խտրոց ահաւոր, արուեստ բարձրութեան, խո-
րութիւն անչափ, հիացման տեսիլ, խորհուրդ
կնքեալ, ընդ որ չիք ումեք անցանել, եթէ ոչ
անընմբռնելի մտաց արագման զսա ծանիցէ:
Զայն բարեպատեհ հրաշաւորական, որ ոչ յի-
շատակեցաւ ի վերջին դատակնիք դասուն լքե-
լոյ, զուցէ առ նմին խզեալ համառօտ զվրի-
ժակն իրաւանց մահուն հասելոյ, յորմէ ընտ-
րութիւնն ապագործ եղեալ՝ զսահմանն յաւի-
տենական քակտեսցէ: Զարդ փառաց մեծու-
թեան, որով նոյն Ինքն Աստուածութիւնն պսա-
կեալ բարգաւաճի: Քանզի ո՞վ ոք դիմեալ կա-
լաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութեան եւ ոչ,
առ ժամայն պրծեալ ի պատժոց, անաբատ
դատաւ: Իսկ եթէ Աքար Զարմեան եւ Սաւուղ նի-

թեան կամուրջ, Վերնայինին՝ ախորժելի, սուր-
բերին՝ սիրելի, անխզելի կապ, հրաշալի բար-
բառ, անշրջելի պատճառ, բաղձալի աղերս, փա-
փագելի սեղան, սրտաբեկ հնչում, անհնարնե-
րի ճար, կարծրութեան վանիչ, աստուածպաշտ-
ների կանոն, հեթանոսների գիրք, վաղնջական
օրէնք, քրիստոնեաներին՝ հարազատ, արարչ-
ութեանը յաղթող, հզօր անջրպետ, ահաւոր
զատուցիչ, բարձր արուեստ, անչափ խորու-
թիւն, յափշտակութեան տեսիլ, կնքուած խոր-
հուրդ, որի մէջ ոչ ոք չի կարող թափանցել, այլ
միայն ճանաչել, թէ սա անհասանելի է մտքի
արագութեան համար: Հրաշալի ձայն բարեպա-
տեհ, որ չյիշատակուեց մերժուած դասի կող-
մից իր վերջին դատավճռի ժամանակ, որով
գուցէ նոյնժամ մահուան հասցնող արդար
վճիռն իսկոյն խզուելով, զատորոշումն անի-
մաստ դարձնելով՝ յաւիտենական սահմանը
քանդուէր: Մեծ փառքի զարդ [է «մեղան»],
որով նոյն Ինքն Աստուածութիւնն է պսակուել-
ով բարգաւաճում [մեր մէջ]: Քանզի ո՞վ էր,
որ դիմելով բռնեց այս սուրբ սեղանի եղջիւր-
ներից եւ, իսկոյն ազատուելով պատժից, չար-
դարացաւ: Իսկ թէ Աքար Զարմեանը, Սաւուղ

սեան եւ Յուդա Սիմոնեան, ասելով զսոյն, ոչ արդարացան, եւ ես վկայեմ՝ իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի, զի ակամայիցն բռնադատելոց ոչ է կատարեալ սէր, ուստի եւ ոչ՝ բովանդակապէս փրկութիւն: Իսկ ես կամաւ համբուրեմ՝ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմկրտութեան հարազատս:

Զ

Մեղա՛յ երախտեացդ մոռացութեան, վերստին մեղա՛յ, մեղա՛յ մարմնոյ ձեռն յոգի հարեալ, յիմարս մեղա՛յ, մեղա՛յ առ կեանսդ դրժողութեան, իսկ եւ իսկ մեղա՛յ, մեղա՛յ բանիդ ապախտ առնելոյ, չարաչար մեղա՛յ, մեղա՛յ ի յօր սատակման՝ ինձէն ստիպեալ, վատթարս մեղա՛յ, մեղա՛յ պարտականս անկենդան մահուն, ձաղկելիս մեղա՛յ, մեղա՛յ անպատկառս Քո բարձրութեան, տաղտկալիս մեղա՛յ: Վերջին ինձ կրկին աշխար հոգեւոր, զի ի կորուստ եւ ի կործանումն ինձ երեւեցաւ, զի անդարձս վարատեցայ, զի որդիս Թշնամի գրեցայ, զի ի բարձանցն երկնից ընկեցայ, զի փուշս վարուց դիզեցի: Եւ եւս սմին ողբք աղաղակի,

կիսեա՛ն եւ Յուդա Սիմոնեանը, այս ասելով չարդարացան, եւ ե՛ս եմ վկայում՝ իրաւամբ խոստովանելով այս խօսքի պայմանը, որ ակամայ բռնադատուողների սէրն անկատար է, ուստի եւ բովանդակապէս չէ փրկութիւնը: Իսկ ես կամովին համբուրում եմ՝ դարձեալ կրկնելով մկրտութեանը հարազատ այս երջանիկ խօսքը:

Զ

Մեղա՛յ երախտիքներիդ մոռացութեամբ, վերստին մեղա՛յ. մեղա՛յ մարմնովս հոգիս սպանելով, յիմարս մեղա՛յ. մեղա՛յ կեանքիդ դրժողութեամբ, իսկ եւ իսկ մեղա՛յ. մեղա՛յ խօսքդ արհամարհելով, չարաչար մեղա՛յ. մեղա՛յ ինքս իմ սատակման օրուան աճապարելով, վատթարս մեղա՛յ. մեղա՛յ պարտականս անկենդան մահուան, ձաղկելիս մեղա՛յ. մեղա՛յ անպատկառս Քո բարձրութեան [հանդէպ], տաղտկալիս մեղա՛յ: Կրկին ողբում է հոգիս իր վերջին ողբով, քանզի կորստեան եւ կործանման ինձ բերեցի, քանզի անդարձ հեռացայ եւ որդիս Թշնամի համարուեցի, երկնքի բարձունքից ընկայ եւ վարքի փշեր դիզեցի: Եւ առաւել եմ ողբում աղաղակելով, քանզի ինքս

զի անձամբ զանձն անարգեցի, զի բազին կորուսչին գտայ: Այլ իմն կսկիծ դժնդակ սրտի, զի զիս ունին, առ որ չեմ, զարտաքնայարդար բաժակս՝ անմաքուր, զբռեալ որմս՝ գարշունակ, զսին պարծանօք պաճուճեալս, զլոյսս՝ ի մռայլ շրջեալ, զգերանակիր ակնս՝ թշուառացեալ, զշահս փառաց՝ շիջեալ, զամենայնիւս յամենայնի ամենայն իրօք վնասակարս՝ առ տնօրինականն տէրունականս, առ յայտնութիւնսն աստուածային, առ երեւմունսն արարչագիրս, առ խոնարհութիւնսն սարսափելիս, առ Այն, զոր տեսի աչօք իսկ իմովք, առ որ մեծ է պատասխանատուութիւնս, քան առ համօրէն Աւետարանին, զարմանս, հիացմունս, հոգս հալողականս, անդաճմունս անհնարաւորս, թուականութիւնս մտաց անքարդելիս, եղմունս անկատարս, իշմունս անհաստատս, յուսահատութիւնս յարմարականս, յանդիմանութիւնս պատշաճականս, ճաղանս պատեհագոյնս, նզովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս: Արդ, այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք եւ ինքնահարուած տանջանաւորութիւնք:

անձս անարգեցի եւ կորուսչի բազին դարձայ: Մի այլ դժնդակ կսկիծ եւս կայ իմ իմ սրտում, քանզի համարում են ինձ ինչ որ չեմ, արտաքնայարդար բաժակս՝ անմաքուր, սպիտակեցուած որմս՝ գարշունակ, սին պարծանքներով պաճուճուածս, լոյսս՝ խաւարի փոխուած, գերանակիր աչքս՝ թշուառացեալ, փառքի ջահս՝ մարած, ամէն ինչով ամէնուրեք ըստ ամենայնի վնասակարս՝ տէրունական տնօրինութիւնների, աստուածային յայտնութիւնների, արարչագիր երեւումների եւ սարսափելի խոնարհութիւնների հանդէպ եւ Նրա, Ում որ աչքովս տեսայ, Ում հանդէպ առաւել մեծ է պատասխանատուութիւնս, քան ամբողջ Աւետարանի, ահա՛ սարսափն ու երկիւղն իմ, հոգեմաշ հոգսերը, անսփոփելի տարակոյսները, մտքով անհաշուելի թուարկումները, անկատար վերելքները, անհաստատ էջքերը, յարմարական յուսահատութիւնները, պատշաճաւոր յանդիմանութիւնները, տեղին ծաղրուածանակները, իրաւացի նզովքները եւ արժանահատոյց անէծքները: Արդ, սրանք են մեղաւորիս կշտամբանքներն ու ինքնահարուած տանջանքները:

Եւ քանզի կարող ես զայս ամենայն
զպարտս թողուլ եւ զխայթուածս մահու
բժշկել, Տէ՛ր ողորմութեանց, Աստուա՛ծ բոլո-
րից, Քրիստո՛ս Թագաւոր, բարձրեալ Հօր Որ-
դի՛, ստեղծի՛չ, գթա՛ծ, բարերա՛ր, օրհնեա՛լ,
առաւ՛ստ, հարո՛ւստ, ահաւո՛ր, հզո՛ր, ողորմա՛ծ,
տեսո՛ւչ, ձեռնկա՛լ, հաստի՛չ, ապրեցուցի՛չ,
դարմանի՛չ, կեցուցի՛չ, երկայնամի՛տ, անոխակա՛լ,
ապաւէ՛ն, բժի՛շկ, գովեա՛լ, երկնաւո՛ր, անճա՛ռ,
լո՛յս, կեա՛նք, յարութի՛ւն, նորոգութի՛ւն,
քաւութի՛ւն. եթէ հայեսցես մարդասիրու-
թեամբ, ըստ որում Քոյդ են սովորութիւնք, նա-
յեցեալ ի Քեզ՝ կողկողիմ եւ ե՛ս, եթէ լուիցես,
հառաչեմ, եթէ ունկն մատուցանիցես, պաղա-
տիմ, եթէ անսայցես, աղերսեմ, եթէ ներեսցես,
աղաչեմ, եթէ առ իս դառնայցես, գոչեմ: Ապա
եթէ անտես առնիցես, կործանիմ, իսկ եթէ առ
ոտն հարկանիցես, լամ, եթէ զոգեպահն ոչ ընդ-
ծայեսցես, մեռանիմ, ապա եթէ ահարկու դէմս
ցուցանիցես, սատակիմ, իսկ եթէ սաստեսցես,
դողամ, եթէ խեթիւ տեսանես, սոսկամ, ապա
եթէ սաստկանաս, սարսափիմ, եթէ հալածես,

Եւ քանզի կարող ես բոլոր այս պարտքերս
թողնել եւ բժշկել մահացու խայթուածները,
Տէ՛ր ողորմութեան, Աստուա՛ծ բոլորի, Քրիս-
տո՛ս Թագաւոր, Բարձրեալ Հօր Որդի՛, ստեղ-
ծի՛չ, գթա՛ծ, բարերա՛ր, օրհնեա՛լ, առատա-
ձե՛ռն, հարո՛ւստ, ահաւո՛ր, հզո՛ր, ողորմա՛ծ,
առաջնո՛րդ, օգնակա՛ն, արարի՛չ, փրկի՛չ, դար-
մանի՛չ, կեցուցի՛չ, համբերո՛ղ, անոխակա՛լ,
ապաւէ՛ն, բժի՛շկ, գովեա՛լ, երկնաւո՛ր, անճա՛ռ,
լո՛յս, կեա՛նք, յարութի՛ւն, նորոգութի՛ւն, քա-
ւութի՛ւն. եթէ, ըստ Քո սովորութեան, մարդա-
սիրութեամբ հայես ինձ, Քեզ նայելով եւ ե՛ս
կողբամ, եթէ լսես ինձ, կհառաչեմ, եթէ ականջ
դնես, կպաղատեմ, եթէ անսաս, կաղերսեմ, եթէ
ներես, կաղաչեմ, եթէ դէպի ինձ դառնաս, կգո-
չեմ: Իսկ եթէ անտեսես, կկործանուեմ, եւ եթէ
ոտնահարես, կարտասուեմ, եթէ հոգեպահիկ
չընծայես, կմեռնեմ, ապա թէ ահարկու դէմք
ցոյց տաս, կատակուեմ, եթէ սաստես, կդողամ,
եթէ խէթ նայես, կսոսկամ, ապա թէ սաստկա-
նաս, կսարսափեմ, եթէ հալածես, կհեծեմ, իսկ
եթէ վայր նետես, կոչնչանամ, եթէ ողբերիս

հեծեմ, իսկ եթէ ընդ վայր հարկանիցես, հերքիմ, եթէ զողբոց վհատութիւնս ոչ առցես, տագնապիմ, եթէ խստանաս, փախնում, ապա եթէ սպառնաս, ընկճիմ: Իսկ եթէ քննես, քարկոծիմ, ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ, եթէ ոչ անխայեսցես, մերժիմ, եթէ կոչեսցես, խիթամ, իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ, եթէ ձայն տացես, երկնչիմ: Զբարեացն պարգեւ մատնեալ, զերանութիւնն թողեալ, զշնորհն լքեալ, զուխտն ցրեալ, զաւանդն կենաց մոռացեալ, զհամարձակութեանն վստահութիւն կորուսեալ, զՍտեղծիչդ էիցս բարկացուցեալ, զանճառութիւն շնորհին ընդոտնեալ, զպատուոյն պատկեր այլայլեալ: Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծութեան ցաւոյ մարդասիրեալ առ իս ժամանեցուցես, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, զազդեալն գիր լնանիլ ի յիս, եթէ բժշկութիւն դադարեցուցանէ զմեղս մեծամեծս, որով ամէնառատ քաղցրութեամբ պատուաստեալ ի Քեզ, զՔոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի, վերստին գտեալ՝ պնդեցայց քաւեալ եւ ստեղծեալ կրկին ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց. եւ Քեզ ընդ Հօր Հոգւովդ Սրբով փա՛ռք յաւիտեանս. ամէն:

վհատութիւնը չդադարեցնես, կտագնապեմ, եթէ խստանաս, կփախչեմ, ապա թէ սպառնաս, կընկճուեմ: Իսկ եթէ քննես, կքարկոծուեմ, ապա թէ խիստ հայեացք նետես, կսուզուեմ, եթէ չխնայես, կմերժուեմ, եթէ կանչես, կկասկածեմ, իսկ եթէ աչքդ յառես, կամաչեմ, եթէ ձայն տաս, կերկնչեմ: Բարի պարգեւները ես անարգեցի, երանութիւնը թողեցի, շնորհը լքեցի, ուխտը դրժեցի, կեանքի աւանդը մոռացայ, համարձակութեան վստահութիւնը կորցրեցի, էակների Ստեղծչիդ բարկացրեցի, շնորհի անճառութիւնն ընդոտնեցի, պատուական պատկերն այլայլեցի: Իսկ եթէ այս մահախեղդ հեծութեան ցաւի մէջ մարդասիրելով հասնես ինձ, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, որպէսզի ինձ համար կատարուի Սուրբ Գրքի խօսքը, թէ [Քո] բժշկութիւնը դադարեցնում է մեղքերը մեծամեծ, այնժամ, ամէնառատ քաղցրութեամբ պատուաստուելով Քեզ, Քո լուսոյ կերպարանքը նկարելով հոգուս մէջ, վերստին գտնուելով, կհաստատուեմ քաւուած եւ կրկին ստեղծուած անմահ եւ անախտ կեանքի փրկութեամբ. եւ Քեզ Հօրդ եւ Սուրբ Հոգուդ հետ փա՛ռք յաւիտեանս. ամէն:

ԲԱՐԵԽՕՍԱԿԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ

Աղօթք առ սրբուհի Աստուածածինն

Անկանիմք առաջի քո, սո՛ւրբ Աստուածածին, եւ աղաչեմք զանարատ զԿոյսդ՝ բարեխօսեա՛ վասն անձանց մերոց եւ աղաչեա՛ զմիածին Որդիդ՝ փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

Աղօթք

Թագաւո՛ր հզօր, ապաւէ՛ն ծարաւելոց եւ փրկի՛չ նեղելոց, որ վասն մեր պատուհասեցար յանօրինաց, զարթո՛ զզօրութիւնս Քո եւ ե՛կ ի կեցուցանել զգինս արեան Քոյ եւ մի՛ տուր գերել սատանայի զՔո փրկեալս եւ մի՛ տար ի բնակութիւնս չարին զտաճար անուանդ Քում սրբոյ եւ մի՛ զլեալս Քեզ մարմին եւ անդամ թողուր ի կոխումն եւ ի կատակումն թշնամւոյն, այլ գթա՛ ի Քո արարածս արարչական սիրով Քո:

Տէ՛ր, ողորմեա՛ մեզ, զի ի խաչ Քո պարծելով պարծեցաք, եւ սա պահեսցէ զմեզ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն:

Աղօթք սրբուհի Աստուածածնին

Քո առջեւ ենք ընկնում, սո՛ւրբ Աստուածածին, եւ աղաչում անարատ Կոյսիդ՝ բարեխոսի՛ր մեր անձանց համար եւ աղաչի՛ր միածին Որդուդ՝ փրկել մեզ փորձութիւնից եւ մեր բոլոր վտանգներից:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

Աղօթք

Թագաւո՛ր հզօր, ապաւէ՛ն ծարաւածների եւ փրկի՛չ նեղուածների, որ մեզ համար չարչարանքների ենթարկուեցիր անօրէններից, արթնացրո՛ Քո զօրութիւնը եւ արի՛ ապրեցնելու Քո արեամբ գնուածներին, [թոյլ] մի՛ տուր սատանային գերել Քո փրկածներին, մի՛ թող չարին բնակուել Քո սուրբ անուան տաճարում եւ Քեզ մարմին եւ անդամ եղածներիս մի՛ թող ոտնակոխ լինել եւ ծաղրուել թշնամուց, այլ գթա՛ Քո արարչական սիրով Քո արարածներին:

Տէ՛ր, ողորմի՛ր մեզ, քանզի Քո խաչով մշտապէս պարծեցանք, եւ սա թող պահպանի մեզ երեւելի եւ աներեւոյթ թշնամուց:

Տէ՛ր, ողորմեա՛ց, զի ի բարեխօսութիւն ամենասուրբ Կուսի Աստուածածնիդ ապաւինեցաք, որ դորա աղօթիւք ապրեալք լիցուք ի չարէն եւ առանց փորձութեան զպանդխտութեան մերոյ կատարեսցուք զկեանս:

Վասն սրբոց Քոց առաքելոցն երկոտասանիցն եւ նոցին աշակերտելոցն ողորմեա՛, Տէ՛ր:

Վասն սրբոց Հռիփսիմեանցն եւ Գայիանեանցն ողորմեա՛, Աստուա՛ծ, բազմամեղիս:

Վասն սրբոյն Գրիգորի եւ նորին լուսաւոր զաւակացն, յորոց ձեռն ծանեաք զՓրկիչդ մեր, որով հալածեցեր զբազմութիւն դիւացն ի Հայաստան աշխարհէ, եւ այժմ զսատանա՛յ հալածեա ի մէնջ մերձընդմերձ:

Վասն սրբոց Վարդանանցն եւ Ատոմեանցն եւ սուրբ քահանայիցն, որք պատերազմեալ խափանեցին զպատերազմ չարին եւ զերծուցին ի կործանմանէ զսուրբ զԵկեղեցիս Հայաստան աշխարհիս, եւ այժմ, Տէ՛ր, խափանեա՛ զսատանայ չարագործովք իւրովք ի մէնջ:

Վասն սուրբ ճգնաւորացն, հարց եւ աշակերտելոցն արանց եւ կանանց բարեխօսութեամբ ողորմեա՛ ինձ, Տէ՛ր, զի նոքա ընկալան ի Քէն, Տէ՛ր, շնորհս եւ անուամբ Քոյ յաղ-

Տէ՛ր, ողորմի՛ր, քանզի ապաւինեցինք ամենասուրբ Կոյս Աստուածածնիդ բարեխօսութեանը, որպէսզի նրա աղօթքներով փրկուենք չարից եւ առանց փորձութեան կնքենք մեր պանդուխտ կեանքը:

Ցանուն Քո տասներկու սուրբ առաքեալների եւ նրանց աշակերտների ողորմի՛ր, Տէ՛ր:

Ցանուն սուրբ Հռիփսիմեանց եւ Գայիանեանց, Աստուա՛ծ, ողորմի՛ր բազմամեղիս:

Ցանուն սուրբ Գրիգորի եւ նրա լուսաւոր զաւակների, որոնց միջոցով ճանաչեցինք մեր Փրկչին, որոնց միջոցով հալածեցիր դեւերի բազմութիւնը Հայաստան աշխարհից, այժմ էլ սատանայի՛ն հալածիր մեր մերձակայքից:

Ցանուն սուրբ Վարդանանց, Ատոմեանց եւ սուրբ քահանաների, որոնք պատերազմելով խափանեցին չարի պատերազմը եւ փրկեցին կործանումից Հայաստան աշխարհի սուրբ Եկեղեցին, այժմ էլ, Տէ՛ր, խափանի՛ր մեր միջից սատանային իր չարագործներով:

Ցանուն սուրբ ճգնաւորների, հայրերի եւ [նրանց] աշակերտած արանց եւ կանանց բարեխօսութեամբ ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի նրանք, Տէ՛ր, Քեզանից շնորհներ ստացան եւ

թեցին ամենայն հնարից բանսարկուին, յաղթիցէ եւ այժմ յաղթող զօրութիւն Քո, Տէ՛ր իմ, եւ տացէ մեզ յաղթել հակառակամարտին ընդդիմութեան:

Վասն սրբոց հայրապետացն եւ առաջնորդացն մերոց, ամենեցուն բարեխօսութեամբ, որոց ետուր իշխանութիւն կոխել զօձս եւ զկարիճս եւ զամենայն զօրութիւն թշնամւոյն, շնորհեա՛ եւ այժմ ի ձեռս նոցին բարեխօսութեան կոխել զգլուխ կամակոր վիշապին եւ զփաղանգոցն լուեցուցանել եւ կապել զբերանս հերձուածողացն:

Վասն մեծին ի ծնունդս կանանց՝ Յովհաննու եւ Նախավկային սրբոյն Ստեփանոսի եւ ամենայն սրբոց, սոցա բարեխօսութեամբ սրբեա՛ զմեզ յամենայն պղծութեանց հոգւոց եւ մարմնոց եւ արժանացո՛ ընդ ճշմարիտ երկրպագուս Քո հոգւով եւ ճշմարտութեամբ Քեզ երկիրպագանել եւ փառաւորել զԱմենասուրբ զԵրրորդութիւնդ. ամէն:

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Ճգնաւո՛րք Աստուծոյ եւ ժառանգո՛ղք երկնից արքայութեանն, որք փոխանակեալք զան-

Քո անուամբ յաղթեցին բանսարկուի բոլոր հնարները, այժմ եւս թող յաղթի Քո յաղթող զօրութիւնը, Տէ՛ր իմ, եւ տայ մեզ յաղթել հակառակամարտի ընդդիմութիւնը:

Յանուն մեր սուրբ հայրապետների եւ առաջնորդների, [նրանց] բոլորի բարեխօսութեամբ, որոնց իշխանութիւն տուեցիր ոտնակոխ անելու օձերը, կարիճները եւ թշնամու բոլոր զօրութիւնները, նրանց բարեխօսութեամբ եւ ա՛յժմ շնորհիր ոտնակոխ անել մոլորակամ վիշապի գլուխը, լռեցնել [նրա] գնդերը եւ փակել հերձուածողների բերանները:

Յանուն կանանց ծնունդների մէջ մեծի՝ Յովհաննէս [Մկրտչի], սուրբ Ստեփանոս Նախավկայի եւ բոլոր սուրբերի, նրանց բարեխօսութեամբ սրբի՛ր մեզ հոգու եւ մարմնի ամէն տեսակ պղծութիւններից եւ արժանացրո՛ւ մեզ Քո ճշմարիտ երկրպագուների հետ հոգով եւ ճշմարտութեամբ երկրպագելու եւ փառաւորելու Քեզ՝ Ամենասուրբ Երրորդութեանդ. ամէն:

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Ճգնաւորնե՛ր Աստուծոյ եւ ժառանգորդնե՛ր երկնքի արքայութեան, որ փոխանակելով ան-

ցաւորս՝ առէք զանանցն բարութիւնն. բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն մանկանց Եկեղեցւոյ:

Նահատա՛կք պանծալիք եւ սիրեցեա՛լք ի յերկնաւոր Հօրէն, որ մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին. բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն մանկանց Եկեղեցւոյ:

Մարտիրո՛սք ցանկալիք եւ օթեւա՛նք Հոգւոյն ճշմարտութեանն, որք յաղթեցէք հոգւով կարեաց եւ ցանկութեանն. բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն մանկանց Եկեղեցւոյ:

Գովելի՛ք աշխարհի եւ բաղձալի՛ք վերնոցն պետութեանց, որք երանութեան մասին հասէք քան զամենայն որդիս մարդկան. բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն մանկանց Եկեղեցւոյ:

Կամաւո՛ր պատարագք, մանկո՛ւնք՝ տիօք, եւ կատարեա՛լք՝ իմաստութեամբ, որք փոխանակ կաթին արբէք զգինին զմայլեցուցիչ. բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն մանկանց Եկեղեցւոյ:

ցաւորները՝ ստացաք անանց բարիքները. բարեխօսեցէ՛ք առ Տէր Եկեղեցու մանուկների* համար:

Նահատակնե՛ր պանծալի եւ սիրելինե՛ր երկնաւոր Հօր, որ ձեր արեամբ մկրտուեցիք Քրիստոսի հետ խաչի մահով. բարեխօսեցէ՛ք առ Տէր Եկեղեցու մանուկների համար:

Մարտիրոսնե՛ր ցանկալի եւ օթեւանե՛ր ճշմարտութեան Հոգու, որ հոգով յաղթեցիք կարիքներն ու ցանկութիւնը. բարեխօսեցէ՛ք առ Տէր Եկեղեցու մանուկների համար:

Գովելինե՛ր աշխարհի եւ բաղձալինե՛ր վերին պետութիւնների, որ մարդկանց բոլոր որդիներից աւելի՛ երանութեան վիճակին հասաք. բարեխօսեցէ՛ք առ Տէր Եկեղեցու մանուկների համար:

Կամաւո՛ր զոհեր, երիտասարդնե՛ր տարիքով եւ կատարեալնե՛ր իմաստութեամբ, որ կաթի փոխարէն զմայլեցուցիչ գինին ըմպեցիք. բարեխօսեցէ՛ք առ Տէր Եկեղեցու մանուկների համար:

---

* Մանուկ բառը գրաբարում բացի սակաւահասակ կամ մանկահասակ երեխայ նշանակելուց գործածւում է նաեւ պատանի, երիտասարդ, ժիր, ծառայ, սպասաւոր, զինուոր իմաստներով: Եկեղեցու մանուկները Քրիստոսի Եկեղեցուն զինուորագրուած նուիրեալներն են, այսինքն՝ կղերականները, վանականները, ճգնաւորները եւն:

Աղօթք առ սուրբ Խաչն աստուածընկալ

Միջնո՛րդ փրկութեան մերոյ եւ գրա՛ւ տիեզերաց, ճառագայթաւէտ լո՛յս աշխարհաց եւ արեգա՛կ սիրոյ եւ ապաստա՛ն յուսոյ, նշա՛ն սուրբ եւ սոսկալի երախտեացն Աստուծոյ առ մեզ, սո՛ւր աստուածամուխ՝ սպանող հակառակամարտին մերոյ եւ դրո՛շմ զգայարանաց մերոց եւ ամուր ապաստա՛ն ակնկալութեան մերոյ, աստուածային զօրութիւն քո, որ պահէ հաստատուն զհիմունս աշխարհի, պահեսցէ զհոգի եւ զմարմին իմ ի ցասմանէ, ի ցանկութենէ եւ յատելութենէ եւ յամենայն փորձութեանց եւ գայթակղութեանց հոգւոյ եւ մարմնոյ իմոյ առ սոսկալի զօրութեան քոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք աստուածընկալ սուրբ Խաչին

Մեր փրկութեան միջնո՛րդ, ողջ աշխարհի [յոյսի] գրաւակա՛ն, տիեզերքի ճառագայթաւէտ լո՛յս, սիրոյ արեգա՛կ, յոյսի ապաստա՛ն, Աստուծոյ՝ մեր հանդէպ բարերարութեան սուրբ ու սոսկալի նշա՛ն, աստուածամուխ սո՛ւր՝ մեր հակառակորդին սպանող, մեր զգայարանների դրո՛շմ, մեր յոյսի ամուր ապաստա՛ն, քո աստուածային զօրութիւնը, որ հաստատուն է պահում աշխարհի հիմքերը, թող իմ հոգին ու մարմինը հեռու պահի բարկութիւնից, ցանկութիւնից, ատելութիւնից եւ հոգեւոր ու մարմնաւոր բոլոր փորձութիւններից ու գայթակղութիւններից [եւ պահպանի] քո սոսկալի զօրութեամբ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

* Աստուածամուխ. ա) միջամուխ աստուածայինի մէջ. բ) աստուածային հրով ներթափանցուած, աստուածամղձ, սերտ միացած Աստծուն

Աղօթք սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյ առ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ

Ո՛վ հայր բարեգութ, անյիշաչա՛ր եւ բարեսէր, լո՛ւր զպաղատանս մեր, զի գիտեմք զբարեխօսդ մերձ առ Պարգեւատուն: Մաղթեա՛ վասն անարժանիցս քոյոց հոգեւոր երկանց ծնեալ զաւակաց անցուցանել ի մէնջ զարդարակշիռ պատուհաս յանցանաց մերոց ի կրկին վրիժապարտաց, այսինքն՝ յաշխարհակալէն, յըստ հոգւոյ, գերողէն եւ, յըստ մարմնոյ, նորին արբանեկաց չարաչար տանջողաց: Զի թերեւս լիցի հնազանդութեամբ եւ մտերիմ ծառայութեամբ սպասաւորել միշտ ճշմարիտ Թագաւորին մերոյ Քրիստոսի: Իսկ թէ առ ի մէնջ եւ յամենեցունց անքննելի դատաստանաց Նորին սահմանեալ է մեզ յաստիս լինել ծառայութեամբ, որպէս եւ եմք իսկ ստրկացեալք ի խստասիրտ տէրանց, մաղթեսցես դասուք ամենայն ընտրելօք, որք ընդ քեզ, զի զչարչարանս զայս, զոր կրեմք յակամայ, լինել իբրեւ զկամաւոր ապաշխարութիւն ի թողութիւն մեղաց մերոց: Զի, ազատեալք յայմանէ, արժանի լիցուք որդիքս լուսոյ ընդ հօրդ լուսոյ եւ ընդ

Սուրբ Գրիգոր Տաթեւացու աղօթքը սուրբ Գրիգոր Լուսաւորչին

Ո՛վ հայր բարեգութ, անյիշաչա՛ր եւ բարեսէր, լսի՛ր մեր պաղատանքները, քանզի գիտենք Պարգեւատուին մերձ բարեխօսիդ: Աղաչի՛ր քո հոգեւոր երկունքի ծնունդ անարժան զաւակներիս համար, որ հեռացուի մեզանից մեր կրկնակի վրիժապարտ յանցանքների արդարակշիռ պատուհասը, այսինքն՝ ըստ հոգու՝ աշխարհակալ գերողից եւ, ըստ մարմնի՝ նրա չարաչար տանջող արբանեակներից: Որպէսզի, թերեւս, հնազանդութեամբ եւ մտերիմ ծառայութեամբ միշտ սպասաւորենք մեր ճշմարիտ Թագաւոր Յիսուս Քրիստոսին: Իսկ եթէ Նա մեզ եւ բոլորի համար անքննելի դատաստանով սահմանել է մեզ այստեղ լինել ծառայութեամբ, ինչպէս որ ենք իսկ՝ ստրկացած խստասիրտ տէրերի կողմից, աղաչի՛ր բոլոր ընտրեալների դասերով, որոնք քեզ հետ են, որպէսզի այս չարչարանքները, որ կրում ենք ակամայ, լինեն իբրեւ կամաւոր ապաշխարութիւն մեր մեղքերի թողութեան համար: Որպէսզի, ազատուելով այս [ամէնից], արժանի լինենք լու-

ամենայն սուրբս փառաւորել զերրեակ Անձնաւորութիւն եւ զՄի Աստուածութիւն համագոյ եւ զուգական Երրորդութեանն՝ լուսոյ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՕԹՔ ԱՌ ԵՐԿՆԱՅԻՆ ՁՕՐՍՆ

Աստեղ, անմահ Արարչին սպասաւո՛րք անմարմինք, վերին զօրացն դասապետութի՛ւնք. աթո՛ռք, քերովբէ՛ք եւ սերովբէ՛ք, տէրութի՛ւնք, զօրութի՛ւնք եւ իշխանութի՛ւնք, պետութի՛ւնք, հրեշտակապե՛տք եւ հրեշտա՛կք, Միքայէ՛լ եւ Գաբրիէ՛լ, պե՛տք վերնական զօրացն դասուց, որք անլռելի ձայնիւ փառաբանութիւն մատուցանէք Ամենասուրբ Երրորդութեանն եւ երեքսրբեան ձայնիւ եղանակէք զերգս՝ ասելով. «Ողորմեա՛, Դո՛ւ ստեղծեր, մի՛ կորուսաներ, զգործս ձեռաց Քոց մի՛ անտես առներ». օգնական եւ պահապա՛ն լերուք ծառայիս Աստուծոյ. ամէն:

սոյ որդիներս լուսոյ հօրդ եւ բոլոր սուրբերի հետ փառաւորելու լուսոյ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու համագոյ եւ զուգափառ Երրորդութեան երրեակ Անձնաւորութեանը եւ Մի Աստուածութեանը յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՕԹՔ ԵՐԿՆԱՅԻՆ ՁՕՐՔԻՆ

Աստեղ, անմահ Արարչի անմարմին սպասաւորնե՛ր, վերին զօրքերի դասապետութիւննե՛ր. աթոռնե՛ր, քերովբէնե՛ր եւ սերովբէնե՛ր, տէրութիւննե՛ր, զօրութիւննե՛ր եւ իշխանութիւննե՛ր, պետութիւննե՛ր, հրեշտակապետե՛ր եւ հրեշտակնե՛ր, Միքայէ՛լ եւ Գաբրիէ՛լ, վերին զօրքերի դասերի պետե՛ր, որ անլռելի ձայնով փառաբանութիւն էք մատուցում Ամենասուրբ Երրորդութեանը եւ երեքսրբեան ձայնով երգելով՝ ասում. «Ողորմի՛ր, Դո՛ւ ստեղծեցիր, կորստեան մի՛ մատնիր, Քո ձեռքի գործը մի՛ անտեսիր». օգնական եւ պահապա՛ն եղէք Աստուծոյ ծառայիս. ամէն:

Աղերս առ Տիրամայր ս. Աստուածածինն

ԲԱՆ Զ

Ա

Եւ արդ, ի վերայ այսքանեաց յուսահատութեանց եւ ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց, աստուածային բարկութեանց, տագնապեալ ոգւով թախծութեան ի սպառ, աղաչեմ զքեզ, սո՛ւրբ Աստուածածին, հրեշտա՛կ ի մարդկանէ, մարմնատեսի՛լ քերովբէ, երկնաւո՛ր արքայուհի, անխառն իբրեւ օղ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գերազանց, քան զբնակութիւն անկոխելին սրբութեանց, երանաւոր խոստմա՛նն տեղի, եղե՛մ շնչական, ծա՛ռ կենացն անմահից՝ բոցեղէն սրովն պարուսնակեալ, ի բարձրեալն Հօրէ զօրացեալ եւ հովանացեալ, հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ եւ մաքրագործեալ, բնակութեամբ Որդւոյն յարդա-

Աղերս Տիրամայր ս. Աստուածածնին

ԲԱՆ Զ

Ա

Եւ արդ, այսքան յուսահատութիւններից, ահարկու սրտաբեկութիւններից, սաստիկ ահաբեկութիւններից, աստուածային բարկութիւններից յետոյ թախծալից հոգով տագնապած՝ աղաչում եմ քեզ, սո՛ւրբ Աստուածածին, հրեշտա՛կ՝ մարդկանցից, մարմնատեսիլ քերովբէ՛, երկնաւոր արքայուհի՛, անխառն՝ իբրեւ օդը, մաքուր՝ որպէս լոյս, անշաղախ՝ բարձր արեգակի պատկերի նման, գերազանց, քան անկոխ սրբութիւնների բնակավայրը, երանելի խոստման վա՛յր, եղե՛մ շնչական, անմահ կենաց ծա՛ռ՝ բոցեղէն սրով պարուրուած, բարձրեալ Հօրից զօրացած եւ հովանաւորուած, Հոգու հանգրուանութեամբ քո մէջ՝ պատրաստուած եւ մաքրագործուած, Որդու բնակութեամբ յարդարուած եւ տաղաւաքուած, որ

բեալ եւ տաղաւարեալ. միածինն՝ Հօր եւ քեզ՝ անդրանիկ, Որդի քո՝ ծննդեամբ եւ Տէր՝ արարչութեամբ, ընդ անախտ մաքրութեանդ եւ ամբիծ բարի՛, ընդ անարատ սրբութեանդ եւ խնամակալ բարեխօ՛ս: Ընկա՛լ զմաղթանս այսր աղերսանաց քում դաւանողիս եւ մատո՛, ընծայեա՛՝ ընդ սմին խառնեալ զբանն իմ նախնի մեծիդ ներբողի ի քոյդ պաղատանս: Հիւսեա՛, միացո՛ զմեղուցելոյս դառն հեծութիւն ընդ քումդ երջանիկ եւ խնկաւորեալ հայցուածոց, տո՛ւնկդ կենաց պտղոյն օրհնութեան, զի ի քէն միշտ օգնեալ եւ բարեգործեալ եւ ի մաքրական քո ծնելութիւնդ ապաւինեալ եւ լուսաւորեալ՝ կեցից Քրիստոսի՝ Որդւոյ քոյ եւ Տեառն:

Բ

Օժանդակեա՛ Թեւոցդ աղօթիւք, խոստովանեալ Մա՛յրդ կենդանեաց, եւ ելիցն իմ յերկրիս հովտէ՝ առանց լլկանաց հետեւել ի կեանս՝ օթեւանացդ պատրաստութեան, զի թեթեւացցի կատարածն իմ ինձ՝ ծանրացելոյս անօրէնութեամբ: Արասցի՛ս տօն ինձ բերկրութեան զօրն իմ տաղնապի, ողջացուցի՛չ երկանցն Եւայի:

միածինն է Հօր եւ քո անդրանիկը, Որդիդ՝ ծննդեամբ եւ Տէր՝ արարչութեամբ, անկիրք մաքրութեանդ հետ եւ անբիծ բարի՛, անարատ սրբութեանդ հետ եւ խնամակալ բարեխօ՛ս: Ընդունի՛ր քեզ դաւանողիս այս աղերսալի աղօթքը եւ խառնելով նրան մեծիդ ներբողուած իմ նախկին խօսքը՝ իբրեւ քո պաղատանքը մատեցրո՛ւ, ընծայի՛ր [Աստծուն]: Հիւսի՛ր, միացրո՛ւ մեղաւորիս դառը հեծութիւնը քո երջանիկ եւ խնկաւորուած խնդրուածքների հետ, տո՛ւնկդ կենաց օրհնուած պտղի, որպէսզի միշտ քեզանից օգնութիւն ստանալով, բարեգործուելով, անապական քո մայրութեանն ապաւինելով եւ լուսաւորուելով՝ ապրեմ Քրիստոսի՝ քո Որդու եւ Տիրոջ համար:

Բ

Օժանդակի՛ր թեւաւոր աղօթքներովդ, խոստովանուած Մա՛յրդ ողջների, որ երբ ելնելու լինեմ այս երկրի հովտից, առանց լլկանքների գնամ դէպի կեանք՝ դէպի պատրաստած օթեւաններդ, թող թեթեւ լինի վախճանը իմ՝ անօրէնութեամբ ծանրացածիս: Տաղնապի օրն իմ դարձրո՛ւ բերկրութեան տօն ինձ համար, ող-

Բարեխօսեա՛, խնդրեա՛, աղաչեա՛, զի ըստ անճառելի մաքրութեանդ եւ ահա զքանիդ հաւատամ զընդունելութիւն: Արտասուօք օգնեա՛ վտանգեցելոյս, գովեա՛լդ ի կանայս, ծո՛ւնր խոնարհեցո առ իմ հաշտութիւն, ծնո՛ղդ Աստուծոյ, ընդ իմում թշուառիս հոգա՛, խորա՛ն Բարձրելոյն, ձե՛ռն տուր անկելոյս, տաճա՛ր երկնային, փառաւորեա՛ զՈրդիդ քո ի քեզ՝ աստուածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն եւ ողորմութիւն, Աղաչի՛ն Աստուծոյ եւ Մա՛յր, բարձրացի պատիւ քո ինեւ, եւ ցուցցի փրկութիւնն իմ քեւ:

Զ

Եթէ զիս գտցես, Տիրամա՛յր, թէ ինձ ողորմեցիս, սրբուհի՛, թէ զկորուսեալս շահեցիս, անարա՛ւտ, թէ զհարթուցեալս յանձանձեցես, երջանի՛կ, թէ զամաչեցեալս յառաջ մատուցես, բարեշնո՛ւրհ, թէ յուսահատելոյս ինձ միջնորդեցես, միշտ սո՛ւրբ Կոյս, թէ զմերժեալս ընտանեցուցես, մեծարեա՛լդ յԱստուծոյ, թէ յիս ցուցցես զգթածութիւն, լուծի՛լդ անիծից, թէ զծփեալս հաստատեցես, հանգի՛ստ, թէ ի

ջացուցի՛լդ Եւայի երկունքի: Բարեխօսի՛ր, խնդրի՛ր, աղաչի՛ր, քանզի ինչպէս անճառելի մաքրութեանդ, [այնպէս] էլ ահա հաւատում եմ խօսքիդ ընդունելութեանը: Արտասուքովդ օգնի՛ր վտանգուածիս, գովեա՛լդ կանանց մէջ, ծունր խոնարհեցրո՛ւ հաշտութեանս համար, ծնո՛ղդ Աստուծոյ, թշուառիս հոգա՛, խորա՛ն Բարձրեալի, ձե՛ռք տուր ընկածիս, տաճա՛ր երկնային, փառաւորի՛ր քո Որդուն քեզանով՝ ինձ համար աստուածօրէն հրաշագործելու քաւութիւն եւ ողորմութիւն, Աղաչի՛ն Աստուծոյ եւ Մա՛յր, թող բարձրանայ քո պատիւն ինձանով, եւ թող ցոյց տրուի իմ փրկութիւնը քեզանով:

Զ

Եթէ ինձ գտնես, Տիրամա՛յր, թէ ինձ ողորմես, սրբուհի՛, թէ կորուսեալիս շահես, անարա՛ւտ, թէ խրտնածիս խնամարկես, երջանի՛կ, թէ ամօթահարիս առաջ տանես, բարեշնո՛ւրհ, թէ յուսահատուածիս համար միջնորդես, միշտ սո՛ւրբ Կոյս, թէ մերժուածիս ընտանեցնես, մեծարուա՛ծդ Աստծուց, թէ գութ ցոյց տաս ինձ, լուծի՛լդ անէծքներից, թէ տատանուողիս հաս-

խռովութեանս յուզմանց փոխեսցես զիս, խաղաղարա՛ր, թէ վրիպելոյս ինձ հնարաւորեսցես, գովեա՛լ, թէ վասն իմ մտցես ի հանդէս, մահո՛ւ նահանջիչ, թէ զդառնութիւնս իմ անուշեսցես, քաղցրութի՛ւն, թէ զբաժանմանն իմ խարոյ քակտեսցես, հաշտութի՛ւն, թէ զանմաքրութիւնս իմ բարձցես, եղծմա՛ն ընդոտնիչ, թէ զմատնեալս մահու փրկեսցես, կենդանի՛ լոյս, թէ զլալեացս ձայն հատցես, բերկրութի՛ւն, թէ զխորտակեալս կազդուրեսցես, դե՛ղ կենաց, թէ ի կործանեալս յիս ակնարկեսցես, հոգելի՛ց, թէ ողորմութեամբ ինձ պատահեսցիս, կտա՛կ նուիրեալ:

Օրհնեա՛լդ միայն ի շրթունս ամբիծս լեզուաց երջանկաց, ահա՛ կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ, Մա՛յրդ բարձրելոյ Տեառն Յիսուսի՝ Արարչին երկնի եւ բնաւին երկրի, զՈր անճառապէս ծնար բովանդակ մարմնովն եւ համայն Աստուածութեամբն, որ փառաւորեալ է ընդ Հօր եւ Հոգւոյն Սրբոյ՝ էութեամբ եւ անքննութեամբ մերոյին բնութեամբս միացելով, ամենայն եւ յամենայնում, մի յԵրրորդութենէն. Նմա փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

տատես, հանգի՛ստ, թէ խռովութեան յուզումներից հանդարտեցնես ինձ, խաղաղարա՛ր, թէ վրիպածիս հնար գտնես, գովեա՛լ, թէ ինձ համար պայքարի մտնես, մահուա՛ն նահանջիչ, թէ դառնութիւնն իմ անուշացնես, քաղցրութի՛ւն, թէ բաժանման արգելքն իմ քանդես, հաշտութի՛ւն, թէ անմաքրութիւնն իմ վերացնես, եղծմա՛ն ընդոտնիչ, թէ մահուան մատնուածիս փրկես, կենդանի՛ լոյս, թէ լացիս ձայնը կտրես, բերկրութի՛ւն, թէ խորտակուածիս կազդուրես, դե՛ղ կենաց, թէ կործանուածիս նայես, հոգելի՛ց, թէ ողորմութեամբ ինձ հանդիպես, կտա՛կ նուիրեալ:

Օրհնեա՛լդ միայն երջանկալեզու անբիծ շուրթերից, ահա՛ կուսութեանդ կաթից մի կաթիլ իմ մէջ անձրեւելով՝ ինձ կեանք է տալիս, Մա՛յրդ՝ բարձրեալ Տէր Յիսուսի՝ Արարչի երկնքի եւ ամբողջ երկրի, Որին անճառապէս ծնեցիր բովանդակ մարմնով եւ համայն Աստուածութեամբ, որ փառաւորուած է Հօր եւ Սուրբ Հոգու հետ՝ էութեամբ եւ անքննութեամբ մեր բնութեան հետ միացած, ամէն ինչ եւ ամէն ինչում է Նա՝ Երրորդութիւնից մէկը. Նրան փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ա

Ընդ Աստուածածնին մաղթանաց ահա՛ եւ զվերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հայցուածոց, որ վասն իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արգահատութեամբ մաքուր բերանոց, ընկա՛լ, Բարեգո՛ւթ: Որք են բարիք, բարեգործեալք՝ ի Բարերարէդ, անկիրթք՝ չարեաց, հաստեալք յամէնիշխան հրամանաց էիդ, զօրութիւնք հզօրք՝ ակնարկութեան Բարձրելոյդ, սուրբք, մաքուրք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթողք եւ անպարտելիք եւ ըստ ընթացից տեսութեան մտաց՝ արագունք:

Բ

Որք եւ պտղակորոյս տնկոյ թզենւոյն՝ եռամեանն դատարկութեամբ, որ զբնաւ յաւիտեանս պարունակէ ժամանակն՝ զանցեալն ընդ ներկայիս եւ ընդ ապառնւոյն, յամայր յամրութեամբն յերկարաձգելոյ, յայգի աշխարհիս արմատացելոյ, սին ստաւրթիւն պա-

Ա

Աստուածածնի մաղթանքների հետ ահա՛ եւ երկնային լուսակերպ անմահ հրեշտակների հայցուածների աղերսները, որ առանց լռելու, հանապազօրեայ բարեխօսութեամբ, մաքուր բերանով գոչում են ինձ համար, ընդունի՛ր, Բարեգո՛ւթ: Նրանք բարի են, բարեգործուած՝ Բարերարիցդ, անմասն՝ չարից, էիդ ամէնիշխան հրամանով ստեղծուած, Բարձրեալիդ հզօր զօրքերն են՝ հրամանիդ միշտ [պատրաստ], սուրբ են, մաքուր, անարատ, օրհնեալ, վայելչական, յաղթող, անպարտելի եւ արագընթաց՝ մտաստեսութեան ընթացքի նման:

Բ

Որոնք եւ բարեխօս են, սպասաւոր եւ խնամակալ՝ եռամեայ դատարկութեամբ պտղակորոյս թզենու տունկի (որը ամբողջական յաւիտեանների պէս պարունակում է ժամանակը՝ անցեալը ներկայի եւ ապառնիի հետ)՝ տարեցտարի երկարաձգուած, այս աշխարհի այգում

ճուճելոյ՝ զրկեալ ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեանս, սոքա բարեխօսք, հանդերձիչք, այլ եւ խնամակալք, որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրիցս կարեկցելով, բարեմասնութեանն մեր սպասեն եւ յաւիտենականն կենդանութեամբ փրկութեանն մեր աղօթեն՝ զայս բան ասելով. «Զգործս ձեռաց Քոց մի՛ անտես առներ»: Քանզի, արդարեւ մեր են այս աղաչանք ի բարերարէդ Աստուծոյ վասն մեր կարգեալ առ նոսա, զի նոքա բանիւ են ստեղծեալ, եւ մեք՝ ձեռօք ներգործեալ: Որք եւ գալոց են ընդ Միածնիդ վկայք սոսկալի Դատաստանին հատուցման, ճշմարտաբան դատախազք յանցաւորութեան երկրայնոցս, յահաւորին ատենի՝ յայտնիչք իրաւամբք զմատակարարութիւնն, որ առ մեզ, որք եւ անդանօր կարեկցեն՝ ազդեալ հառաչմամբ զմշտանուէրն նուագ ձայնի. «Ողորմեա՛, Դո՛ւ ստեղծեր, մի՛ կորուսաներ»:

արմատացած, սին սաղարթներով պաճուճուած, պտուղներից զրկուած, որ ճշգրիտ պատկերն է այս թշուառ մարդկութեան: Նրանք հանապազ դեգերում են մեր շուրջ՝ կարեկցելով մեր տառապանքներին, բարիքի մէջ մեր մասն ունենալուն են սպասում եւ աղօթում մեր՝ յաւիտենական կենդանութեամբ փրկուելու համար՝ այս խօսքն ասելով. «[Տէ՛ր], մի՛ անտեսիր Քո ձեռքի գործը»: Քանզի, արդարեւ, մեզ համար են այս աղաչանքները բարերար Աստուծոյ սահմանուած նրանց վրայ, որովհետեւ նրանք խօսքով են ստեղծուած, եւ մենք՝ ձեռքով արարչագործուած: Նրանք նաեւ գալու են Միածնիդ հետ հատուցման սոսկալի Դատաստանին իբրեւ վկաներ, իբրեւ ճշմարտախօս մեղադրողներ երկրայիններիս յանցանքների, ահաւոր ատեանի առաջ անաչառօրէն հաշուետու պիտի լինեն մեզ համար եւ այնտեղ էլ, կարեկցելով մեզ, պիտի հնչեցնեն իրենց մշտանուէր երգը՝ հառաչելով. «Ողորմի՛ր, Դո՛ւ ստեղծեցիր, կորստեան մի՛ մատնիր»:

Զ

Արդ, ընդ գոհաբանութեան ձայնիցն խնդրուածոց անմահականացն վեհից եւ ի մեր հեծութիւնս հոտոտեսցիս, բնաւի՛ց Արարիչ, որ յաղթես գթութեամբդ Քո վերնոցն եւ ստորնայնոցս, քանզի Քո՛ է բարերարելդ առ մեզ եւ առ նոսին: Արդ, վասն բարեզարդութեան անախտականացն, հրաշատեսիլ հրակերպիցն, անշաղախ մաքրոցն, անմեղիցն, բոցանիւթիցն, հոգեղինացն եւ անվանելեացն, ամէնաճեցուն առաւելութեամբ ի բարձրն ընտրականութիւն գերափայլ յաճախ գիտութեամբ, անցուրտ ջերմութեամբ ջեռուցանողք ինքնաբուն տապովն աստուածսիրութեան ըստ ինքեանց զմերս սառնասէր սրտիցս անբորբոք շիջումն՝ այրիլ անաղօտ ի մեծախորհուրդ սրբում Սեղանիս, որ ի խորանիս՝ առանց նիրհելոյ եւ դանդաղանաց սպասել հրամանաց երանականաց կեցուցիչ կամաց Ամենաստեղծիդ՝ քրովբէօրէն առաքինութեամբ յԱստուած միացեալք անբաժանելի: Որք երկնաւոր պետութիւնք են մեծք եւ զինուորութիւնք անբիծք, ահաւորք, երկնաւորիդ Աստուծոյ ազատազնեայ պաշտօնեայք, ի յամպոյդ լուսոյ ցոլք նշուղից:

Զ

Արդ, վեհ անմահների գոհաբանական խնդրանքների հետ մեր հեծեծանքները ե՛ւս հոտոտիր, Արարի՛չ ամենայնի, որ Քո գթութեամբ գերազանցում ես երկնայիններին եւ երկրայիններիս, քանզի Դո՛ւ ես բարերարը ե՛ւ մեր, ե՛ւ նրանց: Արդ, անախտներն այդ, հրաշատեսիլ հրակերպները, անշաղախ մաքուրները, անմեղները եւ բոցանիւթները, հոգեղէնները եւ անյաղթները, իրենց այս բարեզարդութեան շնորհիւ, բարձր ընտրականութեան ամէնաճեցուն առաւելութեամբ եւ գերափայլ առատ գիտութեամբ, աստուածսիրութեան ինքնաբուն տապի անցուրտ ջերմութեամբ իրենց պէս եւ մեր սառը սրտերի անբորբոք շիջումն են վերաբռնկում, որպէսզի նրանք անաղօտ այրուեն մեծախորհուրդ սուրբ Սեղանի վրայ, այս խորանի մէջ՝ առանց նիրհելու եւ դանդաղելու սպասելով Ամենաստեղծիդ կեցուցիչ կամքի երանելի հրամաններին, Աստծուն միացած անբաժանելի քերովբէական առաքինութեամբ: Նրանք երկնաւոր մեծ պետութիւններ են, անբիծ զինուորներ, ահաւորներ, երկնաւոր Աստծուդ ազատազնեայ պաշտօնեաներ, լուսէ ամպիդ շողերի ցոլքեր:

Դ

Որովք եւ ինձ՝ մեղաւորիս Հոգեղինի, մարդասիրեացես ողորմել, Յիսո՛ւս, աղաչանօք խմոյն հրեշտակի դարձուցանելով զիս, Տէ՛ր, ի բարիդ Քո հետս լուսոյ, զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան, զոր հաւատացեր նմին տեսչութեան, զընկալեալն ի Քէն ի կենցաղ աստեացս՝ ուրախութեամբ սրտիւ յիս բերկրեալ, անմեղադրելի առ ի Քէն օրհնեալ, խնդալից դիմաց զուարճութեամբ Քեզ, Արքա՛յ բարձրութեան փառաց անհասից, ի խրախճանս կենդանախումբս բերկրեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուսցէ, գովեա՛լ ողորմած: Եւ Քեզ, անքնի՛ն, ընդ Հօր անհասի՝ թուակցութեամբ Հոգւոյդ անճառի, վայել է փառք, պատիւ եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՁԲ

Ա

Տէ՛ր Աստուած բարերար, բազմապարգե՛ւ թագաւոր, կենա՛ց պատուպարան, լուսո՛յ կերպարան, լայնատա՛ր հանգստարան, որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար, գործե-

Դ

Որոնցով եւ ինձ՝ հոգեղէն մեղաւորիս, մարդասիրաբար ողորմի՛ր, Յիսո՛ւս, իմ հրեշտակի աղաչանքներով դարձնելով ինձ, Տէ՛ր, դէպի Քո բարի, լուսեղէն ճամփան, որպէսզի հոգուս պաշտպանութեան աւանդը, որն այս կեանքում նրա տեսչութեանը Դու վստահեցիր, ինձ համար բերկրող սրտի ուրախութեամբ, Քեզանից օրհնուած, անմեղադրելի, խնդալից դէմքով ու զուարճութեամբ, Քեզ՝ անհաս փառքով Արքայիդ վսեմ, յաւերժ կենդանի բերկրացեալների խրախճանքներում ընծայաբերի, գովեա՛լ ողորմած: Եւ Քեզ, անքնի՛ն, անհաս Հօր եւ անճառ Հոգուդ հետ վայել է փառք, պատիւ եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՁԲ

Ա

Տէ՛ր Աստուած բարերար, բազմապարգե՛ւ թագաւոր, կենա՛ց պատուպարան, լուսո՛յ կերպարան, լայնատա՛ր հանգստարան, որ մեղաւորիս համար գալով՝ մարմնացար, անպատում

ցեր զանպատումսն եւ Հանդերձեր զհրաշալիսն, մինչեւ կատարեցեր զառեցեալն ընդ ամենալիր Աստուածութեանդ:

Բ

Արդ, վասն առաքելոցն սրբոց՝ յերկնաստեղծ Քո ձեռացդ ձեռնադրելոց եւ Հոգւովդ Սրբով օծելոց, զորոց զգովեստն արժանաւորութեան, ըստ իմում կարի, առ ի փառս Քո, Տէ՛ր ամենայնի, յայլում բանի պաշտեցի, եւ ի՛նձ ողորմեսցիս յիշատակաւ սիրոյ նոցին ընտրութեան: Շաւիղ ինձ ելից նոքօք հանդերձեսցես յերանութիւնն փափագելի, ձայն բարի հովւութեան նոցին ի յողջոյն ինձ կենաց քա՛ղցր լուիցի: Մա՛սն կալայց ի յանեղծութիւն փրկութեան տօնեցեալ յուսոյն ընդ առաջնորդացն կենաց, սկզբնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն դասուց, գետոցն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ պճնելոցն, ի զարդ անկապուտ զօրութեան շնորհին պայծառացելոց, իւղովն զուարթութեան տիրական լուսոյն կատարեցելոց:

գործեր գործեցիր եւ բազում հրաշքներ, մինչեւ վերցրածդ մահուան մատնեցիր ամենալիր Աստուածութեանդ հետ:

Բ

Արդ, յանուն սուրբ առաքեալներիդ, որոնց երկնաստեղծ Քո ձեռքերով ձեռնադրեցիր եւ Սուրբ Հոգովդ օծեցիր, որոնց արժանի գովեստն արեցի ըստ կարողութեանս, մէկ այլ գրուածքում, Քո փառքի համար, Տէ՛ր ամենայնի, եւ ի՛նձ ողորմիր՝ յիշելով այն սէրը, որին Դու նրանց արժանացրեցիր: Նրանցով բա՛ց ինձ ելքի շաւիղ դէպի փափագելի երանութիւնը, նրանց հովւութեան բարի ձայնը թող քաղցր հնչի ինձ համար որպէս կենաց ողջոյն: Թող որ ես հաղորդ լինեմ յոյսի տօն դարձած փրկութեան անեղծութեանը նրանց հետ, ովքեր առաջնորդներ են կեանքի, նախապէս պատուի արժանացածներ, փառաւորեալ դասեր, գետեր բանական, բարձր աւետարանիչներ, պանծալի իշխաններ, լուսապայծառ թագով պճնուածներ, զօրութեան շնորհի անկողոպտելի զարդով պայծառացածներ, տիրական լոյսի զուարթ իւղով նուիրագործուածներ:

Զ

Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ Աստուծոյ Քրիստոսի եւ մարտիրոսացն ընտրելոց նահատակութեամբ, որք մահացու եւ վշտաչարչարն մարմնով, վտանգաւոր եւ ամենակիրն անդամօք, երկրաւորական եւ հողազանգուածն բնութեամբ մարտուցեալ ընդ տարր գոյից ամենայն նիւթից՝ պսակեցան, բարձրացան եւ կենդանացան հոգեպէս, արիաբար ելեալք ի յերկրէ, ըստ մարգարէին, վկայք ճշմարիտք ամենափորձն մահու, իմանալեացն անտեսիցն եւ ծածկելոցն՝ աներկբայ բարեացն յուսով տեսելոցն աստէն նկատիչք, աշակերտք առաքելոցն եւ չարչարակիցք նոցին, որ հաւասարեալ գործովք ընդ նոսին՝ կատարեալ լրմամբ անպակասելեաւ, պարեն ի խրախճանս անկէտն երանութեան, որոց հաճոյական եւ ընդունական մաղթանօք, արիւնընծայ, վաստականուէր, քրտնակնդրուկ աղերսիցն յարգմամբ ընկա՛լ զիս նորոգ ըստ նոցին մասին՝ անեղծ փրկութեամբ ի Քեզ արձանացեալ:

Զ

Բարձրեալ Քրիստոս Աստուծոյ մեծ պատուիրանիդ աշակերտողների հետ նաեւ նահատակութեամբ ընտիր ճանաչուած մարտիրոսների, որոնք մահացու եւ վշտաչարչար իրենց մարմնով, վտանգաւոր ու ամենակիր անդամներով, երկրաւոր ու հողազանգուած բնութեամբ մարտնչելով բոլոր նիւթեղէն գոյի տարրերի հետ՝ պսակուեցին, բարձրացան եւ հոգեպէս կենդանացան, արիաբար ելնելով երկրից, ըստ մարգարէի, [դարձան] ճշմարիտ վկաներ ամենափորձ մահուան, երկրաբնակ հայողներ անտես ու ծածուկ իմանալիների՝ աներկբայ բարիքների յոյսով տեսնուող, առաքեալների աշակերտներ ու նրանց չարչարակիցներ, որ իրենց գործերով նրանց հաւասարուելով՝ կատարեալ եւ անթերի լրմամբ, պարում են [հիմա] անսահման երանութեան խրախճանքներում, նրանց հաճոյական եւ ընդունելի աղօթքներով եւ արիւնընծայ, վաստականուէր եւ քրտնակնդրուկ աղերսները յարգելով՝ վերստին ընդունի՛ր ինձ՝ որպէս նրանց ժառանգակից՝ անեղծ փրկութեամբ Քո մէջ հաստատելով:

Ընդ խաղացեալսն հուրբ եւ սուսերբ արեամբ ներկելոցն եւ ճգնաւորացն սրբոց, հարցն միանձանց եւ Քեզ հետեւելոցն, Որդի՛ Աստուծոյ, անպարտելի քաջութեամբ եւ անպատիր զգաստութեամբ, ընդ դժնեայ գոռոզի մարմնոյս բռնութեան արիապէս մարտուցեալ, սովիմբ վանեցին զանմարմինն Բելիար եւ մշտամարտ հանդիսիւ յասպարիսի կենցաղոյս, առանց զզուանաց ծանրաբեռնութեան ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու տապանակաւ մարմնոյս թանձրութեան, զթեթեւութիւն հոգւոցն թռուցեալ՝ ի նաւահանգիստն կենաց հասին եւ իբր սիրողք վերնում վիճակին՝ առանց յետնոցն մտածութեան, զթագն յաղթութեան համարձակապէս պայծառ ճոխութեամբ պճնեալ իսկապէս ի գլուխ կապեցին. վասն նոցին արժանաւոր մաղթանաց եւ նուիրական հայցուածոց եւ զիս՝ զմեղաւորս, ի պատժականաց ընկա՛լ ընդ նոսին:

Նրանց հետ, որոնք արեամբ ներկուած անցան հրի ու սրի միջով, նաեւ սուրբ ճգնաւորների, մենակեաց հայրերի եւ Քեզ հետեւողների, Որդի՛ Աստուծոյ, որոնք անպարտելի քաջութեամբ եւ անպատիր զգաստութեամբ մարտնչեցին արիաբար դժնեայ եւ գոռոզ մարմնի բռնութեան դէմ, սրանով հալածեցին անմարմին Բելիարին եւ մշտամարտ պայքարով աշխարհային կեանքի ասպարէզում, մարմնի ծանր տապանակով առանց ծանրաբեռնութեան տաղտկութեան [ընթանալով] լայնածաւալ աշխարհի ալեծուփ ծովում, թոցնելով իրենց թեթեւ հոգիները՝ կեանքի նաւահանգիստը հասան եւ իբրեւ սիրողներ վերին վիճակի՝ առանց խորհելու անցեալի մասին, պայծառ ճոխութեամբ իսկապէս պճնուած յաղթութեան թագը համարձակապէս իրենց գլխին դրեցին, նրանց արժանաւոր աղօթքներով եւ նուիրական խնդրանքներով, նրանց հետ Քեզ մօտ ընդունի՛ր եւ ինձ՝ պատժապարտ մեղաւորի՛ս:

Եւ ահա խառնեալ զանմաքուրս բան ընդ նախագրեալ երջանկացն փառատրական աղերսարկութիւն, որ վասն իմ գոչեն Քեզ ի հաճութիւն, եւ ես ընդ նոսին՝ իբր դառնութիւն եղեալ ընդ քաղցու, կամ տատասկ՝ ընդ ողորկութեան, տգեղութիւն՝ ընդ վայելչութեան, եւ տիղմ՝ ընդ գեղեցկութեան մարգարտի, կամ հող՝ ընդ յատակութեան ոսկւոյ, եւ կամ քարինս անարգս՝ ընդ պայծառութեան արծաթոյ, բացասութիւն՝ ընդ ճշմարտութեան, կամ աւազ ինչ ատամնառու՝ ընդ կակղութեան զանգուածոյ հացի: Արդ լո՛ւր, հզո՛ր, հնարաւո՛ր, գովեա՛լ, զնոցայն վասն իմ եւ զիմս՝ ընդ նոսին ի նոցին գովեստ, ի փրկութիւն իմ եւ ի փառս Քո, ամենագո՛ւթ, բարերա՛ր, օրհնեա՛լ, երկայնամի՛տ, կարո՛ղ, անքնի՛ն, անճա՛ռ, անե՛ղծ եւ անստե՛ղծ: Քո են պարգեւք, Քո են շնորհք, Դու սկիզբն եւ պատճառ բարեաց ամենայնի: Ոչ ես դատապարտիչ, այլ ազատիչ, ոչ ես կորուսիչ, այլ գտիչ, ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ, ոչ ես տարագրիչ, այլ ժողովիչ, ոչ ես մատնիչ,

Եւ ահա, խառնելով անմաքուր խօսքս վերոգրեալ երջանիկների փառատրական աղերսարկութեանը, որոնք ինձ համար գոչում են Քեզ ի հաճութիւն, ե՛ս էլ [եմ գոչում] նրանց հետ, ինչպէս դառնութիւն քաղցրութեան հետ խառնած կամ տատասկ՝ ողորկութեան հետ, տգեղութիւն՝ վայելչութեան հետ, տիղմ՝ մարգարտի գեղեցկութեան հետ, կամ հող՝ զտուած ոսկու հետ, եւ կամ անարգ քարեր՝ արծաթի պայծառութեան հետ, բացասութիւն՝ ճշմարտութեան հետ, եւ կամ ատամնառու մի աւազահատիկ՝ հացի կակուղ զանգուածի հետ: Արդ լսի՛ր, հզո՛ր, ամենահնա՛ր, գովեա՛լ, նրանցը՝ ինձ համար, եւ իմը՝ նրանց հետ ի գովեստ նրանց, ի փրկութիւն իմ եւ ի փառս Քո, ամենագո՛ւթ, բարերա՛ր, օրհնեա՛լ, ներողամի՛տ, կարո՛ղ, անքնի՛ն, անճա՛ռ, անե՛ղծ եւ անստե՛ղծ: Քոնն են պարգեւները, Քոնն են շնորհները, Դու ես սկիզբն ու պատճառը բոլոր բարիքների: Դատապարտող չես, այլ ազատող, կորստեան մատնող չես, այլ գտնող, մահացնող չես, այլ ապրեցնող, տարագրող չես, այլ ժողովող, մատնող չես, այլ փրկող,

այլ ապրեցուցիչ, ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ, ոչ ես գլորիչ, այլ կանգնիչ, ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ, ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ, ոչ ես թշուառացուցիչ, այլ մխիթարիչ: Ոչ եղծանես, այլ գրես, ոչ սասանես, այլ հաստատես, ոչ ոտն հարկանես, այլ սփոփես, ոչ պատճառս յօդես մահու, այլ հնարս խնդրես կենաց, ոչ ես ի կամս շարժեալ սատակման, այլ ի փրկութիւն ողորմութեան: Ոչ մոռանաս զայցելութիւն, ոչ լքանես զբարի, ոչ արգելուս զդթութիւն, ոչ բերես վճիռ կորստեան, այլ՝ կտակ ազատութեան: Ոչ թշնամանիս յառաստութեանց, ոչ բամբասիս ի շնորհաց, ոչ հայհոյիս ի պարգեւաց, ոչ նախատիս ի ձրի ձրից, ոչ անգոսնիս յերկայնմտութեանց, ոչ եպերիս ի ներութեանց, ոչ բանսարկիս ի բարութեանց, ոչ անպատուիս ի քաղցրութեանց, ոչ քամահիս ի հեզութեանց: Ոչ առաքին այսոցիկ տրտնջմունք, այլ անլռելի գոհաբանութիւնք: Թա՛րձ զմեղս իմ, հզո՛ր, լո՛յծ զանէծս իմ, օրհնեա՛լ, քաւեա՛ զպարտիս իմ, ողորմա՛ծ, ջնջեա՛ զյանցանս իմ, գթա՛ծ, մատո՛ մատն այցելութեան, եւ անդստին իսկ կատարեցայց: Զի՞նչ Քեզ, Տէ՛ր, քան զսոսին դիւրագոյն, եւ կամ

ընկղմող չես, այլ վեր հանող, գլորող չես, այլ կանգնեցնող, անիծող չես, այլ օրհնող, վրիժառու չես, այլ շնորհող, թշուառացնող չես, այլ մխիթարող: Ոչ թէ հերքում ես, այլ գրում, ոչ թէ սասանում, այլ հաստատում, ոչ թէ ոտնահարում, այլ սփոփում, ոչ թէ մահու պատճառ յօրինում, այլ հնար փնտրում կեանքի, ոչ թէ մահացնել ուզում, այլ ողորմածաբար փրկել: Չես մոռանում այցելել, չես լքում բարին, չես արգելում գթութիւնը, չես բերում վճիռ կորստեան, այլ՝ կտակ ազատութեան: Չես անարգում առատութիւնից, չես բամբասում շնորհների համար, չես հայհոյում պարգեւների համար, չես նախատում ձրի բաշխելուց, չես պախարակւում ներողամտութեան համար, չես պարսաււում ներելու համար, չես բանսարկւում բարութեան համար, չես անպատււում քաղցրութեան համար, չես արհամարհւում հեզութեան համար: Սրանց համար, [Տէ՛ր], առաքւում են Քեզ ոչ թէ տրտունջներ, այլ անլռելի գոհաբանութիւններ: Վերցրո՛ւ մեղքերն իմ, հզո՛ր, խափանի՛ր անէծքն իմ, օրհնեա՛լ, քաւի՛ր պարտքերս, ողորմա՛ծ, ջնջի՛ր յանցանքներն իմ, գթա՛ծ, մօտեցրո՛ւ մատդ նախախնամութեան,

զի՞նչ ինձ՝ պարտաւորիս, կարեւորագոյն: Այլ կենդանագրեա՛, բարեխնա՛մ, քոյինաստեղծ պատկերիս փչումն կրկին՝ ի շունչ նորոգման լուսաւորութեան մաքրական շնորհի զամենամեղս ոգի պաշտպանեալ:

Ջ

Մի՛ ածեր, ողորմա՛ծ, ինձ օր տարաժամ ի համառօտս երբի՝ անթոշակ ապաձեռնութեամբ ընդ անկատար ուղին հետեւել, մի՛ մատուցաներ բաժակ դառնութեան ի ժամ ծարաւու, մի՛ փակեր, զթա՛ծ, իմ հանդէպ զյաջողուած հոգեւոր օգտիս, եւ մի՛ իբր յանկարծադէպ հինից ասպատակ՝ գիշեր մահուն ինձ պատահեսցէ, մի՛ տապ տօթոյն յանպատրաստ պահուն զարմատս հատեալ ցամաքեցուսցէ, եւ մի՛ լուսնական դիպուածք հասեալ գաղտնեօք վնասեսցեն, մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս, եւ մի՛ հոսանք ուղղիցս կենցաղոյս զիս ողողեսցեն: Մի՛ հանգիստն մահ բերիցէ, եւ մի՛ ննջումն ի սատակումն յառաջեսցէ, մի՛ քունն ինձ կորուստ լիցի, եւ մի՛ նիրհումն ապականութիւն

եւ խակոյն կդառնամ կատարեալ: Տէ՛ր, ի՞նչ կայ Քեզ համար սրանից աւելի դիւրին, եւ ի՞նչ՝ մեղաւորիս համար առաւել կարեւոր: Այլ կենդանագրի՛ր, բարեխնա՛մ, Քո ստեղծած պատկերիս շունչը կրկին՝ շնորհիդ նորոգող եւ լուսաւորող մաքրագործ շնչով ամենամեղ հոգիս պաշտպանելով:

Ջ

Մի՛ բեր, ողորմա՛ծ, ինձ օր տարաժամ այսքան շուտափոյթ, որ ես անվաստակ ձեռնունայնութեամբ հեռանամ անկատար ճանապարհով [այս կեանքից], մի՛ մատուցիր ինձ բաժակ դառնութեան ծարաւի ժամին, մի՛ փակիր, զթա՛ծ, իմ դէմ յաջողութիւնը հոգեւոր օգտիս, եւ թող մահուան գիշերը իբրեւ յանկարծադէպ հէնի ասպատակ չհասնի վրաս, թող տօթակէզ տապը արմատներս կտրուկ չցամաքեցնի անպատրաստ պահին, ոչ էլ լուսնական դիպուածները հասնելով գաղտնի վնասեն ինձ, թող մեղքիս սառույցը չպահուի իմ մէջ, թող աշխարհիկ կեանքի ջրերի հոսանքներն ինձ չողողեն: Թող հանգիստն ինձ մահ չբերի, եւ ոչ նինջը կործանում առաջ բերի, թող քունն ինձ կորուստ

գործեսցէ, մի՛ վախճանն անյարմար ի վերայ իմ աբշաւեսցէ, եւ մի՛ շնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ ի խոնարհ լքցի:

Է

Դո՛ւ ես Տէր, Դո՛ւ՝ գթած, Դո՛ւ՝ բարերար, Դո՛ւ՝ երկայնամիտ, Դո՛ւ՝ ամենակարող, առ ամենայն բան անհասութեան անճառ զօրաւոր՝ քաւել, փրկել, կենդանարարել, լուսաւորել, վերատին հաստատել, ի ժանեաց կերչաց դազանաց եւ կամ յատամանց վիշապաց ի կեանս կորզել, ի խորոց անդնդոց ի լոյս բերկրութեան ածել եւ ի հեղձմանէ ծփանաց մեղաց ընդ արդարս երջանկաց փառօք բազմեցուցանել: Ամենայն ոգի Քեզ ակնկալեալ յուսով սպասէ՝ կարօտեալ Քումդ շնորհաց՝ եթէ՛ երկնայինք եւ եթէ՛ երկրաւորք, եթէ՛ անկածն մեղօք եւ եթէ՛ ամբարձեալն արդարութեամբ, եթէ՛ տէր եւ եթէ՛ ծառայ, եթէ՛ տիկին եւ եթէ՛ աղախին, եւ ի ձեռն Քո է շունչ կենդանական բոլորեցուն: Եւ Քեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

չլինի, եւ ո՛չ էլ նիրհը ապականութիւն գործի, թող վախճանն անժամանակ չարշաւի վրաս, ոչ էլ հոգիս, վեր բարձրանալիս, բռնուելով ներքեւ շպրտուի:

Է

Դո՛ւ ես Տէր, Դո՛ւ՝ գթած, Դո՛ւ՝ բարերար, Դո՛ւ՝ ներողամիտ, Դո՛ւ՝ ամենակարող, Դո՛ւ՝ ամէն անհասի համար անճառ զօրաւոր՝ քաւութեան, փրկութեան, կենդանարարելու, լուսաւորելու, վերստին հաստատելու, գիշատիչների ժանիքներից եւ կամ վիշապների ատամներից կեանքի կորզելու, խոր անդունդներից բերկրութեան լոյսին բերելու, մեղքի հորձանուտներում խեղդուելուց փրկած՝ արդար երջանիկների հետ փառքով բազմեցնելու: Ամենայն հոգի ակնկալութեամբ, յոյսով Քեզ է սպասում՝ կարօտ Քո շնորհներին՝ թէ՛ երկնայինները եւ թէ՛ երկրաւորները, թէ՛ մեղքով ընկածը եւ թէ՛ արդարութեամբ բարձրացածը, թէ՛ տէրը եւ թէ՛ ծառան, թէ՛ տիկին եւ թէ՛ աղախին, եւ Քո ձեռքին է բոլորի կենդանութեան շունչը: Եւ Քեզ Հօր եւ Սուրբ Հոգուդ հետ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՏԱՐԲԵՐ ԱՂՕԹՔՆԵՐ

Աղօթք, յորժամ յորոգայթ անկանի ոք՝ ասացեալ սրբոյն Գրիգորի Մերոյ Լուսաւորչին

Օրհնեա՛լ է անբաւ մարդասիրութիւն Քո, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս: Ընդէ՞ր լքանես զիս: Եթէ վասն մեղաց, Դո՛ւ միայն ես առանց մեղաց, եւ անուն Քո զանոխակալութիւն եւ զմարդասիրութիւն ցուցանէ: Գթա՛ յիս, վասն զի Դո՛ւ միայն ես մարդասէր:

Ապրեցո՛ զիս՝ զանկեալս ի մեղս, վասն զի Դո՛ւ միայն ես առանց մեղաց: Հա՛ն զիս ի տղմոյ անօրէնութեան իմոյ, զի մի՛ ընկղմեցայց յաւիտեան: Փրկեա՛ զիս ի թշնամւոյ իմոյ, քանզի ահա իբրեւ զառիւծ մռնչէ՝ կամելով կլանել զիս: Արդ, Տէ՛ր իմ, փայլատակեա՛ զփայլատակունս Քո եւ կործանեա՛ զզօրութիւն նորա. երկիցէ եւ խաւարեսցի յերեսաց Քոց, քանզի տկար է եւ ոչ ունի զօրութիւն կալ առաջի Քո եւ ոչ առաջի սիրողացն զՔեզ: Տեսանէ զզօրութիւն նշանի Խաչի Քոյ եւ զարհուրի եւ ամաչելով ի բաց հալածի յայնցանէ, որ կարդան առ Քեզ: Այժմ, Տէ՛ր, կեցո՛ զիս եւ ապրեցո՛, վասն զի ի Քեզ ապաւինեցայ. հա՛ն ի նեղութենէ զանձն իմ, զի մի՛ իսպառ կորուսցէ

Մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի ասած աղօթքը, երբ մէկը որոգայթի մէջ է ընկնում

Օրհնեա՛լ է Քո անբաւ մարդասիրութիւնը, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս: Ինչո՞ւ ես լքում ինձ: Եթէ մեղքերի համար, Դո՛ւ ես միայն առանց մեղքի, եւ Քո անունը անոխակալութիւն եւ մարդասիրութիւն է յայտնում: Գթա՛ ինձ, քանզի Դո՛ւ ես միայն մարդասէր:

Փրկի՛ր ինձ՝ մեղքերի մէջ ընկածիս, քանզի Դո՛ւ ես միայն առանց մեղքի: Հանի՛ր ինձ իմ անօրինութեան տիղմից, որպէսզի յաւիտեան չընկղմուեմ: Փրկի՛ր ինձ իմ թշնամուց, քանզի ահա՝ առիւծի պէս մռնչում է՝ կամենալով կլանել ինձ: Արդ, Տէ՛ր իմ, արձակի՛ր Քո շանթերը եւ կործանի՛ր նրա զօրութիւնը. թող երկնչի եւ խաւարի Քո երեսից, քանզի տկար է եւ անզօր՝ կանգնելու Քո եւ Քեզ սիրողների առջեւ: Տեսնում է Քո Խաչի նշանի զօրութիւնը եւ զարհուրում ու ամաչելով հեռու փախչում նրանցից, ովքեր աղօթում են Քեզ: Այժմ, Տէ՛ր, պահպանի՛ր եւ փրկի՛ր ինձ, քանզի Քեզ ապաւինեցի. հանի՛ր նեղութիւնից իմ անձը, որպէսզի ծածուկ հնարներով ինձ հետ մաքառնչոզ

զիս նենգաւորն, որ մարտնչի ընդ իս ծածուկ հնարիւք: Որ խորհրդոց ես Տէր եւ քննես զսիրտս եւ զերիկամունս, սրբեա՛ զսիրտ իմ եւ զխորհուրդս ի զազիր եւ ի պիղծ խորհրդոց, զի մի՛ իսպառ կորեայց զյաւիտենական կորուստն:

Որ Կարողդ ես յամենայնի, ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ իմ. տո՛ւր զշնորհս արտասուաց մեղուցեալ ոգւոյս, որպէս զի լուացից զբազմութիւն մեղաց, զի ապրեցայց ի ձեռաց անողորմ հրեշտակաց, որք արկանեն զամբարիշտն ի հուր գեհենին: Երանի՛ թէ լայի հանապազ՝ աղաչելով զՔեզ, Աստուա՛ծ, զի մի՛ անարժան գտայց ի ժամուն, որ գալոց ես: Մի՛ լուայց զահաւոր զձայնն, եթէ՝ «Ե՛րթ ի բաց, մշա՛կդ անօրէնութեան, ոչ գիտեմ՝ ուստի ես»:

Աստուա՛ծ բարձրեալ, միայն առանց մեղաց, շնորհեա՛ ինձ՝ մեղաւորիս, յաւուր յայնմիկ զբազում գթութիւն Քո, զի մի՛ յայտնեսցին ծածուկ ամբարշտութիւնք իմ առաջի տեսողաց հրեշտակաց եւ հրեշտակապետաց, մարգարէից, առաքելոց եւ արդարոց սրբոց: Ապրեցո՛ զիս՝ զամբարիշտս, շնորհօք ողորմութեան Քոյ, ընկա՛լ զիս ի դրախտն փափկութեան ընդ կատարեալ արդարան, ընկա՛լ զաղօթս մեղուցեալ

նենգաւորն իսպառ չկործանի ինձ: Որ խորհուրդների Տէր ես եւ քննում ես սրտերն ու երիկամները, սրբի՛ր իմ սիրտը եւ խորհուրդները զազիր ու պիղծ խորհուրդներից, որպէսզի իսպառ չկորչեմ յաւիտենական կորուստով:

Որ Կարողդ ես ամէն ինչի մէջ, ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ իմ. մեղաւոր հոգուս արտասուքի շնո՛րհ տուր, որպէսզի լուանամ մեղքերի բազմութիւնը՝ փրկուելու անողորմ հրեշտակների ձեռքից, որոնք գեհենի հուրն են նետում ամբարիշտին: Երանի՛ թէ լայի հանապազ՝ ազաչելով Քեզ, Աստուա՛ծ, որպէսզի անարժան չգտնուեմ այն ժամին, որ գալու ես: Լսեմ ահաւոր ձայնը, թէ՝ «Հեռո՛ւ գնա, մշա՛կդ անօրէնութեա՛ն, չգիտեմ՝ որտեղից ես»:

Բարձրեա՛լ Աստուած, որ միակդ ես առանց մեղքի, այն Օրը շնորհի՛ր ինձ՝ մեղաւորիս, Քո բազում գթութիւնը, որպէսզի իմ ծածուկ անօրէնութիւնները չյայտնուեն ամենատես հրեշտակների եւ հրեշտակապետերի, մարգարէների, առաքեալների եւ արդար սուրբերի առջեւ: Փրկի՛ր ինձ՝ ամբարիշտիս, Քո ողորմութեան շնորհով, ընդունի՛ր ինձ փափուկ դրախտի մէջ կատարեալ արդարների հետ, ընդունի՛ր

ծառայիս Քոյ բարեխօսութեամբ սրբոցն, որք հաճոյ եղեն Քեզ, Յիսո՛ւս Քրիստոս Տէր մեր, որ ես օրհնեալ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք վասն կապանաց դիւաց եւ կախարդաց եւ վասն աղանդաւորաց

Թագաւո՛ր հզօր, ապաւէ՛ն ծարաւելոց, փրկի՛չ նեղելոց, որ վասն մեր խոնարհեցար ի հայրական ծոցոյ եւ առեր մարմին ի սրբոյ Կուսէն Մարիամայ, վասն մերոյ փրկութեան մատնեցար, ըմբռնեցար, չարչարեցար, խաչեցար, թաղեցար եւ յարեար ի մեռելոց եւ համբարձար փառօք առ Հայր, զարթո՛ զզօրութիւն Քո եւ ե՛կ ի կեցուցանել զգինս արեան Քոյ, Տէ՛ր, եւ մի՛ տար գերել սատանայի զՔո փրկեալս եւ մի՛ տար բնակութիւն չարին զտաճար անուանդ Քոյ Սրբոյ եւ մի՛ զլքեալս Քեզ մարմին եւ անդամ թողուլ ի կոխումն եւ ի կատականս չարին, այլ գթա՛ ի Քո արարածս արարչական սիրով: Տէ՛ր, ողորմեա՛ մեզ, զի ի Խաչ Քո պարծելով պարծեցաք, եւ պահելով պահեցէ զմեզ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն եւ լիցի պահապան ծառայիս Աստուծոյ. ամէն:

Քո մեղաւոր ծառայի աղօթքները Քեզ հաճելի դարձած սուրբերի բարեխօսութեամբ, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, որ օրհնեալ ես Հօր եւ Սուրբ Հոգուդ հետ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք ընդդէմ դեւերի եւ կախարդների կապանքների եւ ընդդէմ աղանդաւորների

Թագաւո՛ր հզօր, ապաւէ՛ն ծարաւեալների, Փրկի՛չ նեղեալների, որ մեզ համար խոնարհուեցիր հայրական ծոցից եւ մարմին առար սուրբ Կոյս Մարիամից, մեր փրկութեան համար մատնուեցիր, բռնուեցիր, չարչարուեցիր, խաչուեցիր, թաղուեցիր, յարութիւն առար մեռելներից եւ փառքով համբարձուեցիր առ Հայր, արթնացրո՛ւ Քո զօրութիւնը եւ արի՛ ապրեցնելու, Տէ՛ր, Քո Արեամբ գնուածներին, թոյլ մի՛ տուր սատանային գերել Քո փրկածներին եւ չարին՝ բնակուել Քո սուրբ անուան տաճարում, եւ Քեզ լքած մարմինն ու անդամը մի՛ թող չարի ոտնահարութեանն ու ծաղրին, այլ գթա՛ արարածներիդ [Քո] արարչական սիրով: Տէ՛ր, ողորմի՛ր մեզ, քանզի մշտապէս պարծեցանք Քո Խաչով, եւ պահելով թող պահի մեզ երեւելի եւ աներեւոյթ թշնամուց եւ պահապան լինի Աստուծոյ ծառայիս. ամէն:

Աղօթք ընդդիմամարտ դիւաց եւ դիւասարսուռ ջերմնատագնապ ախտաւորութեանց Աստուծով փարատիչ՝ սրբոյ Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ

ԲԱՆ ԻԸ

Արդ, այսքանեացս անբաւից հրաշից Հանդերձիչ, Հա՛յր ամենաստեղծ, անո՛ւնդ ահաւոր, ճա՛յն սարսափելի, կոչո՛ւմն ընտանի, բա՛ն համբուրելի, ազդո՛ւմն սքանչելի, հրամա՛ն սոսկալի, էութի՛ւն անքննելի, գոյութի՛ւն անճառելի, իսկութի՛ւն անբաւելի, զօրութի՛ւն անզննելի, կա՛մք ամենաբարի, տէրութի՛ւն անսահմանելի, մեծութի՛ւն անչափելի, բարձրութի՛ւն անբովանդակելի, որքանութի՛ւն անկշռելի, առաւելութի՛ւն անհասանելի, պատճա՛ռ Որդւոյ՝ հայրութեամբ, այլ ոչ նախադրութեամբ: Քեզ եւ ի ձեռն Քոյդ անպարագիր զօրութեանդ սաստեա՛ տագնապող եւ դիւական տենդիս ջերմութեան, որ սպրդեալ մուծաւ ընդ մեղաց, զի փախիցէ ի մարդոյս՝ զարհուրեալ ի սքրալի եւ յանբաւելի Արեան վտակի Գառինդ երկնաւորի, որով սրսկեալ միանգամ՝ ի մշտնջենաւորս համայն մաքրեցաք:

Սուրբ Գրիգոր Նարեկացու ասած՝ ընդդէմ դեւերի եւ դիւասարսուռ, ջերմնատագնապ ախտաւորութիւններն Աստծով փարատող աղօթքը

ԲԱՆ ԻԸ

Արդ, այսքան անբաւ հրաշքներ գործող Հա՛յր ամենաստեղծ, անո՛ւն ահաւոր, ճա՛յն սարսափելի, կոչո՛ւմ ընտանի, խօ՛սք համբուրելի, ազդո՛ւմ սքանչելի, հրամա՛ն սոսկալի, էութի՛ւն անքննելի, գոյութի՛ւն անճառելի, իսկութի՛ւն անբաւելի, զօրութի՛ւն անզննելի, կա՛մք ամենաբարի, տէրութի՛ւն անսահմանելի, մեծութի՛ւն անչափելի, բարձրութի՛ւն անբովանդակելի, որքանութի՛ւն անկշռելի, առաւելութի՛ւն անհասանելի, պատճա՛ռ Որդու՝ հայրութեամբ, այլ ոչ նախադրութեամբ: Քեզանով եւ Քո անպարագիր զօրութեամբ սաստի՛ր տագնապող եւ դիւական ջերմութեան այս տենդը, որ մեղքերի հետ սպրդելով՝ ներմուծուեց, որպէսզի փախչի այս մարդուց՝ զարհուրելով երկնաւոր Գառիդ սխրալի եւ անբաւելի Արեան վտակից, որով մի անգամ միայն ցօղուելով՝ լիովին մաքրուեցինք յաւիտենապէս:

Եւ արդ, յայսց պատկառելի խոնարհութենէ արարչակերտս խորհրդոյ ամաչեսցէ սատանայ ի գործս չարեաց իւրոց հրեշտակաց, տանջեսցի եւ հալածեսցի՝ հեռացեալ եւ արտաքս առաքեալ ի շինուածոյ խորանէ Քումդ բնակութեան յարտաքին խաւարն: Եւ ընչեալ մաքրեա՛ զարտասուս ողբոցս ի դիմաց մերոց եւ զհառաչումն ձայնիս հեծութեան ի սրտից մերոց: Եւ յիշատակաւ հարման հեղուսիցն քստմնափուշ, տաժանատեսիլ ոգեպահանջից, որով պնդեցաւ Միածինդ Քո յաշտարակ խաչին, ցաւեսցի չարին: Եւ ի կողահերձ սայրասուր սլաքէ ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, ի սպառ սատակեսցի սկզբնարար մահուն: Եւ զի խոնարհեցոյց զգովեալն գլուխ յաւանդել զոգին ի ծոց Քո, Բարձրեա՛լ, ապստամբութիւն անբարի բարուցն Բելիարայ ի կոր կործանեսցի՝ ամենայնիւ հերքեալ ի կորուստ: Եւ զի զօղեալ ծածկեցաւ անմահն իսկութիւն յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպարտութիւն կարծեալ գոռոզին ի յատակս մահու գժոխոց մթին ստուերին յառեալ դիտեսցէ եւ յիշեսցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահացաւ դիմամարտութիւն թիւնից վի-

Եւ արդ, այս արարչակերտ խորհրդի պատկառելի խոնարհութիւնից թող ամաչի սատանան իր չար հրեշտակների գործերի համար, տանջուի եւ հալածուի՝ հեռացուելով եւ արտաքսուելով Քո բնակութեան խորանի շինութիւնից դէպի արտաքին խաւարը: Եւ ընչելով մաքրի՛ր մեր դէմքերից այս ողբերի արտասուքները եւ մեր սրտերից՝ հեծութեան այս ձայնի հառաչանքը: Եւ քստմնափուշ, տաժանատեսիլ եւ մահաւորթ հեղուսահարման յիշատակով, որով ամրացուեց Քո Միածինը խաչի աշտարակին, ցաւահարուի չարը: Եւ կողահերձ սայրասուր սլաքի ուժգին հարուածից, որով ստացաւ մեծ վէրքը, մահուան սկզբնարարը թող իսպառ սատակուի: Եւ քանզի խոնարհեցրեց գովեալ գլուխը՝ աւանդելով հոգին Քո ծոցում, Բարձրեա՛լ, թող ի կոր կործանուի Բելիարի անբարի բարքերի ապստամբութիւնը՝ ամենեւին կորստեան մատնուելով: Եւ քանզի անմահ իսկութիւնը թաղուելով ծածկուեց երկրի որովայնում, սրանով գոռոզի վերամբարձ կեղծ հպարտութիւնը թող սեւեռուն դիտի մահուան դժոխքի մթաստուեր յատակը եւ յիշի առաջին անբժշկելի հարուածը, որով մահացաւ թունաւոր վիշապի դիմամարտութիւնը Ամենազօրի

շապին կենարարն կրիւք Ամենազօրին: Վասն զի ի փառս Քո, Հա՛յր ողորմութեան, իբր ի գովեստ Որդւոյ Քոյ՝ Հոգւովդ Սրբով, զայս խոստովանիմ, քանզի ոչ պիտակ ինչ սոսկ զօրութեանն ունի զմիւսմէն առ մի խորհրդականն խորութեան, այլ զանսկիզբն Բանդ անճնաւոր ընդ անժամանակդ Հօր փառաւորեմք: Եւ Քեզ միայնոյ՝ Սուրբ Երրորդութեանդ, հաւասարապատիւ տէրութեանդ, համաբուն անբաժին Ինքնութեանդ օրհնաբանութի՛ւն, գոհութի՛ւն, զօրեղութի՛ւն եւ անճառ վայելչութի՛ւն մեծութեան, բարեվիճակ հարթութեան, զուգակշիռ հաւասարութեան՝ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԲ

Ա

Տէ՛ր Աստուած գթութեան, փրկութեան եւ ողորմութեան, քաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանութեան, յարութեան եւ անմահութեան, յիշեա՛ զիս, յորժամ գայցես արքայութեամբ Քո, ահաւո՛ր, հզօ՛ր, բարեբա՛ր եւ ամենաստե՛ղծ, կենդանի՛, գովեա՛լ, ամենակա-

կենարար չարչարանքներով: Որի համար ի փառս Քո, Հա՛յր ողորմութեան, որպէս գովեստ Քո Որդու՝ Սուրբ Հոգովդ, այս եմ խոստովանում, քանզի [Ձեր] խորհրդական խորութեան մէջ մէկդ միւսի զօրութեան կարիքը բնաւ չունի, ուստի փառաւորում ենք անսկիզբ անճնաւոր Բանդ անժամանակ Հօրդ հետ: Եւ Քեզ միայն՝ Սուրբ Երրորդութեանդ, հաւասարապատիւ տէրութեանդ, համաբուն անբաժանելի Ինքնութեանդ օրհնաբանութի՛ւն, գոհութի՛ւն, զօրեղութի՛ւն եւ անճառ վայելչութի՛ւն մեծութեան, բարեվիճակ հարթութեան, զուգակշիռ հաւասարութեան՝ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԲ

Ա

Տէ՛ր Աստուած գթութեան, փրկութեան եւ ողորմութեան, քաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանութեան, յարութեան եւ անմահութեան, յիշի՛ր ինձ, երբ գաս Քո արքայութեամբ, ահաւո՛ր, հզօ՛ր, բարեբա՛ր եւ ամենաստե՛ղծ, կենդանի՛, գովեա՛լ, ամենակատա՛ր, մե՛րձ՝ համայն

տա՛ր, մերձ՝ ի հեծութիւն համայն եղելոց: Ընդ խաչեցելոյն ընդ Քեզ պաղատիմ, որ ո՛չ ըմբռնեալ վասն Քո եւ ո՛չ կապեցեալ, ո՛չ կախեալ եւ ո՛չ բեւեռեալ, ո՛չ կոփեալ յանուն Մեծիդ եւ ո՛չ անարգեալ, ո՛չ լկեալ եւ ո՛չ նշկահեալ, ո՛չ խորտակեալ եւ ո՛չ մահացեալ եւ արքայութեանն արդարոց մասին անձկալեաց լուսոյ արժանի ցուցեալ, իրաւամբք ուխտի երդմնականաւ «ամենիւն» ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տուեալոց, փառաւորեցեր առ յոյս փրկութեան իսպառ լքելոյս:

Բ

Օրհնեա՛լ, օրհնեա՛լ եւ դարձեալ օրհնեա՛լ, եւ զիս ընկալեալ նովին հաւատովք՝ կանգնեա՛ի կործանմանէս, բարերա՛ր, բժշկեա՛ ի հիւանդութեանցս ախտից, ողորմա՛ծ, յեզերաց մահուս դարձո՛ զիս ի կեանս, կենդանութի՛ւն, Քո եմ եւ ես, կեցո՛ ընդ նմին, ապաւինութի՛ւն, անձամբ մեռելոյս կենդանական շո՛ւնչ ընծայեցո, յարութի՛ւն, կեա՛նք, անմահութի՛ւն, անպակաս բարութի՛ւն, անսպառ շնո՛րհ, անփոփոխ ներողութի՛ւն, ա՛ջ ամենազօր, ձե՛ռն ամէնիշխան, մա՛տն ամենամերձ: Կամեա՛ց, Տէ՛ր, եւ

արարածների հեծութիւններին: Գաղատում եմ Քեզ խաչակցիդ հետ, որը Քեզ համար ո՛չ բռնուած էր եւ ո՛չ էլ կապուած, ո՛չ կախուած էր եւ ո՛չ՝ բեւեռուած, ո՛չ խոշտանգուած էր Մեծիդ համար եւ ո՛չ՝ անարգուած, ո՛չ լկուած էր եւ ո՛չ՝ արհամարհուած, ո՛չ խորտակուած էր եւ ո՛չ՝ մահացած, սակայն արդարների արքայութեան անձկալի լոյսին արժանացած, ուխտի օրէնքով, «ամէնի» երդմամբ ազդարարելով շնորհուած բարիքների անփոփոխութիւնը, փառաւորեցիր [նրան]՝ փրկութեան յոյս ներշնչելով իսպառ լքուածիս:

Բ

Օրհնեա՛լ, օրհնեա՛լ եւ դարձեալ օրհնեա՛լ, ընդունելով եւ ինձ նոյն հաւատքով՝ կանգնեցրո՛ւ կործանումից, բարերա՛ր, բժշկի՛ր ախտերի այս հիւանդութիւններից, ողորմա՛ծ, մահուան եզերքից դէպի կեա՛նք դարձրու, կենդանութի՛ւն, Քոնն եմ նաեւ ես, ապրեցրո՛ւ նրա հետ, ապաւինութի՛ւն, հոգով մեռածիս կենդանութեան շո՛ւնչ ընծայիր, յարութի՛ւն, կեա՛նք, անմահութի՛ւն, անպակաս բարութի՛ւն, անսպառ շնո՛րհ, անփոփոխ ներողութի՛ւն, ամենազօր ա՛ջ, ամէնիշխան ձե՛ռք, ամենամերձ

փրկեցայց, ակնարկեա՛ միայն գթութեամբ, եւ արդարացայց, ասա՛ բանիւ, եւ վաղվաղակի անարատ գտայց, մոռացի՛ր զթիւս չարեացն, եւ անդստին համարձակեցայց, առատաձեռնեա՛, եւ անդստին ի Քեզ իսկ պատուաստեցայց, փառաւորեա՛լդ յամենայնի յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԳ

Ա

Բժշկական կրթականութեան ամենափորձ հնարաւորութեամբ՝ պատճա՛ռ կենաց անախտականաց, Թագաւո՛ր զօրաւոր երկնաւոր, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ ամենեցուն՝ իմանալեաց եւ տեսականաց, ահա՛ Դու ի յիս, ըստ մարգարէին, որ ընդ ասելոյն, նոր կցորդութեան, առ որ բարեզարդ դաշամբ այս բանի ընդ Քեզ միութեան, լուսաւորեցայց՝ կրկին ողջացեալ հոգւով եւ մարմնով, ամենայնիւ կարող եւ անվանելի:

Բ

Որ ոչ կարօտանաս սպեղանեաց՝ առ պատրաստութիւն պատանաց հոգեկան վիրաց, ո՛չ ժամա-

մա՛ռ: Կամեցի՛ր, Տէ՛ր, եւ կփրկուեմ, նայի՛ր միայն գթութեամբ, եւ կարդարանամ. ասա՛ խօսքով, եւ իսկոյն անարատ կդառնամ, մոռացի՛ր իմ չարիքների թիւը, եւ վերստին համարձակութիւն կստանամ, առատաձեռնի՛ր, եւ անմիջապէս Քեզ կպատուաստուեմ, փառաւորեա՛լդ ամէն ինչում յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԳ

Ա

Բժշկական ճարտարութեան ամենափորձ հնարամտութեամբ՝ անախտական կեանքի պատճա՛ռ, զօրաւոր Թագաւո՛ր երկնաւոր, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ բոլորի՝ իմանալիների եւ տեսանելիների, ահա՛ Դու իմ մէջ ես, ըստ մարգարէի խօսքի, նոր կցորդութեամբ, որպէսզի Քեզ հետ միութեան այս բարեզարդ դաշինքով լուսաւորուեմ կրկին՝ ողջացած հոգով եւ մարմնով, ըստ ամենայնի կարող եւ անյաղթ:

Բ

Հոգեկան վէրքեր բուժելու համար կարիք չես զգում ո՛չ սպեղանիների, ո՛չ ժամանակի, ո՛չ

նակի, ո՛չ միջնորդի, ո՛չ աւուրց երկարաձգութեան, ո՛չ փոփոխս մատուցանելոյ, ո՛չ հատման, ո՛չ խարման, ո՛չ սրագործութեան՝ ըստ երկրաւորս դեղատուութեան, առ որս միշտ է վրիպութիւն եւ ամենասխալ տարակուսութիւն: Այլ Քեզ՝ Արարչիդ հոգւոց եւ մարմնոց, ամենայն ինչ լուսաւորեալ է, ամենայն ինչ առաջի է, ամենայն ինչ գրեալ է, ամենայն ինչ դիւրին է, համայնն հնարաւոր է, իմաստն գլխաւորեալ է, խոստումն լցեալ է, կամելն կատարեալ է, Քո կտակն աւետարան է, Քո վճիռն ազատութիւն է, Քո մատեանն շնորհ է: Ո՛չ փակեալ ես ընդ օրինօք, ո՛չ պարուսակեալ ես ընդ կանոնաւ, ո՛չ արգելեալ ընդ նուազութեամբ, ո՛չ խոնարհեալ ընդ հնազանդութեամբ, ո՛չ պարագրեալ ընդ փոքրկութեամբ, ո՛չ չափեալ ես ընդ սահմանաւ, ո՛չ վրիպեալ ի բարկութենէ, ո՛չ այլայլեալ ինչ ի ցասմանէ, ո՛չ սխալեալ ի խստութենէ, ո՛չ ամբոխեալ ի խռովութենէ, ո՛չ դղրդեալ յանգիտութենէ, ո՛չ փոփոխեալ յողորմութենէ, ո՛չ պակասեալ ի բարձրութենէ, ո՛չ լքեալ յայցելութենէ, ո՛չ տկարացեալ ի փրկութենէ: Դու սկիզբն եւ լրումն ամենայնի, եւ ի Քէն է ամենայն, եւ Քեզ փա՛ռք եւ երկրպագութի՛ւն յաւիտեանս. ամէն:

միջնորդի, ո՛չ օրերի երկարաձգութեան, ո՛չ տարբեր դեղեր օգտագործելու, ո՛չ հատման, ո՛չ խարման, ո՛չ վիրահատութեան՝ ըստ երկրաւոր բժշկութեան, որը միշտ ենթակայ է վրիպանքի եւ ամենասխալ տարակուսութեան: Այլ Քեզ՝ հոգիների եւ մարմինների Արարչիդ, ամէն ինչ լուսաւոր է, ամէն ինչ ակներեւ, ամէն ինչ գրուած, ամէն ինչ դիւրին, ամէն ինչ հնարաւոր, իմաստն ամբողջացած է, խոստումը իրագործուած, կամքը կատարուած, Քո կտակն աւետարան է, Քո վճիռն ազատութիւն, Քո մատեանը շնորհ: Ո՛չ օրէնքի կապանքի մէջ ես, ո՛չ կաշկանդուած ես կանոնով, ո՛չ արգելուած նուազութեամբ, ո՛չ խոնարհուած հնազանդութեամբ, ո՛չ պարփակուած փոքրութեան մէջ, ո՛չ չափաւորուած սահմանով, ո՛չ խոտորուած բարկութիւնից, ո՛չ այլայլուած ցասումից, ո՛չ սխալուած խստութիւնից, ո՛չ ալեկոծուած խռովութիւնից, ո՛չ շփոթուած անգիտութիւնից, ո՛չ փոփոխուած ողորմութիւնից, ո՛չ նուազած բարձրութիւնից, ո՛չ լքուած այցելութիւնից, ո՛չ տկարացած փրկելուց: Դու ես սկիզբը եւ լրումն ամէն ինչի, եւ ամէն ինչ Քեզանից է, եւ Քեզ փա՛ռք եւ երկրպագութի՛ւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՁԹ

Աստուա՛ծ եւ Տէ՛ր, կեա՛նք եւ արարի՛չ, ողորմա՛ծ, գթա՛ծ, լո՛յս, երկայնամի՛տ, անոխակա՛լ, մարդասէ՛ր, ամենագո՛ւթ, պարգեւատո՛ւ, փրկի՛չ, օրհնեա՛լ, գովեա՛լ, բարեբանեա՛լ, դարա՛ն ամրութեան, պատսպարա՛ն վստահութեան, առանց նենգութեան բարի՛, առանց խաւարի ճառագա՛յթ, քաւի՛չ մեղաց, ողջացուցի՛չ վիրաց, անհասանելեաց հնա՛րք, անմատչելեաց հպաւո՛ր, անյուսութեան ե՛լք, անուն Քո խոստովանեալ Աստուծոյ Որդի՛. եւ Հօր Քոյ ընդ Քեզ հզօրի եւ ահաւորի եւ Հոգւոյդ ամենակալի եւ ընդ Քեզ երկրպագելւոյ փա՛ռք եւ պաշտօն զոհաբանութեան յաւիտեանս. ամէն:

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Երգ աղօթական ի դէմս Սրբոյ Երրորդութեան եւ իւրաքանչիւր դիմի Երրորդութեանն առանձնակի

ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ

Առաւո՛տ լուսոյ, արեգա՛կն արդար, առ իս լո՛յս ծագեա՝:

Բխո՛ւմն ի Հօրէ, բղխեա՛ ի Հոգւոյս բան Քեզ ի հաճոյս:

ԲԱՆ ՁԹ

Աստուա՛ծ եւ Տէ՛ր, կեա՛նք եւ արարի՛չ, ողորմա՛ծ, գթա՛ծ, լո՛յս, ներողամի՛տ, անոխակա՛լ, մարդասէ՛ր, ամենագո՛ւթ, պարգեւատո՛ւ, փրկի՛չ, օրհնեա՛լ, գովեա՛լ, բարեբանեա՛լ, դարա՛ն ամրութեան, պատսպարա՛ն վստահութեան, առանց նենգութեան բարի՛, առանց խաւարի ճառագա՛յթ, քաւի՛չ մեղքերի, բուժի՛չ վէրքերի, անհասանելիների հնա՛րք, անմատչելիներին՝ մերձաւո՛ր, անյուսութեան ե՛լք, անունդ խոստովանուած՝ Աստուծոյ Որդի՛. եւ Քեզ հետ հզօր եւ ահաւոր Հօրդ եւ Քեզ հետ երկրպագելի ամենակալ Հոգուդ փա՛ռք եւ պաշտամունք զոհաբանութեան յաւիտեանս. ամէն:

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Աղօթական երգ Սուրբ Երրորդութեանը, նաեւ առանձնակի՝ Երրորդութեան իւրաքանչիւր անձին

ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ

Առաւո՛տ լոյսի, արեգա՛կ արդար, ինձ լո՛յս ծագեցրու:

Բխո՛ւմն Հօրից, բխի՛ր Հոգուս մէջ խօսք՝ Քեզ հաճելի:

Գա՛նձդ ողորմութեան, զանձիդ ծածկելոյ զտո՛ղ զիս արա:

Դուռն ողորմութեան դաւանողիս բա՛ց, դասեցո՛ վերնոցն:

Երբեա՛կ միութիւն, եղելո՛ց խնամող, եւ ի՛նձ ողորմեա:

Զարթի՛ր, Տէ՛ր, յօգնել, զարթո՛ զթմրեալս՝ զուարթնոց նմանիլ:

Էդ Հայր անսկիզբն, էակից Որդի, է միշտ Սուրբ Հոգի:

Ընկա՛լ զիս, գթա՛ծ, ընկա՛լ, ողորմա՛ծ, ընկա՛լ, մարդասէ՛ր:

Թագաւո՛ր փառաց, թողութեա՛նց տուող, թո՛ղ ինձ զյանցանս:

Ժողովո՛ղ բարեաց, ժողովեա՛ եւ զիս ժողովս անդրանկաց:

Ի Քէն, Տէ՛ր, հայցեմ, ի մարդասիրէդ, ինձ բժշկութիւն:

Լե՛ր կեանք մեռելոյս, լոյս՝ խաւարելոյս, լուծանող՝ ցաւոյս:

Խորհրդո՛ց գիտող, խաւարիս շնորհեա՛ խորհուրդ լուսաւոր:

Մնո՛ւնդ Հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ ծագեա՛ զլոյս փառաց:

Գա՛նձդ ողորմութեան, ծածկուած գանձդ գտնո՛ղ ինձ արա:

Ողորմութեան դուռը դաւանողիս բա՛ց, դասի՛ր երկնայինների հետ:

Երբեա՛կ Միութիւն, եղածների՛ խնամող, եւ ի՛նձ ողորմիր:

Զարթնի՛ր, Տէ՛ր՝ օգնելու, արթնացրո՛ւ թմրածիս, որ հրեշտակներին նմանուեմ:

Է Հայրդ անսկիզբ, էակից Որդի, է միշտ Սուրբ Հոգի:

Ընդունի՛ր ինձ, գթա՛ծ, ընդունի՛ր, ողորմա՛ծ, ընդունի՛ր, մարդասէ՛ր:

Թագաւո՛ր փառքի, թողութիւննե՛ր տուող, թողութի՛ւն տուր յանցանքներիս:

Ժողովո՛ղ բարիքների, ժողովիր եւ ի՛նձ ժողովի մէջ անդրանիկների:

Հայցում եմ, Տէ՛ր, Քեզանից՝ մարդասէրիցդ, ինձ բժշկութիւն:

Կեա՛նք եղիր մեռածիս, լոյս՝ խաւարեալիս, փարատիչ՝ ցաւիս:

Խորհուրդնե՛րն իմացող, խաւարիս շնորհի՛ր խորհուրդ լուսաւոր:

Մնո՛ւնդ Հօր ծոցի, ստուերով ծածկուածիս ծագեցրո՛ւ լոյսը փառքի:

Կենարա՛ր փրկիչ, կեցո՛ զմեռեալս, կանգնեա՛ զգլորեալս:

Հաստեա՛ հաւատով, հաստատեա՛ յուսով, հիմնեցո՛ սիրով:

Զայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձի՛ր բարեաց շնորհեա:

Ղամբարամբ լուսոյ, ղեկավա՛ր ճարտար, ղօղեալս ամրացո՛:

Ճառագա՛յթ փառաց, ճանապա՛րհ ինձ ցոյց՝ ճեպել ի յերկինս:

Միածի՛նդ Հօր, մո՛յծ զիս յառաքաստ մաքուր հարսանեացդ:

Ցորժամ գաս փառօք յահագին Աւուրն, յիշեա՛ զիս, Քրիստո՛ս:

Նորոգո՛ղ հնութեանց, նորոգեա՛ եւ զիս, նորոգ զարդարեա՛:

Շնորհատո՛ւ բարեաց, շնորհեա՛ զքաւութիւն, շնորհեա՛ զթողութիւն:

Ուրախացո՛, Տէ՛ր, ոգւոյս փրկութեամբ, ոյր վասն եմ ի սուգ:

Զար մշակողին, չար սերմանց նորին չորացո՛ զպտուղն:

Պարգեւի՛չ բարեաց, պարգեւեա՛ իմոց պարտեացս թողութիւն:

Կենարա՛ր Փրկիչ, փրկի՛ր մեռեալիս, կանգնեցո՛ւ գլորուածիս:

Ամրացրո՛ւ հաւատով, հաստատի՛ր յոյսով, հիմնի՛ր սիրով:

Բարձրաձայն աղաչում եմ, բազկատարած պաղատում՝ բարեաց պարգեւնե՛ր շնորհիր:

Լոյսի կանթեղողդ, ղեկավա՛ր ճարտար, զօրացրո՛ւ թաքնուածիս:

Ճառագա՛յթ փառքի, երկինք գնալու ճանապա՛րհ ցոյց տուր ինձ:

Միածի՛նդ Հօր, հարսանեացդ մաքուր առաքա՛ստը մտցրու ինձ:

Ցիշի՛ր ինձ, Քրիստո՛ս, երբ ահեղ Օրը գաս փառքով:

Նորոգո՛ղ հնութիւնների, նորոգիր եւ ի՛նձ, նորոգութեա՛մբ զարդարիր:

Շնորհատո՛ւ բարիքների, շնորհի՛ր քաւութիւն, շնորհի՛ր թողութիւն:

Ուրախացրո՛ւ, Տէ՛ր, ոգուս փրկութեամբ, որի համար սգի մէջ եմ:

Զար մշակողի, նրա չար սերմերի պտուղները չորացրո՛ւ:

Պարգեւի՛չ բարիքների, ների՛ր իմ պարտքերը:

Զ՛ք՛ր շնորհեա աչացս՝ ջերմ յեղուլ զարտասուս, ընչել զյանցանս:

Սպեղանի՛ դաղցու, ոսմ հոգւոյս արբո՛, ո՛ւ ցոյց ինձ լուսոյ:

Ա՛ք՛ր անուն Յիսուս, սիրով Քով ճմլեա՛ սիրտ իմ քարեղէն:

Վասն գթութեան, վասն ողորմութեան վերստի՛ն կեցո:

Տենչալուդդ տեսլեամբ տո՛ւր ինձ յաղենալ, Տէ՛ր Յիսուս Քրիստոս:

Բարո՛ւնդ երկնաւոր, բոտեա՛ զաշակերտս բամից երկնայնոց:

Ցօղ արեան Քոյ, Տէ՛ր, ցօղեա՛ ի հոգիս, ցնծասցէ անձն իմ:

Խիւծեալս մեղօք ւիւծեալ աղաչեմ ւիւսել ինձ բարիս:

Փրկի՛չ բոլորից, փութա՛ զիս փրկել փորձութեանց մեղաց:

Քաւի՛չ յանցանաց, քաւեա՛ զօրհնաբանս՝ Քեզ երգել զփառս:

Աստուածածնին բարեխօսութեամբ յիշեա՛, Տէ՛ր, եւ ողորմեա՛:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զ՛ք՛ր շնորհիր աչքերիս՝ ջերմ արտասուք թափելու, ընչելու յանցանքներս:

Սպեղանի՛ օշարակդ, խմեցրո՛ւ ոսմկական հոգիս, լոյսի ճամփա՛ն ցոյց տուր ինձ:

Ա՛ք՛ր անուն Յիսուս, սիրով Քո ճմլի՛ր սիրտն իմ քարեղէն:

Գթութեան համար, ողորմութեան համար վերստի՛ն ինձ ապրեցրու:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, տենչալուդ տեսքով յաղեցրո՛ւ ինձ:

Վարդապե՛տ երկնաւոր, աշակերտներիս ժողովի՛ր երկնայինների դասի մէջ:

Քո արեան ցօղը, Տէ՛ր, ցօղի՛ր հոգուս մէջ, որ անձն իմ ցնծայ:

Մեղքերից հիւծուածս հիւծուելով աղաչում եմ բարիք հիւսել ինձ:

Փրկի՛չ բոլորի, փութա՛ փրկել ինձ մեղքերի փորձութիւններից:

Քաւի՛չ յանցանքների, քաւի՛ր օրհնաբանողիս՝ Քեզ փառաբանութիւններ երգելու:

Աստուածածնի բարեխօսութեամբ յիշի՛ր, Տէ՛ր, եւ ողորմի՛ր:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք, յորժամ ի գործ ինչ ձեռն արկցես

Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա ի մեզ, Տէ՛ր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ ի մեզ:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք երանելոյն Յովհաննու Գառնեցւոյ վասն ճանապարհի

Առաջնո՛րդ կենաց, ճանապա՛րհ ճշմարտութեան, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, որ առաջնորդեցեր Յովսեփայ յԵգիպտոս եւ իսրայելացւոց ընդ ծովն Կարմիր եւ Մովսիսի ի լեառն Սինէական եւ ժողովրդեանն յերկիր պարգեւացն, եւ Կղէովպասանցն ճանապարհակից եղեր յէմմաուս, աղաչեմ զՔեզ, Տէ՛ր, առաջնորդեա՛ ինձ եւ եղբարց իմոց՝ գնալ խաղաղութեամբ զառաջիկայ ընթացս, փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն եւ բարի՛ առաջնորդեա ի դէմ եղեալ ի տեղին: Զի Դո՛ւ ես ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք մեր, եւ Քեզ փա՛ռք եւ երկրպագութի՛ւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք, երբ որեւէ գործ ես ձեռնարկում

Մեր ձեռքերի գործն ուղղի՛ր, Տէ՛ր, եւ մեր ձեռքերի գործը յաջողի՛ր:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երանելի Յովհան Գառնեցու աղօթքը ճանապարհի համար

Առաջնո՛րդ կեանքի, ճանապա՛րհ ճշմարտութեան, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, որ առաջնորդեցիր Յովսէփին Եգիպտոս, իսրայէլացիներին՝ Կարմիր ծովի միջով, Մովսէսին՝ դէպի Սինա լեռը, [Իսրայէլի] ժողովրդին՝ աւետեաց երկիր եւ Կղէովպասենց ուղեկցեցիր Էմմաուս, աղաչում եմ Քեզ, Տէ՛ր, առաջնորդի՛ր նաեւ ինձ եւ իմ եղբայրներին՝ խաղաղութեամբ գնալու առաջիկայ ընթացքը, փրկի՛ր երեւելի եւ անտեսանելի թշնամուց եւ բարի՛ առաջնորդիր նպատակավայրը հասնելու համար: Քանզի Դո՛ւ ես մեր ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը, եւ Քեզ փա՛ռք եւ երկրպագութի՛ւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք առ դրան սուրբ եկեղեցւոյ սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի

Տաճա՛ր Աստուծոյ եւ բնակարա՛ն Հոգւոյն Սրբոյ, որ ի քէն սուրբ Աւազանաւն կոչեաց յորդեգրութիւն Հօրն երկնաւորի: Այսօր ի քեզ կամեցաւ պատարագել Գառն անարատ: Եւ ես դիմեալ եկի առ դուրս քո եւ աղաչեմ զքեզ՝ մաքրեա՛ զիս վերստին լուացմամբ եւ սրբեա՛ ի մեղաց եւ արա՛ արժանի մտանել առաջի սրբոյ Սեղանոյդ յերկրպագութիւն. ամէն:

Աղօթք վասն հասարակ ննջեցելոց եւ մանաւանդ՝ վասն ընտանեաց եւ երախտաւորաց

Այլ եւ աղաչեմ եւ խնդրեմ ի Քէն, ո՛վ բազմագութ Աստուած, վասն ազգիս մերոյ հնոց եւ նորոց եւ համօրէն հաւատով եւ յուսով ի Քեզ ննջեցելոցն. եւ մանաւանդ՝ վասն իմոց մարմնաւոր եւ հոգեւոր ծնողաց, եղբարց, քերց, ազգականաց, սիրելեաց եւ բարեկամաց եւ հոգեւոր վարդապետաց, ի բարիս կրթողաց եւ ուսուցչաց եւ ամենայն աշխատաւորաց եւ երախտաւորաց մերոց՝ ի Քեզ ննջեցելոց, զորս յի-

Սուրբ Յովհան Ոսկեբերանի աղօթքը սուրբ եկեղեցու դռան առջեւ

Տաճա՛ր Աստուծոյ եւ բնակարա՛ն Սուրբ Հոգու, որ քեզանից սուրբ Աւազանով կանչեց որդեգրուելու երկնաւոր Հօրը: Այսօր քո մէջ կամեցաւ պատարագուել անարատ Գառը: Եւ ես եկայ քո դռների առաջ եւ աղաչում եմ քեզ՝ մաքրի՛ր ինձ վերստին լուացմամբ, սրբի՛ր մեղքերից եւ արժանի՛ արա մտնելու սուրբ Սեղանիդ առաջ՝ երկրպագելու. ամէն:

Աղօթք ընդհանուր ննջեցեալների եւ մանաւանդ՝ հարազատների եւ երախտաւորների համար

Այլեւ աղաչում եւ խնդրում եմ Քեզանից, ո՛վ բազմագութ Աստուած, մեր ազգի հին ու նոր եւ բոլոր հաւատքով ու յոյսով ի Քեզ ննջածների համար. եւ մանաւանդ՝ իմ մարմնաւոր եւ հոգեւոր ծնողների, եղբայրների, քոյրերի, ազգականների, սիրելիների եւ բարեկամների համար, նաեւ՝ հոգեւոր վարդապետների, բարի [գործերի] մէջ կրթողների եւ ուսուցիչների եւ մեր բոլոր ի Քեզ ննջած աշխատաւորների ու երախ-

շեսցես յողորմութիւնս Քո յԱւուր մեծի գալստեան Քոյ, թողութիւն շնորհեսցես ամենայն մեղաց եւ սխալանաց նոցին եւ դասեսցես ընդ սուրբս Քո յաջակողմեան դասուն եւ տացես լսել զերանաւէտ բարբառն Քո, թէ՝ եկա՛յք, օրհնեա՛լք Հօր Իմոյ: Եւ, ըստ երախտեաց նոցին, որ առ մեզ, միոյն բիւրապատիկս հատուցես ի հոգիս նոցա եւ զմեզ անդատապարտ արասցես ի նոցին պարտուցն: Եւ Քեզ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք վասն թշնամեաց եւ չարակամաց

Արդ, ո՛վ ողորմած եւ բազմագութ Աստուած իմ Յիսուս Քրիստոս, վասն իմոյս ընտանեաց եւ բարեկամաց խնդրեցի զբարիս եւ զողորմութիւնս ի Քէն, որպէս հարկն է, եւ պահանջէ օրէն բնութեան մերոյ: Այժմ աղաչեմ զՔեզ եւ վասն իմոց թշնամեաց, որպէս եւ Դո՛ւ իսկ ասացեր օրհնեալ բերանովդ, թէ՝ բարի՛ արարէք ատելեաց ձերոց: Ուրեմն, անկեալ առաջի Քո, խնդրեմ յամէնառատ ողորմութենէդ, զի ողորմեսցիս եւ իմոց ամենից թշնամեաց եւ ատողաց, չարակամաց եւ վնասատուաց եւ այլոց

ասուրների համար, որոնց յիշի՛ր Քո ողորմութեամբ Քո գալստեան մեծ Օրը, թողութի՛ւն շնորհիր նրանց բոլոր մեղքերին ու սխալներին եւ դասի՛ր Քո սուրբերի հետ աջակողմեան դասում եւ տո՛ւր լսել Քո երանաւէտ բարբառը, թէ՝ եկէ՛ք, Իմ Հո՛ր օրհնեալներ: Եւ, ըստ նրանց՝ մեր հանդէպ երախտիքների, մէկի դիմաց բիւրապատի՛կ հատուցիր նրանց հոգիներին եւ անդատապա՛րտ դարձրու մեզ նրանց պարտքից: Եւ Քեզ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք թշնամիների եւ չարակամների համար

Արդ, ո՛վ ողորմած եւ բազմագութ Աստուած իմ Յիսուս Քրիստոս, իմ հարազատների եւ բարեկամների համար բարիքներ եւ ողորմութիւն խնդրեցի Քեզանից, ինչպէս որ հարկն է, եւ պահանջում է մեր բնութեան օրէնքը: Այժմ աղաչում եմ Քեզ նաեւ իմ թշնամիների համար, ինչպէս որ Դո՛ւ իսկ ասացիր օրհնեալ բերանովդ, թէ՝ բարի՛ք գործէք ձեզ ատողներին: Ուրեմն, ընկնելով Քո առաջ, խնդրում եմ ամէնառատ ողորմութիւնիցդ, որ ողորմես նաեւ իմ բոլոր թշնամիներին եւ ատողներին, չարակամներին ու վնասատուներին եւ բոլոր միւսներին, ովքեր

ամենեցունց, որք զծառայէս Քումմէ զչարիս խորհին եւ խօսին, գործեն եւ գործել կամին, որք բամբասեն, վատաբանեն եւ հայհոյեն զիս՝ թէ՛ իրաւամբ եւ թէ՛ անիրաւամբ, մի՛ բարկանար նոցա վասն իմ, Տէ՛ր իմ, այլ ներեա՛ եւ թո՛ղ զմեղս նոցա:

Քանզի նոքա առ իս մեղանչեն, որ յիրաւի մեղաւոր եմ եւ արժանի եմ բամբասանաց եւ նախատանաց: Ես առ Քեզ մեղանչեմ, որ արդար ես յամենայնի եւ միշտ բարերար ինձ: Ուրեմն, եթէ նոքա արժանիք են բարկութեան Քոյ, ապա բիւրապատիկ ե՛ս եմ որդի բարկութեան եւ արժանի պատժոց, քան զնոսա:

Վասն այսորիկ աղաչեմ զՔեզ, Տէ՛ր իմ, որ ես աղբիւր ամենայն բարութեանց եւ ծով անհուն ողորմութեան, զի ողորմեցցիս նոցա եւ ինձ ընդ նոսա, եւ ներեսցես ամենից սխալանացն, որք առ իս, եւ դարձուցես զնոսա ի չարեաց՝ փոխարկելով ի բարիս: Որպէսզի ամենեքեան զգաստացեալք ըստ հաճոյից Քոց գնասցուք եւ փառս վերառաքեսցուք Քեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քո ծառայի Հանդէպ չարն են խորհում, խօսում, գործում եւ կամենում գործել, ովքեր բամբասում, վատաբանում եւ հայհոյում են ինձ՝ թէ՛ իրաւամբ եւ թէ՛ անիրաւամբ, մի՛ բարկացիր, Տէ՛ր իմ, նրանց վրայ իմ պատճառով, այլ ների՛ր եւ թողութի՛ւն տուր նրանց մեղքերին:

Քանզի նրանք մեղանչում են իմ հանդէպ, որովհետեւ իսկապէս մեղաւոր եմ եւ արժանի բամբասանքի ու նախատինքի: Ես մեղանչում եմ Քո հանդէպ, որ արդար ես ամէն ինչում եւ միշտ բարերար իմ նկատմամբ: Ուրեմն, եթէ նրանք արժանի են Քո բարկութեանը, ապա ես բիւրապատի՛կ բարկութեան որդի եմ եւ պատժի արժանի, քան նրանք:

Այս պատճառով աղաչում եմ Քեզ, Տէ՛ր իմ, որ բոլոր բարիքների աղբիւր ես եւ անհուն ողորմութեան ծով, որ ողորմես նրանց եւ ինձ նրանց հետ, եւ ներես իմ հանդէպ [ունեցած] բոլոր սխալները եւ ետ դարձնես նրանց չարից՝ փոխարկելով բարու: Որպէսզի ամէնքս զգաստանալով ընթանանք ըստ Քո կամքի եւ փառք վերառաքենք Քեզ Հօր եւ Սուրբ Հոգուդ հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ

Աղօթք առ Հայր

Տէ՛ր Հայր եւ Աստուա՛ծ կենաց իմոց, զբօսանս աչաց մի՛ տար ինձ եւ զցանկութիւն դարձո՛ յինէն: Ցանկութիւն յորովայնի եւ գիշութիւն մի՛ հասցէ ինձ, եւ անձին լրբենուոյ մի՛ մատներ զիս: Զի Քո օգնականութեամբ եւ Քեզ պահպանեալ ապրեցայց յահաւոր հրոյ գեհենոյն եւ Քեզ փառս մատուցից յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ

Աղօթք առ Սուրբ Երրորդութիւնն

Ո՛ բնութիւն անճառելի եւ արարչակից համագոյ եւ միասնական Սո՛ւրբ Երրորդութիւն, յՈրոյ դաւանութենէ ոչ երբեք երկմտեցի, զՈր սիրեցի եւ պաշտեմ ի մանկութենէ, Որոյ յոյս փրկութեան ցանկ ուրախ զիս առնէ, Որոյ յիշատակաւ մխիթարիմ հանապազ ի հեղձուցիչ եւ ի խաւարական տրտմութենէս: Ա՛յց արա ծառայի Քում՝ առ ի չտալ նենգաւորին պար-

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ

Աղօթք առ Հայր

Տէ՛ր Հայր եւ Աստուա՛ծ իմ կեանքի, աչքի հաճոյքներ մի՛ տուր ինձ եւ ցանկութիւնը հեռացրու՛ ինձանից: Թո՛ղ չհասնի ինձ որովայնի ցանկութիւն եւ գիշութիւն, եւ լիրբ մարդու ձեռքը մի՛ մատնիր ինձ: Որպէսզի Քո օգնութեամբ եւ Քեզանով պահպանուած փրկուեմ գեհենի ահաւոր հրից եւ Քեզ փառք մատուցեմ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ

Աղօթք Սուրբ Երրորդութեանը

Ո՛վ անճառելի բնութիւն, համագոյ արարչակից եւ միասնական Սո՛ւրբ Երրորդութիւն, Որին դաւանել երբեք չերկմտեցի, Որին սիրեցի եւ ծառայում եմ մանկութիւնից, Որի փրկութեան յոյսը միշտ ուրախացնում է ինձ, Որին յիշելով՝ հանապազ մխիթարւում եմ հեղձուցիչ եւ խաւարական տրտմութիւնից: Այցելի՛ր Քո ծառային՝ նենգաւորին յաղթութեամբ իմ հանդէպ պարծե-

ծել յաղթութեամբ ի վերայ իմ, լե՛ր ինձ զօրութիւն, մանաւանդ եթէ՝ պատերազմեա՛ց վասն իմ ընդ դառն եւ խիստ ախոյանին, զի տկար է զօրութիւն մտաց եւ մարմնոյ իմոյ կալ ընդդէմ չարախոհութեան նորա, սակայն Քեւ մարտուցեալ իմ, տկարանայ վիշապն եւ կորանայ ամօթով, իսկ ես յաղագս Քո եղէց բարձրագլուխ եւ լցեալ բերկրութեամբ, զի չիք հնար զՔեզ կրողաց եւ յանուն Քո խրախուսելոց ուղիղ մտօք, եթէ ոչ յաղթեսցեն նմա, որպէս զի, զայս կատարեալ եւ կնքեալ, ծառայ Քո ըստ ճշմարտութեան արժանի եղէց կոչիլ: Եւ բերան իմ լցցի գոհութեամբ՝ յօրհնել զփառս Քո՝ Հա՛յր ճշմարիտ Որդւոյ Քոյ միածնի, եւ Բա՛ն Հօր՝ մարմնացեալ Փրկի՛չ եւ Աստուած ի վերայ ամենայն երկրի, եւ Հոգի՛ Սուրբ Աստուծոյ՝ հաղորդ յամենայն մեծութիւնս եւ ի գործս Հօր եւ Որդւոյ, նոյն գոլով ըստ բնութեան՝ որպէս յԱստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

նալ չտալու, եղի՛ր ինձ զօրութիւն, մանաւանդ՝ ինձ համար պատերազմի՛ր դառն ու խիստ ախոյանի հետ, քանի որ իմ մտքերի ու մարմնի զօրութիւնը տկար է՝ ընդդիմանալու նրա չարախոհութեանը, սակայն երբ Քեզանով մարտնչում եմ, տկարանում է վիշապն ու հակւում ամօթով, իսկ ես Քո պատճառով բարձրագլուխ եւ բերկրութեամբ լցուած եմ լինում, քանի որ Քեզ կրողները եւ ուղիղ մտքով Քո անուամբ խրախուսուածները կարող են յաղթել նրան, որպէսզի, այս [պաքարն] աւարտին հասցնելով եւ եզրափակելով, ըստ ճշմարտութեան արժանի լինեմ Քո ծառան կոչուելու: Եւ իմ բերանը գոհութեամբ լցուի՝ օրհնելու Քո փառքը, Հա՛յր ճշմարիտ Քո միածին Որդու, եւ Հօր մարմնացած Բա՛ն՝ Փրկի՛չ եւ Աստուա՛ծ ամբողջ երկրի, եւ Աստուծոյ Սուրբ Հոգի՛՝ հաղորդ Հօր եւ Որդու բոլոր մեծութիւններին եւ գործերին՝ ըստ բնութեան նոյնը լինելով՝ որպէս ճշմարիտ Աստուած Աստծուց, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՀԱՒԱՏԱՄՔ

Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ անտեսանելեաց:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն Ինքն ի բնութենէ Հօր, Որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ անտեսանելիք: Որ յաղագս մեր մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան, իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատում ենք մէկ Աստուծոյ՝ ամենակալ Հօրը, երկնքի եւ երկրի, երեւելիների եւ անտեսանելիների Արարչին:

Եւ մէկ Տէր Յիսուս Քրիստոսին՝ Աստուծոյ Որդուն՝ ծնուած Հայր Աստծուց՝ միածին, այսինքն՝ Հօր էութիւնից: Աստուած՝ Աստծուց, լոյս՝ լոյսից, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ եւ ոչ՝ արարած: Նոյն Ինքը՝ Հօր բնութիւնից, Որով ամենայն ինչ եղաւ երկնքում եւ երկրի վրայ՝ երեւելիներ եւ անտեսանելիներ: Որ մեզ՝ մարդկանց համար եւ մեր փրկութեան համար, երկնքից իջնելով, մարմնացաւ, մարդացաւ, Սուրբ Հոգով կատարեալապէս ծնուեց սուրբ Կոյս Մարիամից: Որով վերցրեց մարմինը, հոգին եւ միտքը եւ ամենայն ինչ, որ ունի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ՝ կարծեօք: Չարչարուեց, խաչուեց, թաղուեց, երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմնով ելաւ երկինք եւ նստեց Հօր աջ կողմում: Գալու է նոյն մարմնով եւ Հօր փառքով՝ դատելու կենդանիներին եւ մեռեալներին, Որի թագաւորութիւնը վախճան չունի:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս: Որ էջն ի Ցորդանան, քարոզեաց յԱռաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց. ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

Հաւատում ենք եւ Սուրբ Հոգուն՝ անեղին եւ կատարեալին, որ խօսեց Օրէնքում, Մարգարէներում եւ Աւետարաններում: Որ իջաւ Ցորդանան, քարոզեց առաքեալների միջոցով եւ բնակուեց սուրբերի մէջ:

Հաւատում ենք նաեւ միայն մէկ Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցու, մէկ մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերի քաւութեան եւ թողութեան. մեռելների յարութեանը, հոգիների եւ մարմինների յաւիտենական դատաստանին, երկնքի արքայութեանը եւ յաւիտենական կեանքին:

ԶՂՋՈՒՄՆ

Մեղա՛յ Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. մեղուցեալ եմ Աստուծոյ:

Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուհւոյ Աստուածածնին եւ առաջի քո, հա՛յր սուրբ, զամենայն մեղս, զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ հոգւովս եւ զօրութեամբ սորա, մտօքս եւ շարժմամբ սորա, մարմնովս եւ զգայութեամբ սորա:

Մեղա՛յ զօրութեամբ հոգւոյս. խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ եւ երկչոտութեամբ, շռայլութեամբ եւ ժլատութեամբ, զեղխութեամբ եւ անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ եւ թերամտութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ չար խորհրդով մտացս. նենգութեամբ, ատելութեամբ, խեթիւ, մախանօք, յաչաղանօք, թուլութեամբ, պոռնկական խորհրդով՝ արուական, իգական, անասնական, գրաստական, գազանական, ի գիշերի եւ ի տուընջեան երազական գիճութեամբ եւ

Մեղա՛յ Ամենասուրբ Երրորդութեանը՝ Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն. մեղանչել եմ Աստուծոյ առաջ:

Խոստովանում եմ Աստուծոյ առաջ եւ սրբուհի Աստուածածնի եւ քո առաջ, հա՛յր սուրբ, բոլոր գործած մեղքերս: Քանզի մեղք գործեցի խորհրդով, խօսքով եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ հոգովս եւ նրա զօրութեամբ, մտքովս եւ նրա շարժմամբ, մարմնովս եւ նրա զգայութեամբ:

Մեղա՛յ հոգուս զօրութեամբ. խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ եւ երկչոտութեամբ, շռայլութեամբ եւ ժլատութեամբ, անպարկեշտութեամբ եւ անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ եւ թերամտութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ մտքիս չար խորհրդով. նենգութեամբ, ատելութեամբ, խէթ հայեացքով, չար նախանձով, չարակնութեամբ, թուլութեամբ, պոռնկական խորհրդով՝ արուական, իգական, անասնական, գրաստական, գազանական, գիշերն ու ցերեկը՝ երազական գիճութեամբ եւ

յանրչական գարշ աղտեղութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ ցանկութեամբ մարմնոյս. հեշտութեամբ, պղերգութեամբ, յօրանչմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս եւ զազրագործութեամբ ի պէս-պէս ախտս, հեշտալրութեամբ լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, իգութեամբ ունգացս, պագշոտութեամբ բերանոյս, անժուժկալութեամբ, շուայտութեամբ եւ արբեցութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ չարաբանութեամբ լեզուիս. ստախօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ, շողմոգութեամբ, քսու դատարկաբանութեամբ եւ ծաղու, զրախօսութեամբ, հերձախօսութեամբ եւ անիծաբանութեամբ, տրտնջելով, դժգոհելով, բամբասելով եւ հայհոյելով. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ գողութեամբ ձեռացս. ագահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով եւ ընդքարշս ածելով. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ ամենայն յօդուածովք շինուածոյս եւ ամենայն անդամօք մարմնոյս, հնգեակ զգայարանօքս եւ վեցեկի շարժմամբս՝ վերամ-

անրչական գարշ աղտեղութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ մարմնիս ցանկութեամբ. հեշտութեամբ, անհոգութեամբ, քնատ յօրանչմամբ, մարմնիս շարժումներով եւ պէս-պէս ախտերով պղծագործելով, ականջներիս ախորժալուրութեամբ, աչքերիս արատասիրութեամբ, սրտիս ցանկութեամբ, ունգերիս իգութեամբ, բերանիս պագշոտութեամբ, անժուժկալութեամբ, շուայտութեամբ եւ արբեցութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ լեզուիս չարախօսութեամբ. ստախօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ, շողոքորթութեամբ, քսու դատարկաբանութեամբ եւ ծաղրով, զրախօսութեամբ, հերձախօսութեամբ եւ անիծաբանութեամբ, տրտնջելով, դժգոհելով, բամբասելով եւ հայհոյելով. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ ձեռքերիս գողութեամբ. ագահութիւն անելով, զրկելով, հարուածելով, սպանելով եւ քաշքշելով. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ շինուածքիս ողջ կազմութեամբ եւ մարմնիս բոլոր անդամներով, հինգ զգայարաններովս եւ վեց շարժումներովս՝ վերամ-

բարձ ոտնահարութեամբ եւ վայրաքարշ մեղկութեամբ, յաջ եւ յահեակ խոտորելով, զառաջինոցն մեղանչելով եւ վերջնոցն չար նշաւակ գոլով. մեղա՛յ Աստուծոյ:

Այլ եւ մեղա՛յ եօթնիցս յանցանօք մահացու մեղօք՝ հպարտութեամբ եւ մասամբք նորին, նախանձու եւ մասամբք նորին, բարկութեամբ եւ մասամբք նորին, ծուլութեամբ եւ մասամբք նորին, ագահութեամբ եւ մասամբք նորին, որկրամոլութեամբ եւ մասամբք նորին, բղջախոհութեամբ եւ մասամբք նորին. մեղա՛յ Աստուծոյ:

Այլ եւ մեղա՛յ ամենայն պատուիրանացն Աստուծոյ՝ յանձնառելեացն եւ հրաժարելեացն, զի ոչ զյանձնառականսն կատարեցի եւ ոչ ի հրաժարելեացն հեռացայ: Զօրէնսառի եւ յօրինացն հեղգացայ, ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ եւ գործովս անարժան գտայ, գիտելով զչարն՝ կամաւ կորացայ եւ ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Զո՞րն ասեմ կամ զո՞րն խոստովանիմ, զի անթիւ են յանցանք իմ, անասելի են անօրէնութիւնք իմ, աննրելի են ցաւք իմ, եւ անբժշկելի են վէրք իմ. մեղա՛յ Աստուծոյ:

բարձ ոտնահարութեամբ եւ վայրաքարշ մեղկութեամբ, աջ եւ ձախ խոտորելով, առաջինների հանդէպ մեղանչելով եւ վերջինների համար չար օրինակ լինելով. մեղա՛յ Աստուծոյ:

Այլեւ մեղա՛յ եօթ մահացու մեղքերով՝ հպարտութեամբ եւ նրա տեսակներով, նախանձով եւ նրա տեսակներով, բարկութեամբ եւ նրա տեսակներով, ծուլութեամբ եւ նրա տեսակներով, ագահութեամբ եւ նրա տեսակներով, որկրամոլութեամբ եւ նրա տեսակներով, բղջախոհութեամբ եւ նրա տեսակներով. մեղա՛յ Աստուծոյ:

Այլեւ մեղա՛յ Աստուծոյ բոլոր պատուիրանների՝ յանձնառելիների եւ հրաժարելիների դէմ, քանզի չկատարեցի յանձնառելիները եւ չհեռացայ հրաժարելիներից: Օրէնքը ստացայ եւ օրինապահութեան մէջ ծուլացայ, հրաւիրուեցի քրիստոնէութեան կարգի մէջ եւ գործերովս անարժան գտնուեցի, չարը գիտենալով՝ կամովին շեղուեցի եւ բարի գործերից ես ինքս հեռացայ. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ, ո՞րն ասեմ կամ ո՞րը խոստովանեմ, քանզի անթիւ են իմ յանցանքները, անասելի են իմ անօրէնութիւնները, աններելի են իմ ցաւերը, եւ անբժշկելի են իմ վէրքերը. մեղա՛յ Աստուծոյ:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉՆ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Տէրն ամբարիշտներից հեռու է, բայց արդարների աղօթքը լսում է [Առակ. ԺԵ 29]:

Եւ երբ աղօթես, չլինե՛ս կեղծաւորների նման, որոնք սիրում են ժողովարաններում եւ հրապարակների անկիւններում աղօթքի կանգնել, որպէսզի մարդկանց երեւան. ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձքը: Այլ դու երբ աղօթես, մտի՛ր քո սենեակը, փակի՛ր քո դռները եւ ծածո՛ւկ աղօթիր քո Հօրը, եւ քո Հայրը, որ տեսնում է ծածկապէս, կհատուցի քեզ յայտնապէս:

Աղօթելիս շատախօս մի՛ եղէք, ինչպէս հեթանոսները, քանզի նրանք կարծում են, թէ իրենց շատ խօսքերի պատճառով լսելի կլինեն: Արդ, նրանց չնմանուէ՛ք, որովհետեւ ձեր Հայրը գիտէ, թէ ինչ է ձեզ պէտք, նախքան որ դուք նրանից մի բան ուզէք [Մատթ. Զ 5–8]:

Արթո՛ւն եղէք եւ աղօթեցէք, որպէսզի փորձութեան մէջ չընկնէք... [Մատթ. ԻԶ 41]:

Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ այս լերանն ասի՝ ելլ եւ ծովն ընկի՛ր, եւ իր սրտում չերկմտի, այլ հաւատայ, թէ ինչ որ ասում է, կլինի, ինչ էլ ասի, կկատարուի նրա համար: Ուստի ասում եմ ձեզ. ամէն ինչ, որ աղօթելով խնդրէք եւ հաւատաք, թէ կստանաք, կտրուի ձեզ: Եւ երբ աղօթքի կանգնէք, թէ մէկի դէմ մի բան ունէք, ներեցէ՛ք, որպէսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ների ձեզ ձեր յանցանքները: Իսկ եթէ դուք չներէք, ձեր Հայրն էլ, որ երկնքում է, չի ների ձեզ ձեր յանցանքները [Մարկ. ԺԱ 23–26]:

Օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին, աղօթեցէ՛ք ձեզ նեղողների համար [Ղուկ. Զ 28]:

Արթո՛ւն կացէք այսուհետեւ, ամէն ժամ աղօթեցէ՛ք, որպէսզի կարողանաք զերծ մնալ այն ամէնից, որ լինելու է, եւ կանգնել մարդու Որդու առաջ [Ղուկ. ԻԱ 36]:

Նոյնպէս եւ Հոգին մեր տկարութեան դէպքում է օգնութեան հասնում. որովհետեւ չգիտենք, թէ ինչի մասին աղօթել, ինչպէս է արժան. բայց Հոգին Ինքը բարեխօս է լինում անմռունչ հեծութիւններով [Հռոմ. Ը 26–27]:

Ամենայն աղօթքներով եւ աղաչանքներով ամէն ժամ աղօթեցէ՛ք Հոգով. եւ նոյնի մէջ աքնեցէ՛ք ամենայն ժուժկալութեամբ եւ բոլոր սուրբերի եւ ինձ համար աղաչանքներով [Եփես. Զ 18]:

Ցաճա՛խ կանգնեցէք աղօթքի՝ դրանում գոհութեամբ արթուն մնալով: Միաժամանակ աղօթեցէ՛ք եւ մեզ համար, որպէսզի Աստուած բացի մեր առաջ խօսքի դուռը՝ յայտնելու Քրիստոսի խորհուրդը [Կող. Դ 2–3]:

Ամէն ժամ ուրա՛խ եղէք, անդադար աղօթեցէ՛ք, ամէն ինչում գոհութի՛ւն մատուցէք, որովհետեւ ա՛յս է Աստուծոյ կամքը ձեզ համար ի Քրիստոս Յիսուս [Ա Թես. Ե 17–18]:

Արդ, ամէնից առաջ աղաչում եմ մատուցել աղօթքներ, խնդրուածքներ, պաղատանքներ, գոհութիւններ բոլոր մարդկանց համար, մանաւանդ՝ թագաւորների եւ բոլոր իշխանաւորների, որպէսզի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարենք մեր կեանքը, ամենայն աստուածպաշտութեամբ եւ սրբութեամբ, քանզի ա՛յն է բարին եւ ընդունելին մեր Փրկչի՝ Աստուծոյ առաջ, որը կամենում է, որ բոլոր մար-

դիկ փրկուեն եւ հասնեն ճշմարտութեան գիտութեանը [Ա Տիմ. Բ 1–4]:

Ուզում եմ, որ մարդիկ աղօթեն բոլոր տեղերում, սուրբ ձեռքեր բարձրացնեն դէպի վեր, առանց բարկութեան եւ երկմտութեան [Ա Տիմ. Բ 8]:

Զեզանից մէկը վշտի մէ՞ջ է ընկել, թող աղօթի. մէկը բերկրանքի՞ մէջ է, սաղմոս թող ասի. հիւա՞նդ է ձեզանից մէկը, թող կանչի Եկեղեցու երէցներին, եւ նրա վրայ թող աղօթեն, թող իւղով օծեն նրան Տիրոջ անունով: Եւ հաւատով արուած աղօթքը կփրկի հիւանդին, եւ Տէրը նրան ոտքի կկանգնեցնի: Եւ եթէ մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներուի: Ձեր մեղքերը միմեանց խոստովանեցէ՛ք եւ միմեանց համար աղօթեցէ՛ք, որպէսզի բժշկուէք. քանզի արդարի աղօթքը խիստ զօրաւոր է օգնելու համար: Եղիան մարդ էր մեզ նման՝ չարչարուելու ենթակայ. եւ աղօթեց, եւ երկրի վրայ երեք տարի ու վեց ամիս անձրեւ չտեղաց: Եւ դարձեալ աղօթեց, եւ երկինքը անձրեւ տուեց, եւ երկիրը հասցրեց իր պտուղը [Յակ. Ե 13–18]:

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԸ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՆ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ († 326)

Տիրոջ խօսքով հաստատուեցին երկինքը եւ երկիրը, եւ Նրա բերանի Հոգով՝ բոլոր [երկնային] զօրութիւնները: Այս պատճառով սուրբ մանուկները հնոցում բոլոր արարածներին յորդորում էին հանապազ փառաբանել ամենակալ, ամենազօր եւ ամենապարգեւ Տէրութեանը: Քանզի ասում էին. «Ամէ՛նքդ՝ երեւելի եւ աներեւոյթ արարածնե՛րդ, որ Տիրոջ [ձեռքի] գործն էք, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք երկնքի եւ երկրի Արարչին» [տե՛ս Դան. Գ 57–90]:

Նաեւ արդարները սուրբ սրտով եւ խոնարհ հոգով օրհնութիւն են առաքում առ Աստուած, որպէսզի չօտարանան արարչութիւնից, այլ ծանուցեն բոլորին, որ նրանք նոյնպէս բոլորի Արարչի արարածներն են:

Արդ, աղօթքով, պահքով, սուրբ սիրով, շնորհալից յոյսով եւ բաղձալից մղումով զգուշօրէն պատրա՛ստ եղիր՝ Աստուծոյ կամքը կա-

տարելու: Ահով եւ երկիւղով ջանա՛ միշտ յառաջնալ բարեպաշտութեան մէջ եւ չպակասեցնել երեւելի եւ աներեւոյթ առաքինութիւնների վաստակդ:

Եւ ամէնուր հոգեւորապէս, անխափան կատարի՛ր աղօթքի ծառայութիւնդ՝ թէ՛ տանը նստած, թէ՛ ճանապարհ գնալիս, թէ՛ աշխատելիս, թէ՛ ննջելիս եւ թէ՛ արթնանալիս:

Ողջ սրտից բխած աղօթքներն ու խնդրուածքները [Աստուծոյ] շնորհով խաղաղութիւն են բերում հոգուն, իսկ միտքը խնամալից պաղատանքներով ուղղւում է դէպի արտասուալից զղջումը եւ եռանդասէր խանդաղատանքով՝ դէպի աւետիսների յիշատակը: Աղօթքները, շնորհալից արտասուքներ հեղելով, մաքրում են միտքն ու մարմինը չար եւ աղտեղի ցանկութիւններից:

Բաց մի՛ թող մտքիցդ Աստուծոյ յիշումը՝ անդադար խնդրուածքներով, եռանդասէր հոգով եւ միշտ ջերմ արտասուքներով, որպէսզի աղօթքներով ընդունելութեան արժանանաս, եւ Աստուած [քեզ] պարգեւատու լինի, քանզի կամենում է, որ բոլորը փրկուեն եւ արժանանան արքայութեան՝ ի Քրիստոս Յիսուս:

Ս. ՅԱԿՈԲ ՄՕԲԵՍԱՑ ՀԱՅՐԱՊԵՏ († 346)

Սրտի սրբութիւնն առաւել է բոլոր բարձրաձայն բարբառուող աղօթքներից: Եւ յստակուած մտքին խառնուած լռութիւնն առաւել է մէկի բարձրաձայն աղաղակից: Արդ, սիրելի՛, տո՛ւր ինձ քո սիրտն ու խորհուրդները եւ լսի՛ր դու սուրբերի աղօթքների զօրութիւնը: Ցե՛ս՝ ինչպէս Աստուծոյ առաջ առաքինացան առաջին արդարներն իրենց աղօթքներով, եւ ինչպէս դրանք սրբութեան պատարագ եղան նրանց համար. նոյն աղօթքներով պատարագներն ընդունելի եղան [Աստծուն]: Եւ դարձեալ՝ [աղօթքներով] Նա ցածրացրեց հեղեղի ջուրը, բազմացրեց ամուլների ծնունդները, կործանեց բանակները, յայտնեց խորհուրդները, բաժանեց ծովերը, ճեղքեց Յորդանանը, կանգնեցրեց արեգակը եւ լուսինը, կոտորեց պիղծերին, իջեցրեց ջրերը, փակեց երկինքը, հանեց գուբից, ազատեց հրից, փրկեց ծովից. եւ աղօթքի զօրութիւնները յոյժ եւ առաւել են:

Երբ աղօթելիս լինես, սիրտդ ուղղիր վե՛ր եւ աչքերդ՝ վար, մտի՛ր դու քո ներսը՝ քո ներքին մարդու մէջ, եւ ծածո՛ւկ աղօթիր քո Հօրը, որ

երկնքում է: Եւ այս ամէնը, որ գրեցի քեզ աղօթքի ճառերի մասին, եթէ սուրբ լինեն, ընդունելի կլինեն, եւ եթէ սուրբ չլինեն, ընդունելի չեն լինի: Քանզի կան ոմանք մեր մէջ, որոնք շատացնում են աղօթքները, երկարացնում հեծութիւնները, կորացնում իրենց անձերը եւ տարածում իրենց ձեռքերը, բայց աղօթքի գործերը հեռու են նրանցից: Աղօթում են մեր Տիրոջը, որ սովորեցրեց իրենց. «Թո՛ղ մեր մեղքերը, եւ մենք թողնում ենք մեր պարտապաններին» [տե՛ս Մատթ. Զ 12]: Ինչպէ՞ս ես աղօթում. յիշի՛ր, որ պատարագ ես մատուցում Աստուծոյ առջեւ: Աղտեղուած պատարագով մի՛ ամաչեցնի նրան*, որ մատուցում է քո աղօթքները: Դու աղօթում ես, որ թողնուի քեզ, եւ խոստովանում, որ դու եւս թողնում ես, խորհի՛ր քո մտքում. նախ՝ թողնո՞ւմ ես դու, եւ սուտ մի՛ լինիր Աստուծոյ առաջ՝ ասելով՝ թողնում եմ, բայց չես թողնում: Մի՞թէ մարդ է քեզ համար Աստուած, որ ստում ես Նրան: Եթէ մարդ իր ընկերոջ դէմ մեղք է գործում, Տիրոջից է խնդրում քաւութիւն, ապա եթէ Աստուծոյ դէմ մեղք գործի, ումի՞ց խնդրի քաւութիւն: Մի՛ դատապարտիր անձդ քո աղօթքներով: Լսի՛ր դու նորից մեր Տիրոջ խօսքը. «Երբ մատուցես քո պատարագը եւ այնտեղ յիշես, թէ քո եղբօր հանդէպ ոխ ունես, թո՛ղ պատարագը սեղանի առաջ, գնա հաշտուի՛ր քո եղբօր հետ, եւ ապա արի մատուցի՛ր քո պատարագը» [տե՛ս Մատթ. Ե 23–24], որպէսզի աղօթքի ժամանակ չբարկացնես քո Տիրոջը. քանզի աղօթելիս եթէ յիշես, թէ ոխ ունես, ա՛յս իմացիր դու քո մտքում, որ քո աղօթքները լքուած կլինեն սեղանի առջեւ, չի կամենայ նա, ով աղօթքն է մատուցում, վերցնել եւ երկրից վեր բարձրացնել: Քանզի քննում է քո պատարագը՝ աղտեղի՞ է, թէ՝ ոչ: Եթէ սուրբ է, հանում բարձրացնում է վեր՝ Աստուծոյ առաջ: Ապա եթէ նա քո աղօթքում գտնի, որ ասում ես. «Թո՛ղ ինձ, եւ թողնում եմ ես», բարձրացնողի պատասխանն այսպէս կլինի աղօթողին. «Նախ թող դու քո՛ պարտապանին, եւ ապա կբարձրացնեմ ես աղօթքներդ քո Պարտատիրոջ առաջ»: Թո՛ղ դու հարիւր դահեկան՝ ըստ քո աղքատութեան, եւ Տէրը քո պարտքից կթողնի բիւր քանքար՝ ըստ Իր հարստութեան, եւ

* Անկատի ունի աղօթքը մատուցող հրեշտակին

չի հաշուի քեզ վաշխ եւ տոկոսների վարձ: Եթէ դու կամենաս եւ թողնես, ապա հրեշտակը կառնի քո պատարագը եւ կհանի, կբարձրացնի իր հետ, բայց եթէ դու չթողնես, այսպէս կասի քեզ. «Ես պղծուած, աղտեղուած պատարագը սուրբ Աթոռի առաջ չեմ տանի, բայց ահա գալու ես դու այնտեղ՝ տալու քո պարտքերի հաշիւը, եւ քո պատարագը քեզ հետ պիտի բերես»: Եւ կթողնի քո պատարագն ու կգնայ:

Աղօթքները վայելուչ են, եթէ գործերը բարի են, ընդունելի են, եթէ խաղաղութիւն է լինում նրանց մէջ, լսելի են, եթէ թողութիւն է գտնւում նրանց մէջ, սիրուած են, եթէ սուրբ են նենգութիւնից, զօրաւոր են, եթէ նրանց մէջ կատարւում են Աստուծոյ զօրութիւնները:

Եւ այն, որ գրեցի քեզ, սիրելի՛, թէ աղօթքն Աստուծոյ կամքը կատարելն է, ինձ այսպէս է թւում, թէ [քեզ] բարւոք կլինի: Եւ ոչ թէ ասացի քեզ այս, որ ծուլանաս եւ հեռանաս աղօթքից, այլ առաւել ցանկանաս աղօթել եւ չձանձրանալ, ինչպէս եւ ասաց մեր Տէրը՝ անձանձրո՛յթ աղօթեցէք [տե՛ս Ղուկ. ԻԱ 36]: Զուարթութեամբ յօժար եղի՛ր եւ հեռացրո՛ւ քեզանից քունն ու ծանրութիւնը, տքնի՛ր առաւօտեան եւ ցերեկը, մի՛ դանդաղիր. եւ ես ցոյց կտամ քեզ աղօթքի ժամանակը:

Կան խնդրուածքներ, օրհնութիւններ եւ գոհութիւններ: Խնդրուածքներն այս են՝ որ մէկն իր մեղքերի համար գթութիւն եւ ողորմութիւն է խնդրում: Օրհնութիւնները եւ գոհութիւնները այս են՝ որ խնդրեթամբ գոհանում է երկնաւոր Հօրից եւ օրհնում Նրան Իր բոլոր գործերի համար: Խնդրուածքների աղօթքը մատուցի՛ր քո նեղութեան վտանգի ժամանակ, իսկ երբ լցուես Նրա բարութեամբ, խոստովանութեամբ գոհացի՛ր քեզ տուողից, եւ այն ժամանակ, երբ միտքդ լի է ուրախութեամբ եւ ցնծութեամբ, օրհնութիւն եւ փա՛ռք տուր: Եւ քո բոլոր աղօթքները թող ընտրողաբար լինեն Աստուծոյ առաջ:

Մեր Փրկիչը սովորեցրեց խիստ ծածուկ աղօթել. ահա՛ Ամենատեսն ասում է. «Մտի՛ր քո սենեակը եւ, դռները փակելով, ծածո՛ւկ աղօթիր քո Հօրը» [տե՛ս Մատթ. Զ 6]: Ցոյց տամ քեզ, թէ ինչպէս եմ վերը ասուածը հասկանում: Ասում է. «Աղօթի՛ր Հօրը փակ դռներով». մեր Տիրոջ խօսքը ցոյց է տալիս հետեւեալը՝ ծածո՛ւկ աղօթիր քո սրտում եւ փակի՛ր

սրտիդ դռները: Եւ ի՞նչ է դուռը, եթէ ոչ՝ քո բերանը, քանզի մարմինը Տիրոջ տաճարն է, որում բնակւում է Քրիստոս, ինչպէս առաքեալն է ասում. «Դուք Աստուծոյ տաճար էք» [տե՛ս Ա Կոր. Գ 16]: Եւ քո ներքին մարդը, փակելով դռները, որ քո բերանն է, թող մտնի այս տաճարը եւ սրբի այն բոլոր պղծութիւններից:

Եթէ [աղօթքի ժամանակ] կտրուես ամէն ինչից, լսելի կլինես եւ կարժանանաս Տիրոջ զօրութեանը:

«Ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած են Իմ անուան համար, այնտեղ Ես նրանց մէջ եմ» [Մատթ. ԺԸ 20]: Ինչպէ՞ս ես հասկանում այս խօսքը, ո՛վ սիրելի... Եթէ դու մենակ լինես, Քրիստոս չի՞ լինի քո մէջ, քանզի ահաւասիկ գրուած է Քրիստոսին հաւատացողների մասին, որ նրանց մէջ բնակւում է Քրիստոս... Իսկ ես ցոյց կտամ քեզ, որ կայ տեղ, ուր փոխանակ երկուսի կամ երեքի, աւելի քան հազարն են ժողովուել, սակայն Քրիստոս նրանց մէջ չէ: Բայց կայ մարդ, որ մենակ է, եւ Քրիստոս նրա հետ է... Երբ Մովսէսն աղօթում էր լերան վրայ, մենակ եւ առանձին էր նա. մի՞թէ լսելի չեղաւ, այլ առաւել եւս լսելի եղաւ եւ մեղմեց իր Աստուծոյ բարկութիւնը: Եղիան նոյնպէս մենակ էր կարմել լերան վրայ, սակայն նրա աղօթքները սքանչելի զօրութիւններ կատարեցին: Նրա աղօթքով փակուեց երկինքը եւ դարձեալ բացուեց, իր աղօթքով նա փրկուեց մահից եւ ազատուեց դժոխքից, նրա աղօթքները Իսրայէլից վերցրեցին պղծութիւնը եւ երեք անգամ հուր իջեցրին երկնքից՝ մի անգամ սեղանի վրայ եւ երկու անգամ՝ նախարարների վրայ: Եւ երբ հալածում էին նրան, ծունր դրեց եւ աղօթեց. եւ արագ լսելի եղաւ: Եւ չորս հարիւրը, որոնք բարձրաձայն կանչում եւ աղաղակում էին, լսելի չեղան, քանզի կանչում էին Բահաղի կուռքերին, իսկ Եղիան մենակ էր եւ առաւել լսելի եղաւ: Եւ Յովնանը, երբ աղօթք էր անում ներքին դժոխքից, [Աստուած] շուտափոյթ լսեց նրան, թէպէտ եւ մենակ էր:

Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ († 373)

Ո՛վ դու մեղաւոր, որչափ կարող ես, բազում աղօթքներով մարտնչի՛ր ընդդէմ սովորական դարձած քո մեղքերի եւ բարեխօսութեան կանչի՛ր սուրբ հրեշտակների դասերը, բոլոր սրբերին եւ արդարներին, մանաւանդ՝ սուրբ Աս-

տուածածնին, առաւել եւս՝ Քրիստոսի սուրբ չարչարանքները. եւ անդադար աղաղակի՛ր առ Հայր, որպէսզի ողորմի քեզ եւ Սուրբ Հոգու միջոցով կարողութիւն տայ քեզ՝ ընդդիմանալու մեղքերին:

Եւ եթէ պատահի, որ յաղթուես որպէս տկար մարդ, դու դարձեա՛լ կանգնիր նոյնի մէջ: Եւ որչափ որ ընկնես, այնչափ արագ փութա՛ կանգնել, եւ Աստուած քեզ այնպէս կընդունի, իբրեւ թէ բնաւ ընկած չլինէիր: Քանի որ եթէ մի հանդերձ, ցեխն ընկնելով, աղտոտուում է եւ ապա օճառով մաքրուում, հագնողի հագին խոտան չի թուում, որչա՛փ առաւել եւս հոգին, որ ընկել է մեղքերի մէջ ու վերստին բարձրացել, խոտան չի երեւում Աստուծոյ առջեւ. քանի որ Նա մարդկանց սիրում է շատ աւելի, քան մարդն իր հանդերձը: Եւ տե՛ս Նրա անչափ սէրը, որ անմահ Աստուած մեզ համար մարդացաւ եւ մարմնով մեռաւ: Եւ ոչ թէ միայն սիրում է, այլեւ խնդալով իր ուսերի վրայ բարձրացնում:

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ († 379)

Աղօթել սկսելով՝ թո՛ղ անձդ, կնոջդ ու որդիներիդ, թո՛ղ երկիրը, բարձրացի՛ր երկնքից էլ վեր, թո՛ղ երեւացող ու աներեւոյթ ամէն արարած եւ սկսի՛ր փառաբանել ամենքի Արարչին: Եւ երբ անզբաղ մտքով փառաբանես Նրան, Սուրբ Գրքից ընտրի՛ր՝ ասելով. «Օրհնում եմ Քեզ, Տէ՛ր՝ համբերող եւ անոխակալ, որ միշտ ներողամիտ ես ինձ՝ յանցաւորիս նկատմամբ: Եւ տո՛ւր մեզ բոլորիս ապաշխարելու կարողութիւն, քանզի լսում եւ անսալով ներում ես մեզ, որպէսզի փառաբանենք Քեզ, որ տնօրինում ես մեր ազգի փրկութիւնը»...

Իսկ երբ Սուրբ Գրքից ըստ կարողութեան փառաբանես ու գովեստ մատուցես Աստծուն, այնժամ սկսի՛ր խոնարհութեամբ եւ ասա՛. «Ես արժանի չեմ Քո առջեւ բարբառելու, Տէ՛ր, քանզի յոյժ մեղաւոր եմ»: Թէպէտ անձիդ ապիրատութեան մասին ոչինչ չգիտես, սակայն այդպէ՛ս պէտք է ասես, քանզի ոչ ոք անմեղ չէ, այլ միայն Աստուա՛ծ, քանզի, բազում անգամ մեղանչելով, շատ բան չենք ըմբռնում, որի մասին առաքեալն ասում է. «Ինքս ինձ չգիտեմ, սակայն սրանով չեմ արդարանում» [Ա Կոր. Դ

4], այսինքն՝ բազում անգամ մեղանչում եմ եւ չեմ ըմբռնում: Այս մասին մարգարէն ասում է. «Զիմացաւ իր յանցանքները» [Ցոր ԼԵ 15]: Եթէ չես ասում, թէ՝ մեղաւոր եմ, ուրեմն չես ատում անձդ, քանզի հէնց միայն «մեղաւոր չեմ» ասելով մեղանչում ես: Բայց մանաւանդ ասա՛, թէ՝ մեղաւորներից էլ աւելի յանցաւոր եմ Աստուծոյ պատուիրանների հանդէպ: Այսպէս է պէտք խորհել ամէն ժամ եւ ասել, թէ՝ անպիտան եմ, նաեւ միմեանց խոնարհութեամբ աւելի մեծարել, քան [սեփական] անձերը: Այսուհետեւ երկիւղով եւ խոնարհութե՛մբ մօտեցիր Աստծուն, իսկ երբ մատուցես խոնարհութեան խօսքը, ասա՛. «Գոհանում եմ Քեզանից, Տէ՛ր, քանզի համբերութեամբ ներեցիր ինձ եւ ցայժմ առանց տանջանքների պահեցիր, քանզի, Տէ՛ր, ես արժանի էի մեծ պատուհաս կրելու եւ Քո կողմից արհամարհուելու: Իսկ Քո անոխակալ մարդասիրութիւնը ներողամիտ գտնուեց իմ հանդէպ: Գոհանում եմ Քեզանից, թէպէտ եւ արժանի չեմ ներողամտութեանդ գովութեանը»: Եւ երբ երկուսն էլ՝ փառաբանութիւնն ու խոնարհութիւնը, կատարես, այնժամ խնդրի՛ր այն, ինչ որ պէտք է խնդրէիր...

Ս. ՍԱԿԱՐ ՄԵԾ († 391)

Պէտք է, որ հոգին աղօթքների եւ սաղմոսերգութեան ժամանակ զղջմամբ հաւաքի իր խորհուրդները եւ մտքում ուրիշ բան չդնի, այլ Տիրոջ գալստեանը սպասի, Նրա սէրը մտքով եւ սրտով կրի եւ միշտ Նրա հետ կապուած լինի: Եւ ինչպէս մայրն է հաւաքում իր որդիներին եւ ուսուցանում նրանց, այդպէս էլ հոգին թող հաւաքի իր խորհուրդները, թէպէտ եւ մեղքերի մէջ ցրուած լինեն, եւ հաստատուն հաւատքով պարտադրի սպասել Տիրոջ գալստեանը, որպէսզի [Նա] գայ եւ ըստ Իր կամքի հաճութեան ուսուցանի ճշմարիտ եւ անպղտոր աղօթքը:

Իսկ եթէ մենք, աղօթքի մէջ լինելով, մեր խորհուրդները դրսում ենք թափառեցնում եւ չենք հաւաքում, ինքներս իսկ մատնում ենք մեզ եւ թողնում մեղանչական մտածութիւնների մէջ: Նաեւ չենք ուղղում մեր կամքը դէպի Աստուած եւ չենք բռնադատում մեր խորհուրդներն՝ ուղղուելու դէպի Տէրը, որպէսզի Ինքը՝ Տէրը, Իր կամքով գայ մեզ մօտ եւ Իր ճշմարտութեամբ մեզ Իր մօտ հաւաքի:

Տիրոջը հաճոյ լինելու ողջ խնդիրը խորհուրդների մէջ է: Ուստի փութա՛ ներքնապէս խորհուրդներովդ հաճոյ լինել Նրան եւ ամէն ժամ ներսում ակնկալել Տիրոջը: Միշտ եւ հանապազ փութա՛ ներսումդ խորհուրդներով փնտրել Նրան եւ բռնաբա՛ր իսկ հարկադրիր քո կամքը՝ բարեյօժարութեամբ մտքիդ ախորժումն առ Տէր պահելու: Եւ ապա կտեսնես, թէ ինչպէս Ինքն Իր կամքով կգայ եւ օթեւան կգտնի քեզ մօտ: Եւ որչափ որ միտքդ կամքով բռնադատես՝ ամբողջ սրտով փնտրելով Նրան, նոյնքան եւ առաւել Նա՛ կհարկադրուի Իր գթութեամբ եւ ըստ Իր բարերար քաղցրութեան գալ քեզ մօտ եւ հոգեպէս հանգստացնել քեզ: [Գիտցի՛ր, որ] ամենեւին էլ չի լքել քեզ, այլ անտեսանելի կերպով կանգնած է քեզ մօտ, տեսնում է քո միտքը եւ խորհուրդները, հայում քո մտածութիւններին, տեսնում, թէ ինչպէս ես աղօթում Իրեն՝ ամբողջ անձո՞վ, թէ՞ ծուլութեամբ, մինչեւ իսկ յուլանալով* եւ կամ թոյլ մտքո՞վ եւ ո՞չ արդեօք ինչ-ինչ մեղքերի գործառնութեամբ ախտաւորուած:

* յուլանալ - թուլանալ, ծուլանալ

Արդ, երբ դու տեսնես, որ ամէն ժամ գործառնութեամբ հանդերձ սփռում ես քո խորհուրդները Տէր Աստուծոյ եւ միայն Նրա հայեացքի առաջ, այնժամ Ինքը՝ Տէրը, կայտնուի քեզ, Իրեն անճառապէս ցոյց կտայ, Իր ցանկալի գեղեցկութեամբ կպայծառացնի, Իր օգնականութեամբ առւեցուն կդարձնի, Իր ողջ յաղթութիւնը կտայ եւ կազատի քեզ քո անբուժելի թշնամիներից՝ հայելով քո՝ նախապէս Իրեն ուղղուած անզբաղ խնդրուածքներին, մտքիդ անսխալ ակնկալութեանը եւ սրտիդ՝ Իր հանդէպ միշտ աննուազ տածուող սիրուն: Ահա այսպէս կուսուցանի եւ կտայ քեզ ճշմարիտ աղօթքը, հաւատքի եւ ճշմարտութեան սէրը, երկնային եւ ճշմարիտ խնդութիւնը, որն Ինքն իսկ Քրիստոսն է, որ ամէնուրեք քեզ հետ է:

Երբ մարդ զգուշանայ իր ընկերոջը զրկելուց, այնժամ կհամարձակուի իր մտքում [համարել], թէ իր աղօթքներն ընդունելի են Աստուծոյ առջեւ: Իսկ եթէ զրկի իր ընկերոջը, նրա աղօթքները գարշելի եւ անընդունելի կլինեն, քանզի զրկուածի հեծութիւնը թոյլ չի տայ, որ զրկողի աղօթքը մտնի Աստուծոյ առաջ: Եւ եթէ

չշտապի հաշտուել ընկերոջ հետ, ազատ չի լինի իր մեղքերից յաւիտեան, քանզի գրուած է. «Ինչ որ կապեցիր երկրի վրայ, կապուած կլինի երկնքում» [Մատթ. ԺԸ 18]:

Ս. ՍԵՐԱՊԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
(† Ե դարի սկիզբ)

Հարկադրի՛ր քեզ գիշերուայ մէջ բազում աղօթքների, քանզի աղօթքը լոյս է քո անձին: Հանապազ խորհի՛ր, թէ ինչում ես սայթաքել, եւ եթէ աղօթես դրանց համար, Աստուած քեզ թողութիւն կշնորհի:

Եթէ Աստծուն աղաչես օգնել փորձութեան ժամանակ, եւ չլսի քեզ, մի՛ վհատուիր, քանզի Ինքը քեզանից առաւել գիտի քո օգուտը: Քո խնդրուածքներում Աստծուն մի՛ ասա, թէ՝ վերցրո՛ւ այս ինձանից կամ՝ տո՛ւր ինձ այս, այլ այսպէ՛ս աղօթիր. «Տէ՛ր Յիսուս, Դո՛ւ ես իմ օգնականը, Քո ձեռքերում եմ, Դո՛ւ գիտես իմ օգուտը, օգնի՛ր ինձ: Մի՛ թողնիր ինձ իմ կամքին հետեւել, մի՛ թողնիր ինձ կորչել իմ մեղքերում, գթա՛ Քո ստեղծուածին, մի՛ գցիր ինձ Քո աչքից իմ մեղքերի պատճառով, քանզի Քեզ ապաւինեցի: Բժշկի՛ր իմ անձը, քանզի մեղանչեցի Քո հանդէպ. Քո առջեւ են իմ բոլոր նեղիչները, եւ չկայ ինձ ապաւէն, Տէ՛ր, Քեզանից բացի: Փրկի՛ր ինձ ըստ Քո ողորմութեան, եւ թող ամաչեն բոլոր ինձ վրայ յարձակուածները, որոնք ձգտում են կորցնել իմ անձը. քանզի Դու, Տէ՛ր, ամենակարող ես, եւ Քոնն է փառքը յաւիտեանս»:

Ս. ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑԻ († 403)

Կրօնաւորը պարտաւոր է միշտ եւ անդադար աղօթել սրտով եւ մտքով՝ կանգնած, թէ՝ նստած, գործելիս, թէ՝ ուտելիս, ննջելիս, թէ՝ արթնանալիս եւ թէ՝ գնալիս: Քանզի եւ Դաւիթ մարգարէն ամէն ժամ աղօթում էր. «Երեկոյեան,– ասում է,– առաւօտեան եւ ողջ ցերեկը» [Սաղմ. ԾԴ 18], նաեւ՝ կէսգիշերին [Սաղմ. ՃԺԸ 55]. «Օրը եօթ անգամ եւ ամբողջ օրն խսկ,– ասում է,– ամէն ժամ կօրհնեմ Տիրոջը» [Սաղմ. ԼԳ 2, ՃԺԸ 164]:

Եթէ [քեզ] մտնենայ մտքիդ հետ պատերազմող խորհուրդ, զգո՛յշ եղիր, որպէսզի աղօթքի մէջ [անհրաժեշտի] փոխարէն այլ բան չխնդրես, այլ աղօթքիդ սուրը սրի՛ր ընդդէմ թշնամու՝ նրա հետ ընդդիմամարտելու համար:

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ († 407)

Եւ արդ, ինչպէ՞ս են ասում՝ եկեղեցում պէտք չէ՛ աղօթել: Պէ՛տք է, եւ՝ շատ, բայց ամէնուրեք այնպիսի կամքով, ինչպիսին Աստուած է պահանջում մտքի համար: Քանի որ, սենեակ մտնելով եւ դռները փակելով եւս, կարելի է աղօթել ի ցոյց մարդկանց, եւ դռներ փակելը ոչ մի օգուտ չի տայ: Տե՛ս՝ ինչպէս է եւ այստե՛ղ տարբերութիւնը ցոյց տալիս. «Որպէսզի երեւան,– ասում է,– մարդկանց» [Մատթ. Զ 5]: Քանզի մի այնպիսի ուղղութիւն է կամենում կարգել, որ դռները փակելուց առաջ, նախ փակեն մտքի դռները, որպէսզի բոլորովին հեռանան ունայն պարծանքներից: Լաւ է ամէնուրեք հեռանալ այդպիսի ախտից, մանաւանդ՝ աղօթքների ժամանակ, քանզի եթէ առանց այն էլ վրիպում ենք եւ այս ու այն կողմ զարնւում, եթէ այդպիսի ախտով աղօթքներին մօտենանք, ինչպէ՞ս կկարողանանք ստանալ հայցուածները, որ խնդրում ենք:

Եթէ մենք կարիքաւորներին, որոնք աղաչում են, չլսենք, ապա Աստուած, Ում աղաչում ենք, ինչպէ՞ս կլսի:

Ո՛չ թէ մարմնի կեցուածքով եւ մեծաձայն խօսքերով, այլ կամաւոր յօժարութեա՛մբ աղօթք մատուցենք: Ո՛չ թէ յանդուգն աղաղակով եւ ի ցոյց մարդկանց, այլ հեզութեամբ ու հանդարտութեամբ, մտքերի ստրջանքով ու մեղմ արտասուքով խորքում սիրտն արթնացնել: Բայց սիրտդ կճմլուի՞ եւ չե՞ս կարողանայ դիմանալ, որ չաղաղակես, որ յանկարծ որսից փղձուկ չթափուի: Այլ ինչպէս Մովսէսն էր փղձկում իր սրտում եւ ոչինչ դուրս չէր հանում, սակայն [նրա] լուռ աղօթքներն [այդպէս] լսուեցին: Քանզի Աստուած իսկ ասում էր. «Ինչո՞ւ ես աղաղակում Ինձ» [Ել. ԺԴ 15]: Եւ Աննան թէպէտ եւ աղօթելիս շուրթերից որեւէ խօսք չէր հանում, սակայն բոլորն, ինչ կամեցաւ, ստացաւ, քանզի սիրտն էր աղաղակում [Ա Թագ. Բ 1]: Իսկ Հաբէլը լուռ չէր, երբ վախճանւում էր, այլ աղօթում էր, եւ նրա արիւնը փողի հնչումից էլ բարձր էր աղաղակում առ Աստուած [Ծն. Դ 10]: Հեծի՛ր եւ դու, յոգո՛ց հանիր, ինչպէս սուրբերը, ոչինչ չեմ արգելում, պատառի՛ր, ինչպէս մարգարէն ասաց, ո՛չ թէ պատմուճանը, այլ՝ սիրտդ: Ըստ այնմ՝ «Խորքերից կանչեցի Քեզ,

Տէ՛ր» [Սաղմ. ՃԻԹ 2]. սրտի ներսից էր խօսք արձակում:

Զե՞ս տեսնում, որ արքունիքում ամենայն աղմուկ ու աղաղակ դադարեցուած է, եւ ամէն կողմում վաստակած լռութիւն է տիրում: Եւ դու նոյնպէս, անձդ արքունիք մտած համարելով, ոչ թէ երկրային, այլ վերին եւ սրանից աւելի մեծ, երկնքո՛ւմ բազմացրու հանդարտութիւնը, քանզի հրեշտակներին իսկ եղար դասակից, հրեշտակապետերին՝ գնդակից, սերովբէների հետ՝ սրբասաց: Քանզի վերին գնդերն ամէնքն էլ իրենց ներսում բազում բարեկարգութիւններ են ցուցաբերում, մեծ երկիւղով սրբազան մեղեդիներ նուագում եւ երանախառն օրհնութիւններ երգում ամենքի թագաւոր Աստծուն: Աղօթքի ժամանակ նրանց հետ խառնի՛ր դու քո անձը, նրանց սրբազան կարգի՛ն եղիր նախանձաւոր եւ աղօթի՛ր Աստծուն, որ մերձ է ամէնուր, լսում է նախքան խօսելը եւ գիտի ամէն ծածուկ միտք: Եթէ այսպէս աղօթես, բազում վարձ կստանաս:

Լաւ է յստակ խորհրդով քնել, քան պիղծ խորհրդով աղօթել եւ վարձ չստանալ եւ իզուր չարչարուել:

Հնազանդուի՛ր սիրով, աղօթի՛ր յուսով, աշխատի՛ր հաւատքով եւ կպայծառանաս երկնային հարսանիքում:

Երբ աղօթում ես, հաւաքի՛ր խորհուրդդ եւ ապա՛ սաղմոսիր:

Եթէ թշնամու համար չես աղօթում այնպէս, ինչպէս քեզ համար, ապա լաւ է չաղօթել:

Եթէ մէկից որեւէ բան ես ստանում, յիշի՛ր սովորական աղօթքի մէջ:

Սուրբ սրտից [բխած] աղօթքը պատարագի փրկութիւն է գործում:

Թո՛ղ սնոտի խորհուրդներն ու խօսքերը, բեւեռի՛ր քեզ Աստուծոյ երկիւղին եւ խորհի՛ր Դատաստանի Օրուայ մասին:

Երբ աղօթում ես, իմացի՛ր, թէ ում հետ ես խօսում կամ ինչ ես խնդրում, եւ խորհուրդդ քո մէջ հաւաքի՛ր:

Խնդրենք այն, ինչ Քրիստոս խոստացաւ, թէ՝ «Ուր ես եմ, այնտեղ եւ իմ պաշտօնեան կլինի» [Յովհ. ԺԲ 26]

Ս. ՆԵՂՈՍ ՍԻՆԱՅԵՑԻ († 450)

Նախ աղօթի՛ր արտասուքներ ստանալու համար, որպէսզի սուգի միջոցով կակղեցնես անձիդ մէջ ներգոյացած խստութիւնները եւ, խոստովանելով անձիդ անօրէնութիւնը քո Տիրոջը, Նրանից մեղքերի թողութիւն ստանաս:

Ամէն խնդրուածքից առաջ յաջողութեան համար քեզ պէտք կլինեն արտասուքներ, քանզի քո Տէրը շատ է ցանկանում արտասուալից աղօթք ընդունել քեզանից:

Թէպէտ եւ արտասուքների աղբիւր ունենաս աղօթքի ժամանակ, մի՛ հպարտացիր քո անձի մէջ, որպէս թէ առաւել ես շատերից, քանզի առաւել աղօթքի օգնականութեան շնորհը Տիրոջից է, որպէսզի յօժարութեամբ խոստովանես քո մեղքերը եւ արտասուքների միջոցով հաշտեցնես Աստծուն:

Երբ դեւերը տեսնում են, որ դու ճշմարտապէս ցանկանում ես աղօթել, այնժամ առաջադրում են իբրեւ թէ կարեւոր ինչ-որ խորհուրդներ, իսկ քիչ անց քեզանից վերցնում են նրանց յիշողութիւնը՝ միտքը պահելով նրանց որոնման մէջ. իսկ (միտքը), չգտնելով, յոյժ հոգ է անում եւ տրտմում: Եւ երբ մարդը կանգնում է աղօթքի, յիշեցնում են նրան այն, ինչ փնտրում էր եւ որի յիշողութիւնը կորցրեց, որպէսզի, նրանց ծանրութեան տակ կորացնելով, կորստեան մատնեն պտղաբեր աղօթքը:

Ջանա՛ աղօթքի ժամանակ միտքդ խուլ ու համր պահել, անսայթաք մնալ ամէն տեսակ արկածներից, որպէսզի (աղօթքն) ընդունելի լինի:

Աղօթքը հեզութեան, անբարկութեան, անյիշաչարութեան եւ սիրոյ բխումն է:

Աղօթքը խնդութեան, խաղաղութեան եւ գոհութեան (բխումն) է դէպի լաւագոյնը:

Աղօթքը տրտմութեան, տարակուսանքների եւ վշտերի հրաժարադեղ ու սփոփանք է:

Գնա վաճառի՛ր քո ունեցուածքը եւ տո՛ւր աղքատներին եւ, վերցնելով խաչը, ուրացի՛ր անձդ եւ աշխարհը (Մատթ. ԺԹ 21, ԺԶ 24), որպէսզի կարողանաս անզբաղ աղօթել:

Եթէ կամենում ես գովելի կերպով աղօթել, միշտ ուրացի՛ր անձդ եւ, աղօթքի համար բազում նեղութիւններ կրելով, ստուգապէս իմաստասիրի՛ր:

Ինչի համար տառապանքների համբերես եւ այն միամիտ խորհուրդներով իմաստասիրես, նրա պտուղն աղօթքի ժամանակ կգտնես:

Ցանկանո՞ւմ ես աղօթել ինչպէս պէտք է. մի՛ տրտմեցրու որեւէ մէկի անձը, ապա թէ ոչ՝ ունայն կլինի քո վաստակը եւ այդ ընթացքը:

Մի՛ աղօթիր, որ քո կամքը կատարուի, քանզի այն համաձայն չէ Աստուծոյ կամքին, այլ մանաւանդ՝ այնպէս, ինչպէս սովորեցիր: Աղօթի՛ր՝ ասելով. «Քո կամքը թող լինի իմ մէջ՝ սրբուելու բոլոր ախտերից եւ բարկութիւնից». ա՛յս է Նրա կամքը քո մէջ, քանզի առաւել քան մեր իմանալը եւ խնդրելն է կամենում եւ իմանում բարին մեր անձերի համար:

Շատ անգամ աղօթելով խնդրեցի [Աստծուց] ինձ համար այն, ինչ աւելի լաւ էի համարում, եւ յամառում էի խնդրուածի համար՝ Աստուծոյ կամքը զուր տեղը հարկադրելով եւ չթողնելով Նրան, որ ինչպէս գիտի օգտակարը, ա՛յն տնօրինի: Սակայն երբ ստանում էի կամեցածս, յոյժ տխրում էի, քանի որ իմ խնդրածի՝ այնպիսին չէր, ինչպիսին կարծում էի:

Մի՛ խնդրիր Աստուծուց նոյն ժամին հաւատիանալ խնդրուածի մէջ, քանի որ [Նա] կամենում է, որ քո աղօթքներն աւելի խնամքով հնազանդուեն. քանզի ի՞նչ կայ աւելի բարձր, քան Աստուծոյ հետ զրուցելը եւ Նրան զուգադոյ* անճառելիներին հաղորդուելը:

Անզբաղ աղօթելը մտքի ծայրագոյն վիճակն է, որը միշտ աստուածայինը խոկալն է:

Աղօթքը մտքի համբարձուելն է երկրային իրողութիւններից առ Աստուած:

Աղօթի՛ր նախ՝ ախտերից սրբուելու, երկրորդ՝ անգիտութիւնից եւ մոռացումից, երրորդ՝ բոլոր փորձութիւններից եւ ծուլութիւնից ազատուելու համար:

Իրաւացի է ոչ միայն սեփական անձի սրբութեան համար աղօթել, այլեւ՝ բոլոր համատոհմեցիների, որպէսզի միշտ հրեշտակների օրինակին նմանուի:

Զգո՛յշ եղիր, երբ Աստուծոյ առաջ աղօթում ես, միգուցէ գովեստից պատրուած** ես եւ ճեպում ես դէպի ստորին ակնկալիքը. նման աղօթքի մէջ մնալը քօղի նման է՝ ի վնաս քո հոգու:

---

* զուգագոյ - համագոյ, էակից

** պատրուել - պատրանքի ենթարկուել, խաբուել

Երբ քո միտքը բազում ցանկութիւնները մէկը միւսի ետեւից հալածում է մարմնից, եւ ամէն ինչ, որ զգայութիւններից է կամ յիշողութիւնից կամ կարծեցեալ բարուց, արտաքսւում է, այնժամ համարի՛ր, որ մերձ ես աղօթքի սահմանին:

Սուրբ Հոգին մեր տկարութեանը վշտակից է լինում. թէպէտ եւ պղծաբարոյ ենք, սակայն գալիս է մեզ մօտ, եւ եթէ մեր միտքը լինում է ճշմարտասիրութեամբ աղօթելիս, հանգչում է մեզ վրայ եւ ամբողջովին պարուրում մեզ, կործանում խորհուրդների կամ մտքերի բոլոր լեգէոնները՝ հրաւիրելով մեզ դէպի հոգեւոր սուրբ աղօթքի ցանկութիւնը:

Ոմանք մարմնի այլայլութեամբ մտքի մէջ ներառնում են խորհուրդներ կամ կարծիքներ կամ պատկերներ, իսկ Աստուած փակում է սրանց ճամփան՝ Իր մէջ հանգստացնելով միտքը, նրա մէջ գիտութիւն է դնում, ինչպէս կամենում է, եւ խաղաղեցնում է մտքի եւ մարմնի շարժումների խռովութիւնը:

Աղօթքի ժամանակ քո ներսում Աստուածութեանը տեսք մի՛ տուր եւ թոյլ մի՛ տուր մտքիդ՝ տպաւորուելու կերպարանքներով, այլ Աննիւթին աննիւթապէ՛ս մօտեցիր եւ իմաստո՛ւն կլինես:

Զգո՛ն եղիր՝ աղօթքի ժամին միտքդ մտածութիւններից պահելով, եւ քո ներսում լռութի՛ւն պահպանիր, որպէսզի Նա, Ով վշտակից է լինում տգէտներին, քեզ մօտ գայ. եւ այնժամ կգայ շնորհներով բարգաւաճած աղօթքի պարգեւը:

Քեզ կարող մաքուր աղօթել՝ պաղատելով մարմնաւոր իրեր, քանզի աղօթքը հեռացում է այս [աշխարհի] նիւթական ակնկալութիւններից:

Կապուածը չի կարող ընթանալ, եւ ախտերին ծառայող միտքը չի կարող տեսնել հոգեւոր ոլորտը, քանզի ներքաշւում եւ տարուբերւում է ախտաւոր մտքերի մէջ եւ մաքուր չի մնում:

Իմացի՛ր, որ սուրբ հրեշտակներն են հրաւիրում մեզ աղօթելու եւ աջակից լինում մեզ՝ ուրախանալով ըստ այնմ եւ աղօթելով, իսկ եթէ ծուլանում ենք եւ ընդունում հակառակ խորհուրդները, յոյժ զարհուրեցնում ենք նրանց. եւ թէպէտ եւ նրանք մեզ համար այսչափ ջանում են, սակայն մենք մեր անձանց համար

նոյնիսկ չենք կամենում աղաչել Աստծուն, այլ, քամահրելով մեզ համար սպասաւորութիւնը եւ սրանց Տիրոջը, թողնում ենք Աստծուն եւ զբուցում պիղծ դեւերի հետ:

Զգո՛յշ եղիր, որ երբեւէ չպատրուես չար դեւերի որեւէ երեւմամբ, այլ, մտքով դիմելով աղօթքի, աղաչի՛ր Աստծուն, որպէսզի եթէ Նրանից է այդ խորհուրդը, Նա՛ լուսաւորի քեզ, ապա թէ ոչ՝ փութանակի քեզանից հալածի մոլորեցնողին: Եւ քաջալերուի՛ր, քանզի շները* չեն կանգնի քո ներմագին գաւազանի առաջ, որ ձեռքդ առար Աստծուն ուղղուած պաղատանքներով:

Անզգո՛ս մնա քո աղօթքի մէջ եւ ուրացած՝ քո անձը բոլոր զգայութիւններով հանդերձ՝ [լինելով] միամիտ եւ մաքուր խորհուրդներում:

Մի՛ ցանկացիր որեւէ կերպարանք կամ ձեւ կամ գոյն աղօթքի ժամանակ:

Մի՛ ցանկացիր զգայապէս տեսնել հրեշտակների կամ զօրութիւններ կամ Քրիստոսին,

* Ընկատի ունի դեւերին

որպէսզի ամբողջովին չխելագարուես՝ հովուի փոխարէն տեսնելով գայլին եւ երկրպագելով թշնամի դեւերին:

Պատրանքների սկիզբը մտքի սնափառութիւնն է, որից շարժման մէջ դրուելով՝ միտքը փորձում է ձեւով կամ կերպարանքով պարագրել Աստուածութիւնը:

Ես ասացի իւրայիններիս. «Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին պահում է կատարեալ եւ մաքուր անտեսքութիւն»:

Երջանիկ է այն միտքը, որ, անզբաղ աղօթելով, բարձրացնում է իր անձը դէպի Աստուծոյ առաւել փափագումը:

Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին աննիւթական եւ անստացիկ է լինում՝ սրբուելով ամէն ինչից:

Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին կատարեալ անզգայութիւն ունի երկրի նկատմամբ:

Եթէ կամենում ես հոգով աղօթել, ոչ մէկի մի՛ ատիր, եւ չես ունենայ մառախուղ, որ դիմագրում է քեզ աղօթքի լուսաւորութեան ժամին:

Եթէ աղօթում ես ընդդէմ ախտերի* կամ քեզ հետ մարտնչող դեւերի, յիշի՛ր ասուածը. «Կհալածեմ իմ թշնամիներին եւ կհասնեմ նրանց եւ չեմ դառնայ, մինչեւ չսպառեմ նրանց» [Սաղմ. ԺԷ 38, 39]: Սա այդ ժամին կասես՝ մեծ խոնարհութեամբ անձդ սպառազինելով հակառակորդների դէմ:

Ինչպէս տեսողութիւնն ամենապատուականն է բոլոր զգայարանների մէջ, այնպէս էլ աղօթքը ամենաբարձրն է առաքինութիւնների մէջ:

Աղօթքի գովեստը ոչ թէ քանակն է, այլ՝ որակը. այս են ցոյց տալիս աղօթելու համար տաճար բարձրացողները [Գործ. Գ 1], ինչպէս նաեւ՝ «Դուք, երբ աղօթքի էք կանգնում, շատախօս մի՛ եղէք» [Մատթ. Զ 7] եւ սրա հետ ասուած նման խօսքերը:

Քանի դեռ դիտում ես մարմնական համեմատութիւնները, եւ քո միտքը զննում է յարկերի վայելչութիւնները, ամենեւին չես տեսել աղօթքի ոլորտը, այլ նրա երջանիկ ճանապարհը հեռու է քեզանից:

* ախտ - կիրք, մոլութիւն

Երբ, կանգնելով աղօթքի, [զգում ես ուրախութիւն], որ վեր է այս [աշխարհի] բոլոր ուրախութիւններից, այնժամ իսկապէս ճեռք ես բերել սուրբ աղօթքը, որը կատարւում է ի փառս Ամենասուրբ Երրորդութեան այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ († 475)

Զշտապենք մարմնաւոր աչքով տեսնել Աստծուն, որպէսզի տարաժամ չկործանուենք: Մեզանից թող սէ՛րը պատգամաւոր լինի Նրա առաջ, եւ Նրա սիրով Իր կամքը թող կատարուի մեր մէջ: Ինչ որ սովորեցրին մեզ մարգարէները, դրանով ջանանք ընթանալ, քանզի նրանք խօսքով ասացին եւ գործով կատարեցին: Նրանց վարդապետը ոչ այլ ոք էր, եթէ ոչ՝ Նա, Ով քեզ սովորեցրեց աղօթքը: Դու էլ խօսքով սովորի՛ր աղօթքը եւ գործով շտապի՛ր կատարել: Հեռու չես հրեշտակներից, այլ նրանց հետ ես աղօթքով, որպէսզի նրանց հետ փառաւորես Աստծուն: Ինչպէս որ դու ես նրանց հետ միաբանւում, նոյնպէս էլ նրանք քեզ հետ երգակից են լինում աղօթելիս եւ օրհնելիս:

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ († 490)

Պէտք չէ այլուր՝ միտքը եւ այլուր խորհուրդներն առաքել, այլուր՝ լսելիքը եւ այլուր տեսանելիքը թափառեցնել, երբ մէկը կամենում է իր մեղքերի յանցանքների համար աղաչել եւ աղերսել Աստծուց, որպէսզի հեծեծանքներով ու հառաչանքներով հաշտեցնենք Տիրոջը եւ պաղատանքներին գթալու խոնարհեցնենք, որ աղօթքի աղերսների եւ գթագին սրտի ջերմութեան միջոցով քաւի մեր մեղքերը, սրբի մեր անօրէնութիւնները, փրկի ահեղ աղէտների տանջանքներից եւ յաւիտենական ամօթից: Քանզի շատերը բազում բարիքներ ստացան աղօթքի միջոցով եւ հաճելի եղան Աստծուն, որով մեղքերի թողութիւն եւ հոգիների փրկութիւն գտան:

Միայն արտասուալից պաղատանքներո՛վ աղօթիր Աստծուն եւ կթեթեւանաս ամբարշտութեան ախտերից, կառողջացնես անօրէնութեան ցաւերը եւ կբժշկես յանցանքների հիւանդութիւնները: Միայն ամբողջ սրտո՛վ աղօթիր Աստծուն եւ կազատուես սատանայի որոգայթներից, կփրկուես չարաժանիք վիշապից եւ ողջանդամ կազատուես թունաւոր թշնամուց: Միայն անդադար աղօթքո՛վ թախանձիր Աստծուն, եւ կլուսաւորի մոլորութեան խաւարը եւ կցամաքեցնի մեղքերի պղծութեան աղտեղութիւններն ու ցանկութեան տիղմը:

Այս է ճշմարիտ աղօթքի զօրութիւնը նրան մերձենալ կամեցողների համար: Սա է անարիւն բանաւոր պատարագը, քանզի իւրաքանչիւր մէկի աղօթք Աստուծոյ պատարագ է. եւ եթէ սիրով չներես, չհաշտուես ընկերոջդ հետ, քո աղօթքն ընդունելի պատարագ չի լինի, քանզի առ Աստուած չի բարձրանում: Որովհետեւ ով քէն ունենայ ընկերոջ նկատմամբ, անհնար է, որ նրա աղօթքները ելնեն առ Աստուած, իսկ եթէ նա սրտի սիրով աղօթի Նրան, մինչեւ աղաղակելը, կասի, թէ՝ ահա՛ հասել եմ: Քանզի անարատ աղօթքը՝ արտասուքներով եւ ողորմութեամբ ուղեկցուող, աղօթքի ժամին աղօթականի առաջ բացում է երկնքի դռները եւ ելնում դէպի Աստուծոյ լսելիքը, եթէ միայն առանց թերանալու կանչեն Նրան:

Սատանան, գիտենալով այս ամէնը, թէ աղօթքով մեծամեծ զօրութիւններ եւ անբաւ

բարիքներ են կատարում, գնում, մերձենում է նրան, ով աղօթել է ցանկանում: Եւ նախ եւ առաջ մահճի մէջ է պատերազմում նրա հետ՝ հեշտացնելով անկողինը, քաղցրացնելով քունը, ծանրացնելով մարմինը. այս ու այն կողմ է շուռ տալիս, յօրանջեցնում եւ քորել տալիս: Եւ յետոյ, հազիւ վեր կենալով, բեկբեկուելով գնում է Եկեղեցի եւ ներս մտնում ու կանգնում Աստուծոյ առաջ: Եւ սատանան այնտեղ էլ պատրուակում է միտքը՝ իր յանցանքների բազմութիւնը չյիշելու, եւ չի հասկանում, որ կանգնած է Աստուծոյ առաջ. ո՛չ օրհնութիւնն է լսում, ո՛չ փառաբանութիւնն է իմանում, ո՛չ էլ ընթերցուածների վարդապետութիւնն է նրա սիրտը մտնում: Ո՛չ հեծում է, ո՛չ էլ հառաչում մեղքերի անօրէնութիւնների համար, ո՛չ լալիս է, ո՛չ էլ ողբում հոգու վէրքերի համար, ո՛չ աղաչում է, ո՛չ էլ աղերսում Աստծուց, ո՛չ էլ արտասուալից պաղատանքներով հաշտեցնում Տիրոջը՝ չխոստովանելով չարիքների բազմութիւնը եւ չյայտնելով անօրէնութեան ծածկուած մթերումները, որպէսզի փրկուի ահեղ տանջանքներից եւ անշոյլ խաւարից: Փոխանակ լալու եւ պաղատելու՝

մեծ աներկիւղութեամբ եւ արհամարհանքով կանգնած ենք Աստուծոյ առաջ՝ առանց պատկառանքի, ահ ու դողի, ինչպէս դատապարտեալները դատաւորի առաջ կամ ինչպէս մեղանչած ծառաները, ովքեր, իրենց տիրոջ ոտքերն [ընկած], աղերսում են եւ մեծ երկիւղով ու պաղատանքներով աղաչում ու պաղատում: Նաեւ հեծեծանքներով, հառաչանքներով եւ ողորմագին ողբերով չենք արտասուում մահապարտների պէս, որոնց քարշ տալով տանում են չարչարանքների տեղը, եւ չենք ընկնում Աստուծոյ առաջ խորգով*, մոխրով եւ մեծ սուգով, որպէսզի փրկի մեզ բորբոքուած գեհենից եւ սաստիկ տանջանքներից, որդերի չարութիւնից եւ աննշոյլ խաւարից:

Եւ արդ, սթափուի՛ր եւ դէ՛ն գցիր քեզանից մտքի պաճուճանքների կեղծաւոր խաբէութիւնը, ապա՛ մտիր Աստուծոյ առաջ եւ լսի՛ր: Երբ մահապարտները մտնում են թագաւորի առաջ, չեն դիմում պաճուճանքների, այլ՝ աղերսների

* խորգ - խարազան, մազեղէն քուրձ (հագնում էին ապաշխարութեան ժամանակ)

եւ պաղատանքների. երբ վիրաւորը մտնում է հիւանդանոց, այլեւայլ խորհուրդների կարիք չունի, այլ՝ միայն դեղ որոնել վէրքին եւ բժշկել ցաւերը: Նոյնպէս էլ մեղքերով վիրաւորին եւ անօրէնութիւններով ցաւազնեալին պաճուճանքներ եւ պիղծ խորհուրդներ պէտք չեն, երբ եկեղեցի է մտնում, ոչ էլ՝ օծանուել եւ մազերը հիւսել՝ աղօթքի ժամին Աստուծոյ առաջ պաղատելու համար, այլ [պէտք է] մարմինը նեղել եւ խորհուրդը մաքրել. եւ գծուծ տեսքով, փշրուած սրտով, խոնարհ անձով մտնել, կանգնել Աստուծոյ առաջ եւ բազում պաղատանքներով ողբալ եւ դառնապէս լալ, անդադար հեծութեամբ աղաչել ու աղերսել, բախել կուրծքը, տարածել ձեռքերը, արտասուք հոսեցնել, նեղուած սրտով խոստովանել չարիքները, անհամարձակ լեզուով, ամօթալից երեսով, ողբալի ձայնով եւ խանդաղատալի բարբառով հաշտեցնել Աստծուն եւ մեղքերի թողութիւն ստանալ:

Այս է այն աղօթքների եւ խնդրուածքների կերպարանքը, որոնց վրայ Տէրը խոնարհւում է եւ լսում, որով յանցանքներին [թողութիւն] է շնորհում, քաւում անօրէնութիւնները, որով

մաքրւում եւ սրբւում ենք պղծութիւնների չար ախտերից եւ սատանայական խորհուրդներից, որով ստանում ենք արքայութիւնը եւ անմահ կեանքի փափկութիւնը: Իսկ մենք, այս ամէնը յիշելով, մեծ արհամարհանքով մտնում ենք Աստուծոյ մօտ, սակայն սատանայի հետ լինում, որ շփոթեցնելով խառնակում է մեր միտքը պէս-պէս մտքերով եւ ցրելով հոսեցնում մեր խորհուրդներն աշխարհի հոգսերի եւ զբօսանքների մէջ: Եւ, գերուած աղօթքի շահաւոր օգնութիւնից, գրաււում ենք չարի չար խորհուրդներով. [եկեղեցու] ներսում ծունկի ենք եկել աղօթելու համար, իսկ մեր միտքը շրջում է՝ բազում ցնորքներով թափառելով դրսում: Քանզի աղօթելիս խորհում ենք տան եւ անդաստանների հոգսերի մասին. աղօթելիս հաշւում ենք դաշտերի արդիւնքը եւ այգիների պտուղները, թէ քանի աման կլինի իմ հացը կամ քանի սափոր՝ գինին. նաեւ աղօթելիս մտաբերում ենք հօտերն ու նախիրները, թէ քանի արջառ կամ քանի ոչխար կայ. այնտեղ նաեւ յիշում ենք վարձկանների գործն ու վարձը, թէ՝ ափսոս, որ այս [կամ այն] ելնում է իմ տանից: Այլեւ աղօթելիս յիշում ենք նոյնիսկ

ընկերոջ դատաստանները եւ խկոյն դատում Աստուծոյ առաջ. եւ մինչդեռ աղօթքի ենք կանգնած, տակաւին նաեւ ամբաստանութիւններ ենք խորհում եղբօր մասին եւ, եկեղեցուց դեռ չարձակուած, սկսում ենք ոսոխին ամբաստանել եւ որպէս լեղիով դառնացնում աղօթքի քաղցրութիւնը: Եւ այնպէս է սատանան մեր միտքը յափշտակում, որ աղօթելիս մինչեւ իսկ աղտեղի խորհուրդներն է յիշեցնում. աղօթելիս հաշւում ենք փողերի վաշխերը եւ տոկոսները, աղօթելիս յիշում ենք ընկերոջ նկատմամբ թշնամանքը եւ նախանձը: Եւ ոչ միայն դատապարտւում ենք այսպիսի չար խորհուրդներով, այլեւ վիրաւորւում ենք՝ աղօթելիս ունայնախօս լեզուով եւ շատախօսութեամբ վնասուելով. քանզի բազում հոգիների վնաս ենք հասցնում, օրոնց մասին գերւում ենք մտքով եւ մերժուելով դուրս բերւում աղօթքից եւ փառատրութիւնից, [աղօթքը] վերածում ենք խաւարային խօսքի եւ կորստեան խորխորատներն իջեցնում [մեր հոգիները]:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՂԵՄԱՔՈՍ (Ի Ջ դար)

Երբ գնաս կանգնելու Տիրոջ առջեւ, թող քո հոգու հարսանեաց հանդերձն անյիշաչարութեամբ հիւսուած լինի, ապա թէ ոչ՝ նման աղօթքից ոչ մի օգուտ չես ստանայ: Թող քո բոլոր խնդրուածքները խոնարհութեամբ եւ անպաճոյճ լինեն, քանզի մաքսաւորն ու անառակը մի՛ խօսքով հաճելի եղան Աստծուն:

Մեր մաղթանքների գրուածքներում ամէնից առաջ յօժարութեամբ գրենք գոհութիւնը, երկրորդ տողին՝ խոստովանութիւնը, երրորդին՝ հոգու եւ զգայարանների զղջումը, ապա միայն մեր խնդիրքները ծանուցենք ամենքի Տիրոջն ու Աստծուն, քանի որ աղօթքի ընտրուած կարգն այս է: Ինչպէս ոմն եղբօր ծանուցուեց Աստուծոյ հրեշտակից:

Եթէ քաղցրանում կամ զղջում ես աղօթքի խօսքերում, մնա՛ նրանում եւ շա՛տ կրկնիր խօսքը, քանզի այդ պահին մեր պահապանը* մեր աղօթակիցն է:

* խօսքը պահապան հրեշտակի մասին է

Թէպէտեւ բարձրանաս առաքինութեան բոլոր աստիճաններով, աղօթի՛ր մեղքերի թողութեան համար, ինչպէս լսեցիր Պօղոսից, որն ազաղակում էր մեղաւորների մասին, որոնց առաջինն, ասում է՝ ես եմ [Ա Տիմ. Ա 15]:

Աղօթքի սկիզբն ընդհմակաց խորհուրդների արտաքսումն է, միջինը՝ որ միտքն ու ուշադրութիւնը միայն նրա խօսքում մնան, իսկ աղօթքի կատարելութիւնը յափշտակութիւնն է առ Աստուած:

Ա՛յլ է աղօթքի ազտեղութիւնը, ա՛յլ՝ խանգարումը, ա՛յլ՝ գողացումը, եւ ա՛յլ՝ բիծը: Աղօթքի ազտեղութիւնն Աստուծոյ առջեւ կանգնելն ու չար խորհուրդներ խորհելն է: Խանգարումն աղօթքի ժամին սնոտի հոգսերից գերուած մտքերն են: Գողացումը միտքն անզգայացնելն* ու ցրելն է: Եւ բիծն այն ժամին մեզ մերձեցած ունայն խորհուրդներն են:

Խնդիրքի յապաղման դէպքում չասես, թէ՝ երկար ժամանակ աղօթքների մէջ եմ եւ ոչինչ չստացայ, քանզի ահաւասի՛կ ստացել ես, քանի որ ի՞նչ կայ աւելի բարի, [քան] Աստուծոյ հետ կապուելն ու միաւորուելը:

Սրտում վառուող սիրոյ հուրը յարութիւն է տալիս աղօթքին, իսկ երբ յարուցեալ աղօթքը երկինք է ելնում, աստուածային լոյսն իջնում է հոգու տաղաւարը:

Ինչպէս որ երկրաւոր թագաւորին գարշելի է նա, ով, իր առջեւ կանգնած, երեսը յետ գարձնելով, խորհրդակցում է թագաւորի թշնամիների հետ, այնպէս էլ Տիրոջը գարշելի է նա, ով առաջանում է աղօթելու եւ սրտում պիղծ խորհուրդներ է գործում ու խորհում:

Երբ թշնամիներդ մտնենում են, ընդդիմացի՛ր նրանց եւ անդադար աղաչի՛ր Տիրոջը եւ վստա՛հ եղիր, որ բնաւ չես աշխատի, քանի որ իրենք իրենց անձերով կհեռանան քեզանից, քանզի չար հոգիները չեն կամենում քեզ աղօթքների շնորհիւ պսակազգեաց տեսնել, որոնք կատարում ես նրանց պատերազմների պատճառով: Այլ, քո աղօթքների հրից սաստկապէս գանահարուած, փախստական կլինեն:

* անզգայացնել- անուշադիր դարձնել, թմրեցնել, բթացնել

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ († 963)

Աղօթքն ամրութեան պարիսպ է, հաստատութեան սիւն, հաւատքի հիմք, յուսոյ խարիսխ, առ Աստուած ելնելու սանդուղք: Աղօթքը պարծանքների պսակ է, փրկութեան պատճառ, բարիքների առիթ, համբերութեան մարզիչ, աստուածպաշտութեան ծանօթութիւն, Սուրբ Հոգուն հրաւիրող, ինչպէս վկայում է աղօթքով այս ամէնը գտած ու պայծառացած Կոռնելիոսը [Գործ. Ժ 1–33]: Աղօթքը սանդարամետական դեւերի հալածիչ է, Բելիարին [Դատ. Ի 13] ջախջախող, բանսարկուին կործանող, նրա բոլոր յարձակումները խափանող եւ կորստեան ամօթ: Եւ քանի որ սատանան զիտի, որ մարդն աղօթելիս շնորհ է ստանում Աստծուց, ուստի ջանում է աղօթքի ժամին ցնորել մարդկանց մտքերը, որպէսզի զրկի շնորհներից, որոնք մարդ ստանում է մաքուր մտքով աղօթելիս:

Ուստի եւ մենք, իմանալով այս, նրան հակառակ հանապազ ջանանք անդադար մնալ աղօթքում: Եւ այն ժամին մեր սրտերը մաքրենք չարի բոլոր օտարամուտ խորհուրդներից

եւ միշտ աղօթենք առանց բարկութեան եւ երկմտութեան: Եւ մանաւանդ սրտանց աղօթենք թշնամիների համար, որպէսզի մեր ազաչանքն էլ ընդունելի լինի Աստուծոյ մօտ: Եւ յատկապէս աղօթքի ժամին մեր հոգիներում ընդունենք Քրիստոսի սիրոյ հուրը՝ յարատեւ պաղատանքներով արթուն լինելով Նրա առջեւ, առօրեայ հոգսերը թեթեւ համարելով յանուն մշտնջենաւոր բարիքների վայելքի:

Պարտաւոր ենք միմեանց համար աղօթել, օգնել ու փրկել միմեանց մարմնի եւ հոգու վտանգներից: Քանի որ եթէ մարտընկերներն զգուշանում են ոչ միայն [սեփական] անձի, այլեւ՝ ընկերոջ համար եւ մեռնում նաեւ ուրիշների համար, որչա՜փ առաւել եւս մենք ենք պարտաւոր հոգեւոր պատերազմում աղօթքներով եւ բազում բարեխօսութիւններով [միմեանց] օգնական լինել, ինչպէս սովորեցինք գլխաւոր առաքեալներ Պօղոսից, Յովհաննէսից եւ տեառնեղբայր Յակոբոսից:

Քանզի ասում է. «Միմեանց համար աղօթեցէ՛ք, որպէսզի բժշկուէք. քանզի արդարի աղօթքը խիստ զօրաւոր է օգնելու համար» [Յակ. Ե 16], իսկ Պօղոսն ասում է. «Զգոյշ լի-

նենք միմեանց համար սիրոյ եւ բարի գործերի յորդորներով» [Եբր. Ժ 24]: Եւ դարձեալ, թէ՝ «Ամենայն աղօթքներով եւ աղաչանքներով ամէն ժամ աղօթեցէ՛ք հոգով եւ Նոյնի մէջ տքնեցէ՛ք ամենայն ժուժկալութեամբ եւ աղաչանքներով բոլոր սրբերի համար» [Եփես. Զ 18]: Այսինքն՝ նաեւ բոլոր քրիստոնեաների, եւ աւելացրեց, թէ՝ «նաեւ ի՛նձ համար»:

Եւ եթէ Պողոսն աշակերտների աղօթքների կարիքն ունէր, որչափ առաւել եւս մենք կարիք ունենք միմեանց համար աղօթելու. եւ մենք, ուրիշների համար աղօթելով, ուրիշների աղօթքները կշահենք մեզ համար: Իսկ Յովհաննէսը ոչ միայն աղօթքների պարտաւորեցրեց մեզ, այլեւ՝ մահուան: «Յիսուս,– ասում է,– իր կեանքը դրեց մեզ համար, մենք էլ պարտաւոր ենք մեր եղբայրների համար դնել մեր կեանքը» [Ա Յովհ. Գ 16]: Եւ եթէ պէտք է մեզ մեռնել ամենքի համար, ինչպէս ասում է [առաքեալը], ապա առաւել եւս [պէտք է] աղօթել ամենքի համար:

Քանզի Նա, Ով աղօթքների վարդապետն է եւ ընդունիչը, հրամայում է ամենքի Հօրն աղօթել ո՛չ յատուկ անձի համար, այլ բոլորի՝ «Հայր մեր» ասելով, քանզի սուրբ Աւազանով որդեգրացանք Նրան: Եւ այսպէս կարգաւ հայցում է բոլոր եղբայրների համար՝ «մեր եւ մեզ» եւ ո՛չ երբեք՝ «իմ եւ ինձ» ասելով. եւ մենք ճշմարիտ խաղաղութիւն խնդրենք:

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ († 1003)

Աղօթքն առաւել հարազատ եւ մերձաւոր է Աստծուն, քան ամէն մի առաքինութիւն, քանզի բոլոր միւսները որպէս հանդերձանք եւ պատրաստութիւն են Աստուծոյ մօտ մուտք գործելու համար, իսկ սա դէմ-յանդիման խօսակցութիւն է Աստուծոյ հետ: Քանզի ինչպէս որ երկրագործի ողջ աշխատութիւնը պտուղները հաւաքելու համար է, եւ խոհարարի տաժանումը՝ կերակրելու, այնպէս էլ ամէն մի բարեգործութիւն, զգաստութիւն եւ պարկեշտութիւն մտքի ճանապարհը հարթելու համար է, [որպէսզի] անզբաղապէս Աստուծոյ հետ, ինչպէս սիրելի բարեկամի, աղօթքով զրուցի եւ անձի ու աշխարհի բոլոր մարմնաւոր եւ հոգեւոր կարիքները [Նրա] առաջ դնի, Նրանից հայցի բոլոր բարիքների յաջողում եւ փրկութիւն թշնամու որոգայթից:

Եւ այս առաքինութիւնը միւսների պէս սահմանափակ չէ, այլ [կարող ենք] անսահմանաբար գործել ամէն ժամ՝ ըստ տէրունական հրամանի, որ ասում է. «Արթո՛ւն կացէք եւ ամենայն ժամ աղօթեցէ՛ք» [տե՛ս Մատթ. ԻԶ 41 եւ Ղուկ. ԺԸ 1]: Ինչպէս որ Ինքը՝ բոլոր աղաչանքներն Ընդունողը, որպէս մեզ օրինակ եւ յորդոր, բազում անգամ ողջ գիշեր աղօթում էր Աստծուն: Եւ առաքեալը, Նրանից ուսանելով, ասում էր. «Ամէն ինչի համար գոհացէ՛ք, անդադար աղօթեցէ՛ք» [տե՛ս Ա Թես. Ե 18]: Քանզի այսպէս է պատշաճ նախ տրուած բարիքների համար գոհանալ եւ ապա առաջիկայի համար խնդրել: Եւ ոչ միայն անձի եւ տան, որդու եւ ընտանիքի համար անել այս, այլեւ՝ ամբողջ աշխարհի, [որպէսզի] Նա տնօրինի իւրաքանչիւրի հոգու եւ մարմնի կարիքները եւ օգուտները: Առաւել եւս [պէտք է աղօթել] թշնամիների եւ ատելիների համար ըստ Տիրոջ խօսքի, թէ՝ «Օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին եւ աղօթեցէ՛ք նրանց համար, ովքեր ձեզ լլկում եւ հալածում են» [տե՛ս Մատթ. Ե 44]: Քանզի աղօթքը հալածում է ամէն տեսակ ատելութիւն ու ոխակալութիւն, որովհետեւ ինչպէ՞ս կարող է ոխակալութեամբ լինել նրանց հանդէպ, որոնց համար ճշմարիտ եւ աներկբայ սիրով աղօթք է անում եւ փրկութիւն հայցում Տիրոջից:

Պէտք է ամբողջ սրտով թողնել պարտապանների եւ սիրով աղօթել նրանց համար. այսպէս մեզ Աստուած իշխանութիւն տուեց մեր մեղքերի թողութեան համար, քանզի ինչ սրտով թողնում ենք նրանց պարտքերը եւ սէրն ու գութ ցուցաբերում նրանց հանդէպ, նոյն չափով էլ Աստուած մեր յանցանքներն է թողնում եւ Իր արարչական սէրն ու գթութիւնը սփռում մեզ վրայ:

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ († 1160)

Քանզի ուսուցանելիս ասաց. «Մի՛ եղէք շատախօս հեթանոսների պէս» [Մատթ. Զ 7], որպէսզի չկարծեն, թէ երկար աղօթելն անշնորհ բան է. նոյնիսկ Ինքը, որ աղօթքի կարիք չունէր, ողջ գիշեր աղօթում էր Աստծուն, որպէսզի սովորենք, թէ շատախօսութիւն է ոչ թէ բազում աղերսները, այլ դատարկ եւ տհաճ բարբառելը:

Որպէսզի ծոյլերը չկարծեն, թէ շատ աղերսները անպէտք բաներ են, եւ փոքր-ինչ աղօթելն է լաւ, ասում է. «Արթո՛ւն եղէք եւ ամենայն ժամ աղօթեցէ՛ք» [Ղուկ. ԻԱ 36]. եւ Ինքը ողջ գիշեր աղօթում էր Աստծուն:

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ († 1167)

Արդ, եթէ Մաթուսաղայի երկար ժամանակը ստանալով, որ շուրջ հազար տարի ապրեց [տե՛ս Ծն. 27]՝ նոյնքան ժամանակով երկարաձգէինք մեր կեանքը եւ այդ ամբողջ ժամանակն Աստծուն անձանձիր փառաւորելով անցկացնէինք, Նրան արժանի փառաբանութեան մի մասն իսկ չէինք կարող վճարել, ուր մնաց՝ ամբողջը: Ուստի փառաւորենք Աստծուն եւ այս բանում նմանուենք հրեշտակներին, որոնք յաւիտեան փառաւորում են Տիրոջը:

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ († 1173)

Ցաճա՛խ աղօթեցէք, քանզի աղօթքներն են, որ բարձրացնում են մարդկանց առ Աստուած եւ Աստծուն խոնարհեցնում դէպի մարդիկ:

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ († 1198)

«Զգիտենք, թէ ինչի մասին աղօթել եւ ինչպէս է արժան, սակայն Հոգին Ինքն է բարեխօս լինում անմռունչ հեծութիւններով» [Հռոմ. Ը 26–27], այսինքն՝ ոչ թէ մեր ձայներն ու աղաղակն են յայտնում Նրան հոգիներիս իղձերը, այլ՝ մտաւոր թախանձանքները: Քանզի երբ հոգուդ զգայական ազդեցութիւնները ամփոփում ես ներսում եւ ապա անմռունչ հեծեծում քո մէջ, թէպէտ եւ չգիտես, թէ կհասնի դա Աստծուն, սակայն Հոգու շնորհը, որ քեզանում է, տեսնում է քո հոգու փղձկումը եւ, ծանուցուելով այդ մասին եւ քեզանից վերցնելով նիւթը, Ինքը մտնում է այնտեղ, ուր չկարողացար բարձրանալ, եւ բարեխօսում քեզ համար, քանզի հեզ է եւ մարդասէր:

Խօսքերի տեղեկութեամբ աշխատում ենք մեր անձերում ճանապարհ բացել իղձերի ու փափագման, հառաչման ու արտասուքների համար, որպէսզի չլինի թէ միայն լեզուով լինենք աղօթքի մէջ եւ մտքով անպտուղ մնանք նրանից, այլ, մտքի տեսութեան առջեւ քննելով աղօթքի վայելչութիւնը, թերեւս, ցանկանք ձեռք բերել այն մտքի մաքրութեամբ, հառաչմամբ եւ արտասուքով:

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ († 1235)

Տե՛ս, թէ որքան մեծ է աղօթքի օգուտը, որովհետեւ Աստծուն ուղղուած աղօթքի միջոցով, սուրբերի բարեխօսութեամբ շատ որոգայթներ ու պատուհասներ են խափանւում:

Ով աղօթելիս մարմնաւոր փառք, մեծութիւն կամ հարստութիւն է խնդրում Աստծուց, այնպիսին բարկացնում է Աստծուն եւ չի հաշտեցնում: Նա նման է այն ապուշ կտրած խելագարին, որը գնաց ողորմած թագաւորի մօտ եւ, արհամարհելով պայծառ ոսկին ու լուսաւոր մարգարիտը, ժահահոտ աղբ խնդրեց նրանից: Այս պատճառով էլ Տէրն ասաց. «Աղօթելիս հեթանոսների պէս շատախօս մի՛ եղէք» [Մատթ. Զ 7]: Քանզի նրանք յարութեան յոյս չունեն եւ այս կեանքի մասին են միայն հոգում ու խնդրում: Իսկ դուք Արքայութիւնը փնտրէք, որովհետեւ երկնաւոր Հայրը գիտի ձեր մարմնաւոր պէտքերը եւ ձեզ համար կպատրաստի կերակուր, զգեստ եւ անհրաժեշտ ամէն բան:

Աստուած կամենում եւ ուրախանում է, երբ մենք աղօթում ենք ամբողջ աշխարհի համար՝ արդարների ու մեղաւորների, կենդանիների ու

ննջեցեալների, հեռաւորների ու մերձաւորների, առաւել եւս նրանց համար, ովքեր չարիք են կամենում կամ գործում մեր նկատմամբ: Աղօթքի միջոցով հանենք քէնն ու ոխը մեր մտքից եւ յետոյ միայն Աստծուց մեր յանցանքների թողութիւն խնդրենք: Արդ, սա է ընդունելի եւ Աստուծոյ կամքին հաճելի աղօթքը:

Աղօթքով մարդ զրուցում է Աստուծոյ հետ եւ հաւասարւում հրեշտակներին: Առաւել եւս այն ժամանակ, երբ ջերմ, արծաթափայլ արտասուքը բխելով՝ իջնում, լուանում է աչքերն ու մորուքը եւ միեւնոյն ժամանակ ջնջում մարդու ներսում եղած մեղքերի շարաւը: Եւ սիրտն սկսում է փղձկալ, ճմլուել եւ բորբոքուել Աստուծոյ սիրոյ կրակով: Ապա միտքը, համբառնալով առ Աստուած, տեսնում է հանդերձեալ աշխարհն ու արդարների հանգիստը, յիշում է մարդկային ցեղի կործանումը, երբ զրկուեցինք հայրենի ժառանգութիւնից, մտաբերում է նաեւ իր անձի մեղքերն ու յանցանքները, նաեւ բոլոր մեղքերը, որոնք գործւում են աշխարհում: Սիրելի՛, ահա՛ երկրորդ աւազանը, ահա աղօթքի քաղցր ճաշակումն ու ցանկալի թմրութիւնը. այն նման է սերովբէների թմրութեանն

ու քաղցր ճաշակմանը, որն ունենում են Աստուածութեան բուրմունքից: Ո՞վ կդիմանայ այն երանելի պահին, երբ Աստուծոյ այս շնորհներից մի նշոյլ հանդիպի կամ պատահի իրեն: Երկինքն իր լուսատուներով եւ աշխարհն իր բարիքներով չեն կարող հաւասարուել այդ վայրկեանին: Ուստի, աղաչում եմ՝ չծուլանանք, այլ արիաբար աղօթենք միշտ՝ օր ու գիշեր, քուն թէ արթուն, քայլելիս թէ նստած ժամանակ, առաւօտեան թէ երեկոյեան, աշխատելիս թէ հանգստանալիս, այսինքն՝ միշտ օրհնենք եւ փառաբանենք Աստծուն, որովհետեւ, ո՞վ գիտէ, դուցէ աստուածային այդ շնորհներից մեզ էլ պատահի մի ցանկալի պահ, երբ ջերմ արտասուքը կլուանայ մեր հոգու վէրքերի թարախը եւ լոյսի իւղ կդառնայ մեր լապտերներում:

Աղօթենք անդադար, որովհետեւ սա է անուշահոտ խունկը, որ ծխւում է Աստուծոյ առաջ ոսկէ բուրվառով, որն էլ հաճելի է Աստծուն: Աղօթքով միշտ բախենք Արարչի գթառատութեան դուռը, եւ Նա կբացի Իր անմահ առագաստի դուռը: Աղօթքը սանդուղք է երկրից մինչեւ երկինք, լոյս է խաւար ճանապարհին,

մնայուն պաշար է մշտնջենաւոր կեանքի համար: Ուստի ջանանք սուրբ մտքով արիաբար աղօթել այս կեանքում, որպէսզի սրանից յետոյ արժանանանք անպատում բարիքներին ու յաւիտենական կեանքին մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրութեամբ, Որով եւ Որի հետ էլ օրհնեալ է ամենակալ Հայրը, կենդանարար ու ազատող Սուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՈՑԻ († 1345)

Մեծ զօրութիւն ունի աղօթքը, մանաւանդ՝ գիշերային աղօթքը: Ինչպէս որ Պօղոսն ու Շիղան, գիշերն աղօթելով, շղթաները քանդեցին եւ բանտի դռները բացեցին [Գործ. ԺԶ 25–27], նոյնն անենք եւ մենք՝ բանալով ոչ թէ բանտը, այլ՝ երկինքը: Եղիան աղօթքո՛վ փակեց եւ բացեց երկինքը [Գ Թագ. ԺԷ 1, ԺԸ 1–46]: Զմոռանանք, որ երկնքում եւս դաժան շղթաներ կան, ինչպէս Քրիստոս ասաց. «Ինչ որ երկրի վրայ կապէք, երկնքում եւս կապուած կմնայ» [Մատթ. ԺԸ 18]:

Իսկ թէ աղօթքն իսկապէս սրբում է մեղքերը, մեզ վստահեցնում են այրի կինը, որ աղա-

չում էր անիրաւ դատաւորին [Ղուկ. ԺԸ 1–8], Քրիստոսի առակի մէջ ակնարկուած բարեկամը, որ գիշերն իր դրացու դուռն էր բախում շարունակ [Ղուկ. ԺԱ 5–8]. Կոռնելիոսը եւս համոզում է մեզ, ում հրեշտակն ասաց. «Կատարածդ աղօթքներն ու ողորմութիւններն Աստուծոյ առջեւ յիշուեցին» [Գործ. Ժ 31]. Նաեւ Գօդոսը, որ ասում է. «Աստծուն յուսացող եւ սպասող ճշմարիտ այրին աղօթում է գիշեր ու ցերեկ» [Ա Տիմ. Ե 5]: Եթէ այրի կինն այս բանին պարտական է, որքան առաւել՝ տղամարդիկ եւ ամուսնացած կանայք: Հետեւաբար, ծունկի՛ արի, հեծեծի՛ր, արտասուի՛ր, յիշի՛ր թագաւորին, որ ասում է. «Ցոգնեցի հեծեծելուց, ամբողջ գիշերը մահիճս լուացի եւ արցունքներով անկողինս թրջեցի» [Սաղմ. Զ 7], նաեւ՝ «Գիշերը վեր էի կենում խոստովանելու համար» [Սաղմ. ՃԺԸ 62]:

Արդեօք ինչո՞ւ Քրիստոս լերան վրայ առանձին, ամբողջ գիշերն Աստծուն աղօթելով էր անցկացնում. որպէսզի մեզ օրինակ լինէր: Ինչպէս որ բոյսերն ու պտղաբեր տունկերը, ցերեկն արեւի տաքութիւնից այրուելով, գիշերային ցօղով դարձեալ թարմանում են, նոյնպէս ձեր հոգիներն ու մտքերը, որոնց ցերեկը մեղքի ջերմութեամբ եւ բազմատեսակ մեղքերով տոչորում էք կամայ թէ ակամայ, դարձեալ գիշերային աղօթքի արցունքներով զովացրէ՛ք, որպէսզի կրկին դալարեն. իսկ եթէ այդ ցօղը չտանան, ցերեկը կայրուեն, որ քաւ եւ մի՛ լիցի:

Պէտք է միշտ յիշել Աստծուն, մանաւանդ՝ գիշերը, երբ միտքը բաժանւում է զգայութիւններից: Թէեւ ցերեկն էլ ենք յիշում, սակայն այլ հոգսեր, մեր մէջ մտնելով, ջնջում են Նրա յիշատակը: Իսկ գիշերը դիւրին է Նրա մասին մտածելը, ինչպէս որ ասում է [Դաւիթ մարգարէն]. «Ինչ որ ասէք ձեր սրտերում, գիշերն անկողնում զղջացէ՛ք» [Սաղմ. Դ 5]:

Պէտք է ցերեկն էլ նոյնն անենք, բայց որովհետեւ զբաղուած ենք աշխարհի հոգսերով, դէթ քնելու ժամանակ յիշենք Աստծուն, որպէսզի առաւօտեան դէմ էլ Նրան մտաբերենք: Այս կերպով զգուշութեան մէջ կպահենք մեր սիրտը, որովհետեւ երբ աղօթքով Աստուծոյ հետ հաշտուես, այլեւս ոչ մի թշնամի չես ունենայ. նոյնիսկ եթէ ունենաս, չե՛ս վախենայ, երբ Աստուած հետդ է:

Տեսնում եմ՝ ոմանք խօսում են աղօթքի ժամանակ, իսկ ուրիշները՝ ոչ միայն աղօթքի պահին, այլեւ՝ երբ քահանան խաղաղութիւն է տալիս ժողովրդին: Ի՞նչ սարսափելի բան, ինչպէ՞ս կարող ենք, այս բաներն անելով, հաշտուել Աստուծոյ հետ: Ինչպէս որ պատերազմի զինուորները միմեանցից առաւել ամուր են բռնուում, նոյնը պէտք է այստեղ աննենք, որովհետեւ աղօթքի ժամին ամէնքս էլ սատանայի հետ ենք մարտնչում, եւ նա՝ մեզ հետ: Եւ ինչպէս պատերազմի ժամանակ փոքր նահանջը շատերին է վնասում, նոյնպէս քչերն իրենց անկարգութեան պատճառով շատերին զրկում են աղօթքի շահից:

Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ († 1409)

Պէտք է, որ աղօթողի սիրտը ցրուած չլինի:

Հարկ է իմանալ, որ աղօթքը ե՛ւ մարմին է, ե՛ւ հոգի: Մարմինն աղօթքի խօսքերն են, որոնք լսելի են, իսկ հոգին սրտից դուրս եկող եւ Աստծուն հաճոյ իղձն ու սէրն է: Ինչպէս որ երեւացող մարմինն ունի անտեսանելի հոգի, եւ նա՛ է մարմինը շարժողն ու [նրա] կենդանութիւնը, այնպէս էլ աղօթքի մարմնի կենդանութիւնը սրտի բաղձանքն է եւ սէրն առ Աստուած՝ ըստ Նրա կամքի շարժուելու: Կամ, օրինակ, երբ հոգին նուազում է, մարմնի նիւթը բնաւ չի նուազում, այլ տեսքը նոյնն է: Այդպէս եւ աղօթքը, սրտի բաղձանքներից ելնելով, կենդանի է եւ հաճելի Աստծուն, ուստի ասում է, թէ՝ «Կենդանի է սրբերի աղօթքը» [Յայտ. Բ 4], իսկ նա, ով չունի սրտի բաղձանքը, այլ միայն՝ աղօթքի խօսքերը, այնպիսին մեռած մարմին է, եւ աղօթքից միայն նիւթն է մնացել, եւ ոչ՝ հոգին:

Ինչպէս խունկը, հրին չհպուելով, անուշ հոտ չի բուրում, այնպէս էլ աղօթքի խունկը, սրտի սիրոյ ջերմութեանը չհպուելով, հաճելի չէ Աստծուն: Եւ ինչպէս խնկի ծուխը դրսից երեւում է, իսկ անուշ հոտը՝ ո՛չ, այնպէս էլ աղօթքի խօսքերը, առանց սրտի բաղձանքի, ծխի կուտակում են միայն եւ ընդունելի չեն:

Աղօթքը հոգու կենդանութեան նշանն է, ուստի եւ պէտք է միշտ եռանդուն լինել աղօթելու մէջ, իսկ եթէ [աղօթքը] դադարում է, նշանակում է, թէ մեռած է հոգին:

Բաղում են աղօթքի խորհուրդները, բայց մենք ո՛չ շատ՝ տասը գլխով կյայտնենք: Նախ՝

աղօթքը խօսք է Աստուծոյ հետ: Եւ մեծութիւնն այս է, որ երբ ընթերցում ենք, Աստուած է մեզ հետ խօսում, եւ երբ աղօթում ենք, մենք ենք Աստուծոյ հետ խօսում: Եւ եթէ փառք ու պատիւ է մեզ, երբ խօսում ենք երկրաւոր թագաւորների հետ, որքա՞ն է [հապա], երբ Աստուծոյ հետ ենք խօսում: Իսկ եթէ թագաւորների առաջ ահով, խելացի եւ վայելուչ ենք խօսում, որպէսզի չանարգուեն, առաւել եւս պէտք է ահով, իմաստութեամբ եւ կարգով խօսել աղօթելիս: Երկրորդ՝ աղօթքով մենք մտքով Աստուծոյ հետ ենք լինում, եւ Աստուած բնակւում է մեզանում, ըստ այնմ՝ «Ես եւ Հայրը նրա մօտ կգանք» [Յովհ. ԺԴ 23], նաեւ ասում է, թէ Սուրբ Հոգին սկզբից բնակուած էր աղօթողի հոգում «եւ բարեխօս էր լինում անմռունչ հեծութիւններով» [Հռոմ. Ը 26]: Երրորդ՝ աղօթքներով սատանան հալածական է լինում, ինչպէս խաւարը՝ լոյսից, եւ այնժամ նրա բոլոր որոգայթներն ու փորձութիւնները կորչում են, ինչպէս Տէրն է ասում. «Այս տեսակ դեւն այլ կերպ դուրս չի ելնում, եթէ ոչ՝ աղօթքով եւ պահեցողութեամբ» [Մատթ. ԺԷ 20]: Չորրորդ՝ աստուածազգաց եւ հրեշտակներին հաւասար ենք լինում, երբ աղօթում ենք եւ մտքով առ Աստուած ելնում: Հինգերորդ՝ մեր բոլոր գործերն աղօթքներով յաջողւում են եւ կատարւում, քանի որ ամէն գործում մարդ օգնականի կարիք է զգում, եւ երբ աղօթում ենք, Աստուած օգնական է լինում՝ լինի վաստակ, թէ՛ ձեռագործ, թէ՛ ճանապարհ եւ այլն: Իսկ եթէ չենք աղօթում, սատանան ամէն գործում հակառակում եւ խանգարում է: Վեցերորդ՝ աղօթքը հոգու եւ մարմնի զօրութիւնն է: Որպէս նեցուկ հաստատում է տունը եւ վերցնում տկարութիւնը, ինչպէս Յոբն աղօթքներով վերստին զօրացաւ եւ առողջացաւ տկարութիւնից: Նաեւ տան շինութիւնն է, ինչպէս որ Յոբի տունն աղօթքներով կրկին շինուեց աւելի լաւ, քան նախկինն էր: Եօթներորդ՝ աղօթքը յաղթում է պատերազմը, ինչպէս Մովսէսն աղօթքներով՝ Ամաղեկին, Դաւիթն՝ այլազգի Գողիաթին, եւ Յոբը՝ թշնամի սատանային: Այսպէս եւ մենք ենք աղօթքներով յաղթում, երբ թէ՛ հոգեւոր եւ թէ՛ մարմնաւոր պատերազմ է լինում: Ութերորդ՝ աղօթքը արտի մխիթարութիւնն է. տրտմութիւնը հեռացնում է, հոգին թեթեւացնում, մեզքերը սրբում, միտքը պա-

հում եւ լուսաւորում, ինչպէս ասում է Դաւիթը. «Ինչո՞ւ ես տրտում, ա՜նձ իմ, յուսա՛ առ Աստուած, խոստովանի՛ր Նրան, քո անձի փրկիչն Աստուած է» [Սաղմ. ԽԲ 11]: Իններորդ՝ աղօթքով խաղաղութեամբ ենք ննջում եւ համարձակ արթնանում: Կեանքում յոյսով ենք եւ մահից յետոյ Աստուծոյ մօտ ենք մտնում: Այս է ասում Դաւիթը. «Խաղաղութեամբ կննջենք սրա եւ սոյնի մէջ» [Սաղմ. Դ 9], այսինքն՝ աղօթքներով: Տասներորդ՝ աղօթքը գոհութիւն եւ շնորհակալութիւն է Աստուծոյ երախտիքներին, որ արեց մեզ համար թէ՛ անցեալում՝ ստեղծելով մեզ համար երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը եւ այլն, թէ՛ ներկայում, որ ամէն բարութիւն մեզ է տուել՝ կեանք, խաղաղութիւն, առողջութիւն, հոգի, մարմին, շունչ, խօսք, միտք եւ այլն, ինչպէս ասում է առաքեալը. «Նրանով ապրում, շնչում եւ ե՞նք» [Գործ. ԺԷ 28]: Եւ հանդերձեալում խոստացել է յարութիւն, արքայութիւն եւ անմահութիւն, հրեշտակներին հաւասար մեծութիւն եւ փառք. «Ինչ որ աչքը չտեսաւ, ականջը չլսեց եւ մարդու սիրտը չընկալ, Աստուած պատրաստեց իր սիրելիների համար» [Ա Կոր. Բ 9]:

Հարկ է իմանալ, որ մեզ տաս քանից է պէտք զգուշանալ աղօթքի վայրում: Նախ՝ աղօթքի վայրում պէտք չէ զրուցել, որովհետեւ աստուանային է խօսակից նա, ով զրուցում է, քանի որ մեր խօսակիցն այստեղ Աստուած է, իսկ Նրան թողնել եւ ուրիշ մէկի հետ զրուցել պատշաճ չէ: Երկրորդ՝ աղօթքի տեղում պէտք չէ ոչ միմեանց նայել եւ ոչ՝ կնոջ, որպէսզի սատանան արատ չներմուծի մեր մէջ՝ աղօթքի փրկութեանը հակառակ: Երրորդ՝ պէտք չէ աչք տնկել քաղցրանուագ ձայնին կամ աղտեղի գիջական խօսքերին, որպէսզի երգողը չհպարտանայ եւ ձրի աշխատի: Չպէտք է ծիծաղել, այլ՝ լալ, որովհետեւ այն լալու, արտասուելու տեղ է, քանզի. «Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում էք,– ասում է Տէրը», եւ «Երանի՛ նրանց, որ այժմ լալիս են» [Ղուկ. Զ 21, 25]: Հինգերորդ՝ չպէտք է մաղել մտքերը խօսքից, քանի որ աղօթքը խօսք է Աստուծոյ հետ. պէտք է միտքն ու խօսքը միասին յարմարեցնել եւ զգուշութեամբ աղօթել: Վեցերորդ՝ չպէտք է ննջել աղօթքի տեղում, այլ՝ արթուն մնալ, ըստ այնմ՝ «Արթո՛ւն կացէք, քանի որ չգիտէք...» [Մատթ. ԻԴ 42]: Եւ եթէ այնտեղ ննջում ես, ի՞նչ տար-

բերութիւն տանը ննջելուց, եւ եթէ քնի համար ես գալիս, աւելի լաւ է չգալը: Եօթներորդ՝ չպէտք է առանձնական աղօթքն աղաղակելով ասել, այլ՝ սրտում գոչել, ինչպէս Մովսէսը ծնկեց երեսն ի վայր եւ սրտում աղօթեց. եւ այս մասի՞ն է ասում. «Ինչո՞ւ ես աղաղակում Ինձ» [Ելից. ԺԴ 15]: Եւ Տէրը սովորեցրեց. «Մտի՛ր քո սենեակը, փակի՛ր քո դռները» [Մատթ. Զ 6]: Ութերորդ՝ չպէտք է անունկնդիր լինել աղօթքի խօսքերին, այլ ունկերով եւ մտքով հետեւել աղօթքին, եւ երբ ինքը չի ասում բերանով, [թո՛ղ] ուրիշների աղօթքը լսի եւ միտքն առնի. այդպէս էլ Սուրբ Գիրքն ընթերցելիս «ո՛ւշ դիր ընթերցուածներին» [Ա Տիմ. Դ 13],– ասում է առաքեալը: Իններորդ՝ պէտք չէ շտապել, թէ՝ ե՞րբ եմ ելնելու ժամատեղից: Որքան որ խնդրում են, այնքան էլ ստանում են, ըստ այնմ էլ՝ «Ով փնտրում է՝ գտնում է» [Ղուկ. ԺԱ 16], եւ մեր Տէրն էլ ողջ գիշերն աղօթքի մէջ էր անցկացնում: Տասներորդ՝ չպէտք է մտադրուել, թէ՝ երբ ելնեմ աղօթքից, այս կամ այն չար [գործն] անեմ, այլ՝ մտքում պահել այն, որ բոլոր պարտականներին թողնի, որպէսզի եւ իրե՛նը թողնուի:

Հարկ է իմանալ, որ աղօթքի սրբութիւնները երեքն են՝ սրտի սրբութիւն, լեզուի եւ ձեռքերի, քանզի աղօթքը երեք բանով է կատարուում՝ սրտով, լեզուով եւ ձեռքերով: Ձեռքերի սրբութիւնն այն է, որ ասում է առաքեալը. «Կամենում եմ, որ մարդիկ աղօթեն բոլոր տեղերում, սուրբ ձեռքեր բարձրացնեն դէպի վեր» [Ա Տիմ. Բ 8], այսինքն՝ ձեռքերը մաքուր պահել ագահութիւնից, զրկանքներից, արիւնից եւ այլն: Իսկ լեզուի սրբութիւնն՝ ինչպէս Տէրն աղօթեց. «Հա՛յր, նե՛ր դրանց, քանզի չգիտեն՝ ինչ են անում» [Ղուկ. ԻԳ 34], այսինքն՝ պէտք է Աստծուն աղօթել՝ զերծ մնալով բարկութիւնից խօսքերի եւ գործերի մէջ: Եւ սրտի սրբութիւնն իր, ընկերների եւ Աստուծոյ հանդէպ է: Ի՛ր հանդէպ՝ որ մաքուր լինի մեղքերից. եւ [այս դէպքո՛ւմ] Աստուած կլսի, քանզի մարգարէն ասում է. «Եթէ մեղք տեսնէի իմ սրտում, մի՞թէ Տէրն ինձ կլսէր» [Սաղմ. ԿԵ 18]: Եւ [սրբութիւնն] ընկերոջ հանդէպ՝ որ նենգութիւն եւ խէթ չունենայ իր ընկերոջ նկատմամբ. այնժա՛մ Աստուած կլսի: Իսկ Աստուծոյ հանդէպ՝ որ սրտի զգաստութեամբ պէտք է այսպէս աղօթել իբրեւ թագաւորի, տիրոջ, դատա-

ւորի եւ բարեկամի. այսպէս աղօթելու դէպքում Աստուած կատարում է ամէն ցանկութիւն: [Որպէս] թագաւորի [աղօթում ենք], քանզի հաւատում ենք, թէ ամենակարող է, ինչ էլ խնդրում ենք Նրանից, կարողանում է տալ: Որպէս տիրոջ՝ «քանի որ ծառայի աչքն իր տիրոջ ձեռքին է» [Սաղմ. ՃԻԲ 2], պէտք է սրտով կողկողագին պաղատել: Որպէս դատաւորի եւ գործեր քննողի՝ քանզի մենք դատւում ենք Նրա առջեւ եւ խնդրում, որ չդատապարտի: Եւ որպէս բարեկամի ենք [աղօթում], որպէսզի ամէն բան, ինչ խնդրում ենք, կամենայ տալ մեզ, ինչպէս բարեկամը, որ աղերսագին խնդրեց եւ ստացաւ: Համառօտ այսպէ՛ս է. քանի որ թագաւոր է եւ տէր, կարող է տալ, քանի որ դատաւոր է, գիտի տալ, եւ քանի որ բարեկամ է, կամենում է տալ: Ահա այսպէս մեր բոլոր խնդիրքներն Աստուծոյ հաճութեամբ են կատարւում:

Ինչպէս պատկերն արտացոլւում է յստակ հայելու մէջ, աչքերի լոյսն [անդրադարձնում է] արեգակի լոյսը, եւ [ինչպէս] ոսկու եւ արծաթի պայծառ ճառագայթումն է, այսպէս էլ աղօթողի յստակ միտքը ձգում է Սուրբ Հոգու պայծառ լոյսը եւ լուսաւորւում: Այսպէս սրբերն, ըստ Տիրոջ խօսքի, աղօթքներով տեսնում են Աստուն, որոնցով մեզ մեր Քրիստոս Աստուածն Իրեն տեսնելուն թո՛ղ արժանացնի:

ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ († 1780)

Բոլոր աստուածաբանները, որ եկել են կամ գալու են, եթէ ի մի գալով կամենան խօսել աղօթքների մասին, չեն կարենայ բաւականապէս ճառել նրա զօրութիւնից: Քանի որ աստուածաշնչեան բոլոր գրքերում՝ թէ՛ հին եւ թէ՛ նոր, որքան հրաշք ու մեծագործութիւն եղել է, տեսնում ենք, որ աղօթքների շնորհիւ է [կատարուել], ինչպէս յայտնի իսկ է:

Պահքի համար կարող ես պատճառաբանել, թէ՝ տկար եմ եւ այլն: Ողորմութեան համար ասել, թէ՝ աղքատ եմ, ի՞նչ տամ: Ճգնութիւնների, հալածանքների, չարչարանքների, հաւատքի [գործերի] եւ այլ այսպիսի խստագոյն առաքինական գործերի համար կարող ես պատճառաբանել, թէ՝ դժուար են, չեմ կարող տանել: Իսկ աղօթքի համար առարկելու պատճառ բնաւ չունես: Քանզի ո՛ր հասակում, ո՛ր

կացութիւնում, ո՛ր ժամանակում եւ ո՛ր տեղում էլ մէկը լինի, թէ՛ ծեր, թէ՛ տղայ, թէ՛ հարուստ, թէ՛ աղքատ, թէ՛ առողջ, թէ՛ հիւանդ, կարող է աղօթել, եթէ կամենայ:

Ուրեմն տե՛ս՝ որքա՜ն նախատելի է աղօթքի մէջ ծոյլ մարդը, որ, ամէն ինչի կարօտ լինելով եւ պէս-պէս երեւացող եւ աներեւոյթ փորձութիւններով շրջապատուած, չի դիմում այնպիսի [բարիքներ] Տուողին, Ով Ինքն է յորդորում. «Խնդրեցէ՛ք եւ կտանք» [Մատթ. Է 7] եւ «Եկէ՛ք Ինձ մօտ, բոլոր յոգնածներդ ու բեռնաւորուածներդ, եւ Ես ձեզ կհանգստացնեմ» [Մատթ. ԺԱ 28]:

Ըստ սուրբ վարդապետների՝ ինչպէս որ երկիրը երկնքի կարիքն է զգում, որ ընդունի նրանից ցօղ, անձրեւ, ջերմութիւն եւ այլն, որովհետեւ առանց դրանց գոյատեւել չի կարող, այնպէ՛ս էլ մարդը կարօտ է աստուածային պէս-պէս շնորհների եւ օգնութիւնների, առանց որոնց ասես մեռած է հոգով, թէպէտ եւ մարմնով կենդանի լինի: Ուրեմն՝ ինչպէս որ դիմում են աղքատները հարուստներին, հիւանդները՝ բժիշկներին, թոյլերն՝ ուժով կարողներին, եւ ծարաւներն՝ աղբիւրին, այնպէս էլ մարդը, լինելով կարօտ ամէն ինչի, անզօր ըստ հոգու եւ մարմնի՝ պարտաւոր է միշտ դիմել Աստծուն ու մնալ աղօթքի մէջ եւ Նրանից օգնութիւն խնդրել:

Արդ, լսէ՛ք այն մասին, որ աղօթքի տեսակները երկուսն են՝ հասարակական եւ առանձնական: Հասարակական աղօթքը նման է մեր հասարակական պարտքի վճարմանը, որն ամէնքս հասարակապէս պարտք ենք Աստծուն: Քանի որ ստեղծեց մեզ ոչնչից, դարձրեց մեզ բանական, վերստին մեզ փրկեց սատանայի գերութիւնից եւ յարութիւն տուեց մեղքերի մեռելութիւնից, հանապազ պահպանում է մեզ եւ բաւարարում մեր հոգիների ու մարմինների կարիքները: Այս բոլորն իբրեւ պարտքեր են մեզ վրայ, եւ այս պարտքերն այն հասարակական աղօթքներով ենք ասես վճարում, երբ ամէնքս, կարգուած ժամին գնալով եկեղեցի, միաբան աղօթում ենք:

Իսկ առանձնական աղօթքն այն է, որ բացի հասարակական աղօթքներից, երբ եւ ուր էլ ժողովուած լինենք, դիմենք Աստծուն:

Ուրեմն իմացի՛ր, որ թէպէտ հասարակական աղօթքներով ասես վճարում ենք մեր պարտ-

քերը, ինչպէս ասացինք, սակայն դա այդքան էլ շնորհ ու հաւատարմութիւն չէ, քանի որ լոկ մեր պարտքերը վճարեցինք: Որպէս թէ մէկը միւսից փոխ առնի հինգ դահեկան եւ յետոյ էլ վճարի նրան նոյն հինգ դահեկանը. արդ, ի՞նչ շնորհ արեց նա տուողին, քանի որ վճարեց այն, ինչ ստացել էր: Այլ ստացողի մեծ շնորհն ու հաւատարմութիւնն այն է, որ պարտքը վճարելիս մի բան աւել դնելով ընծայի տուողին. այնժամ կքաղցրանայ տուողը եւ իրենից խնդրողին առաւել եւս կտայ:

Այսպէս եւ մենք հասարակական աղօթքներով մեր պարտքերը վճարելիս, եթէ նաեւ առանձին ենք դիմում Աստծուն եւ մի յատուկ աղօթք աւել մատուցում Նրան [որն առանձնական աղօթքն է], այնժամ հաւատարիմ ենք կոչւում եւ կարող ենք ասել համաձայն քանքարաշահ ծառայի. «Տէ՛ր, հինգ քանքար տուեցիր ինձ, ահա հինգ քանքար եւս վրան շահեցի» [Մատթ. Իե 20]: Այնժամ Աստուած նոյնպէս, քաղցրանալով մեր հանդէպ, ասում է հաւատարիմ ծառային. «Որովհետեւ այդ քչի մէջ հաւատարիմ եղար, շատի վրայ կկարգեմ քեզ. մտի՛ր քո Տիրոջ ուրախութեան մէջ» [Մատթ. Իե 21]. եւ թէ՝ «Ով ունի, նրան պիտի տրուի եւ աւելացուի» [Մատթ. Իե 29), այսինքն՝ անցաւոր կեանքից յետոյ պիտի տայ քեզ նաեւ յաւիտենական կեանք:

ՊՕՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ
(† 1824)

Աղօթքն աստուածասիրութեան առաջին պտուղն ու անդրանիկ ծնունդն է. եւ որքան զօրաւոր է սէրը եւ բարձրաթռիչ, այնքան աղօթքի արդիւնքները սլանում են դէպի բարձունքները եւ մօտենում Աստծուն:

Եւ թէպէտ բոլոր առաքինական գործերի աղբիւրն ու արմատը սէրն է, սակայն աղօթքը նրանց մէջ առկայ է որպէս նախնական անապական ծորում եւ սկզբնական պտուղ:

Եւ արդարեւ, ոչ ոք իր անձը չի կարող անբասիր դարձնել, եթէ զանց առնի աղօթքը. քանզի ամէն ժամ եւ ամէնուր, երբ մարդ ի վիճակի լինի, թէ՛ առողջ եւ թէ՛ հիւանդ, կարող է մաքով յիշել Աստծուն, փառաւորել Նրան, գովել եւ օրհնել. եւ ա՛յս իսկ է աղօթելը:

Աղօթքի կանգնելիս նախ պէտք է փառաւորել, գովել եւ օրհնել Աստծուն, գոհանալ եւ շնորհակալ լինել Նրա անբաւ երախտիքների եւ մեր հանդէպ բարերարութեան համար:

Երկրորդ՝ ճանաչել մեր նուաստութիւնը եւ պարտականութիւնը, թէ պարտաւոր ենք միշտ խոնարհ հոգով, զգաստութեամբ եւ երկիւղով ծառայել Աստծուն, քանզի մեր Արարիչն ու Բարերարն է:

Երրորդ՝ մտածել մեր ապերախտութեան եւ մեղքերի մասին, որոնցով մեղանչեցինք Նրա մեծութեան դէմ:

Չորրորդ՝ խորհել Նրա համբերատարութեան ու գթութեան մասին, քանզի չի պատժում ըստ մեր յանցանքների, այլ խրատում է, որպէսզի դառնանք դէպի Ինքը եւ, որ մեզ պատժելիս արդար է Նրա դատաստանը:

Հինգերորդ՝ սրտով զղջալ, մտադրուել այլեւս չմեղանչել, կրել ապաշխարութեան լուծը, փնտրել մեղքերի քաւութիւն եւ շնորհներ, միշտ կարօտ ցոյց տալ մեզ Նրա ողորմութեանն ու օգնութեանը, որին թէպէտ եւ անարժան ենք, բայց [Աստուած] կամենում է շնորհել մեզ ըստ Իր մեծ ողորմութեան ու մարդասիրութեան. եւ թէ՝ մեր յոյսն անբեկմիտ է Նրա նկատմամբ, եւ Նրանից բացի մեզ համար չկայ յոյս եւ ապաւէն:

Աղօթքների մէջ Տէրունական աղօթքից աւելի մեծը չկայ, այսինքն՝ «Հայր մերից», որ նոյն Ինքը Քրիստոս՝ մեր Տէրը, ուսուցանեց. որից յետոյ՝ սաղմոսները, որ Դաւիթ մարգարէն գրեց Սուրբ Հոգու ազդմամբ, ապա՝ եկեղեցական աղօթքներն ու երգերը, որ սուրբ հայրերը Սուրբ Հոգու շնորհով խորհրդաբար կարգեցին:

Եւ թէպէտ աղօթքները յոյժ բազում են, բայց նրանց մէջ արեգակի պէս փայլում է մեր սուրբ Գրիգոր Նարեկացու աղօթական մատեանը: Ազգու է եւ պարզ սուրբ Շնորհալու «Հաւատով խոստովանիմը», որը թէ՛ տղամարդ եւ թէ՛ կին պարտաւոր են ուսանել եւ նրանով առ Աստուած աղօթել ամէն օր, ուր էլ գտնուին:

Քանի որ աղօթքը մտքի համբարձումն է առ Աստուած, պէտք է, որ աղօթելիս միտքը զերծ լինի բոլոր աշխարհային մտածումներից, եւ կամքը [լինի] բարի կամեցողութեան մէջ:

Մտքի դիտաւորութիւնը եթէ չի ընկերանում աղօթքին, ունայնաբար են շարժւում լե-

զուն եւ շուրթերը, քանզի աղօթքի մէջ առանց մտադրութեան մնալը անպտուղ աշխատութիւն է:

Մարմնական տրտմութիւնն ու կենցաղի հոգսերը խափանում են աղօթքի զօրութիւնը եւ անպտուղ դարձնում [այն]: Իսկ մեղքերի համար զղջացող սրտից ելնող տրտմութիւնը ապաշխարութեան կանոնի հետ օգնում է աղօթքի զօրութեանը եւ արդիւնաւորում շնորհների պարգեւները:

Առանձնական աղօթքը յոյժ օգտակար է, բայց անհրաժեշտ է նախ հրապարակականը կատարել եկեղեցում եւ ապա՝ առանձնականը: Իսկ եթէ որեւէ մէկը ծուլութեան պատճառով չգնայ եկեղեցի եւ համարի, որ առանձնական աղօթքով ազատւում է պարտքերից, մեծապէս խաբւում է, քանզի եթէ կայ եկեղեցին, եւ ինքը կարող է գնալ այնտեղ, [ապա] զանց առնելով մեղանչում է:

Որքան մարդիկ օտարանում են աղօթքից, այնքան Աստուծոյ շնորհը հեռանում է նրանցից՝ մինչեւ մեծամեծ մեղքերի մէջ ընկնելը, որ հոգու մահն է:

Ջերմեռանդ սրտով, խոնարհ հոգով եւ մաքուր մտքով կատարուող աղօթքը ոչ միայն ազատում է կենցաղի զանազան փորձանքներից, այլեւ՝ Աստուծոյ շնորհներն աճեցնում հոգում, որով մարդը կարողանում է օր ըստ օրէ արիանալ առաքինական ջանքերի մէջ եւ հասնել կատարելութեան գագաթին:

Աղօթքի մէջ անհրաժեշտ է խնդրել, որպէսզի Աստուծո՛յ կամքը կատարուի մեր մէջ եւ ոչ թէ՝ մեր կամքը. ըստ այնմ՝ «Ոչ թէ ինչպէս Ե՛ս եմ կամենում, այլ ինչպէս Դու ես կամենում» [Մարկ. ԺԴ 36]: Եւ սրանում են հաստատուած աղօթքի կատարելութիւնը եւ մարդկանց երջանկութիւնը: Քանզի նրա համար ենք աղօթում, որպէսզի հաճելի լինենք Աստծուն: Եւ այն ժամանակ ենք հաճոյանում Աստծուն, երբ Աստուծոյ կամքն է կատարւում մեր մէջ. իսկ ուր կատարւում է Աստուծոյ կամքը, այնտեղ բոլոր բարիքների լրումն է եւ երջանկութիւնը:

Աղօթելիս պէտք է խնդրել, որպէսզի Աստուած մեզ ջերմեռանդութեան շնորհ տայ. քանզի ինչպէս խունկն առանց հրի չի բուրում իր հոտը, նոյնպէս էլ աղօթքն առանց ջերմեռանդութեան արդիւնք չի տալիս:

Ով չի աղօթում Աստծուն, անբաններից էլ անբան է, անարժան՝ Աստուծոյ խնամքին, ապերախտ եւ ապաշնորհ՝ իր Բարերարի հանդէպ, քանզի ստանում է բարիքներն ու վայելում եւ չի ճանաչում բարիքները Տուողին ու չի փառաւորում:

Կոյր է միտքը, եթէ չի խոկում Աստծուն, համր է, եթէ չի աղօթում, խուլ է, եթէ չի լսում Աստուծոյ պատուիրանները, մեռած է, եթէ չի սիրում Աստծուն, թշնամի է Աստծուն, եթէ սիրում է այն, ինչ ատում է Աստուած. ամբարշտութիւն է խնդրել Աստծուց այն, ինչ Նա չի կամենում:

Աղօթքն անպարտելի զէնք է դեւերի դէմ պատերազմում, եւ քանզի դեւերը գիտեն, թէ աղօթքով պարտւում են մարդկանցից, այդ իսկ պատճառով առաւելապէս ջանում են խափանել կամ անպտուղ դարձնել մարդկանց աղօթքը:

Ուստի ով աղօթելիս ինչ-ինչ ձանձրոյթ եւ նեղութիւն է զգում, թող գիտենայ, թէ այն դեւերի որոգայթն է, եւ ոչ մի դէպքում չթուլանայ աղօթելուց, այլ առաւել զօրանայ ջանքերում՝ օգնութիւն հայցելով Տիրոջից: Եւ Աստուած, որ մերձ է նրանց, ովքեր փշրուած սրտով են աղօթում Իրեն, անմիջապէս օգնութեան կհասնի, իսկ դեւերն իսկոյն կհալածուեն ու կչքուեն:

Աղօթքի մէջ կարեւոր է եւ օգտակար դիմել Աստուծոյ սուրբերին՝ բարեխօսելու առ Աստուած, մանաւանդ՝ սուրբ Աստուածածնին. ուստի եւ Եկեղեցին իր բոլոր պաշտամունքներում կարգել է արժանաւոր մաղթանքներ սուրբ Աստուածածնին՝ ապաւինելով նրա անգառնալի բարեխօսութեանը:

Ս. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

«ՀԱՅՈՐ ՄԵՐ» ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

[Այս աղօթքը] բնոյթով պարզ է եւ խօսքի առաւել վեհութիւն ունի. դէպի վեր հայել տուեց եւ Աստծուն Հայր [անուանել] սովորեցրեց բոլորին. որդիներին անձկալի գութի համար ստիպում է դիմել Հօրը, եւ կարօտութեան կամքը Հօրը մղում է ողորմութեան գութի: Որդիներն էլ Հօր կամքի համաձայն պէտք է լինեն, ապա եւ Հայրը որդիների կամքի համաձայն նրանց կարիքները կհոգայ եւ Իր ողջ հարստութեանը ժառանգորդ կդարձնի նրանց: Հայր անունը մէկ է թէ՛ հոգեւորների եւ թէ՛ մարմնաւորների համար, [սակայն] տարբերւում են միմեանցից [նրա] գործածութիւնները՝ բաժանուելով [հոգեւոր եւ մարմնաւոր] մասերի: Երկրաւոր հայրերին մարմնի ցանկութեան ախտերը դրդեցին որդեծնութեան՝ ըստ ախտաւոր յոյութեան ախտաւոր որդիներ ծնելուն: Փոփոխական է [մարմնաւոր] հայրութիւնը. երբեմնի որդին դարձաւ հայր. նա հեռացաւ այս աշխարհի կեանքից, եւ նրանից վերցուեց հայրութիւնը, նրա տեղը եկաւ որդին եւ հայր դարձաւ եւ նոյն ճանապարհով գնաց: Այսպէս, փոխանորդութեամբ, աշխարհն իր վախճանին է հասնելու:

Մի է ճշմարիտ Հայրը եւ Արարիչը ողջ աշխարհի, որ առանց ախտերի յղացաւ եւ առանց ցաւերի ծնեց բոլոր երեւելիները եւ աներեւոյթները: [Եւ] Նա, Ով ծնեց, գալով սովորեցնում է որդիներին՝ դիմել երկնաւոր Հօրը, որպէսզի աշխարհը մշտապէս խանձարուրների եւ օրրոցների մէջ չմնայ՝ կաթնածուծների եւ ջամբակերների պէս՝ թաթախուած ու թաղուած դաշտերի ախտերի մէջ, որոնցից ձանձրացան մայրերն ու ստնտուները, եւ դէմքերը շրջեցին դայեակներն ու սնուցիչները: Եւ սրանք օրէնքը եւ մարդարէներն են. ծովում լուացին եւ չկարողացան սրբել, գետերով անցկացրին եւ չողողուեցին, օճառ գործածեցին, լուացուեցին բորակով եւ չսրբուեցին, իրենց վրայ վերցրին, սակայն գցեցին ու հեռացան:*

Գթաց երկնաւոր Հայրը, խոնարհուեց երկնքից երկիր, տեսաւ բոլորին արնաշաղախ, կապաշտութեան մեռելոտի զոհաբերութեան

*Ջամբակեր - մանկիկ, որ կերակրւում է ձեռքով

մէջ: Վերցրեց, լուաց, հագցրեց երկնաւոր հանդերձը եւ վերստին մօտեցրեց նոյն որդեգրութեանը: Սովորեցրեց հայրենի վարդապետութիւնը, որպէսզի դիմեն սիրելի երկնաւոր Հօրը: «Երբ,– ասում է,– աղօթքի կանգնէք, տղայաբար շատախօս չլինէ՛ք» [տե՛ս Մատթ. Զ 7], [քանզի] Աստուած սրտի խորհուրդները լսող է եւ բարի գործերի փոխարէն՝ բարին հատուցող: Բերանով այսքան վկայելը բաւական է. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը»:

Մարդկանց տրուած բոլոր պարգեւներից մեծ է այս պարգեւը՝ Աստուծոյ Հայր լինելը մարդկանց: Այս ասելու իշխանութիւնը չունեն հրեշտակները. թէպէտեւ հզօր են եւ հոգեւոր, [սակայն] սպասաւորներ են եւ ոչ՝ որդիներ: Ո՛վ մարդ, զգուշացի՛ր քո անձի համար, [տե՛ս, թէ] ինչպիսի պատուով մեծարուեցիր՝ մինչեւ իսկ Աստծուն քեզ Հայր անուանելու իշխանութիւն ստացար. ուստի այս բա՛նը եւս խորհիր, որ Հօր պատուի համաձայն նաեւ քեզ պահես, որպէսզի իմանան վերինները եւ ստորինները, թէ, արդարեւ, Աստուծոյ որդի ես դու: Աստուած խօսքով է ծնում մարդուն. թէպէտեւ խօսքով չեն կարող, մարմնիդ կամքով մի՛ թաւալուիր երկրի վրայ. կտրի՛ր եւ հեռացրո՛ւ քեզանից աւելորդ ցանկութիւնները: Շատ եւ բաւական՝ համարիր քեզ անհրաժեշտ կերակուրները, չափը մի՛ անցիր եւ մի՛ շուայտացիր: Գիրութիւնից ճարպակալում է մարդը, եւ առատ ճարպից անօրէնութիւններ են ելնում, ինչպէս արբեցողութիւնից՝ պիղծ գիճութիւններ. այդպիսին Աստծուն Հայր անուանել չի կարող: Ահա ինքդ չվկայեցի՞ր՝ ասելով. «Սուրբ թող լինի Քո անունը»: Աստծուն ո՞վ կարող է անուն դնել. սուրբ ասել՝ ա՛յս է Աստուծոյ ճշմարիտ անունը: Սուտ աստուածների անունները սուրբ չեն. մէկը՝ գող, մէկը՝ մարդասպան, մէկը՝ շուն, եւ բոլորը՝ իրենց յատուկ չարչարելի ախտերով. մանաւանդ՝ գոյութիւն իսկ չունեն, ոչ էլ պիտի գոյութիւն ունենան: Մարդիկ, որ նրանց աստուած անուանեցին, նրանք Աստուծոյ ճշմարիտ որդիները չեն: Ում սովորեցնում է Աստծուն գիմել եւ հրամայում է աղօթքի կանգնել Հօր առաջ, նրանցով է բացում դուռը բոլորի համար, որպէսզի ամէնքը դէպի այդ դուռը դիմեն՝ մտնելու, նոյն աղօթքը սովորեն՝ ազաչելու Աստծուն եւ ասելու. «Հա՛յր մեր, որ

երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը»: Երբ սովորեն աղօթելիս ճշմարտախօս լինել, աշխարհում էլ ճշմարտագործ կլինեն եւ այնժամ կարող են լքել ու թողնել սուտ աստուածներին: Ովքեր քարին ու փայտին հայր եւ մայր էին անուանում եւ հեռացան նրանցից ու հրաժարուեցին իրենց անառակ գործերից, նրանց միտքը սրբուեց իմաստութեան գիտութեամբ, եւ նրանց բերանները բացուեցին՝ համարձակ բարբառելու եւ ասելու. «Քո արքայութիւնը թող գայ, Քո կամքը թող լինի երկրի վրայ, ինչպէս որ երկնքում է»:

Երբ Աստուած թագաւորեց ամէն բանի վրայ, Նրա արքայութիւնը [հաստատուեց] իր կամարարների վրայ: «Միայն,– ասում է,– Քո արքայութիւնը թող գայ»: Սա նման է այն խօսքին, թէ՝ «Կծագի Յակոբի աստղը, եւ մի այր կելնի Իսրայէլից եւ կգայ ու կկործանի Ամաղեկի զօրութիւնը» [տե՛ս Թիւ. ԻԴ 17]: Աստղը ծագեց, եւ այրը ելաւ, հարուածեց եւ կործանեց սատանային, որը հեթանոսների զօրութիւնն էր: Սա՛ էր Աստուծոյ կամքն ի սկզբանէ, եւ այն կատարուեց մեր Տէր Յիսուս Քրիստոսի Գալստեամբ: Պարտաւոր ենք խօսքով սովորել այս աղօթքը եւ հաւատքով յուսալ Նրա երկրորդ Գալստեանը, երբ մեր աղօթքի համաձայն նաեւ մեր գործերը կերեւան ստուգութեամբ:

«Քո արքայութիւնը թող գայ»: Ինքը՝ Արքայութիւնը, սովորեցնում է Իր մասին խօսել. «Աշխարհի մէջ էր, եւ աշխարհը Նրանով եղաւ եւ աշխարհը Նրան չճանաչեց» [Յովհ. Ա 10]: Սովորեցնում է ասել Հայր, որպէսզի միայն Նրան ճանաչես [որպէս] Արարիչ աշխարհի, Արարիչ ամենայնի, որ որդեգրութիւն շնորհեց միայն մարդուն: Նա, որ արարեց, նոյն Ինքը եւ Արքայ է, եւ [Նրա հետ] եկաւ նաեւ Իր արքայութիւնը: Նա, որ բնութեամբ մեր Աստուածն է, նոյն Ինքը մեր Հայրն է՝ Իր Աստուածութեան շնորհներով: Եթէ Աստուած ամենքի Հայրն է, ապա Քրիստոս Եղբայրն է բոլոր նրանց, ովքեր գործում են Նրա կամքը: Արքայ էր եւ եղաւ քո Եղբայրը: Սրանք աւելի մեծ են, քան առաջին արարչութեան պարգեւները. այնժամ ըստ Աստուծոյ պատկերի ասուեց՝ թող լինի մարդը [տե՛ս Ծն. Ա 26], որպէս թէ ըստ օրինակի կերպաւորեց՝ հոգեղէնը կամենալով այս հողեղէնի համար տիպ դարձնել, որպէսզի

սա էլ սովորի առաքինութեամբ Նրան նմանուել: Երբ չկարողացաւ միաբանուել Նրա հետ, Ինքն իսկ առաւ նրա տիպը, ինչպէս որ Ինքը գիտէ. Ինքը ձեւաւորեց անխախտելի եւ անքակտելի որպիսութիւնը՝ անհասանելի եւ անասելի, միայն հաւատալի եւ յուսալի, եւ Ինքն է միայն արժանի սիրոյ, որ մեր [բնութեամբ] խօսում է մեզ հետ եւ սովորեցնում. խօսում է [մարդկային] ազգակցութեամբ եւ աներեւոյթ Աստուածութիւնն ուսուցանում է երեւելիներով, որպէսզի աներեւոյթ Աստուածութիւնը երեւելիներով ճանաչես: Որով եկաւ*, նոյնով եւ երկրորդ անգամ պիտի գայ: Այժմ վարդապետութիւնն աշակերտներին որդիներ անուանեց, ծառաներին տէր դարձրեց եւ մահկանացուներին անմահութեան է հրաւիրում՝ ասելով. «Քո արքայութիւնը թող գայ» [այժմ]՝ զգուշութեամբ պատրաստուելու, իսկ յետոյ՝ իւրաքանչիւր գործի հաստատման համար: Որչափ որ կարողանաս եւ հաղորդ լինել արքայութեանը, այդչափ ըղձական է աղօթքդ եւ մեր բնութիւնից վեր պարգեւներ է խոստանում:

* ապիանը՝ տեսանելի, իրական մարմնով

«Քո կամքը,– ասում է,– թող լինի»: Աստուծոյ կամքը մարդու սրբութիւնն է, քանզի բաժնեկից դարձրեց իր արքայութեանը, որպէսզի ոչ թէ անկարող լինենք այդ բաժինը ձեռք բերել, այլ որպէսզի մեր յոյսի համար դիւրութեամբ համբերութիւն ստանանք նրանց նման, որոնց* սովորեցրեց [այս] աղօթքը. եթէ նրանք հասան ըստ իրենց աղօթքների, ուրեմն մենք էլ կարող ենք. միայն հաւատա՛, յուսա՛ եւ սիրի՛ր եւ շուտով կհասնես խնդութեամբ: Եւ եթէ տրամութեամբ չաշխարակից լինես Քրիստոսին, Ինքն Աստուած կզօրացնի համբերութեամբ, եւ եթէ [նման] կարողութիւն չլինէր, Աստուած այդպիսի աղօթք մեզ չէր սովորեցնի: Առաջինների՛ն նայեցէք եւ քաջալերուեցէ՛ք, որ միայն չարչարանքները բաւական չհամարեցին իրենց հաւատքի համար, այլեւ մեռնելը [նախընտրեցին] ապրելուց: Նահատակադիրին** նայեցին եւ նահատակուեցին: Խօսքով նրանց գովաբանող լինենք եւ գործով մեր կեանքը նոյն նահատակութեամբ կնքենք:

* Ակառի ունի առաքեալներին:

* ապիանը՝ Քրիստոսին

Աստուած Հայր է հաւասարապէս բոլորին, [ուստի] պարտաւոր ենք բոլորս հաւասար որդիներ լինել, քանի որ մի է այն ժառանգութիւնը, որ բաշխեց բոլորին:

«Քո կամքը թող լինի երկրի վրայ, ինչպէս որ երկնքում է»: Թէեւ Աստուած կարող է բոլոր մարդկանց երկնաւորներ դարձնել, մեր կամքին է յանձնում աղօթելը, որպէսզի մենք՝ երկրաւորներս, ինքներս կարողանանք երկնաւոր դառնալ: Վերին զօրքերն ամբողջապէս Նրա կամքին են սիրով հնազանդւում եւ, միաբանութեամբ լծուած, փառաւորում են Աստծուն եւ Նրա ահաւոր փառքից ծածկում են ոտքերն ու դէմքերը, որպէսզի իրենց ներսում սիրեն Աստծուն: Աչքով տեսնելու փոխարէն իրենց ներսում բաւական են համարում սէրը, եւ, նրանց սիրուց [դրդուած], Աստուած էլ նրանց հանդէպ սիրով կատարեց Իր կամքը: Զշտապենք մարմնաւոր աչքով տեսնել Աստծուն, որպէսզի տարաժամ չկործանուենք: Մեզանից թող սէ՛րը պատգամաւոր լինի Նրա առաջ, եւ Նրա սիրով Իր կամքը թող կատարուի մեր մէջ: Ինչ որ սովորեցրին մեզ մարգարէները, դրանով չանանք ընթանալ, քանզի նրանք խօսքով ասացին եւ գործով կատարեցին: Նրանց վարդապետը ոչ այլ ոք էր, եթէ ոչ՝ Նա, Ով քեզ սովորեցրեց աղօթքը: Դու էլ խօսքով սովորի՛ր աղօթքը եւ գործով շտապի՛ր կատարել: Հեռու չես հրեշտակներից, այլ նրանց հետ ես աղօթքով, որպէսզի նրանց հետ փառաւորես Աստծուն: Ինչպէս որ դու ես նրանց հետ միաբանւում, նոյնպէս էլ նրանք քեզ հետ երգակից են լինում աղօթելիս եւ օրհնելիս: Համարձակ բաց ես անում բերանդ եւ ասում. «Քո կամքը թող լինի երկրի վրայ, ինչպէս որ երկնքում է»: Այս [ասելու] իշխանութիւնն աւելի մեծ է, քան առաջին օրհնութիւնները. այնտեղ միայն երկրին տիրել [արտօնուեց] իշխանութեամբ [Մն. Ա 28], այստեղ ասում է՝ երկնքում եւ երկրի վրայ:

«Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ այսօր»: Երկրաբոյս հացն Աստուած առանց ազաչելու հաւասարապէս շնորհում է բոլորին: «Մարդկանց եւ կենդանիներին Դու ես ապրեցնում, Տէ՛ր» [տե՛ս Սաղմ. ԼԵ 7]: Եւ ինչպէ՞ս կարելի է ասել, [չէ՞ որ] նոյնիսկ սա հանապազօրեայ չէ. մանկութիւնն արգելում է, հիւանդութիւնը՝ քչացնում, կարօտութիւնը՝ խափա-

նում, մահը՝ բաժանում եւ հեռացնում: «Ձեր հայրերն անապատում կերան մանանան եւ մեռան: Այս է ճշմարիտ Հացը, որ երկնքից է իջնում. ով որ այս Հացից ուտի, յաւիտեան չի մեռնի» [տե՛ս Յովհ. Զ 49–50]: Լսում էին Նրանից այս խօսքը եւ չէին կարողանում անմիջապէս հասկանալ, ուստի կրկնում եւ երեքկնում է նոյն խօսքը, որպէսզի հեշտութեամբ լսեն եւ հաւատով ընկալեն այդ խօսքի զօրութիւնը. «Ես եմ,– ասում է,– կենդանի Հացը, որ երկնքից է իջել. ով որ ուտի այս Հացը, մահ չի ճաշակելու» [տե՛ս Յովհ. Զ 51–52]: Այս Հացի մասին է աղօթքի մէջ սովորեցնում հանապազ խնդրել Աստծուց: Եթէ լաւ խորհես, [կհամոզուես, որ] Նա, ով այս Հացը սրբութեամբ է ուտում եւ սրան արժանի կերպով է պատրաստում իր անձը, Նա անկարօտ է այս երկրաւոր արքայութեանը: Մահկանացու ձեռքին անմահ Հացը դնելով՝ դրանից ձեռքն անմիջապէս անմահացաւ եւ, այս ուտելով, մարդն ամբողջովին՝ շնչով, հոգով եւ մարմնով, հոգիացաւ ու բաժնեկից դարձաւ Քրիստոսին. միայն թէ զօրութեան սկիզբը մինչեւ վախճանն անարատ պահի: Զկան երկրաւոր չարչարանքներ, որ նրան

յազթեն, նրա առաջ արհամարհուած է արծաթը, եւ ոսկին ատելի է նրա աչքին, ցաւ է համարում այս աշխարհի հարստութիւնը, քանի որ իր խորհուրդները սրբուեցին երկնաւոր ազատութեամբ՝ անմահ Հացով յագենալով: Նա ամէն բանի համար բաւարար եղաւ. եթէ երեխայ է, կատարելահասակ երեւաց, եթէ տկարացաւ ցաւերից, Աստուծոյ զօրութիւնը բնակուեց նրա մէջ, եթէ այս աշխարհի կեանքից հեռացաւ, անմահ կեանքն իր հետ տարաւ առ Աստուած: Այս էր սովորեցնում մեր Տէրը՝ աղօթքի մէջ աղաչել Իրեն. մեր հացն օրըստօրէ տո՛ւր մեզ ոչ երկրից, այլ՝ Տիրոջից. եւ յայտնի է՝ ոչ էլ երկնքից, այլ [նկատի ունի] ամենքի Տիրոջը, [քանզի] ասում է. «Ա՛յս է Իմ Մարմինը եւ ա՛յս է Իմ Արիւնը»: [Մարկ. ԺԴ 22]: Թէպէտ եւ անփշրելի էր, քո սիրոյ համար փշրուեց եւ քեզ, որ քո կամքով փշրուեցիր, անփշրելի Աստուածութեամբ դէպի Ինքը բարձրացրեց. «Իմ անձը չես թողնի դժոխքի մէջ եւ Քո սուրբին չես տայ տեսնել ապականութիւն» [տե՛ս Սաղմ. ԺԵ 10]: Ուրբաթ օրը խաչուեց՝ մահը փշրելու համար եւ միաշաբաթի օրը հաւաքեց Ադամի փշրուած ոսկորները եւ յարու-

թիւն տուեց անմահութեամբ. եւ [Իրենն] ցոյց տուեց շատերին՝ ճշմարտութեամբ եւ ոչ՝ առաչօք: Մի օր հացացաւ Վերնատանը եւ հանապազ հացանում է Եկեղեցում՝ սուրբ Սեղանի վրայ: Նախ Ինքն Իրեն ճաշակեց եւ ապա մեզ ճաշակակից դարձրեց Իր չարչարանքներին: Նա այսուհետեւ չարչարանքների մէջ չէ, այլ հայրենի փառքի մէջ փառաւորւում է հրեշտակներից եւ մարդկանցից եւ մեր բոլորի չարչարանքները վերացրեց Իր անչարչարելի Աստուածութեամբ: Մեր հաւատքի այս յոյսը որպէս հաստատուն խարիսխ պահենք մեր հոգիների եւ մարմինների մէջ. ինչպէս որ սիւնը շէնքի կայունութիւնն է, հաւատքն էլ մարդու անքակտելիութիւնն է Աստուծոյ հետ, որով եւ համարձակութեամբ կարող է բարբառել եւ ասել. «Թո՛ղ մեզ մեր պարտքերը, ինչպէս եւ մենք ենք թողնում մեր պարտապաններին»:

Այս է ճշմարիտ, բանական եւ գործնական աղօթքը. երբ դու պարտքդ չես պահանջում ընկերոջից, այնժամ Աստուած էլ քո բոլոր պարտքերը քեզ է շնորհում, որ անմեղ լինես: Ակա՛նջ դիր Պետրոսին, թէ ինչպէս սովորեց Տիրոջից. նա եօթ անգամ կամեցաւ ներել եղբօր յանցանքը, իսկ մեր Տէրը եօթանասուն անգամ եօթ ասաց [տե՛ս Մատթ. ԺԸ 22]: Պետրոսն իբրեւ մարդ սահման դրեց, իսկ մեր Տէրը սահման չդրեց Իր Աստուածութեան մարդասէր բարերարութեանը: Հանապազ մեղանչում ենք մեր խօսքերով ու գործերով, եւ Աստուած տեսնում է ու զանց առնում, որպէսզի Իր համբերութեամբ մեզ ապաշխարութեան յորդորի: Զմեղանչելն իսկ մարդու համար կատարեալ արդարութիւն է, իսկ եթէ իբրեւ մարդ յանցանք գործեց, թող շտապի զղջալ՝ ապաշխարելու: Բաց են Նրա ողորմութեան դռները, եւ չի փակում ապաշխարողների առաջ: Մանաւանդ՝ ովքեր գիտեն հաւատքով աղաչել, նրանք նաեւ առաքինութեամբ կարող են ճգնել հոգեւոր վաստակների համար. նրանք ոչ միայն ներում են իրենց ընկերների պարտքերը, այլեւ՝ իրենց ունեցուածքը բաշխում կարօտեալներին: Աստուծոյ զօրութիւնն է, որ նրանց ձգում է դէպի առաքինութիւն, ինչպէս եւ առաջիններն էին անում. «Ովքեր,– ասում է,– գիւղերի, ագարակների եւ ստացուածքի տէր էին, վաճառում էին ողջ ունեցուածքը եւ բերում-դնում առաքեալների ոտքերի առաջ» [տե՛ս Գործ. Դ 34–

35]: Մեր Տէրը նրանց առաքեց [Աստուծոյ] խօսքի քարոզութեան համար: Նրանք խօսքի քարոզիչներ էին եւ պէտքերի մատակարարողներ: Խօսքի ձայնն ականջին է հասնում, իսկ Վերնայինի սէրն առանց խօսքի էր առատաձեռնութիւն սովորեցնում. ո՛չ՝ որովհետեւ ուզում էին աղքատանալ, այլ՝ որպէսզի այլ հարստութեան հասանեն՝ երկնաւորին: Բայց դու, երբ ներում ես քո ընկերոջ պարտքը, նրա համար չէր, որ դու ատում էիր քո իրերը, այլ՝ որպէսզի քո արած փոքր ողորմութեամբ Աստուած ների քո ունեցած բազմապատիկ պարտքերը: Այս խօսքի՞ն հետեւիր [եւ կտեսնես, որ] երբ ներում ես քո ընկերոջը, դու եւս արժանանում ես ներման:

Համարձակութեամբ բաց ես անում բերանդ եւ ասում. «Մի՛ տանիր մեզ փորձութեան, այլ փրկի՛ր մեզ չարից»: Աստուած չի կամենում մարդուն փորձութեան տանել, այլ՝ ազատել փորձութիւնից եւ փրկել մահուանից: Քանզի Նա, Ով Իր Որդուն չխնայեց, այլ մեր բոլորի համար մահուան մատնեց, Նրանով շնորհում է ամէն տեսակ բարիքներ բոլոր նրանց, ովքեր խնդրում են Իրենից: Թէպէտ մենք ի վիճակի չենք փոխհատուցել Աստծուն, չծուլանանք,

որչափ որ մեր կարողութիւնն է. մեր սակաւապետութիւնը որպէս պահք է դիտում, չափաւոր ըմպելը՝ գինեհատութիւն, միջին հանդերձը՝ համեստութիւն եւ անհրաժեշտ ստացուածքը՝ աղքատութիւն: Երանութեան համար հեզախօս լինենք եւ [դրանով] ընկերոջը խոնարհութիւն սովորեցնենք: Եթէ անքուն մնալ չենք կարող, [գոնէ] ողջ գիշերը քնելուն չնուիրենք, որպէսզի ամբողջովին չմոռանանք սաղմոսները եւ օրհնութիւնները: Եթէ աղքատների կարօտութիւնն [ամբողջովին] բաւարարել չենք կարող, մի պատառի եւ բաժակի կարօտ չթողնենք նրանց: Մեր ստացուածքների մէջ որբերից եւ այրիներից յափշտակուած որեւէ բան թող չգտնուի: Ինչ որ ունենք, Աստծուն նուիրուած թող լինի: Այնժամ մեր անձերն էլ Նրան հաճելի եւ ընդունելի պատարագ կլինեն: Բոլորին վայել է փութաջան լինել Աստուծոյ պատուիրանները պահելու եւ գործելու մէջ՝ տղամարդկանց եւ կանանց, ծառաներին եւ ազատներին, քանի որ մեր Տէրը բոլորի թողութեան համար եկաւ, եւ Նրա մարդասիրութեանը վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԻՆՉՊԷՍ ԱՂՕԹԵԼ

Աղօթքն Աստուծոյ հետ հաղորդակցութիւն հաստատելու ամենաանմիջական ճանապարհն է: Ամէն մի առաքինութեան, ամէն մի ճգնութեան վերջնական նպատակն է Աստուծոյ հետ հաղորդակցութեան հաստատումը, Աստուծոյ հետ միաւորումը, իսկ աղօթքն ուղղակի հոգու անձնական հանդիպումն է Աստուծոյ հետ: «Աղօթքն առաւել հարազատ եւ մերձաւոր է Աստծուն,– գրում է ս. Գրիգոր Նարեկացին,– քան ամէն մի առաքինութիւն, քանզի բոլոր միւսները որպէս հանդերձանք եւ պատրաստութիւն են Աստուծոյ մօտ մուտք գործելու համար, իսկ սա դէմ-յանդիման խօսակցութիւն է Աստուծոյ հետ»: Եկեղեցու սրբազան աւանդութեան մէջ աղօթքը մեծագոյն արուեստ է, որի մէջ հմտանալու համար անհրաժեշտ են գիտելիքներ եւ անձնական փորձառութիւն: Եկեղեցու հայրերը եւ վարդապետները Սուրբ Հոգու կենդանի ներգործութեամբ եւ աստուածային շնորհի լուսաւորութեամբ բացայայտել են աղօթքի օրինաչափութիւններ եւ նրբութիւններ, որոնք որոշակիօրէն արտայայտուած են

նրանց ներանձնական-խրատական գրուածքներում: Յատկապէս կարեւոր են նրանց գործնական խրատներն այն մասին, թէ ինչպէս աղօթել, ինչպէս ջերմ մնալ աղօթքի ժամանակ տեղի ունեցող զանազան դիւային յարձակումներից եւ փորձութիւններից, ինչպէս ձեռք բերել սուրբ եւ պտղաբեր աղօթք եւ այլն: Հետեւելով ս. հայրերի՝ աղօթքի մասին գրուածքներին՝ կարելի է առանձնացնել աղօթական կեանքի որոշակի սկզբունքներ եւ օրէնքներ, որոնք անհրաժեշտ են իւրաքանչիւր քրիստոնեայի համար, որ փորձում է ազատուել չարի կապանքներից եւ միաւորուել Աստծուն:

Աղօթքը պահանջում է լուրջ նախապատրաստութիւն, այլապէս այն կլինի անընդունելի, իսկ աղօթողը դատապարտութեան տակ կայտնուի: Աղօթականից նախ եւ առաջ պահանջւում է անյիշաչարութիւն եւ ներողամտութիւն թէ՛ մերձաւորների, թէ՛ թշնամիների նկատմամբ: Ս. Նեղոս Սինայեցին ասում է. «Ովքեր տրտմութիւն եւ ոխակալութիւն են կուտակում իրենց հոգում եւ կարծում են, թէ աղօթում են, նման են նրանց, ովքեր ջուր են չափում եւ ծակ կարասի մէջ լցնում»: Անխոով

եւ պտղաբեր աղօթելու համար, ըստ ս. Նեղոսի, պէտք է հեռանալ ոխակալութիւնից, որը «տխրեցնում է մտաւոր հոգին եւ խաւարեցնում աղօթքի դիտաւորութիւնը», պէտք է լինել «համբերող, հեզ եւ ներողամիտ»: Պէտք է հեռանալ աշխարհիկ կապանքներից, անխռով ներկայանալ Տիրոջը, առանց տուրեւառութեան աշխարհի հետ. «Եթէ փափագում ես աղօթել, հրաժարուի՛ր ամէն ինչից, որպէսզի միայն այն շահես»: Աղօթքի կանգնելուց առաջ հոգու բոլոր զօրութիւններով պէտք է զգուշանալ մեղքից, որպէսզի աղօթքն անպտուղ չլինի, եւ աղօթողը դատապարտութեան տակ չյայտնուի. բարկութիւնը, նախանձը, սնափառութիւնը, ծուլութիւնը, ատելութիւնը եւ այլ մեղքերը մթագնում են հոգու լոյսը եւ ունայնացնում աղօթքի դիտաւորութիւնը:

Ա. Ուշադրութիւն. Աղօթքի ձեռնամուխ լինելու համար նախ եւ առաջ պէտք է ուշադրութիւն ունենալ: Սակայն այս ուշադրութիւնը ոչ թէ մտքի արտաքին կենտրոնացում է ինչ-որ առարկայի կամ գաղափարի վրայ, այլ ներքին հոգեւոր ուշադրութիւն է: Մենք հաւատում ենք, որ Աստուած ներկայ է եւ լսում է ամէն

խօսք, դիտի մեր մտքերը եւ տեսնում է մեր սրտի խորքերը: Հնարաւոր չէ Աստծուն բովանդակել որեւէ տեղում, ուրեմն հնարաւոր չէ կենտրոնանալ Աստուծոյ վրայ: Աստուած ամէնուր է, ինչպէս նաեւ՝ մեր ներսում. «Երկնքի արքայութիւնը ձեր ներսում է» [Ղուկ. ԺԷ 21], ուստի այդ արքայութեան ձեռքբերումը ոչ թէ արտաքին մի փնտրում է, այլ ներքին ճշմարտութեան բացայայտում: Հետեւաբար աղօթական ուշադրութիւնը ներքին երեւոյթ է եւ նախ եւ առաջ նշանակում է արտաքին թափառումներից հաւաքել մտքերն ու խորհուրդները՝ Աստուծոյ հետ հաղորդակից լինելու համար:

Ամէն մի խօսք, ամէն մի խնդրուածք կամ գոհութիւն պէտք է առաքուի առ Աստուած մեծագոյն ուշադրութեամբ: Պէտք է ամենայն զգուշութեամբ հետեւել աղօթքի խօսքերին, թէ ինչ ես ասում Աստծուն, միտքը, խորհուրդները եւ զգայութիւնները պէտք է ձայնակից լինեն աղօթքի խօսքերին, այլ կերպ ասած՝ հոգու բոլոր զօրութիւններով պէտք է աղօթել: Քանի դեռ մեր մտքերը ցրուած են, մեր սրտի խորհուրդները՝ անյատակ եւ պղտոր, իսկ զգայութիւններով կառչած ենք այս աշխարհի հա-

ճոյքներին, մենք հեռու ենք ճշմարիտ աղօթքի մատոյցներից: Ս. Նեղոսն ուսուցանում է. «Եթէ աղօթքի ժամանակ քո միտքը այս ու այն կողմ է թափառում, ապա դեռեւս չես իմացել, թէ ինչպէս են միայնակեցաբար աղօթում, այլ աշխարհականի պէս արտաքին տեսքն ես գեղեցկացնում»: «Ով կամենում է աղօթել, [նա] ոչ միայն պէտք է իշխի ցանկութեան եւ սրտմտութեան վրայ, այլեւ հեռացնի սրբութիւնից բոլոր ախտաւոր խորհուրդները»: Ճշմարտապէս աղօթելու համար պէտք է մտքի անզբօսութիւն կամ ուշադրութիւն եւ հաւքուածութիւն, պէտք է զգաստ վիճակում պահել զգայութիւնները, ինչպէս նաեւ խորհուրդների մաքրութիւն եւ միասնութիւն ձեռք բերել. «Անզբօ՛ս մնա քո աղօթքի մէջ եւ ուրացած քո անձը բոլոր զգայութիւններով հանդերձ՝ [լինելով] միամիտ եւ մաքուր խորհուրդներում»: Երկիւղը եւ զղջումը ներքին ուշադրութեան ձեռքբերման ամենակարեւոր գործօններն են. «Աղօթքի զգայութիւնը համադրուելն է երկիւղով, զղջմամբ, հոգեւորի անձկութեամբ եւ անմռունչ հեծութեան մէջ յանցանքները պատմելով»: Աղօթականն ամէն պահ պէտք է յիշի, թէ Ում առաջ է կանգնած, Ում հետ է խօսում: Ս. Անանիա Նարեկացին գրում է. «Եւ երբ աղօթում ես, թոյլ մի՛ տուր խորհուրդներիդ այս ու այն կողմ ելնել, այլ խորհի՛ր, թէ՝ Ում առաջ եմ կանգնած. Երկնաւոր Թագաւորի՝ Աստուծոյ առաջ, որ ակնթարթում գոյացրեց երկինքը եւ երկիրը: Երբ խորհում ես այս, միտքդ զարհուրում է, եւ երկիւղով ես մատուցում աղօթքը»: Նոյնն է գրում ս. Եզնիկ վարդապետը. «Թո՛ղ անոտի խորհուրդներն ու խօսքերը, բեւեռի՛ր քեզ Աստուծոյ երկիւղին եւ խորհի՛ր Դատաստանի Օրուայ մասին երբ աղօթում ես, իմացի՛ր, թէ Ում հետ ես խօսում կամ ինչ ես խնդրում, եւ խորհուրդդ քո մէ՛ջ հաւաքիր»:

Բ. Ձերեւակայե՛լ. Ս. հայրերը խստօրէն զգուշացնում են՝ աղօթքի ժամանակ երեւակայական խաղերից զերծ մնալու մասին: Ս. Նեղոսն ուսուցանում է. «Մի՛ ցանկացիր որեւէ կերպարանք կամ ձեւ կամ գոյն աղօթքի ժամանակ»: Երեւակայութեան աշխատելը ձեռնտու է չար դեւերին. այդ դէպքում նրանք արագօրէն շեղում են մեր միտքը աղօթքի էութիւնից եւ գերում դիւային պատկերներով կամ

ձայներով կամ գոյներով: Պէտք է հաւատալ, որ Աստուած ներկայ է, եւ ոչ թէ երեւակայել. «Աղօթքի ժամանակ քո ներսում Աստուածութեանը տեսք մի՛ տուր եւ մի՛ թոյլ տուր մտքիդ՝ տպաւորուելու կերպարանքներով, այլ Աննիւթին աննիւթապէ՛ս մօտեցիր եւ իմաստուն կլինէա»: Նմանապէս վտանգաւոր է ս. խաչ, Աստուածամօր պատկեր կամ այլ սրբազան նշաններ կամ պատկերներ երեւակայելը, քանզի նման հոգեվիճակում դեւերն անմիջապէս գերում են միտքը իրենց կողմից առաջադրուող պատկերներով եւ շեղում աղօթքի էութիւնից:

Մտքի պատրանքների սկիզբը սնափառութիւնն է՝ երբ միտքը երեւակայում է, թէ հասել է աստուածտեսութեան բարձունքներին, սակայն իրականում որսուած է դիւային ուժերի կողմից. «Պատրանքների սկիզբը մտքի սնափառութիւնն է, որից շարժման մէջ դրուելով՝ միտքը փորձում է ձեւով կամ կերպարանքով պարագրել Աստծուն»: Երեւակայական շարժումների աշխուժացման դէպքում աղօթողը կարող է դիւահարուել եւ խելագարուել: «Մի՛ ցանկացիր զգայապէս տեսնել հրեշտակների կամ զօրութիւններ կամ Քրիստոսին, որպէսզի

մարդոյդովին չխելագարուես՝ Հովուի փոխարէն տեսնելով գայլին եւ երկրպագելով թշնամի դեւերին»: Նոյնն է ասում ս. Եղիշէն. «Զշտապենք մարմնաւոր աչքով տեսնել Աստծուն, որպէսզի տարաժամ չկործանուենք»: Դրա համար հայրերն ուսուցանում էին, թէ՝ «Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին ստացել է կատարեալ եւ մաքուր անտեսութիւն: Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին աննիւթական եւ անստացիկ է լինում՝ սրբուելով ամէն ինչից: Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին կատարեալ անզգայութիւն ունի երկրի նկատմամբ» (ս. Նեղոս):

Գ. Ամէն ինչ վստահել Աստծուն. Ամենից առաջ պէտք է յիշել, որ աղօթքը շնորհ է, եւ մենք ներքնապէս պէտք է բացազատուենք այդ աստուածային շնորհի ներգործութեան առջեւ: Ամէն ինչ պէտք է վստահել Աստծուն, ամէն ինչ պէտք է յանձնել Նրա ձեռքը: Երբ մարդու հոգին նման կարգաւորութիւն է ձեռք բերում, Սուրբ Հոգին Ինքն է բարեխօս եւ օգնական լինում մարդու համար. «Զգիտենք, թէ ինչի մասին աղօթել եւ ինչպէս է արժան,— ասում է Պօղոս առաքեալը,— սակայն Հոգին

Ինքն է բարեխօս լինում անմռունչ հեծութիւններով» [Հռոմ. Ը 26–27]: Ս. Ներսէս Լամբրոնացին մեկնում է Պօղոս առաքեալի այս խօսքը հետեւեալ կերպ. «Երբ հոգուդ զգայական ազդեցութիւններն ամփոփում ես ներսում եւ ապա անմռունչ հեծեծում, թէպէտեւ չգիտես, թէ կհասնի դա Աստծուն, սակայն Հոգու շնորհը, որ քեզանում է, տեսնում է քո հոգու փոձկումը եւ, ծանուցելով այդ մասին ու քեզանից վերցնելով նիւթը, Ինքը մտնում է այնտեղ, ուր չկարողացար բարձրանալ, եւ բարեխօսում քեզ համար, քանզի հեզ է եւ մարդասէր»: Պէտք է համագործակցել մեր ներքին Բարեխօսի եւ Մխիթարիչի հետ, այնժամ Ինքը կմարտնչի մեր թշնամիների դէմ եւ մեզ կառաջնորդի դէպի սուրբ աղօթքի բարձունքները. «Սուրբ Հոգին մեր տկարութեանը վշտակից է լինում. թէպէտեւ պղծաբարոյ ենք, սակայն գալիս է մեզ մօտ, եւ եթէ մեր միտքը լինում է ճշմարտասիրութեամբ աղօթելիս, հանգչում է մեզ վրայ եւ ամբողջովին պարուրում մեզ, կործանում խորհուրդների կամ մտքերի բոլոր լեգէոնները՝ հրաւիրելով մեզ դէպի հոգեւոր սուրբ աղօթքի ցանկութիւնը» (ս. Նեղոս):

Դ. Համբերութիւն. Աղօթքը պահանջում է համբերութիւն. «Եթէ լինես համբերող, հեզ եւ ներողամիտ, քո աղօթքը միշտ կպտղաբերի»,– ասում է ս. Նեղոսը: Աղօթքի կանգնելով՝ մարդն անմիջապէս չի ստանում իր խնդրածը կամ ամենեւին չի ստանում, քանզի Աստուած աւելի լաւ գիտի, թէ ինչ է մեզ պէտք: «Մի՛ խնդրիր Աստծուց նոյն ժամին հաւաստիանալ խնդրուածի մէջ, քանի որ Նա կամենում է, որ քո աղօթքներն աւելի խնամքով հնազանդուեն. քանզի ի՞նչ կայ աւելի բարձր, եթէ ոչ՝ Աստուծոյ հետ զրուցելը եւ Նրան էակից անճառելիներին հաղորդուելը»: «Խնդիրքի յապաղման դէպքում չասե՛ս, թէ՝ երկար ժամանակ աղօթքների մէջ եմ եւ ոչինչ չստացայ, քանզի ահաւասիկ ստացել ես, քանի որ ի՞նչ կայ աւելի բարի, քան Աստուծոյ հետ կապուելն ու միաւորուելը» (Ց. Կղեմաքոս): Իսկապէս Աստուծոյ հետ աղօթքի մէջ լինելն արդէն ամենամեծ պարգեւն է, այլեւս կարիք չկայ աւելորդ բաներ խնդրել, յատկապէս՝ մարմնաւոր բաներ. «Չես կարող մաքուր աղօթել՝ պղաղտելով մարմնաւոր իրեր, քանզի աղօթքը հեռացնում է այս աշխարհի նիւթական ակնկա-

լութիւններից» (ս. Նեղոս): Թէպէտեւ ասուած է. «Ինչ որ խնդրէք Իմ անունով, այն կանեմ» [Յովհ. ԺԴ 13], այնուամենայնիւ պէտք է պատուական բաներ խնդրել, այսինքն՝ հոգեւոր պարգեւներ, որոնցից ամենաբարձրը աղօթքի շնորհն է. «Ով աղօթելիս մարմնաւոր փառք, մեծութիւն եւ կամ էլ հարստութիւն է խնդրում Աստծուց, այնպիսին բարկացնում է Աստծուն եւ չի հաշտեցնում: Այդ ժամանակ նա նման է այն ապշած խելագարին, որը գնաց ողորմած Թագաւորի մօտ եւ, արհամարհելով պայծառ ոսկին եւ լուսաւոր մարգարիտը, ժահահոտ աղբ խնդրեց Թագաւորից... Դուք արքայութի՛ւնը խնդրէք, քանզի Երկնաւոր Հայրը գիտէ ձեր մարմնաւոր կարիքները եւ ձեզ համար կպատրաստի կերակուր, զգեստ, ինչպէս նաեւ ամէն անհրաժեշտ բան» (Վ. Այգեկցի):

Ե. Ցարատեւութիւն. Քրիստոս ասում է. «Արթո՛ւն եղէք եւ ամէն ժամ աղօթեցէ՛ք» [Ղուկ. ԻԱ 36]: Նոյնն է երկրորդում Պօղոս առաքեալը. «Անդադար աղօթեցէ՛ք» [Ա Թես. Ե 17]: Աղօթքի յարատեւութիւնը կամ անընդհատ աղօթքը հոգեւոր կեանքի ամենակարեւոր սկզբունքներից է: Ս. Գրիգոր Լուսաւորիչը գրում է. «Եւ ամէնուր հոգեւորապէս, անխափան կատարի՛ր աղօթքի ծառայութիւնդ՝ թէ՛ տանը նստած, թէ՛ ճանապարհ գնալիս, թէ՛ աշխատելիս, թէ՛ ննջելիս եւ թէ՛ արթնանալիս»: Ինքը Քրիստոս, որ անկարօտ էր աղօթքների եւ խնդրուածքների, ողջ գիշեր աղօթում էր՝ մեզ օրինակ ցոյց տալու համար, եւ հեթանոսական շատախօսութիւնը պէտք չէ շփոթել երկար աղօթքի հետ. «Քանզի ուսուցանելիս ասաց. «Մի՛ եղէք շատախօս հեթանոսների պէս» [Մատթ. Զ 7], որպէսզի չկարծեն, թէ երկար աղօթելը անշնորհ բան է: Նոյնիսկ Ինքը, որ աղօթքի կարիք չունէր, ողջ գիշեր աղօթում էր Աստծուն, որպէսզի սովորենք, թէ շատախօսութիւն է ոչ թէ բազում աղերսները, այլ դատարկ եւ տհաճ բարբառելը» (Իգնատիոս վարդապետ):

Անընդհատ աղօթքի հասնում են յաճախակի եւ երկար աղօթելու շնորհիւ: Աստուածային շնորհի գործակցութեամբ երբեմն աղօթքի խօսքերը քաղցրանում են, երբեմն սրտից արտասուքներ են սկսում բխել. այս դէպքերում հայրերը խորհուրդ են տալիս երկար մնալ այս

վիճակում, որը մեր մեջ զարգացնում է աղօթքի յարատեւութիւնը. «Եթէ քաղցրանում կամ զղջում ես աղօթքի խօսքերում, մնա՛ նրանում եւ շա՛տ կրկնիր խօսքը» (Ց. Կղեմաքոս):

Զ. Խոհեմութիւն եւ արիութիւն. Հոգեւոր կեանքը անտեսանելի պայքար է դիւային ուժերի դէմ: Զարն ամէն կերպ փորձում է խափանել ճշմարիտ աղօթքի փոյթը: Այս մասին կարեւոր զգուշացումներ է անում ս. Նեղոսը: Նախ եւ առաջ դեւերը փորձում են մեզ ներշնչել պիղծ խորհուրդներ՝ պոռնկութիւն, արծաթասիրութիւն, բարկութիւն, ոխակալութիւն եւ այլն. այսպիսի յարձակումները կոչւում են ձախակողմեան փորձութիւններ: Երբ հոգին խոհեմաբար մերժում է այս դիւային ներգործութիւնները, այնժամ դեւերը դիմում են հակառակ ուղղոցների: Նրանք փորձում են աղօթականին ներշնչել իբրեւ թէ իրաւացի եւ կարեւոր խորհուրդներ, որպէսզի միտքը գցեն անպտուղ որոնումների մէջ: Երբեմն նաեւ խաբում են գալիքի կեղծ մարգարէութիւններով: Այսպիսի յարձակումները կոչւում են աջակողմեան փորձութիւններ: Երբ հոգին մերժում է նաեւ այսպիսի խաբէութիւնները, չարանախնձ դեւերն անցնում են այլ մարտավարութեան. նրանք առաջադրում են ինչ-որ չար խորհուրդներ, եւ աղօթքի դիմելիս, անմիջապէս նահանջում են, որպէսզի աղօթականը ընկնի հպարտութեան ծուղակը՝ կարծելով, թէ սարսափեցնում է դեւերին սուրբ աղօթքով: Երբեմն նաեւ իրենք են յայտնւում լուսէ հրեշտակների կերպարանքով եւ վանում նախորդներին, որպէսզի աղօթողը կարծի, թէ լուսոյ հրեշտակներ են: Այս դիւային փորձութիւնների (ձախակողմեան եւ աջակողմեան) դէմ պայքարելը կոչւում է ընտրողական արուեստ, որը ներանձնական-շնորհական հմտութիւն է՝ դիւային խորհուրդները բացայայտելու եւ մերժելու համար:

Դեւերը յաճախ փորձում են աղօթողին զարհուրեցնել զանազան սարսափազդու տեսիլքներով կամ ձայներով, որպէսզի խոչընդոտեն մաքուր աղօթքի վերընթացը. «Ով հոգ է տանում մաքուր աղօթքի համար, նա կլսի դեւերի ճայթիւններ, թնդիւններ, ձայների խշխշոցներ եւ դիւային հեծեծանքներ, սակայն չպէտք է վարանի եւ մատնուի այդ խորհուրդներին: Եթէ դեւերը, յանկարծակի երեւալով, սպառնան

քեզ, որպէսզի զարհուրեցնեն քեզ եւ յափշտակեն միտքդ կամ գազանների պէս վնասեն մարմինդ, մի՛ սարսափիր նրանցից եւ ուշադրութիւն մի՛ դարձրու նրանց սպառնալիքներին, քանզի փորձելով վախեցնում են քեզ, թէ արդեօք ուշադրութեան կարժանացնե՞ս նրանց, թէ՞ ամենեւին արհամարհել ես նրանց»:

Է. Խոնարհութիւն. Իւրաքանչիւր առաքինութիւն գործելիս եւ յատկապէս աղօթելիս անհրաժեշտ է խոնարհութիւն: Աղօթելիս մարդը զանազան փորձութիւններ է յաղթահարում եւ շնորհների արժանանում: Իսկ դեւերը, երբ տեսնում են մեր հոգու առաջընթացը, փորձում են հպարտութիւն ներշնչել, որպէսզի դրանով կործանեն մեզ: Պէտք է հեռու մնալ հպարտութեան դեւից, ինչպէս աղօթքի ամենավտանգաւոր թշնամուց. «Թէպէտեւ արտասուքների աղբիւր ունենաս աղօթքի ժամանակ, մի՛ հպարտացիր քո անձի մէջ, որպէս թէ առաւել ես շատերից, քանզի առաւել աղօթքի օգնականութեան շնորհը Տիրոջից է...» (ս. Նեղոս): Երբ աղօթողն առաքինութիւնները եւ աստուածային շնորհները սկսում է սեփական անձին վերագրել, նա արդէն որսուած է դեւերի կողմից:

Խոնարհ մարդը զերծ է նման գայթակղութիւններից: Դրա համար ս. Նեղոսն ասում է. «Երանելի է այն միայնակեացը, ով հոգեւորի մէջ իր անձը բոլորից նուաստ է համարում: Միայնակեացը նա է, ով իր անձը բոլորից անարգ է համարում...»: Պէտք է թողնել համեմատութիւնները, սեփական անձը բոլորից ցածր համարել, շնորհների համար փառք տալ Տուողին՝ սեփական անձը անարժան համարելով. այնժամ աղօթականը անխոցելի կդառնայ թշնամու նետերի համար:

ԱՂՕԹՔԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԵՒ ՊՏՈՒՂՆԵՐ

Հոգեւոր զարգացումն աստիճանական է, ամէն մի առաքինութիւն ձեռք է բերւում մեծ դժուարութեամբ. «Մի՛ կարծիր, թէ առաքինութիւն կստանաս, եթէ մարմնով եւ արեամբ նրա համար չճակատամարտես»,– ասում է ս. Նեղոսը: Աղօթքի մէջ հմտանալը նոյնպէս աստիճանական է, որը տեղի է ունենում աստուածային շնորհի արմատացումով հոգու մէջ՝ ըստ աստուածպաշտական ճիգերի չափի: Ս. հայրերի՝ աղօթքի մասին գրուածքներում կարելի է գտնել աղօթքի տարբեր աստիճանների նկա-

բագրութիւններ: Օրինակ՝ ս. Նեղոսը նշում է երկու աստիճան՝ սաղմոսերգութիւն* եւ իմաստալի-հոգեւոր-սուրբ-կատարեալ աղօթք: Աղօթքի հասնելու համար պէտք է հնազանդուել սաղմոսերգութեանը. «Եթէ երբեւէ չես ունեցել աղօթքի շնորհը, հնազանդուի՛ր սաղմոսերգութեանը եւ կատանաս» (ս. Նեղոս): Սաղմոսերգութիւնը ս. Նեղոսն անուանում է բազմախորհուրդ իմաստութիւն: Սաղմոսերգութիւնը կամ աղօթական կանոնի հնազանդ կատարումը խաղաղեցնում է ախտերը եւ հանդարտեցնում մարմնի խռովքը՝ հոգին նախապատրաստելով հոգեւոր աղօթքի, որն առաջընթաց է դէպի աննիւթականը, մտքի համբարձումն է երկրային իրողութիւններից առ Ա-

* Սաղմոսերգութիւնը, փաստօրէն, եղել է անապատականների աղօթական կանոնը: Նրանց մօտ պարտադիր էր Սաղմոսագրքի անգիր իմացութիւնը: Ցետագայում սաղմոսներին կցել են նաեւ Եկեղեցու հայրերի տարբեր աղօթքներ, եւ վերը նշուած սաղմոսերգութեան տակ պէտք է հասկանալ աղօթական կանոնը: Աղօթական կանոնը բաղկացած է երկու մասից՝ ընդհանրական (ժամապաշտութիւններ) եւ առանձնական: Աղօթքի առանձնական կանոնը ընտրում է հոգեւոր հօր օգնութեամբ:

ռուած: Հայրերից ոմանք առհասարակ չեն ասելիս աղօթական վիճակների աստիճանակարգումներ, ոմանք էլ աղօթքը բաժանում են մի քանի աստիճանների. օրինակ՝ Յովհաննէս Կղեմաքոսն ասում է. «Աղօթքի սկիզբն ընդդիմակաց խորհուրդների արտաքսումն է, միջինը՝ որ միտքն ու ուշադրութիւնը նրա խօսքերում մնան, իսկ աղօթքի կատարելութիւնը յափշտակութիւնն է առ Աստուած»: Աղօթքի ամէն մի աստիճանակարգում, ըստ էութեան, աստուածային շնորհի եւ հոգու ընդունելու կարողութեան համադիր մի վիճակ է: Հոգին ճգնութիւններով նախապատրաստւում է շնորհի ընդունելութեան եւ ներընակեցման, իսկ երբ գալիս է շնորհը, հոգու բոլոր զօրութիւնները սկսում են պայծառանալ, մարդը սկսում է հոգով եւ ճշմարտութեամբ փառաւորել Տիրոջը: Հոգու իւրաքանչիւր զօրութեան լուսաւորում կարելի է բնորոշել որպէս աղօթքի աստիճան. օրինակ՝ մտքի պայծառութիւն, սրտի ջերմութիւն, սրտի փշրուածութիւն եւ անընդհատ արտասուքներ, զգայականութեան դադարեցում, խորհուրդների յստակութիւն, անվրդովութիւն եւ անկիրքութիւն:

***

Ճշմարիտ աղօթքը հոգու համար բացայայտում է էապէս նոր եւ զարմանալի հոգեվիճակներ՝ հեզութիւն, անբարկութիւն, անյիշաչարութիւն, սէր, խնդութիւն, խաղաղութիւն, գոհութիւն եւ այլն: Աղօթքն ուղեկցում է դէպի աստուածային գոյութեան անմատչելի մատոյցները, Աստուծոյ հետ միութեան, մարդու հոգին լցնում ցնծութեամբ եւ ուրախութեամբ, մարդուն դարձնում Աստուծոյ անճառելի խորհուրդների հաղորդակից: Այն, ինչ անհասանելի է մարդկային բնութեան սահմանների համար, հնարաւոր է դառնում աստուածային շնորհի ներգործութեամբ. մարդկային հոգին յայտնւում է գերբնական վիճակում, որ կոչւում է յափշտակութիւն կամ հիացում: Հայրերը նշում են, որ աստուածտեսութեան այս վիճակները աննկարագրելի են մտքի եւ խօսքի համար. արարչական արտայայտակերպերը խիստ տկար են այսպիսի վերբնութենական իրողութիւնների նկարագրման համար: Ահա թէ ինչ է վկայում Պօղոս առաքեալն այս մասին. «Գիտեմ մի մարդու ի Քրիստոս, որ աւելի քան տասնչորս տարի առաջ (թէ մարմնով էր՝ չգիտեմ, եւ թէ առանց մարմնի՝ չգիտեմ. Աստուած գիտէ) յափշտակուեց մինչեւ երրորդ երկինք: Եւ գիտեմ այդպիսի մարդու (թէ մարմնով էր կամ առանց մարմնի՝ չգիտեմ. Աստուած գիտէ), որ յափշտակուեց մինչեւ դրախտ եւ լսեց անպատում խօսքեր, որ մարդս չի կարող խօսել» [Բ Կոր. ԺԲ 2–4]: Երբեմն հայրերը խօսում են նաեւ աղօթքի շատ բարձր աստիճանների մասին, որոնց հասել են սակաւաթիւ Աստուծոյ ընտրեալներ: Ըստ էութեան, աստուածտեսութիւնը աղօթքի վերին սահմանն է, քանզի այդ սահմանից այն կողմ այլեւս դադարում է հոգու ամէն տեսակ ներգործութիւն, մարդը յայտնւում է Աստուծոյ գերբնական հայեցողութեան մէջ:

ԱՂՕԹԱԿԱՆ ՆԵՐԱՐՈՒԵՍՏ

Աղօթքը, լինելով նախ եւ առաջ ներքին իրողութիւն, պահանջում է հոգու բոլոր զօրութիւնների համադիր կարգաւորութիւն: Այս ներքին կարգաւորութիւնը հայրերն անուանում են գիտութիւնների գիտութիւն, արուեստների արուեստ եւ այլն: Ճշմարիտ աղօթքի համար պէտք է հեռանալ այս աշխար-

հից կամ մեռնել այս աշխարհի համար: Ի՞նչ է նշանակում մեռնել այս աշխարհի համար: Նախ եւ առաջ նշանակում է կնքել զգայարանները այս աշխարհի դիւային յարձակումների դիմաց, ձեռք բերել զգայական մեռելութիւն մեղքի ոլորտի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ պէտք է փակել հոգու դռները օտար ուժերի առաջ: Հոգու այս վիճակը հեշտութեամբ ձեռք չի բերւում, այլ մեծ զոհողութիւնների գնով: Անապատական հայրերից շատերը բազում տարիների ճգնութիւններից յետոյ են միայն հասել դրան: Այսպիսի վիճակում աղօթականը մէկ պատերազմ ունի. դա մտքերի եւ խորհուրդների պայքարն է: Աղօթքի բուն արուեստը մտքերի եւ խորհուրդների մէջ է: Պէտք է մտքի ծայրագոյն ուշադրութեամբ եւ խորհուրդների հսկումով սպասել Տիրոջ շնորհի այցելութեանը, իսկ երբ յայտնւում է շնորհը, այնժամ ինքն է ուսուցանում, թէ ինչպէս ճշմարտապէս աղօթել: Ահա թէ ինչ է գրում ս. Մակար Մեծը. «Տիրոջը հաճոյ լինելու ողջ խնդիրը խորհուրդների մէջ է: Ուստի փութա՛ ներքնապէս խորհուրդներովդ հաճոյ լինել Նրան եւ ամէն ժամ ներսում ակնկալել Տիրոջը: Միշտ եւ հանապազ

փութա՛ ներսումդ խորհուրդներով փնտրել Նրան եւ բռնաբա՛ր իսկ հարկադրիր քո կամքը՝ բարեյօժարութեամբ մտքիդ ախորժումն առ Տէր պահելու: Եւ ապա կտեսնես, թէ ինչպէս Ինքն Իր կամքով կգայ եւ օթեւան կգտնի քեզ մօտ: Եւ որչափ որ միտքդ կամքով բռնադատես՝ ամբողջ սրտով փնտրելով Նրան, նոյնքան եւ առաւել Նա՛ կհարկադրուի Իր գթութեամբ եւ ըստ Իր բարերար քաղցրութեան գալ քեզ մօտ եւ հոգեպէս հանգստացնել քեզ: [Գիտցի՛ր, որ] ամենեւին էլ չի լքել քեզ, այլ անտեսանելի կերպով կանգնած է քեզ մօտ, տեսնում է քո միտքը եւ խորհուրդները, հայում քո մտածողութիւններին, տեսնում, թէ ինչպէս ես աղօթում Իրեն՝ ամբողջ անձո՞վ, թէ՞ ծուլութեամբ, մինչեւ իսկ՝ յուլանալով եւ կամ թոյլ մտքո՞վ եւ ո՞չ արդեօք՝ ինչ-ինչ մեղքերի գործառնութեամբ ախտաւորուած:

Արդ, երբ դու տեսնես, որ ամէն ժամ գործառնութեամբ հանդերձ սփռում ես քո խորհուրդները Տէր Աստուծոյ եւ միայն Նրա հայեացքի առաջ, այնժամ Ինքը Տէրը կյայտնուի քեզ, Իրեն անճառապէս ցոյց կտայ, Իր ցանկալի գեղեցկութեամբ կպայծառացնի, Իր օգ-

նականութեամբ առլեցուն կդարձնի, իր ողջ յաղթութիւնը կտայ եւ կազատի քեզ քո անբուժելի թշնամիներից՝ հայելով քո՝ նախապէս Իրեն ուղղուած անզբաղ խնդրուածքներին՝ մտքիդ անսխալ ակնկալութեանը, եւ սրտիդ՝ Իր հանդէպ միշտ աննուազ տածուող սիրուն: Ահա այսպէս կուսուցանի եւ կտայ քեզ ճշմարիտ աղօթք, հաւատքի եւ ճշմարտութեան սէրը, երկնային եւ ճշմարիտ խնդութիւնը, որն Ինքն իսկ Քրիստոսն է, որ ամէնուրեք քեզ հետ է»:

Աղօթքը հայրերն անուանում են բանաւոր պատարագ: Այդ պատարագը մատուցւում է մարդու ներքին տաճարում կամ խորհրդակիր սենեակում: Այս խորհրդակիր սենեակը կամ խորհուրդների բնակարանը սիրտն է, որը մարդաբանական կառոյցի ներքին-խորհրդական կենտրոնն է: Ս. Գրիգոր Լուսաւորիչը սիրտն անուանում է խորհուրդների շտեմարան, Սուրբ Հոգու տաճար, Հոգու շարժումների ընդունարան: Հայրաբանական գրականութեան մէջ յաճախ սիրտն անուանւում է խորհուրդք հաւաքական եզրով: Միւս կողմից՝ խորհուրդք բառի նախընտրութիւնը, թերեւս, թելադրուած է նրանով, որ «սիրտ» եզրը կարող էր ընկալուել իր խիստ մարմնական տեղակայումով, մինչդեռ սրտի խորհրդական ընկալումը աւելի լայն է եւ տարածւում է մարդաբանական ողջ կառոյցի վրայ: Ս. Գրիգոր Տաթեւացին մարդաբանական կառոյցի մէջ որպէս գլխաւոր անդամ է դիտում սիրտը՝ նմանեցնելով արեգակի, իսկ միւս գլխաւոր անդամներին՝ մոլորակների նրա շուրջ: Մարդու բոլոր անդամները իրենց լոյսը ստանում են խորհրդական արեգակի լոյսից, որը սիրտը ստանում է Սուրբ Հոգուց, երբ ճշմարտապէս աղօթում է:

Այսպիսով, աղօթքը ներքին քահանայագործութիւն է սրտի խորհրդական տաճարում: Բայց աղօթքը սկսւում է այն ժամանակ, երբ միտքը կտրւում է արտաքին զգայութիւններից, ամփոփւում սրտի խորքում: Ս. Գրիգոր Տաթեւացին գրում է. «Նախ՝ աղօթողին երեք իր է պէտք: Առաջին՝ որ հաւաքի միտքը բոլոր զգայութիւններից սրտի խորքում ու սենեակում եւ այնպէս ծածուկ աղօթի՝ ըստ այնմ. «Մտի՛ր քո սենեակը եւ փակի՛ր զգայարանները» [հմմտ. Մատթ. 26]: Եւ Դաւիթն ասում է. «Խորքից կանչեցի Քեզ, եւ լսեցիր ինձ»

[Սաղմ. ՃԼ 1]: Երկրորդ՝ որ սիրտը սրբուած լինի բոլոր մեղքերի տեսակներից եւ չար խորհուրդներից: Եւ այնպէս սրտով սուրբերն աղօթքով կտեսնեն Սուրբ Աստծուն, ինչպէս ասում է Տէրը [տե՛ս Մատթ. Ե 8]: Իսկ եթէ «մեղք տեսնի սրտում, չի լսի», ինչպէս ասում է Դաւիթը [հմմտ. Սաղմ. ԿԶ 18]: Երրորդ՝ որպէսզի սրտի անձկութեամբ բորբոքի սէրն առ Աստուած եւ այնպէս մատուցի բաղձանքները, ինչպէս Աննան սրտի բաղձանքով աղօթեց, եւ Աստուած լսեց [տե՛ս Ա Թագ. Բ 1–10], եւ Դաւիթն ասում է. «Նեղութեան եւ անձկութեան մէջ կանչեցի Տիրոջը, եւ լսեց ինձ» [տե՛ս Սաղմ. ԺԷ 7]»: Ըստ Տաթեւացու՝ սրտի ներքին տաճարը մարդու ամենապաշտպանուած ոլորտն է, այնտեղ ո՛չ հրեշտակային, ո՛չ մարդկային, ո՛չ էլ դիւային զօրութիւնները չեն կարող թափանցել. «Մարդու սիրտը խոր շտեմարան է, մինչեւ իսկ ո՛չ մարդը, ո՛չ դեւերը, ո՛չ հրեշտակները չեն կարող ճանաչել, այլ միայն Աստուած է քննում սրտերը եւ երիկամները»: «Եւ երբ նոյն արթնացած սրտում տեսնում է յստակ խորհուրդը, ծագեցնում է իր լոյսը նրա մէջ եւ հաստատում հաւատքի եւ գործերի մէջ: Ինչպէս պատկերն է տպաւորւում յստակ հայելու մէջ, եւ աչքերի լոյսը՝ արեգակի լոյսով, եւ պայծառ ոսկին ու արծաթը՝ ճառագայթելով, այնպէս էլ աղօթողի յստակ միտքը Սուրբ Հոգու պայծառ լոյսը ձգում է իր վրայ եւ լուսաւորւում»: Երբ միտքն ամփոփւում է սրտի խորքում, նա առաւել պաշտպանուած է արտաքին յարձակումներից: Այնժամ «միտքն աղօթքով թռչում է դէպի վեր, դէպի երկինք, եւ մտնում է վարագոյրի ներքին կողմը, Աստուծոյ մօտ, եւ լուսաւորւում նոյն լոյսով ու բորբոքւում սիրով: Թշնամին՝ սատանան, չի կարող բռնել այսպիսի միտքը, այլ փախչում է հրի ջերմութիւնից եւ երկնային լոյսից...»: Վարագոյրի ներքին կողմը Տաթեւացին անուանում է արքութիւն արքոց, ուր բնակւում է անմատոյց լոյսը, այնտեղ է Աստուծոյ սեղանը, ուր մատուցւում է ճշմարիտ բանաւոր պատարագը:

Այսպիսով, ովքեր յարաժամ ճգնութիւններով եւ առաքինութեան գործերով կատարեալ անզգայութիւն են ձեռք բերել այս աշխարհի նկատմամբ, նրանք հասել են ճշմարիտ աղօթքի մատոյցներին: Երբ փակուած են հոգու դռները, հոգու բոլոր զօրութիւնների համա-

գործակցութեամբ պէտք է սպասել Տիրոջ այցելութեանը հոգու խորհրդական տաճարում: Ովքեր արժանացել են մտնելու այս ներքին աստուածային տաճարը, նրանք, թողած ամէն տեսակ աշխարհիկ համեմատութիւններ եւ կերպեր, հոգով եւ ճշմարտութեամբ երկրպագում են Աստծուն:

ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ

Աստուծոյ կողմից մարդուն տրուած պատուիրանների մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում «Տասը պատուիրանները» կամ «Տասնաբանեայ օրէնքը» [Ել. Ի 1–17], որոնք Աստուծոյ ձեռքով գրուեցին քարեղէն տախտակների վրայ եւ տրուեցին Մովսէս մարգարէին Սինա լեռան վրայ: Այս պատուիրանները հոգեւոր օրէնքներ են, որոնց պէտք է հետեւեն մարդիկ՝ աստուածահաճոյ կեանքով ապրելու եւ մեղքերից հեռու մնալու համար: Դրանցով էին շարժւում Հին ուխտի բոլոր մարգարէներն ու առաքինասէր մարդիկ: Մեր Տէր Յիսուս Քրիստոս հաստատեց օրէնքի կարեւորութիւնը [Մատթ. Ե 19], սակայն ասաց, որ Ինքն է լրումը եւ ամբողջացումն օրէնքի [Մատթ. Ե 17]: Քրիստոսով ոչ միայն ամբողջանում եւ նոր իմաստ է ձեռք բերում օրէնքը, այլեւ բացայայտւում է նրա բուն նպատակը. նախապատրաստել մարդուն՝ ընդունելու Քրիստոսի փրկութեան լոյսը եւ սիրոյ օրէնքը: «Լեռան

քարոզում» Տէրն էապէս նոր մեկնաբանութիւն է տալիս օրէնքին եւ ցոյց տալիս քրիստոնէական նոր պատուիրանապահութեան հիմնական տարբերութիւնը հին օրինապահութիւնից:

Տիրոջ պատուիրանները պահելը եւ մարդկանց պատուիրանապահութեան յորդորելը հոգեւոր կեանքի կարեւորագոյն խնդիրներից մէկն է, եւ իւրաքանչիւր քրիստոնեայ ոչ միայն պէտք է գիտենայ այդ պատուիրանները, այլ նաեւ սեփական փորձառութեամբ իրագործի իր կեանքում:

Այս տասը պատուիրանները եւ նրանց մէջ ընդգրկուած բոլոր ենթակէտերը մեզ մշտապէս յիշեցնում են, որ մեր կեանքը մեծագոյն աստուածային պարգեւ է. այն պատկանում է Արարչին եւ ոչ թէ մեզ: Աստուած ցանկանում է, որ մենք հեռանանք մեղքից եւ հոգեւոր կեանքով ապրենք: Սակայն հոգու վիհութիւնը տեսնում եւ գիտակցում են նրանք, ովքեր ձգտում են կատարել Տիրոջ կամքը՝ պատուիրանապահութեամբ, մեղքերի դէմ պայքարելով, փորձութիւնների եւ դժուարութիւնների համբերելով՝ յանուն հանդերձեալ բարիքների եւ յաւիտենական կեանքի:

Ա. Ես եմ քո Տէր Աստուածը, Ինձանից բացի ուրիշ աստուածներ չպիտի լինեն քեզ համար

Առ Աստուած ճշմարիտ հաւատքը հիմքն է հոգեւոր կեանքի: Հաւատքով ոչ միայն սկզբնաւորւում է Աստուծոյ եւ մարդու յարաբերութիւնը, այլեւ նրանով է պայմանաւորուած հոգեւոր կեանքի ողջ ընթացքը, նրա վերելքն ու զարգացումը: Ըստ Եկեղեցու վարդապետների՝ հաւատքն Աստծուց պարգեւուող շնորհ է, որը զօրացնում է հոգին՝ ճանաչելու Աստծուն. հաւատքով մենք յարաբերութեան մէջ ենք մտնում Աստուծոյ հետ, ճանաչում նրան, որ վեր է ամէն տեսակ ճանաչողութիւնից եւ անհասանելի՝ մարդկային բնութեան համար: Հաւատքի առաջին աստիճանը կամ տեսակը դաւանական հաւատքն է կամ հաւատքի դաւանութիւնը: Այս է հաստատում է ս. Աթանասը. «Աստծուն ճանաչելու առաջին տեսակը ճշմարիտ հաւատքի դաւանութիւնն է»:

Դաւանել նշանակում է ընդունել, հաւատարմութիւն խոստանալ, խոստովանել, վկայել որպէս ճշմարտութիւն եւ հաստատել այն, ինչի հաւատում ես: Իսկ դաւանութիւնը հա-

ւատքի հիմնական սկզբունքների ամբողջութիւնն է, որին պէտք է ամբողջ սրտով հաւատայ ամէն մի քրիստոնեայ: Դաւանել նաեւ նշանակում է խոստովանել եւ վկայել բերանով. «Քանի որ սրտով հաւատում էք արդարանալու համար եւ բերանով խոստովանում փրկուելու համար. քանզի այս է Գիրքն [ասում]. «Ամէն ոք, ով հաւատայ Նրան, չի ամաչի»» [Հռոմ. Ժ 10]: Ահա թէ ինչու ամէն օր եկեղեցում բարձրաձայն արտասանւում է Հաւատոյ հանգանակը: Դաւանական մաքրութեան հարցերը մշտապէս եղել են Եկեղեցու ուշադրութեան կենտրոնում, եւ հայրերը, պայքարելով զանազան հերձուածների եւ աղանդների դէմ, իրենց աստուածաբանական գրուածքներով մշտապէս կրթել ու լուսաւորել են հաւատացեալների հոգիները եւ զերծ պահել վտանգաւոր շեղումներից: Դաւանական մաքրութիւնը նրանց կողմից համարուել է քրիստոնեայ լինելու անհրաժեշտ նախապայման: Հաւատքի մաքրութիւն է պահանջուել իւրաքանչիւր մկրտուող մեծահասակից (փոքրի դէպքում՝ կնքահօրից) եւ առաւելապէս՝ մկրտող հոգեւորականից, որը պէտք է ուսուցանի եւ նախապատրաստի մկրտուողին: Այս է վկայում «Մաշտոց» ծիսարանում մկրտութիւնից առաջ քահանային ուղղուած խրատը. «Մինչեւ չափահասի մկրտութիւնը, որը կամենում է քրիստոնեայ լինել, պէտք է նրան ուսուցանել սուրբ Եկեղեցու հաւատքը եւ վարդապետութիւնը, այսինքն՝ Աստուածային Անձերի Երրորդութիւնը, աշխարհի արարչագործութիւնը, սուրբ այրերի ընտրութիւնը, Քրիստոսի ծնունդը եւ նրա բոլոր փրկարար տնօրէնութիւնները՝ մկրտութիւնը Յովհաննէսից, քարոզութիւնը, հրաշագործութիւնները, մատնութիւնը, խաչելութիւնը, մահը, թաղումը, յարութիւնը, համբարձումը, Սուրբ Հոգու գալուստը, Յիսուսի Նշկորդ գալուստը, համընդհանուր յարութիւնը, գործերի հատուցումը եւ սուրբ Եկեղեցու եօթ խորհուրդները...»:

Սուրբ Գիրքն ուսուցանում է, որ հաւատքն առանց գործերի մեռած է. «Ինչպէս որ մարմինը մեռած է առանց հոգու, այնպէս էլ մեռած է հաւատքն առանց գործերի» [Յակ. Բ 26], ուստի ամէն ոք, ով հաւատում է, պէտք է աստուածպաշտութեան ճիգեր գործադրի եւ իր հոգում կենդանի պահի հաւատքի լոյսը, այ-

սինքն՝ աղօթի, պահք պահի, ողորմութեան գործեր կատարի եւ այլն: Ճշմարիտ հաւատքով մարդու հոգում հաստատուում է փրկութեան յոյսը, իսկ հաւատքից ու յոյսից ծնւում է աստուածսիրութիւնը, որը մարդկային բնութեան մեծագոյն պարգեւն է: Աստուածսիրութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսի կողմից համարուեց ամենամեծ առաքինութիւնը:

Այս պատուիրանին հակառակ են ոչ միայն նրանք, ովքեր չեն հաւատում Աստծուն կամ հետեւում են զանազան աղանդների ու մոլար ուսմունքների կամ սպառնալիքի տակ ուրանում են հաւատքը, այլեւ նրանք, ովքեր թէպէտեւ ընդունում են Աստծուն, բայց իրենց կեանքով ու վարքով հեռու են հաւատքից եւ աստուածպաշտութիւնից: Յատկապէս վտանգաւոր եւ հոգեկործան է կեղծաւորութիւնը, երբ մէկն արտաքնապէս իրեն ցոյց է տալիս իբրեւ բարեպաշտ, սակայն հոգու խորքում իր հպարտութիւնն է կերակրում:

Պէտք է զգուշանալ որեւէ ժամանակաւոր եւ փոփոխական բանի վրայ. յոյս դնելուց. մարդիկ շատ յաճախ հաւատքի տկարութեան պատճառով յոյս են դնում մարդկանց, նրանց

ուժերի ու կարողութիւնների վրայ, որի մասին Երեմիա մարգարէն ասում է. «Թող անիծեալ լինի այն մարդը, որ յոյսը մարդու վրայ կդնի» [Երեմ. Ժէ 5]: Նոյնիսկ եթէ մարդը հասել է սրբութեան, ապա այդ սրբութիւնը ոչ թէ իրենից է, այլ Աստծուց, որ բնակւում է նրա մէջ եւ սրբացնում նրան: Եկեղեցին ուսուցանում է աստուածահաճոյ սուրբերին յարգել եւ պատուել եւ ոչ թէ նրանց վրայ յոյս դնել: Նոյնպէս էլ պէտք է վերաբերուել երկնաւոր զօրութիւններին, որովհետեւ նրանք առանց Աստուծոյ հրամանի ոչինչ չեն կարող անել: Ո՛չ երկնային զօրութիւնները, ո՛չ մարդիկ, ո՛չ էլ որեւէ արարած չեն կարող մարդուն փրկութիւն եւ յաւիտենական կեանք պարգեւել, այլ միայն Աստուած:

Բ. Ձեզ համար կոտրեր չկերտես որեւէ բանի նմանութեամբ, որ վերեւում՝ երկնքում է, եւ ներքեւում՝ երկրի վրայ, եւ երկրի խորքի ջրերի մէջ. չպիտի երկրպագես ու չպիտի պաշտես դրանց

Այս պատուիրանը զգուշացնում է մեզ հեռու մնալ կռապաշտութիւնից: Հարկ է իմանալ,

որ կռապաշտութիւնը լինում է երեք տեսակ: Նախ՝ Աստուծոյ փոխարէն անմարմինների պաշտելը եւ երկրպագելը, այսինքն՝ երկնային զօրութիւններին, մարդկանց հոգիներին կամ դիւային ուժերին: Երկրորդ՝ ոսկեայ, արծաթեայ եւ նիւթեղէն այլ առարկաների (կուռքերի), նաեւ արեւի, լուսնի, աստղերի, կենդանիներին, բնութեան երեւոյթների եւ բարիքների պաշտամունքն ու երկրպագութիւնը: Այսինքն՝ այս պատուիրանն արգելում է որեւէ մէկի կամ որեւէ բան Աստծուց աւելի սիրել ու փառաբանել, Աստծուն մոռանալով՝ յոյսը դնել որեւէ մէկի կամ սին բաների՝ գուշակութեան, երազների, հարստութեան, սեփական աշխատանքի, ընդունակութիւնների, ուժերի եւ առաքինութիւնների, ինչպէս նաեւ սնոտի նախապաշարումների եւ նշանների վրայ, ինչպիսիք են, օրինակ, ծառերին լաթեր կապելը, ջրի մէջ դրամ նետելը եւն: Երրորդ՝ կռապաշտութիւն է մարմնաւորների եւ անմարմինների, շնչաւորների եւ անշունչների պատկերները Աստուած կոչելը եւ նրանց վրայ յոյս դնելը:

Եկեղեցին ընդունում եւ յարգում է ոչ թէ կուռքերի, պատահական մարդկանց կամ դիւական երեւոյթների պատկերները, այլ Ամենասուրբ Երրորդութեան տնօրէնութիւնների, սուրբ Կոյս Աստուածածնի, աստուածահաճոյ սուրբերի ու հրեշտակային դասերի սրբապատկերները, որոնք օգնում են մեզ հաստատուելու հոգեւոր կեանքի եւ աստուածպաշտութեան մէջ: Սրբապատկերները պարզ գծագրութիւններ եւ նկարազարդութիւններ չեն, այլ յաւիտենական կեանքի պատգամներն են հաղորդում մեր հոգիներին: Ինչպէս է դարի մեր վարդապետներից Վրթանէս Քերթողն է գրում. «Եկեղեցիներում նկարում են այն ամէնը, ինչի մասին Սուրբ Գիրքն է պատմում: Գրքերի խօսքերը միայն ականջներին են լսելի, իսկ պատկերները տեսանելի են աչքերին. աչքերով տեսնում, ականջներով լսում եւ սրտով հաւատում ենք»:

Որպէս կանոն՝ պէտք է երկրպագել եւ աղօթել միայն օրհնուած սրբապատկերների առջեւ, որոնք ստացել են աներեւոյթ աստուածային կնիքներ եւ ունեն սրբարար զօրութիւն: Օրհնուած պատկերները չունեն հոգեւոր զօրութիւն, այլ կարող են ներգործել միայն զգայարանների վրայ, որը կարող է օգտագործուել

նաեւ չարի կողմից: Հետեւաբար, քրիստոնեաների համար տեսանելի պատկերը սրբազան նշան է, որն օժտուած է անտեսանելի աստուածային զօրութեամբ, եւ քրիստոնէական պատկերայարգութիւնը ոչ թէ կռապաշտութեան, այլ աստուածպաշտութեան արտայայտութիւն է, որովհետեւ ոչ թէ պաշտում է նիւթական նշանը, այլ նրա հետ միաւորուած կենդանի աստուածային ներկայութիւնը:

Մենք նաեւ հաւատքով պաշտում ենք խաչը, որովհետեւ նրա վրայ չարչարուեց մեր Տէր Յիսուս Քրիստոս: Խաչը, որ մահուան գործիք էր, Քրիստոսի չարչարանքներով ու յարութեամբ դարձաւ յարութեան նշան եւ փրկութեան գործիք: Այս պատճառով էլ կոչւում ենք նաեւ խաչապաշտ: Խաչը նոյնպէս պէտք է օրհնուած լինի, ինչպէս սրբապատկերը, որպէսզի հոգեւոր զօրութիւն ունենայ եւ հալածի չարին:

Գ. Զո Տէր Աստուծոյ անունը զուր տեղը չարտասանես

Աստուծոյ անունը սուրբ եւ նուիրական է, ինչպէս ուսուցանում է Տէրունական աղօթքը.

եւ ոչ միայն այն արտասանելիս, այլ անգամ մտաբերելիս պէտք է մեծագոյն երկիւղ ունենայ: Աստուծոյ այս պատուիրանի դէմ են գործում նրանք, ովքեր խօսքով, մտքով եւ գործով արտայայտում են ոչ ուղղափառ, կեղծ, հերետիկոսական, հայհոյական կամ ծաղրական կարծիքներ եւ տեսակէտներ Ամենասուրբ Երրորդութեան, Նրա սուրբ պատուիրանների, եկեղեցու խորհուրդների եւ արարողութիւնների մասին, պարսաւում են սուրբ Աստուածածնին եւ աստուածահաճոյ սուրբերին: Ովքեր մոգութիւն, կախարդութիւն եւ գուշակութիւն են անում եւ, իբրեւ թէ Աստծուց եւ սուրբերից յայտնութիւններ եւ պատգամներ ստացած, մոլորեցնում անտեղեակ մարդկանց, ճշմարիտ ուղուց շեղում եւ կործանում: Ովքեր Տիրոջ անունով երդւում են՝ ամբողջ հոգով եւ զօրութեամբ ծառայել Աստծուն, Եկեղեցուն եւ հայրենիքին, սակայն ծառայում են իրենց շահերին եւ հոգեկորոյս հաճոյքներին: Ովքեր եկեղեցի են գնում ո՛չ Աստուծոյ եւ ո՛չ էլ իրենց հոգու փրկութեան, այլ մարդկանց աչքում աստուածապաշտ եւ առաքինի երեւալու համար: Ովքեր առանց երկիւղի եւ ուշադրութեան աղօթում

են, մասնակցում խորհրդակատարութիւնների եւ արարողութիւնների. այս մասին է ասում Ինքը Քրիստոս. «Ոչ ամէն ոք, որ ասում է ինձ՝ Տէ՛ր, Տէ՛ր, կմտնի երկնքի արքայութիւն, այլ նա, ով կատարում իմ Հօր կամքը, որ երկնքում է» [Մատթ. է 21]: Ովքեր խօսում են Աստծուց, սակայն իրենց կեանքում հեռու են հոգեւորից, այսպիսիները յաճախ գայթակղութեան եւ Տիրոջ անունը հայհոյելու պատճառ են դառնում, որոնց մասին զգուշացնում է Տէրը [Մատթ. ԺԸ 6–9]: Պէտք է նկատի ունենալ, որ ամէն ոք չի կարող խօսել Տիրոջ անունից, այլ միայն նրանք, ովքեր կոչուած են Աստուծոյ խօսքի սպասաւորութեան եւ ունեն հոգեւորը մարդկանց սրտին հասցնելու շնորհը: Ուրեմն հոգեւոր խօսակցութեան մէջ մտնելուց առաջ մարդ պէտք է աղօթքով քննի իրեն եւ տեսնի, թէ ունի՞ արդեօք առաջնորդութիւն Տիրոջից, որպէսզի իր խօսքը գայթակղութեան առիթ չդառնայ, եւ իր պատճառով հաւատքը չծաղրուի:

Պէտք է ջանանք հեռու մնալ այսպիսի մեղքերից եւ ամենից առաջ փնտրենք Աստուծոյ կամքը, Տիրոջ անունը երկիւղով յիշատակենք

եւ առանց հարկի չգործածենք, հաւատքով ապրենք եւ հեռու մնանք կեղծիքից, չերդուենք եւ դիմացինից երդում չպահանջենք՝ ըստ տէրունական հրահանգի՝ «Ես ձեզ ասում եմ՝ ամենեւին չերդուել, այլ ձեր խօսքը լինի՝ այո՝ այո, եւ ոչը՝ ոչ. որովհետեւ դրանից աւելին չարից է» [Մատթ. Ե 34, 37]:

Դ. Ցիշի՛ր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես եւ կատարես քո բոլոր գործերը. եօթներորդ օրը քո Տէր Աստծու շաբաթ օրն է

Այս պատուիրանը մեզ ուսուցանում է շաբաթուայ մէկ օրը սուրբ պահել, այսինքն՝ հեռու մնալ աշխարհիկ գործերից եւ այդ օրն ամբողջութեամբ նուիրել Աստուծոյ փառաւորմանը եւ հոգեւոր գործերին: Հրեաների համար այդ օրը շաբաթն է, որը նշանակում է «հանգիստ»: Աստուած վեց օրում արարեց աշխարհը եւ եօթերորդ օրը հանգստացաւ, որպէսզի մենք էլ վեց օր զբաղուենք մեր մարմնական գործերով եւ եօթերորդ օրը թողնենք աշխարհիկ գործերն ու հոգսերը:

Քրիստոնեաների համար հանգստի օրը ոչ թէ շաբաթն է, այլ կիրակին՝ ի յիշատակ մեր Փրկչի հրաշափառ յարութեան: Կիրակին Քրիստոսի մարդեղութեամբ փրկագնուած նոր արարչութեան տօնն է, որով մեզ տրուեց նոր կեանք եւ նոր ժամանակ: Իսկ շաբաթ օրը քրիստոնեաների կողմից պատուում է որպէս սրբոց յիշատակութեան օր:

Կիրակին պէտք է նուիրել Աստծուն. պէտք է գնալ եկեղեցի եւ մասնակցել պատարագի, տանն աղօթել եւ հոգեւոր ընթերցանութեամբ զբաղուել, օգնել աղքատներին ու կարօտեալներին, այցելել հիւանդներին եւ այլն: Չի կարելի այդ օրն աշխատել առանց ծայրայեղ անհրաժեշտութեան կամ էլ՝ ծուլութեան պատճառով չգնալ եկեղեցի: Այս պատուիրանը խախտում են ոչ միայն նրանք, ովքեր չեն գնում եկեղեցի, այլեւ նրանք, ովքեր գնում են ակամայ, պարտադրաբար կամ ուղղակի հետաքրքրութեան համար, ովքեր անտարբեր կանգնում են եկեղեցում, բամբասում, շատախօսում, որոնց մտքերը այս ու այն կողմ են թափառում: Այս պատուիրանը խախտում են նաեւ նրանք, ովքեր աներկիւղ եւ անպատկառ

կերպով են կատարում իրենց հոգեւոր սպասաւորութիւնը, աղօթում եւ երգում են ոչ թէ Աստուծոյ փառքի, այլ ինքնաբաւարարման, ինքնամեծարման կամ մարդահաճութեան համար՝ գայթակղութեան առիթ դառնալով ուրիշների համար:

Կիրակի օրը յատկապէս պէտք է զգուշանալ մեղքերից եւ մեղսայարոյց հանդիպումներից ու շփումներից, հեռու մնալ որկրամոլութիւնից, արբեցողութիւնից, բամբասանքից, չարախօսութիւններից, հայհոյանքներից եւ այլն: Մեղքի տակ են ընկնում նաեւ նրանք, ովքեր անտեղի արգելում են իրենց հարազատներին, ենթականերին կամ գործակիցներին եկեղեցի գնալ Տիրոջ սուրբ օրը՝ աղօթելու եւ արարողութիւններին մասնակցելու:

Ե. Պատուի՛ր քո հօրն ու քո մօրը, որպէսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրայ, որ Տէր Աստուած տալու է քեզ

Այս պատուիրանը մեզ սովորեցնում է սիրել եւ պատուել մեր ծնողներին: Աստծուց յետոյ մենք պէտք է սիրենք մեր ծնողներին, որովհետեւ մեր աներեւոյթ հոգին Աստուած է

արարում, իսկ մեր երեւելի մարմինը՝ մեր ծնողները, որի համար նրանք երկրորդ աստուածներ են կոչւում իրենց զաւակների համար: Ոչ ոք չի կարող ամբողջապէս վարձահատոյց լինել իր ծնողներին ողջ կեանքի ընթացքում՝ նրանց չարչարանքների, հոգածութեան, պահպանութեան եւ սիրոյ փոխարէն: Յատկապէս կարեւոր է հոգ տանել ծնողների մասին, երբ նրանք ծերանում են եւ խնամքի ու հոգատարութեան կարիք զգում: Պէտք է ամէն օր աղօթենք մեր ծնողների համար եւ ջանանք արժանանալ նրանց օրհնութեանը, ինչպէս Իսահակն արժանի եղաւ Աբրահամի օրհնութեանը, Յակոբը՝ Իսահակի, եւ նրանք աճեցին ու բարգաւաճեցին: Ով սիրում է իր ծնողներին, նա սիրում է ե՛ւ Աստծուն, ե՛ւ իր բոլոր մերձաւորներին, իսկ ով չի սիրում եւ չի յարգում իր ծնողներին, նա անարգում է ե՛ւ Աստծուն, ե՛ւ մարդկանց, որի պատճառով էլ կարժանանայ անէծքի եւ պատժի, ինչպէս Յակոբի որդի Ռուբէնը եւ Նոյի որդի Քանանը: Մնողների օրինակով պէտք է պատուել հոգեւոր ծնողներին եւ ուսուցիչներին, մարմնաւոր առաջնորդներին եւ ղեկավարներին, ծերերին եւ տարէցներին:

Այս պատուիրանը սովորեցնում է մեզ սիրել հայրենիքը, Եկեղեցին, սրբութիւնները եւ հոգեւոր ժառանգութիւնը: Պէտք է մեծագոյն հոգածութեամբ վերաբերուել այն ամէնին, ինչ աւանդուել է մեր հայրերի կողմից. եւ ոչ միայն հարկ է զգուշութեամբ պահպանել, այլ նաեւ հարստացնել եւ զարգացնել այդ աւանդը, որպէսզի չնմանուենք քանքարը թաքցնող ծառային [Մատթ. Իե 14–30]:

Ջ. Մի՛ սպանիր

Մարդասպանութիւնը ծանրագոյն ոճրագործութիւն է: Ոչ ոք իրաւունք չունի սպանել Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ արարուած մարդուն: Դժբախտաբար, մարդիկ խախտում են այս պատուիրանը. եւ դա կատարւում է երեք ձեւով՝ մտքով, խօսքով եւ գործով: Նախ՝ մտքով ենք խախտում, երբ նախանձում, բարկանում, ատում, ոխ ենք պահում. նաեւ՝ երբ յամառօրէն մեր մէջ չենք ընդունում ճշմարտութիւնը, ամբողջութեամբ չենք զղջում եւ ցաւում մեր մեղքերի համար եւ յուսահատուած՝ մտադրւում ենք ինքնասպան լինել, որն աւելի ծանր եւ աններելի մեղք

է, քան մարդասպանութիւնը, որովհետեւ նախ՝ մեր կեանքը Աստուած է տուել եւ միայն Նա կարող է վերցնել. «Ես եմ սպանում եւ Ես եմ փրկում» [Բ Օր. ԼԲ 39], եւ երկրորդ՝ որեւէ մարդասպան դեռ հնարաւորութիւն ունի ապաշխարելու եւ իր մեղքը քաւելու՝ թէկուզ իր արեամբ, սակայն ինքնասպանը չունի այդ հնարաւորութիւնը: Այս մահացու մեղքի տակ են ընկնում նաեւ նրանք, ովքեր իրենց առողջութիւնը մսխում են ծուլութեամբ, որկրամոլութեամբ, արբեցողութեամբ կամ թմրադեղերի օգտագործմամբ ու հեշտասիրութեամբ, ինչպէս նաեւ նրանք, ովքեր չեն պաշտպանւում հիւանդութիւններից, հիւանդանալիս չեն դիմում բժիշկների կամ էլ բժշկական օգնութեան համար դիմում են անգէտ, չարաւեան միջոցներով բուժողների:

Երկրորդ՝ սպանութիւնը լինում է նաեւ խօսքով, որ պատճառ է դառնում հոգեւոր եւ մարմնաւոր մահուան: Սպանութիւն ենք գործում, երբ չարախօսում ենք, բամբասում, դաւաճանում, անիծում, հայհոյում, կոպտում եւ նմանատիպ այլ բաներ անում՝ վնաս հասցնելով մարդկանց կեանքին եւ առողջութեանը: Մարդասպանութեան մասնակից ենք լինում, երբ խօսքերով՝ չար ուսմունքով ու կեղծ քարոզչութեամբ, սադրանքով ու հրահրելով, չարաենեղ հովանաւորչութեամբ պատճառ ենք դառնում հաւատափոխութեան ու դաւանափոխութեան, աղանդների, հակաքրիստոնէական ու չարաղաւան ուսմունքների, հակաեկեղեցական, հակապետական, ապազգային եւ հակամարդկային զանազան յանցագործութիւնների ծագման եւ առաջխաղացման:

Երրորդ՝ սպանութիւնը լինում է գործով, երբ վերը նշուած այս մեղքերն ու յանցանքները մահաբեր գործի ենք վերածում: Գործով սպանութիւն ենք գործում, երբ ուղղակի կամ անուղղակի մասնակցութիւն ենք ունենում սպանութեանը, նպաստում ենք մահուան դատապարտելու մարդկանց. երբ մեղաւորներին կամ ենթականերին պատժում ենք աւելորդ ատելութեամբ եւ դաժանութեամբ. երբ ճնշում, կեղեքում, զրկում եւ տարբեր միջոցներով մահուան դուռն ենք հասցնում աղքատներին, անօգնականներին, տնանկներին, այրիներին եւ որբերին:

Սպանութեան մեղք են գործում այն կանայք, ովքեր երեխայ չունենալու կամ իրենց մարմնական մեղքը թաքցնելու համար տարբեր հնարքներով վիժեցնում են իրենց մէջ սաղմնաւորուած պտուղը: Այս մեղքի համար ոչ պակաս պատասխանատուութիւն են կրում այս կանանց ամուսինները, եթէ դա կատարուել է իրենց համաձայնութեամբ կամ թելադրանքով, ինչպէս նաեւ այս ամէնին նպաստող բժիշկները եւ խորհրդատուները: Աստուածային այս պատուիրանն արգելում է կեանքի եւ մեր մերձաւորների բարեկեցութեան դէմ որեւէ ոտնձգութիւն. փոխարէնը՝ յորդորում է մեզ, որ բարիք գործենք մարդկանց համար, օգնենք աղքատներին, թեթեւացնենք դժբախտների եւ թշուառների ծանր վիճակը, բոլորի նկատմամբ լինենք ողորմած, բարեսիրտ, քաղաքավարի եւ բարեացակամ, հարթենք վէճերն ու վերջ տանք թշնամութիւններին, հաշտուենք միմեանց հետ, համբերութեամբ տանենք վիրաւորանքները եւ ներենք բոլորին:

Է. Մի՛ շնացիր

Այս պատուիրանն ուսուցանում է մեզ սուրբ պահել մեր մարմինը պոռնկութեան ախտից եւ նրա բոլոր տարատեսակներից: Մեր Տէր Յիսուս Քրիստոս շնութիւն է անուանում ոչ միայն այս ախտի մարմնաւոր իրագործումը, այլեւ մտքով ցանկանալն իսկ: Ուրեմն ոչ միայն մարմնապէս, այլ նաեւ հոգեպէս պէտք է հեռու մնալ շնութիւնից. շատ յաճախ մարդիկ ընկնում են այս մեծ մեղքի մէջ, որովհետեւ նրանց միտքը, սիրտն ու ցանկութիւնները նախապէս ապականուած են եղել այս ախտով:

Շնութիւն են գործում նրանք, ովքեր, պսակուած լինելով, ապականում են ամուսնական սուրբ անկողինը եւ մարմնական յարաբերութիւնների մէջ են մտնում ուրիշների հետ, ովքեր չեն հոգում իրենց զոյգի՝ տղամարդը՝ կնոջ, եւ կինը՝ ամուսնու հոգեւոր, բարոյական եւ մարմնական վիճակի մասին կամ որեւէ այլ ձեւով խախտում են ամուսնական սէրը, պարտականութիւնը, հաւատարմութիւնն ու անարատութիւնը: Զոյգերը նաեւ պէտք է զգոյշ լինեն, որ չընկնեն ամուսնական մէկ այլ տեսակ

անառակութեան եւ շնութեան մէջ. նրանք պէտք է հեռու մնան չափազանց, անյագ եւ վաւաշոտ մարմնական ցանկասիրութիւնից ու կապուածութիւնից, այլ պէտք է չափաւորութեամբ կատարեն իրենց ամուսնական պարտականութիւնը, որը սիրոյ դրսեւորում է, Աստուծոյ համար որդեծնութեան եւ պտղաբերութիւնից զերծ մնալու միջոց [Ա Կոր. Է 2–6]: Շնութիւն եւ պոռնկութիւն են գործում նրանք, ովքեր առանց ամուսնութեան, կուսական վիճակում սեռական յարաբերութիւնների մէջ են մտնում՝ ապականելով Աստծուց տրուած իրենց կուսական անարատութիւնը: Այս չար ախտով տառապում են նաեւ նրանք, ովքեր խօսքով, գործով, պահուածքով կամ ինչ-որ այլ ձեւերով մարդկանց մէջ կիրք են յարուցում եւ մարմնական ցանկութիւններ գրգռում:

Պոռնկութեան մեղքից հեռու մնալու համար պէտք է զգուշանալ մարմնի ցանկասիրական ձգտումներից, որոնք անմիջական պատճառն են այս ախտի առաջացման, յատկապէս արբեցութիւնից, որկրամոլութիւնից, ծուլութիւնից, աչքի եւ սրտի ցանկասիրութիւնից, շուայտութիւնից, անպարկեշտ պերճութիւններից ու զարդարանքներից, գայթակղեցնող գրականութիւնից, նկարներից, հանդէսներից, հաւաքոյթներից, ներկայացումներից, ֆիլմերից, անամօթ եւ գայթակղեցնող հանդիսախաղերից ու խրախճանքներից: Այս ախտաւոր վիճակը տարբեր տեսակի վնասներ է հասցնում թէ՛ հոգուն, թէ՛ մտքին եւ թէ՛ մարմնին. նախ թուլանում է հոգու ամրութիւնը, ապա մարդ կորցնում է զգաստ դատողութիւնն ու խիղճը, ինչպէս Սիրաքն է ասում. «Գինին եւ կանայք այլասերում են ողջախոհ մարդկանց, իսկ անառակներին կապուողը դառնում է յանդուգն» [Սիր. ԺԹ 2]. այսպիսին արժանանում է Աստուծոյ դատաստանին. «Մարմնի գործերը յայտնի են, այսինքն՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, վաւաշոտութիւն, անառակութիւններ... այժմ ասում եմ ձեզ, որ այսպիսի բաներ գործողները պիտի դատուեն Աստծուց [Եբր. ԺԳ 4], [եւ] նրանք Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգելու» [Գաղ. Ե 19, 21]: Արդ, մենք միշտ պէտք է յիշենք, որ մեր մարմինները տաճարներ են Սուրբ Հոգու, Որը բնակւում է մեր մէջ [Ա Կոր. Զ 19], եւ մենք կենդանի քարերը կամ անդամներն ենք Քրիստոսի Եկե-

ղեցու: Եւ ինչպէս Պօղոս առաքեալն է ասում. «Քրիստոսի անդամներն առնելով՝ պոռնկի՞ անդամներ դարձնենք. քա՛ւ լիցի» [Ա Կոր. Զ 15]:

Ը. Մի՛ գողացիր

Այս պատուիրանն արգելում է որեւէ մէկից ինչ-որ բան գողանալ, խլել կամ գաղտնի խաբէութեամբ կորզել՝ չափման միաւորներով խաբելով, ապրանքները կամ նրանց գները կեղծելով, վարձն ուշացնելով եւ չվճարելով. գողութիւն է նաեւ երկրի աւանդն ու հարստութիւնը թալանելը, մարդկանց պարտքերը չտալը, կեղծ դրամով եւ փաստաթղթերով վճարելը, առեւտրական պայմանաւորուածութիւնները խախտելը եւ այլն: Զրկուածների եւ թալանուածների գանգատը միշտ լսելի է Տիրոջ ականջին, եւ մեղաւորների պատիժն անխուսափելի է. «Հարուստնե՛ր, լա՛ց եղէք եւ ողբացէ՛ք այն թշուառութիւնների համար, որ գալու են ձեր գլխին. որովհետեւ ձեր հարստութիւնը փտած է: Ահաւասիկ ձեր դաշտերը մշակած մշակների վարձը ձեզ մօտ պահեցիք. ձեր կողմից զրկուածն աղաղակում է, եւ հնձուորների բողոքը հասաւ Ամենակալ Տիրոջ ականջին» [Յակ. Ե 1, 4] «Եւ տեսայ. ահա մի թռչող գերանդի: Հրեշտակն ասաց ինձ. «Ի՞նչ ես տեսնում». ասացի. «Թռչող գերանդի եմ տեսնում՝ քսան կանգուն երկարութեամբ եւ տասը կանգուն լայնութեամբ»: Ասաց ինձ. «Դա այն անէծքն է, որ տարածւում է ամբողջ երկրի երեսին, որովհետեւ ամէն գողի մահացու պատիժը դրանով պիտի իրագործուի: Ես պիտի հանեմ դա,– ասում է ամենակալ Տէրը,– եւ այն պիտի մտնի գողերի տունը, պիտի մնայ նրանց տանը եւ պիտի սպառի այն» [Զաք. Ե 1–4]: Գողութիւն է կրօնական, պատմական, մշակութային, գիտական, ազգային, պետական եւ հասարակական արժէքները կամ հարստութիւնը յափշտակելը, ինչպէս նաեւ դրանք գաղտնի եւ անտեղի օգտագործելը, վնասելը, կեղծելը եւ իրենց վերագրելը:

Այս մեղքի մէջ են ընկնում նրանք, ովքեր տարբեր տեսակի կաշառքներով պաշտօն, աշխատանք, դիրք եւ բարեկեցութիւն են ձեռք բերում, գեղծում են ճշմարտութիւնը եւ անարդարացի գործեր անում. ովքեր գողերին եւ աւազակներին, ինչպէս նաեւ նրանց ապօրինի

աւարներն իրենց մօտ են թաքցնում, այնուհետեւ գողացած իրերը վաճառում կամ գնում. ովքեր ժլատութեան եւ շռայլութեան պատճառով վնաս են հասցնում իրենց եւ իրենց հարազատների առողջութեանը, չեն օգնում եւ ցաւակցում խեղճ, կարիքաւոր եւ աղքատ մարդկանց, Աստուծոյ շնորհածը բարի նպատակներով չեն օգտագործում, այլ տրւում են զեխութեան, խաղամոլութեան, արբեցութեան եւ ցոփութեան:

Գողութեան բացառիկ դէպքեր կան, որոնք մեղք չեն համարւում եւ չեն պատժւում: Առաջինն այն է, երբ բարկացած, մոլեգնած, յուսահատուած, հոգեկան անկառավարելի եւ մտաւոր անգիտակցական վիճակում գտնուող մարդկանցից գողանում, թաքցնում են զէնքերը կամ որեւէ այլ բան, որով նա կարող է վնաս հասցնել իր կամ մէկ ուրիշի կեանքին: Այս պարագայում սա գողութիւն չէ, այլ զգուշութիւն: Միւս դէպքն այն է, երբ որեւէ մէկը սովամահ չլինելու համար հաց կամ որեւէ սնունդ է վերցնում-ուտում կամ տալիս իր նման սովամահ լինող մէկին. սա անհրաժեշտութիւն է եւ ոչ թէ գողութիւն: Վերջին դէպքն այն է, երբ գա կա-

տարւում է հրամանով, օրինակ՝ իսրայէլացիները, իբրեւ աղիւսների վարձ, վերցրին եգիպտացիների թանկարժէք զարդերը, երբ դուրս եկան Եգիպտոսից, եւ այլեւս չվերադարձրին. «Իսրայէլացիներն արեցին այնպէս, ինչպէս իրենց հրամայել էր Մովսէսը. եգիպտացիներից նրանք ուզեցին ոսկեայ, արծաթեայ զարդեր ու զգեստներ: Տէրը շնորհը եգիպտացիների առաջ պարգեւեց իր ժողովրդին. սրանք զարդեր տուեցին նրանց» [Ել. ԺԲ 35–36]: Բոլոր մնացեալ դէպքերում գողութիւնը ծանր մեղք է համարւում եւ արժանի է պատժի:

Գողութիւնն ի յայտ է գալիս հետեւեալ պատճառներով: Նախ՝ վատ դաստիարակութիւնից, երբ մարդիկ վաղ հասակից Աստուծոյ երկիւղով չեն կրթւում եւ մեծանում են առանց օգտակար մասնագիտութիւն կամ արհեստ ձեռք բերելու. ապա՝ ծուլութիւնից, ցոփութիւնից, աննպատակ ապրելու ցանկութիւնից եւ, անշուշտ, ագահութիւնից եւ ընչաքաղութիւնից: Այս չարիքից ձերբազատուելու համար պէտք է նախ զղջալ արածի համար, խոստովանել եւ գողացածը վերադարձնել կամ ինչ-որ ձեւով փոխհատուցել տիրոջը, իսկ եթէ հնաբա-

ւոր չէ տիրոջը վերադարձնել գողացածը, ապա լաւ կլինի այն տալ մի աղքատի կամ եկեղեցու: Պէտք է հեռու մնալ այս մեղքից եւ կատարել սրան հակառակ այն առաքինութիւնները, որ պատուիրում է մեզ Աստուած՝ ողորմածութիւն, արդարութիւն, հաւատարմութիւն, առատաձեռնութիւն, անշահախնդրութիւն, հոգատարութիւն խեղճերի եւ տկարների նկատմամբ, որպէսզի արժանի լինենք Տիրոջ ողորմութեանն ու գթութեանը:

Թ. Քո հարեւանի դէմ սուտ վկայութիւն մի՛ տուր

Սուտ վկայութիւնը մեծ մեղք է եւ բազմաթիւ չարիքների պատճառ: Ստի աղբիւրը հէնց ինքը չարն է, եւ առաջին սուտ վկայութիւնը տրուել է նրա կողմից. «Ինչո՞ւ Աստուած ասաց, թէ դրախտում գտնուող բոլոր ծառերի պտուղներից չէք կարող ուտել... Քանզի գիտէր Աստուած, որ այն օրը, երբ ուտէք այդ պտղից, կբացուեն ձեր աչքերը եւ կլինէք աստուածների պէս՝ բարին եւ չարն իմացող» [Մն. Գ 1–4]: Եւ այսպէս, մեղքն ու մահը ստով մտան աշխարհ:

Այս պատուիրանը խախտում են նրանք, ովքեր դատարաններում, զանազան ատեաններում, իրենց ղեկավարների եւ ենթակաների ներկայութեան պատճառով, շահագրգռութեամբ կամ ուղղակի կաշառքով սուտ վկայութիւն են տալիս եւ կեղծում ճշմարտութիւնը: Սա նշանակում է ուղղակի մերժել Աստծուն, քանզի Քրիստոս ասաց. «Ես եմ ճշմարտութիւնը» [Յովհ. ԺԴ 6] եւ «Երբ գայ Մխիթարիչը, որին ես կուղարկեմ Հօրից, ճշմարտութեան Հոգին, որ ելնում է Հօրից [Յովհ. ԺԵ 26]... որովհետեւ հէնց Հոգին է ճշմարտութիւնը» [Ա Յովհ. Ե 7]:

Այս պատուիրանը խախտում են նաեւ այն մարդիկ, որոնք բարկութեան, նախանձի եւ չկամութեան պատճառով կամ անմեղ մարդկանց անունն ու պատիւն արատաւորելու համար թշնամաբար յայտնում եւ անհիմն տարածում են ուրիշների գաղտնիքները, նենգաբար մեկնում մերձաւորների խօսքերն ու գործերը, բամբասում, կեղծ լուրեր տարածում, հրապարակում մարդկանց արատները, թուլութիւնները, մեղքերը եւ այլն: Այսպիսիները մոռանում են, որ պետք է խորհեն սեփական մեղքերի ու

արատների մասին եւ խոր ապաշխարութեամբ ջանան թողութիւն ստանալ Աստծուց:

Այս պատուիրանի դէմ մեղանչում են նաեւ կեղծաւորները, շողոքորթները, դաւաճանները, երկերեսանիները եւ չարախօսները, որոնք չեն գիտակցում իրենց գործած մեղքերի ծանրութիւնը, մտածում են, որ դրանք աշխարհիկ կեանքի պահանջներն ու ձեւերն են, եւ դրանցով կարելի է հասնել բարեկեցիկ վիճակի: Միգուցէ աշխարհիկ վայելքների եւ հարստութեան կարելի է հասնել, բայց ոչ՝ հոգու փրկութեան, որովհետեւ վէրը նշուած մեղքերը առաջանում են նախանձից, հպարտութիւնից, փառասիրութիւնից, ագահութիւնից, բղջախոհութիւնից, բարկութիւնից, գողութիւնից, սպանութիւնից եւ այլ հոգեկործան մեղքերից: Այս չարիքից ազատուելու համար պէտք է նախ զղջալ եւ խոստովանութեամբ ապաշխարել, հարթել այս մեղքի վնասները եւ փոխհատուցել նրան, ում հանդէպ որ կատարուել է, ապա գործել այս մեղքին հակառակ առաքինութիւնները, որոնք են՝ ճշմարտասիրութիւնը, ուղղամտութիւնը, ազնուութիւնը, պարզութիւնը, չափաւորութիւնը, խոհեմութիւնը, հաւատարմութիւնը, յարգանքը, մարդկանց բարի անունն ու պատիւը պաշտպանելը, որպէսզի արժանանք մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի խոստացած յաւիտենական կեանքին ու փրկութեանը:

Ժ. Այք մի՛ ունեցիր ո՛չ քո մերձաւորի տան, ո՛չ նրա ագարակի, ո՛չ քո մերձաւորի կնոջ, ո՛չ նրա ծառայի, ո՛չ նրա աղախնու, ո՛չ նրա եզան, ո՛չ նրա էշի, ո՛չ նրա անասունի, ո՛չ այն ամենի վրայ, ինչ քո մերձաւորինն է, այք մի՛ ունեցիր

Նախորդ պատուիրաններով Աստուած արգելում էր մարդուն որեւէ կերպով մեղանչել եւ վնասել, վիրաւորել մերձաւորին, իսկ այս՝ տասներորդ պատուիրանով, զգուշացնում եւ արգելում է նոյնիսկ մտքով մեղանչել եւ ցանկանալ այն, ինչ ուրիշինն է. լինի դա ագարակ, տուն, կին, ծառայ կամ որեւէ այլ բան, որի պատճառով կարող են մեծ եւ ծանր յանցագործութիւններ ծնուել: Եւ այս մասին է ասում Քրիստոս Աւետարանում. «Ներսից՝ մարդկանց սրտից են ելնում չար խորհուրդները՝ շնութիւն, պոռնկութիւն, գողութիւն, սպանութիւն, ագահութիւն, չարութիւն, նենգութիւն, գիշութիւն, չար նախանձ, հայհոյանք, ամբարտա-

ւանութիւն, անզգամութիւն: Այս բոլոր չարիքները ներսից են ելնում եւ պղծում մարդուն» [Մարկ. Է 21–23]:

Ցանկութիւնը մեղքերի սկզբնապատճառն ու գլուխն է, եւ անհրաժեշտ է հէնց սկզբից վերացնել այն, չթողնել, որ աճի եւ զարգանայ, այլապէս աւելի դժուար կլինի նրա դէմ պայքարելը: Որպէսզի հեռու մնանք այս մեղքից, պէտք է աշխատենք մեր կեանքում եւ կենցաղում լինել համեստ, առաքինի, ազնիւ, անշահախնդիր, ողորմած, առատաձեռն, խոնարհ եւ զուսպ: Այս առաքինութիւններով մենք կարող ենք ազատուել ցանկութիւնից ու նրանից ծագող բոլոր չար մեղքերից՝ զեխութիւնից, չարախօսութիւնից, բղջախոհութիւնից, կեղծաւորութիւնից, շահամոլութիւնից, որկրամոլութիւնից, ժլատութիւնից, արծաթսիրութիւնից, հպարտութիւնից եւ այլն, որոնք էլ դառնում են մեր հոգեւոր եւ մարմնաւոր հիւանդութիւնների, այնուհետեւ՝ ժամանակաւոր եւ յաւիտենական մահուան պատճառը: Եթէ որեւէ մէկը մեծահարուստ է, բայց նաեւ աստուածապաշտ, ողորմած եւ բարեգութ, ապա նա ազահ եւ ցանկասէր չէ, այլ արդար է եւ աստուածահաճոյ,

ինչպէս Աբրահամը եւ Յոբը: Իսկ եթէ մարդ ոչինչ չունի եւ իր կեանքի նպատակը դարձնում է հարստութիւն դիզելը եւ փառքի հասնելը, ապա նա դառնում է ագահ, ընչասէր եւ ցանկասէր: Այս մասին առակողը խրատում է մեզ. «Եթէ ունեւոր չես, մի՛ ձգտիր հասնել հարուստին, այլ քո իմաստութեամբ հեռացի՛ր նրանից» [Առակ. ԻԳ 4]:

Արդ, հեռու մնանք անձնապաշտութիւնից եւ աշխատենք միշտ ուրախանալ մեր մերձաւորների հոգեւոր կամ մարմնաւոր յաջողութիւններով եւ նուաճումներով, երբէք չտարուենք եսասիրական բաղձանքներով եւ չթերագնահատենք ու չպարսաւենք միւսներին, այլ անձնուիրաբար, մաքուր սիրով սիրենք, որովհետեւ սէրը վեր է ամէն ինչից եւ լրումն է բոլոր առաքինութիւնների. «Արդ, մնում են հաւատ, յոյս, սէր. սրանք երեքը. եւ սրանց մէջ մեծագոյնը սէրն է» [Ա Կորն. ԺԳ 13]:

ԻՆԸ ԵՐԱՆԻՆԵՐ

Մեր Տէր Յիսուս Քրիստոս մարդկանց փրկութեան ճանապարհը քարոզեց Ինը երանիների *միջոցով, որոնք իւրայատուկ* պատուիրաններ *են եւ չունեն Հին Օրէնքին բնորոշ հրամայական-հարկադրական ոճը, այլ յորդորաբար կոչում են մարդկանց ներքին վերափոխութեան, սրբութեան եւ աստուածացման:* Երանութիւն *նշանակում է հոգեւոր բարիքների ամբողջութիւն, ծայրագոյն երջանկութիւն եւ կատարեալ ուրախութիւն, այն ամէնը, ինչ բնորոշ է յաւիտենական կեանքին եւ երկնքի արքայութեանը: Եւ երանւում են նրանք, ովքեր իրենց մէջ կրում են Աստուծոյ արքայութեան, այսինքն՝ ճշմարիտ հոգեւոր կեանքի կենդանի իրականութիւնը:*

Ինը երանիներն էապէս շաղկապուած են իրար եւ ներկայացնում են հոգեւոր առաջընթացի աստիճանակարգերն ու սկզբունքները. իւրաքանչիւր երանին կատարելու համար անհրաժեշտ է իրագործել նախորդները: Ըստ հայրերի՝ Ինը երանիները հոգեւոր կեանքի եւ կատարելութեան հասնելու խրատաշար են, որն իր մէջ խտացնում է քրիստոնէական կեանքի ամբողջական պատկերը:

Ա. «Երանի՛ հոգով աղքատներին, քանզի նրանցն է երկնքի արքայութիւնը»

Մեղքի պատճառով ընկած մարդկային բնութիւնը բռնադատուած է չարի կապանքներով. մարդու հոգին լցուել է բազմաթիւ մեղքերով եւ կորցրել իր նախաստեղծ ազատութիւնը: Յիսուս Քրիստոս ուսուցանում է, որ ճշմարիտ հոգեւոր կեանքի հասնելու համար նախ եւ առաջ պէտք է աղքատանալ եւ թօթափուել մեղքից, հեռանալ եւ ազատուել չարի կապանքներից, որպէսզի հոգին բացազատուի Աստուծոյ սրբարար լոյսի առջեւ: Հոգով աղքատութիւն *նշանակում է հեռացում, օտարացում եւ հրաժարում մեղքի ոլորտից, որոշակի ներքին դարձ առ Աստուած: Չարի մերժումը մարդու կամքի ազատութեան վկայութիւնն է: Ով պատրաստւում է դառնալ երկնքի արքայութեան ժառանգորդ, նա պէտք է կամովի դառնայ առ Աստուած եւ հրաժարուի իր մեղսահակ կամքից: Հոգով աղքատութիւնը Եկեղեցու հայրերի կողմից կոչւում է նաեւ կամա-*

ւոր խոնարհութիւն: Մեր փրկութեան համար Տէրն ինքը կամովի խոնարհուեց եւ մտաւ մի աղքատութեան մէջ, խոնարհուեց իր աստուածային բարձրութիւնից եւ ծառայի կերպարանք ստացաւ: Հետեւաբար՝ կամաւոր եւ ոչ հարկադրուած խոնարհութեամբ մարդու մէջ նորոգուում է իր արարչադիր պատկերը, մարդը նմանուում է Յիսուս Քրիստոսին, որ ճշմարտապէս խոնարհուեց՝ մեզ ազատագրելու եւ աստուածացնելու համար: Խոնարհութիւնը հիմքն ու արմատն է բոլոր առաքինութիւնների, մայրն է բոլոր հոգեւոր բարիքների: Խոնարհ մարդը զերծ է մնում չարի որոգայթներից, յարգւում է մարդկանցից եւ մեծարւում Աստծուց: Խոնարհութիւն ձեռք բերելու համար պէտք է հեռանալ հպարտութիւնից եւ սեփական եսը կերակրելու բոլոր առիթներից. յատկապէս պէտք է խուսափել գովեստներից: Երբ մէկն իրեն անարժան է համարում որեւէ բարիքի, սիրով է ընդունում յանդիմանութիւնը, միշտ պատրաստ է անշահախնդիր ծառայելու մարդկանց, ամէն ինչում եւ ամէնից առաջ փնտրում է Աստծոյ փառքը, այդպիսին մօտեցել է ճշմարիտ խոնարհութեան մատոյցներին:

Բ. «Երանի՛ սգաւորներին, քանզի նրանք կմխիթարուեն»

Երբ մարդ հրաժարւում է մեղքերից եւ դարձի գալիս առ Աստուած, այնժամ աստուածային շնորհի լուսաւորութեամբ սկսում է խորապէս տեսնել իր մեղքերը, գիտակցել սեփական անարժանութիւնը եւ դառնապէս ողբալ, սգալ դրանց համար: Մարդն առաւել եւս սգում է, երբ սկսում է տեսնել եւ հասկանալ, որ մեղքի հետեւանքով ինքը կորցրել է ամենագլխաւորը՝ Աստուծոյ հետ լինելու կատարեալ ուրախութիւնը: Ճշմարիտ հոգեւոր սուգը անբաժանելի ուղեկիցն է հոգեւոր առաջընթացի. մարդ որքան խորանում է հոգեւոր կեանքի մէջ, այնքան աւելի է սկսում սգալ այն ամէնի համար, ինչ որ բաժանել էր նրան Աստծուց: Այս սուգը պէտք չէ շփոթել որեւէ աշխարհիկ սգի հետ, որը շատ անգամ մարդկանց տանում է յուսահատութեան եւ հոգեւոր կործանման: Ի հակադրութիւն այս աշխարհիկ սգի՝ հոգեւոր սուգը հայրերն անուանում են ուրախարար սուգ, որովհետեւ այն ոչ թէ տրտմութեան եւ յուսահատութեան նշան է, այլ յաւիտենական կեան-

քի յոյսի եւ ներքին ազատագրութեան բերի բանքի վկայութիւն: Դրա համար հայրերն իրենց աղօթքներում շատ յաճախ արտասուք են խնդրում Տիրոջից, որի մասին ասում է Անանիա Նարեկացին. «Արտասուքի շնորհը նշանակն է Քրիստոսի սիրոյ եւ նրա արքայութեան բաղձանքի»:

Սեփական մեղքերի խոր ինքնագիտակցումը մարդուն առաջնորդում է ապաշխարութեան, *որն, ըստ եկեղեցական աւանդութեան, եռակարգ է՝* զղջում սրտի, խոստովանութիւն բերանի եւ ապաշխարութիւն գործերի: *Այ-ինքն՝ ապաշխարութեան համար անհրաժեշտ է, որ մարդ Աստուծոյ առաջ ծածկապէս զղջայ գործած մեղքերի համար, ապա խոստովանի դրանք քահանայի առջեւ, որից յետոյ ապաշխարութեան գործեր կատարի ըստ հոգեւորականի խորհրդի: Մեղքի ինքնագիտակցումը քրիստոնէական կեանքի ամենաբնորոշ յատկանիշն է: Ով չի տեսնում իր մեղքերը, նա չի կարող մօտենալ Աստծուն,– ասում են Եկեղեցու հայրերը: Այս առումով քրիստոնեան այն մարդն է, որ հանապազ տեսնում է իր գործած չարիքները եւ ողբում դրանց համար, ով ունի*

ապաշխարող սիրտ Տիրոջ առջեւ: Քրիստոնեան նա է, ով յանուն Աստուծոյ սգալոր է, որ ոչ միայն սգում է իր մեղքերի համար, այլ նաեւ վշտակից եւ ցաւակից է մերձաւորներին եւ օտարներին, որ ոչ միայն ստացել է Սուրբ Հոգու մխիթարութիւնն ու ուրախութիւնը, այլ նաեւ բաշխում է դրանք բոլոր նրանց, ովքեր վշտերի, նեղութիւնների եւ տառապանքների մէջ են:

Գ. «Երանի՜ հեզերին, քանզի նրանք երկիրը պիտի ժառանգեն»

Հեզ բառը շատ իմաստներով է գործածւում, օրինակ՝ նշանակում է հանդարտ, անշարժ, լուռ եւ այլն: Սակայն Աստուծոյ փառքի համար խօսելը, առաքինութիւնների մէջ փութաջան լինելը, չարի դէմ արիաբար պատերազմելը նոյնպէս բարի են: Ըստ հայրերի՝ այս երանին ի նկատի ունի այն հեզութիւնը, որ ընդդէմ բարկութեան է եւ սանձահարում է առհասարակ բնական ախտերը: Քանի որ մարդկային բնութիւնը դիւրագայթ է եւ մեղսահակ, մշտապէս հարկ է առաքինութիւններով սանձահարել

ախտերը եւ զգուշանալ մեղքի ծառայութիւնից: Այսինքն՝ քրիստոնեայից պահանջւում է յարատեւ պայքար մեր բնութեան մէջ արմատաւորուած զանազան չար ախտերի, հակումների եւ սովորութիւնների դէմ:

Ըստ Եկեղեցու հայրերի՝ հեզութիւնը ծնւում է խոնարհութիւնից, իսկ խոնարհութիւնը՝ իմաստութիւնից. նոյնպէս էլ՝ բարկութիւնը ծնւում է հպարտութիւնից, իսկ հպարտութիւնը՝ տգիտութիւնից: Հեզութեան գերագոյն օրինակը մեր Տէր Յիսուս Քրիստոսն է, որ ասում է. «Սովորէ՛ք Ինձանից, որովհետեւ հեզ եմ եւ խոնարհ սրտով» [Մատթ. ԺԱ 29]: Ով ձեռք է բերել հեզութիւն եւ սրտի խոնարհութիւն, նա դարձել է քրիստոսանման եւ ազատ է մեղքի իշխանութիւնից. «Հեզաբարոյ մարդը դադարեցնում է մեղքերը, իսկ բարկասիրտ մարդը խորացնում է դրանք» [Առակ. ԻԹ 22]: Հեզաբարոյ եւ խաղաղասէր մարդը՝ ամենքի հանդէպ սիրով լցուած, առանց խռովութեան եւ կեղծիքի, ժառանգում է թէ՛ զգալի, թէ՛ իմանալի երկիրը (արքայութիւնը), իսկ խռովարարը կզրկուի թէ՛ իր հայրենի ժառանգութիւնից, թէ՛ յաւիտենական բարիքներից: Ըստ ս. Գրիգոր Լուսաւորչի՝ երկիրն այստեղ Եկեղեցին է, այսինքն՝ երկրի վրայ հաստատուած Քրիստոսի Թագաւորութիւնը: Քրիստոնեաները Եկեղեցու կենդանի քարերն են, իսկ Եկեղեցու գլուխն ինքը Քրիստոսն է:

Հեզ եւ խոնարհ մարդը միայն իր անձնական մեղքերն է քննում եւ չի դատում մարդկանց իրենց մեղքերի եւ թուլութիւնների համար. նա համբերութեամբ եւ ներողամտութեամբ է լցուած նրանց նկատմամբ. «Մի՛ դատէք, որ Աստծուց չդատուէք, որովհետեւ ինչ դատաստանով որ դատէք, նրանով էք դատուելու եւ ինչ չափով որ չափում էք, նրանով պիտի չափուի ձեզ համար» [Մատթ. Է 1–3]:

Դ. «Երանի՛ նրանց, որ արդարութեան քաղցն ու ծարաւն ունեն, որովհետեւ նրանք պիտի յագենան»

Երբ մարդ դարձի է գալիս առ Աստուած (հոգով աղքատութիւն), ձեռք է բերում ճշմարիտ ապաշխարութիւն (սգաւորութիւն) եւ պայքարում է մարմնի մեղսահակ կամքի դէմ (հեզութիւն), նա սկսում է հասկանալ, որ առանց Աս-

տուծոյ օգնութեան եւ երկնային շնորհների ինքը ոչինչ չի կարող անել: Այս մասին է խօսում այս երանին: Ինչպէս մարմինը չի կարող գոյատեւել առանց կերակուրների եւ ըմպելիքների, այնպէս էլ հոգին չի կարող կենդանի մնալ առանց հոգեւոր սննդի: Ուստի չի ասում՝ ովքեր ցանկանում են կամ ձգտում են, այլ՝ ովքեր ունեն քաղցն ու ծարաւը, շեշտելու համար, որ հոգեւոր սնունդը անհրաժեշտ է մարդուն, եւ որ առանց Աստուծոյ հետ կենդանի հաղորդակցութեան մարդու հոգին մեռած է: Այս հոգեւոր կերակուրների եւ ըմպելիքների ամբողջութիւնը արտայայտուած է մէկ կարեւոր բառով՝ արդարութիւն:

Արդարութիւնը նախ Ինքը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսն է, «որ արդարութիւն եւ սրբութիւն եղաւ մեզ համար» [Ա Կոր. Ա 30]: Նա Ինքն Իրեն կոչում էր «երկնքից իջած հաց» [Յովհ. Զ 41] եւ «ծարաւեալների ջուր» [Յովհ. Դ 13-14]: Արդարութիւն է Աստուծոյ խօսքը, որ սնում եւ կենդանացնում է հոգին. «Ոչ միայն հացով է ապրում մարդ, այլ ամենայն խօսքով, որ ելնում է Աստուծոյ բերանից» [Մատթ. Դ 4]: Արդարութիւն է Յիսուս Քրիստոսի կենդանարար Մարմինը եւ Արիւնը. ինչպէս փոքրիկ թթխմորն է թթուեցնում խմորը, այնպէս էլ ս. հաղորդութիւնը, ընդխառնուելով մեզ հետ, հոգեւոր կենդանութիւն է տալիս եւ աստուածացնում մեզ: Արդարութիւնը խոհեմութեան, արիութեան եւ ողջախոհութեան հետ միասին կազմում է հոգու չորս առաքինութիւնները, եւ վերջին երեքն ուղղւում եւ ամբողջանում են արդարութեամբ, ուստի միայն արդարութիւնն է ասւում այստեղ: Արդարութիւնն իր մէջ բովանդակում է խօսքով կամ գործով կատարուող բոլոր հոգեւոր բարիքները. ինչպէս բոլոր չարիքների անունը անիրաւութիւն է, այնպէս էլ բոլոր բարիքների անունը՝ արդարութիւն: Արդարութիւն են աստուածային սէրը եւ իմաստութիւնը, եւ երանի նրան, ով ունի աստուածային սիրոյ եւ իմաստութեան քաղցը, որպէսզի յագենայ անճառ ուրախութիւններով:

Ովքեր ունեն Աստուծոյ ներկայութեան եւ սիրոյ, աստուածգիտութեան, հոգեւոր առաքինութիւնների եւ հոգեւոր բարիքների քաղցն ու ծարաւը, նրանք այս կեանքում կյագենան աստուածային շնորհներով եւ Ս. Հոգու կենդանի ներկայութեամբ: Սակայն կատարեալ

յագեցումը լինելու է երկնային հարսանիքի ժամանակ, ուր կոչուած են արդարներն ու սուրբերը՝ վայելելու յաւիտենական կեանքի անապառ եւ անսուաղ բարիքները:

Ե. «Երանի՜ ողորմածներին, քանզի նրանք ողորմութիւն պիտի գտնեն»

Հոգեւոր կեանքի մէջ յատկապէս պէտք է զգուշանալ կեղծիքից, ինչը խստօրէն դատապարտուեց Տիրոջ կողմից: Մէկը կարող է իր անձնական կեանքի մէջ հասնել որոշակի մաքրութեան, շատ աղօթել, պահք պահել եւ այլն, սակայն ներքուստ կեղծիքի մէջ յայտնուել, հոգու խորքում սեփական փառքը փնտրել եւ դատել մարդկանց: Այսպիսի մարդու «հոգեւոր յաջողութիւնները» ոչ մի արժէք չունեն Տիրոջ առաջ: Կայ մի առաքինութիւն, որի ճշմարիտ իրագործումը մարդուն զերծ է պահում հոգեւոր շեղումներից: Դա ողորմութիւնն է: Ողորմութիւնը ցոյց է տալիս, թէ մարդ ուր է հասել իր հոգեւոր կեանքում, որքան է սիրում մարդկանց եւ որքան է պատրաստ ինքնազոհողութեան յանուն Քրիստոսի, որ իր անսահման մարդասիրութեամբ չարչարուեց եւ խաչուեց մեր մեղքերի համար: Դրա համար է ասում Տէրը. «Ոչ թէ զոհ եմ կամենում, այլ ողորմութիւն» [Մատթ. Թ 13]:

Ըստ Եկեղեցու հայրերի՝ ոչ մի առաքինութիւն մեզ այնքան աստուածանման չի դարձնում, որքան ողորմութիւնը: Տէրն ինքն է ասում. «Նմանուէ՛ք ձեր երկնաւոր Հօրը, որ ծագեցնում է արեգակը չարերի ու բարիների վրայ եւ անձրեւ բերում արդարների ու մեղաւորների վրայ» [Մատթ. Ե 45]: Սուրբ Գիրքը շատ տեղերում Աստծուն անուանում է ողորմած: Ուստի ողորմած մարդն Աստուծոյ պատկերն է երկրի վրայ, որի համար մարդիկ փառաւորում են երկնաւոր Հօրը: Եւ երբ մարդ ողորմութիւն է անում, Աստծուն է տալիս. «Որովհետեւ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք, ինձ արեցիք» [Մատթ. ԻԵ 40]:

Ողորմութիւն է ոչ միայն մարմնաւոր զոհողութիւնը՝ քաղցածներին կերակրելը, կարօտեալների կարիքները հոգալը, հիւանդներին խնամելը, գերեալներին ազատելը եւ այլն, այլ նաեւ հոգեւոր ողորմութիւնը, քանզի հոգին շատ աւելի մեծ է, քան մարմինը: Հոգեւոր

ողորմութիւն են՝ յանցաւորներին ներելը, մեղաւորներին դարձի բերելը, ճշմարտութիւնը ուսուցանելը, մարդկանց համար աղօթելը, սեփական անձի դէմ գործուած անիրաւութիւններին համբերելը եւ այլն: Ողորմութիւնը ծնւում է սիրուց, ողորմութեան գործերը սիրոյ գործեր են: Իսկ սիրոյ առաջին նշանը զոհողութեան հոգին է. երբ մէկը պատրաստ է իր ունեցած մարմնաւոր եւ հոգեւոր բարիքները զոհել յանուն դիմացինի՝ նրա մարմնաւոր կարիքները հոգալու եւ առաւել եւս նրա յաւիտենական փրկութեան համար: Ողորմութեան համար ամենակարեւորը սիրոյ եւ զոհողութեան ոգին է եւ ոչ թէ քանակը, ինչպէս ցոյց է տալիս այրի կնոջ լումայի պատմութիւնը: Այս պատմութիւնը նաեւ վկայում է այն մասին, որ քո արած ողորմութիւնը պէտք է զգալի զոհողութիւն լինի քո ունեցածի համեմատութեամբ, ոչ թէ աննշան մի նուէր, որի աւելի կամ պակաս լինելը քեզ համար ոչ մի նշանակութիւն չունի:

Սակայն պէտք է զգուշութեամբ եւ ծածուկ կատարել ողորմութիւնը՝ ըստ Աւետարանի. ոչ թէ մարդկանցից փառք որսալու, գովեստների

արժանանալու եւ մեծարուելու, այլ Աստուծոյ փառքի համար: Ով այս աշխարհում մարդկանցից վարձք է ստացել, նա վարձատրութիւն չի ստանայ Տիրոջից յաւիտենական կեանքում:

Զ. «Երանի՜ նրանց, որ սրտով սուրբ են, քանզի նրանք Աստծուն պիտի տեսնեն»

Սրտի սրբութիւնը լրումն է բոլոր առաքինութիւնների, ճգնութիւնների եւ հոգեւոր գործերի: Ցանկացած մաքրութիւն, ցանկացած հոգեւոր ձեռքբերում հեշտութեամբ կարելի է կորցնել, եթէ մարդ չունի սրտի սրբութիւն. միտքը դիւրութեամբ կարող է ապականուել, ցանկութիւնները՝ ախտերով բորբոքուել, սակայն սրտի սրբութիւնը ապահով է չարի փորձութիւններից եւ յարձակումներից: Երբ մարդն ունի սուրբ սիրտ, նրա հոգու աչքերը բացւում են, եւ նա ձեռք է բերում ներքին շնորհական տեսողութիւն եւ սկսում է ճանաչել հոգեւոր ոլորտը: Հայրերը սիրտն անուանում են խորհուրդների շտեմարան, Ս. Հոգու շարժումների ընդունարան, խորհրդակիր սենեակ եւ այլն: Սիրտը մարդու հոգեւոր կենտ-

ռոնն է, այնտեղից են ելնում խորհուրդները. եթէ մարդու խորհուրդները մաքուր են, ապա մարդը հասել է ճշմարիտ հոգեւոր մաքրութեան եւ դարձել Ս. Հոգու տաճար: Ըստ հայրերի՝ հոգեւոր պայքարը նախ եւ առաջ խորհուրդների մէջ է, եւ ով ուզում է հաճոյ լինել Տիրոջը, նա պէտք է սրբի իր խորհուրդները կամ մաքրի իր սիրտը:

Այս երանին հաստատում է, որ սրտի սրբութիւն ունեցողները կարժանանան աստուածտեսութեան: Ըստ Եկեղեցու վարդապետութեան՝ Աստուծոյ բնութիւնը եւ էութիւնը անտեսանելի եւ անճանաչելի են արարածների համար, որովհետեւ աստուածային անսահմանութիւնը հնարաւոր չէ բովանդակել մարդկային սահմանափակութեան մէջ: Սակայն Աստուծոյ Միածին Որդու մարդեղութեամբ, Աստուծոյ եւ մարդու ճշմարիտ միաւորումով հաստատուեց աստուածգիտութեան մի նոր ճանապարհ, որ հնարաւոր չէ իրագործել որեւէ այլ կրօնի կամ ուսմունքի մէջ. որովհետեւ Անբովանդակելին բովանդակուեց, Անսահմանը եւ Անժամանակը մտաւ չափաւորութեան եւ ժամանակի մէջ: Արարածի համար

հնարաւոր դարձաւ հաւատքով միաւորուել իր Արարչի հետ, մարդը դարձաւ Ամենասուրբ Երրորդութեան բնակարան: Քրիստոնեայի համար Աստուած ոչ թէ վերացական հայեցողութեան եւ խոկումների առարկայ է, այլ խիստ որոշակի իրականութիւն, Որի հետ նա հաղորդակցւում է, Որին նա ճաշակում է (Ս. Հաղորդութիւն): Քրիստոնեան ճաշակում է Նրան, Ով անհասանելի է ամէն տեսակ մտքի, խօսքի եւ ճանաչողութեան համար:

Քրիստոնէութեան մէջ Աստուած յայտնում է Իրեն ըստ մարդկանց հաւատքի ու սրբութեան աստիճանի: Այս յայտնութիւնը տեղի է ունենում շնորհի ներգործութեամբ, որը մարդուց պահանջում է սրբութեան որոշակի աստիճան. մարդը պէտք է որոշակի ճիգերով բացազատի իր սիրտը Աստուծոյ սրբարար շնորհի առջեւ: Եւ Աստուած իր ընտրեալ անօթներին ոչ միայն արժանացնում է Իր երանաւէտ տեսութեանը եւ Իր լուսաւոր յայտնութեանը, այլ նաեւ միաւորւում է մարդու հետ եւ աստուածացնում մարդուն՝ ըստ Իր անսահման սիրոյ, որի համար Աստուծոյ Որդին մարդացաւ եւ խաչուեց մեր մեղքերի համար:

Է. «Երանի՛ խաղաղարարներին, քանզի նրանք Աստուծոյ որդիներ պիտի կոչուեն»

Այս երանին, որ թուով եօթերորդն է, այլեւս չի խոստանում որեւէ պարգեւ, ինչպէս նախորդները, այլ հաստատում է, որ խաղաղարարները կոչուելու են Աստուծոյ որդիներ: Սա ինքնին վկայում է, որ այս երանին յայտնում է մի բարձրագոյն պարգեւի մասին, որ իր մէջ ամբողջացնում է նախորդ երանիների խոստումները, քանզի մարդու համար չկայ աւելի մեծ կոչում, քան Աստուծոյ որդի լինելը:

Խաղաղութիւնը *Ամենասուրբ Երրորդութեան Անձերի փոխյարաբերութեան եւ Աստուծոյ բնութեան էական յատկանիշն է: Աստուածային խաղաղութիւնն ունէր նաեւ իր արտապատկերն արարչագործութեան մէջ, որը խախտուեց չարի խռովութեամբ նախ* իմանալի *աշխարհում, ապա ներմուծուեց* զգալի *աշխարհ՝ մարդու կամքով: Մարդկային բնութիւնը կորցրեց աստուածապարգեւ խաղաղութիւնը եւ լցուեց խռովութեամբ ու թշնամութեամբ: Քրիստոսով խաղաղութիւն է հաստատուում երկնքի եւ երկրի միջեւ, մարդը ոչ միայն վերստանում է կորցրած խաղաղութիւնը, այլ նաեւ հաստատուում աստուածային խաղաղութեան մէջ, որն անհասանելի էր առաջին արարչութեան համար: Մեր Տէր Յիսուս Քրիստոս ասում է. «Խաղաղութիւն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. Ես չեմ տալիս ձեզ այնպէս, ինչպէս այս աշխարհն է տալիս...» [Յովհ. ԺԴ 27–28]: Այդ խաղաղութիւնը վեր է ամէն տեսակ մարդկային մտքից եւ իմացումից [Փլպ. Դ 7]:*

Ոչ ոք չի կարող փոխանցել խաղաղութիւնը մէկ ուրիշին, եթէ ինքը չունի այն: Եւ խաղաղարարները նրանք են, ովքեր ոչ միայն հաղորդակից են այս բարձրագոյն աստուածային շնորհին, այլ նաեւ նրա կենդանի կրողներն ու բաշխողներն են: Այսպիսիները կոչուում են Աստուծոյ որդիներ, որովհետեւ նրանք դարձել են կենդանի մասնակիցները աստուածային արարչագործութեան եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի փրկագործութեան: Խաղաղարարը Քրիստոսի պատկերն ու ներկայութիւնն է այս աշխարհում, նա դարձել է աստուածանման եւ աստուածային իրականութեան փոխանցող: Նախ՝ նրա մէջ խաղաղութիւն է հաստատուած, այ-

սինքն՝ ծառայական մարմինը ենթարկւում է իշխանական հոգուն, եւ հոգու ցանկական եւ ցասմնական ոլորտները կառավարւում են բանականի կողմից: Երկրորդ՝ նրա հետ շփուելիս եւ հաղորդակցուելիս մարդկանց հոգիները խաղաղւում են մեղքի խռովութիւնից եւ համակւում հոգեւոր կեանքի բաղձանքով, մարդիկ սկսում են ներել ու սիրել միմեանց եւ այլ հոգեւոր բարիքներ գործել:

Քրիստոսի փրկագործութեամբ երկրի վրայ հաստատուել է Նրա թագաւորութիւնը՝ սուրբ Եկեղեցին: Ամէն օր եկեղեցում բաշխւում է Քրիստոսի խաղաղութիւնը. ահա թէ ինչու «Խաղաղութեան ողջոյնը» ամենակիրառական ծիսական տարրն է եկեղեցական պաշտամունքի մէջ, երբ ծիսակատար հոգեւորականը խաչակնքելով ազդարարում է. «Խաղաղութիւն բոլորին», որին ժողովուրդը պէտք է պատասխանի. «Նաեւ քո հոգուն»: Ըստ հայրերի՝ իւրաքանչիւր հոգեւորական կոչուած է խաղաղութիւն հաստատելու մարդկանց հոգիներում, բայց նախ ինքը պէտք է ունենայ այդ խաղաղութիւնն իր հոգում: Իսկ ամէն մի քրիստոնեայ, որ մանում է եկեղեցի, պէտք է բացի իր

հոգին այդ երկնային խաղաղութեան շնորհի առիթ եւ նորոգուած դուրս գայ եկեղեցուց, որպէսզի փրկութեան լոյսն ու աւետիսը փոխանցի մարդկանց եւ արժանանայ կոչուելու Աստուծոյ որդի:

Վերջապէս, խաղաղարարներ են նրանք, ովքեր կարողանում են խաղաղութիւն հաստատել երկրների, պետութիւնների, ընտանիքների, եղբայրների միջեւ եւ մանաւանդ այդ խաղաղութիւնը ծառայեցնել Աստուծոյ փառքի համար:

Ը. «Երանի՛ նրանց, ովքեր հալածւում են արդարութեան համար, քանզի նրանցն է երկնքի արքայութիւնը»

Այս երանին չի խօսում նոր աստիճանի մասին, քանզի չկայ աւելի բարձր պարգեւ, քան Աստուծոյ որդի կոչուելը: Այս է վկայում նաեւ ութերորդ եւ առաջին երանիների խոստացած պարգեւների նոյնութիւնը, ինչպէս նաեւ մէկ եւ ութ թուերի խորհրդաբանութիւնը եւ այլն: Սա վկայում է նաեւ այն մասին, որ երկնքի արքայութիւնը բազմաստիճան եւ բազմանշանակ խոստում է, եւ մարդկային մտքի համար ան-

հասանելի է այն, ինչ պատրաստել է Աստուած Իրեն սիրողների համար:

Ովքեր մեղքից հեռանալով, ապաշխարելով, ճգնութիւններով, առաքինասիրութեամբ, բարեգործութեամբ, սրտի սրբութեամբ հասել են խաղաղութեան աստիճանին, նրանք պէտք է պատրաստ լինեն փորձութիւնների եւ հալածանքների: Հոգեւոր կեանքի մէջ կարեւորագոյն պահ է հաւատքի վկայութիւնը, եւ հէնց հալածանքների մէջ է փորձւում մարդու հաւատքի զօրութիւնը: Նախ հալածանքների ենթարկուեց Ինքը մեր Տէրը՝ ասելով. «Եթէ Ինձ հալածեցին, ապա եւ ձեզ պիտի հալածեն» [Յովհ. Ժե 20]: Ովքեր դարձել են Աստուծոյ որդիներ՝ ըստ շնորհի, նրանք պէտք է մասնակից դառնան Միածին Որդու մարդեղութեան խորհրդին՝ նախ եւ առաջ կցորդ լինելով այն հալածանքներին ու վշտերին, որ Նա կրեց մեր մեղքերի համար: Բոլոր առաքեալները, նահատակները եւ սուրբերը մեծագոյն պատիւ էին համարում մեր Տիրոջ պէս հալածանքների ենթարկուելը:

Հայրերն ասում են, որ ճշմարիտ առաքինութիւնը ոչ թէ ինքնին բարիք գործելն է, այլ

համբերելը այն փորձութիւններին, որոնք յաջորդում են բարեգործութեանը: Հաւատքի համար հալածանքների մէջ է ի յայտ գալիս հոգեւոր կեանքի խորութիւնը եւ թրծւում հաւատքի ամրութիւնը, եւ ովքեր փախչում են վշտերից, նրանք փախչում են Աստծուց: Հայրերը վկայում են, որ վշտերի ու նեղութիւնների մէջ կայ մի երկնային ուրախութիւն եւ երանութիւն, որին հասնում են բոլոր աստուածահաճոյ սուրբերը եւ վկաները:

Թ. «Երանի՜ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն եւ Իմ պատճառով ձեր մասին ամէն չար խօսք ստելով ասեն: Ցնծացէք եւ ուրախացէք, որովհետեւ երկնքում ձեր վարձը շատ է, քանզի այդպէս հալածեցին մարգարէներին, որ ձեզանից առաջ էին»

Այս ինն երորդ՝ եզրափակիչ երանին, բացայայտում է հաւատքի փորձութեան բուն իմաստը եւ նպատակակէտը: Այստեղ արդէն արդարութեան համար հալածուելուց անցում է կատարւում դէպի մարդու համար ամենածանր փորձութիւնը, որը համբերելն է նախատինքների, հայհոյանքների, բամբասանքների եւ

չարախօսութիւնների: Ըստ հայրերի՝ մարմնաւոր տառապանքների եւ վշտերի համար կան զանազան մխիթարութիւններ սպեղանիներով, մարմնական ճիգերով եւ այլն, սակայն նախատինքների եւ բամբասանքների համար չկան մխիթարութեան միջոցներ: Այս երանին յատկապէս շեշտադրում է՝ Իմ պատճառով, որպէսզի ցոյց տայ, որ խօսքը ոչ թէ ինչ-որ արժանիքների, առաքինութիւնների, դիրքի կամ օժտուածութեան համար բամբասուելու եւ չարախօսուելու մասին է, այլ սուտ խօսքերի, որոնք ասւում են յատկապէս այն պատճառով, որ այդ մարդը քրիստոնեայ է՝ Քրիստոսի հետեւորդ: Այդպիսի նախատինքների ենթարկուեցին առաքեալները եւ սուրբերը. նրանց անուանում էին կախարդներ, մոլորեցուցիչներ, ժանտագործներ եւ այլն, երբ տեսնում էին նրանց գործած նշանները եւ հրաշքները:

Այս երանին ոչ թէ պատուիրում է սոսկ համբերել, այլ ցնծալ եւ ուրախանալ այն բաների համար, որոնք ամենից շատ են մարդկային հոգուն տրտմութիւն պատճառում: Քրիստոնեան պէտք է ցնծութեամբ եւ ուրախութեամբ ըմպի անարգանքների եւ չարախօսութիւնների դառնութեան բաժակը՝ որպէս հոգեւոր նորոգութեան գլխաւոր դեղամիջոց: Եթէ բարիք ես գործում, մի՛ սպասիր հատուցման, այլ անարգանքի. եթէ աւետարանում ես, մի՛ սպասիր մեծարման, այլ արհամարհանքի. եթէ օրհնում ես, մի՛ սպասիր երախտագիտութեան, այլ անէծքի եւ այլն: Այսպէս պէտք է վերցնել խաչը եւ հետեւել մեր Տիրոջը՝ մինչեւ վերջ նմանուելով Նրան եւ աստուածասէր սուրբերին, որոնց համար գերագոյն ուրախութիւնը՝ յանուն Քրիստոսի անարգուելն էր: Ովքեր չարչարակից եւ խաչակից եղան Քրիստոսին, նրանք նաեւ տնկակից են Նրա յարութեանը եւ ապրում են յարութեան կեանքով: Այսպիսիներին սպասում են բազում պարգեւներ երկնքում: Բոլոր երանիները խօսում են որոշակի պարգեւների մասին, իսկ այստեղ ասւում է, որ դրանք շատ են երկնքում՝ ցոյց տալով նախ անարգանքները ուրախութեամբ ընդունելու մեծութիւնը եւ ապա դրան սպասուող վարձատրութեան անճառելիութիւնը: Իսկ մարգարէների յիշատակումով ներածում է Իր Երկրորդ Գալստեան սպասումի մէջ, երբ պիտի լինեն համընդհանուր Ցարութիւնը եւ Դատաստանը, եւ դէմ-

յանդիման պիտի տեսնենք այն բարիքները, որ Աստուած պատրաստել է Իրեն սիրողների համար:

Ինը երանիներով Տէրը ցոյց է տալիս հոգեւոր վերընթացի ճանապարհը, հոգեւոր կեանքի աստիճանները եւ պտուղները: Սկիզբը մեղքից հրաժարումն ու խոնարհութիւնն է, իսկ լրումը՝ երբ մէկը ցնծութեամբ եւ ուրախութեամբ է ընդունում անարգանքներն ու չարախօսութիւնները: Ինչ որ Տէրն ուսուցանեց «Լեռան քարոզում», Ինքն էլ իրագործեց Իր երկրաւոր կեանքում. խոնարհութեամբ ու հեզութեամբ անցաւ մեր կեանքի տրտմութիւնների միջով, բայց շնորհեց մեզ մեղքից ազատագրուելու ուրախութիւնը. ծաղրուեց, հայհոյուեց եւ չարախօսուեց, բայց Իր զօրութեամբ փրկեց մեզ բանսարկուի ծառայութիւնից եւ խաւարային ուժերից. չարչարուեց եւ խաչուեց, բայց խաչի վրայ աղօթեց Իրեն խաչողների համար. մահուան խաւարի մէջ մտաւ, բայց Իր հրաշափառ յարութեամբ մեզ յաւիտենական կեանք եւ փրկութիւն պարգեւեց:

ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱՐԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ըստ առաքելական աւանդութեան՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ընդունել է եօթ սրբարար խորհուրդ, որոնք են՝ Ա. Մկրտութիւն, Բ. Դրոշմ, Գ. Ապաշխարութիւն, Դ. Հաղորդութիւն, Ե. Ամուսնութիւն կամ Պսակ, Զ. Կարգ քահանայութեան կամ Ձեռնադրութիւն, Է. Կարգ հիւանդաց:

Սրբարար խորհուրդները պէտք է ունենան հետեւեալ նշանները: Ա. Պէտք է սահմանուած լինեն Աստծուց: Բ. Պէտք է ունենան արտաքին նիւթական նշաններ: Գ. Պէտք է կատարուեն աղօթքով եւ մաղթանքով: Դ. Պէտք է, որ խորհրդին ենթակայ եղողները խորհուրդների արտաքին կատարման միջոցով ներքուստ շնորհ եւ օրհնութիւն ստանան Աստծուց:

Քանի որ մարդը բաղկացած է հոգուց եւ մարմնից, Բանն Աստուած եւս մարդկային հոգի եւ մարմին առաւ եւ նիւթական իրերի միջոցով հոգեւոր բարիքներ պարգեւեց հաւատացեալ մարդկանց:

Օրինակ՝ Յիսուս Քրիստոս՝ իբրեւ Մկրտութեան խորհրդի արտաքին նիւթական նշան, սահմանեց ջուրը, իսկ իբրեւ հոգեւոր բարիք՝ պարգեւեց Սուրբ Հոգու ընդունումն ու սկզբնական մեղքերի ջնջումը:

Իբրեւ Դրոշմի զգալի նշան՝ հաստատեց սրբալոյս իւղը[1] եւ պարգեւեց մեզ Սուրբ Հոգով ներքին օծումը. «Ստեփանոսի ընտանիքն էլ մկրտեցի» [Ա Կոր. Ա 16]:

Ապաշխարութեան արտաքին կամ զգալի նշանն է զղջումը, աղի արտասուքն ու մեղքերի խոստովանութիւնը, իսկ ներքինը՝ ներդործական մեղքերի ջնջումը. «Ամէն գիշեր հեծեծանքով լուացի իմ մահիճը եւ իմ արտասուքով անկողինս թրջեցի» [Սաղ. Զ 7]:

Իբրեւ Հաղորդութեան խորհրդի նիւթ՝ Յիսուս հաստատեց բաղարջ հացն ու անապակ գինին եւ պարգեւեց աստուածային անզուգական պարգեւ՝ Իր Մարմինն ու Արիւնը, որով մաքրւում ենք մեղքերից եւ միանում Նրա Աստուածութեան հետ:

1 Ս. Իւղը հաստատուած է Աստուծոյ հրամանով [Ել. Լ 23–30]:

Ամուսնութեան արտաքին արարողութեամբ միանում են փեսան եւ հարսը, իսկ ներքին պարգեւներով՝ Քրիստոս՝ Իր Եկեղեցու հետ. «Այս խորհուրդը մեծ է, բայց ես ասում եմ Քրիստոսի եւ Եկեղեցու վերաբերեալ» [Եփես. Ե 32]:

Քահանայութեան արտաքին նշանն է ձեռք դնելը եւ օծումը, իսկ ներքինը՝ Սուրբ Հոգու շնորհներն ընդունելը. «Անփոյթ մի՛ եղիր այն շնորհի նկատմամբ, որ քո մեջ է, որ տրուեց քեզ ըստ մարգարէութեան, քահանայական ձեռնադրումով» [Ա Տիմ. Դ 14, Բ Տիմ. Ա 6]:

Արդէն յայտնի է, որ բոլոր սուրբ խորհուրդները կատարւում են աղօթքով եւ մեզ տեսանելի են արտաքին զգալի նշաններով, բայց ներքին շնորհներն ու պարգեւները իմանալի են, անտեսանելի:

Այժմ կարեւոր է իմանալ, թէ Աստուած ո՞ւմ յանձնեց այս սրբազան խորհուրդների մատակարարութիւնը՝ հոգեւորականների՞ն, թէ՞ աշխարհականներին: Հին Օրէնքում թլփատութեան, Առաջաւորաց հացի եւ գինու, զոհագործութեան եւ այլ արարողութիւնների մատակարարութիւնն Աստուած յանձնել էր մասնաւո-

բապէս ղեւտական ցեղի քահանաների դասին: Յիսուս Քրիստոս ասաց. «Ես չեմ եկել օրէնքը եւ մարգարէութիւնները ջնջելու, այլ ամբողջացնելու» [Մատթ. Ե 17]. ապա Ինքը, կատարելով քահանայապետութեան պաշտօնը, Սրբազան Խորհուրդի մատակարարութիւնն աւանդեց յատկապէս առաքեալներին եւ 72 աշակերտներին, եւ սրանք՝ իրենց յետնորդներին, եւ այսպէս հասաւ մեզ աւանդապահութեամբ:

Ա. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Եկեղեցու առաջին եւ սրբաբար խորհուրդը Մկրտութիւնն է, որը հաստատեց Ինքը Յիսուս Քրիստոս՝ մկրտուելով Յորդանանում, եւ աւանդեց առաքեալներին՝ ասելով. «Գնացէ՛ք, այսուհետեւ աշակե՛րտ դարձրէք բոլոր ազգերին. մկրտեցէ՛ք նրանց Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով, ուսուցանէք նրանց պահել այն ամէնը, ինչ որ պատուիրեցի ձեզ» [Մատթ. ԻԸ 18–19]:

Մարդը մարմնաւոր եւ հոգեւոր էակ է. ինչպէս մարմինն ունի իր ծնունդը, նոյնպէս եւ հոգին: Մինչեւ մարդը վերստին չծնուի ջրից եւ Հոգուց, չի կարող վայելել Աստուծոյ արքայութիւնը. «Եթէ մէկը վերստին չծնուի... ջրից եւ Հոգուց, չի կարող Աստուծոյ արքայութիւնը մտնել: Որովհետեւ մարմնից ծնուածը մարմին է, իսկ Հոգուց ծնուածը՝ հոգի» [Յովհ. Գ 3–6]:

Մկրտուողը սրբւում է սկզբնական մեղքից, ընդունում Ս. Հոգին, որդեգրւում Հայր Աստծուն եւ դառնում սրբուած անդամ Քրիստոսի Եկեղեցու. «Փրկեց մեզ վերստին ծննդեան աւազանի միջոցով եւ նորոգութեամբ Սուրբ Հոգու, Որին Աստուած առատութեամբ հեղեց մեզ վրայ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի միջոցով, որպէսզի, Նրա շնորհով արդարացած, յաւիտենական կեանքի ժառանգաւորներ լինենք» [Տիտ. Գ 5–7]:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին պահպանել է մկրտութեան նախնական ձեւը, այն է՝ երեք անգամ ընկղմելը: Առաջին ընկղմումը նշանակում է Յիսուս Քրիստոսի մահը, երկրորդը՝ թաղումը, իսկ երրորդը՝ յարութիւնը: Այս գործողութեամբ եւ աղօթքով թաղւում է հին մարդը, վերածնւում է նորը եւ

յանձնում հասարակաց Ցարութեանը՝ Յիսուս Քրիստոսին. «Մի՞թէ չգիտէք, որ մենք՝ մկրտուածներս ի Քրիստոս Յիսուս, Նրա մահով ենք մկրտուել: Մկրտութեամբ թաղուել ենք Նրա հետ մահուան մէջ, որպէսզի ինչպէս Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք կեանքի նորոգութեան մէջ» [Հռոմ. Զ 3–4]:

Առաքեալների ժամանակներից սովորութիւն է դարձել մկրտել մանուկներին, ինչպէս Հին ուխտի մէջ ութօրեայ թլփատութիւնն է:

«Եւ Լիդիա անունով աստուածավախ մի կին... մկրտուեց ինքը եւ իր տունը» [Գործ. ԺԶ 14–15, տե՛ս նաեւ ԺԸ 8]: Սուրբ Դիոնեսիոսը գրում է. «Մեր աստուածահրաշ առաջնորդները հաստատեցին՝ մանուկներին մկրտութեան ընդունել»: (Գիրք Զ, Եկեղ. քահան.): Ահա այս է պատճառը, որ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, հետեւելով առաքելական կանոններին եւ աւանդութիւններին, ընդունել է մանուկների մկրտութիւնը:

Մկրտուողների մօտ լինում են կնքահայրեր, որոնք թէ՛ երաշխաւոր են լինում կնքուողների դաստիարակութեանը եւ թէ՛ նրանց կողմից դաւանում են Սուրբ Երրորդութիւնն ու Եկեղեցում խոստովանում քրիստոնէական ճշմարիտ հաւատը: Այս աւանդութիւնը մեզ է հասել շատ հնուց, ինչպէս վկայում է սուրբ Դիոնեսիոսը. «Քահանաները, ընդունելով մկրտուողին, նրան յանձնում են կնքահօր եւ առաջնորդի դաստիարակութեանը» (Երկ. քահան., Բ գլ.):

Ինչպէս հաւատացեալների զօրագլուխը՝ Յիսուս Քրիստոս, մկրտուելուց յետոյ մինչեւ Իր վերջին շունչը սկսեց բարոյական պատերազմ մղել սատանայի եւ աշխարհի չարիքների դէմ, նոյնպէս եւ մկրտուողները հեռանում են հեթանոսական գործերից, ընդունում որդեգրութեան տիտղոսը, զինուորագրւում Սուրբ Երրորդութեանը, մանում Յիսուս Քրիստոսի դրօշակի տակ եւ սկսում մղել բարոյական պատերազմ մինչեւ իրենց մահը. «Համբերատարութեամբ ընթանանք դէպի մրցասպարէզ, որ բացուած է մեր առաջ, նայենք Յիսուսին՝ հաւատի զօրագլխին եւ կատարելագործողին, որ... յանձն առաւ խաչը, արհամարհեց ամօթը եւ նստեց Աստուծոյ աթոռի աջ կողմում» [Երբ. ԺԲ 1–2]: «Պատերազմեցի բարի պատերազմը,

աւարտեցի ընթացքս, պահեցի հաւատը» [Բ Տիմ. Դ 7], «Քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին» [Յովհ. ԺԶ 33]:

Կայ եւ մկրտութիւն նահատակութեամբ ու արեամբ եւ աստուածային սուրբ սիրոյ կրակով, ինչպէս ասում է Սուրբ Գիրքը. «Նա (Յիսուս) կմկրտի ձեզ Սուրբ Հոգով եւ հրով» [Մատթ. Գ 11]: Նոյն Ինքը՝ Յիսուս Քրիստոս, ասաց. «Երկրի վրայ կրակ գցելու եկայ» [Ղուկ. ԺԲ 49], եւ թէ՝ «Այն բաժակը, որ ես ըմպելու եմ, կըմպէք, եւ այն մկրտութիւնը, որով ես մկրտուելու եմ, նրանով կմկրտուէք» [Մարկ. Ժ 39]: Ահա այսպիսի՛ մկրտութեամբ մկրտուեցին այն մարտիրոսները, կոյսերն ու կանայք, որոնք վառուած էին Յիսուս Քրիստոսի եւ Սուրբ Հոգու սուրբ սիրոյ անանցանելի կրակով: Այսպիսի մկրտութեամբ մկրտուեց նախ Ինքը՝ Փրկիչը, խաչափայտի վրայ, ապա առաքեալները եւ Փրկչին բոլոր հետեւողները:

Մկրտութիւնը սրբազան խորհուրդ է, աստուածային կնիք, որի պատճառով եւ՝ անկրկնելի: Այսինքն՝ մի անգամ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով մկրտուածը չի կարող երկրորդ անգամ մկրտուել, որովհետեւ կրկին

մկրտուել նշանակում է կրկին խաչել Քրիստոսին, խայտառակել հաւատը, աստուածային կնիքը եւ անպատուել Սուրբ Երրորդութեանը. «Մէ՛կ Տէր կայ, մէ՛կ հաւատ, մէ՛կ մկրտութիւն» [Եփես. Դ 5]: «Որովհետեւ մէկ անգամ մկրտուածների համար,– որ ճաշակեցին երկնաւոր պարգեւներից, հաղորդակից եղան Սուրբ Հոգուն, ճաշակեցին Աստուծոյ գեղեցիկ խօսքը եւ ճանաչեցին գալիք աշխարհի զօրութիւնները,– եթէ ընկնեն, անհնար է երկրորդ անգամ ապաշխարութեամբ նորոգուել, որովհետեւ նրանք վերստին խաչն են հանում Աստուծոյ Որդուն եւ դարձեալ խաղք ու խայտառակ դարձնում» [Եբր. Զ 4–6]: Ահա այս է պատճառը, որ Հաւատոյ հանգանակում վճռել են. «Ի մի մկրտութիւն»:

Բ. ԴՐՈՇՄ

Եկեղեցու երկրորդ սրբարար խորհուրդը Դրոշմն է, որ նշանակում է աստուածային կնիք կամ Աստուծոյ կնիքով դրոշմուած. «Ունէր կենդանի Աստուծոյ կնիքը... մինչեւ կնիք դնեմ իմ Աստուծոյ ծառաների ճակատների

վրայ» [Յայտ. Է 2–4]: «Եւ Տէրն ասաց նրան. «Անցի՛ր Երուսաղէմ քաղաքի միջով ու նշան դիր այն մարդկանց ճակատին» [Եզեկ. Թ 4]:

Այս խորհուրդը սահմանուել է ըստ ս. Աւետարանի հետեւեալ խօսքի. «Եւ երբ Յիսուսն էլ մկրտուեց եւ աղօթք էր անում, երկինքը բացուեց, եւ Սուրբ Հոգին մարմնաւոր տեսքով աղաւնու պէս իջաւ Նրա վրայ» [Ղուկ. Գ 21–22]: Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին մկրտութիւնից անմիջապէս յետոյ նախ ջերմագին աղօթում է մկրտող քահանայի բերանով եւ ապա սրբալոյս միւռոնով դրոշմում մկրտուողի զգայարանները, որպէսզի դրոշմուողն արտաքին զգալի օծման եւ աղօթքի հետ ներքուստ ընդունի Ս. Հոգու ներքին օծութիւնը. «Այս բանը գրեցի ձեզ, որպէսզի ոչ ոք ձեզ չմոլորեցնի: Իսկ այն օծումը, որը դուք ընդունեցիք Նրանից, թող բնակուի ձեր մէջ» [Ա Յովհ. Բ 26–27]:

Թէեւ Յիսուս Քրիստոսի յարութիւնից առաջ թէ՛ Յովհաննէս Մկրտիչը եւ թէ՛ առաքեալները մկրտում էին Յիսուս Քրիստոսի անունով [Յովհ. Դ 2], բայց մկրտուողները չէին ընդունում Ս. Հոգին. որովհետեւ դեռեւս

Ս. Հոգին չէր իջել առաքեալների վրայ: Սուրբ Հոգու՝ վերնատուն իջնելուց յետոյ աւելի հաստատուեց դրոշմի սրբարար խորհուրդը առաքելալների ձեռքով: Այնուհետեւ առաքեալներն ու աշակերտները սկսեցին ձեռք դնել մկրտուողների վրայ եւ աղօթել, եւ Յիսուս Քրիստոսի անունով կանխաւ մկրտուածներն ընդունում էին Սուրբ Հոգին: «Երբ Երուսաղէմում գտնուող առաքեալները լսեցին, թէ Սամարիայում էլ են ընդունել Աստուծոյ խօսքը, նրանց մօտ ուղարկեցին Պետրոսին եւ Յովհաննէսին, որոնք իջան եւ աղօթք արեցին նրանց վրայ, որ Սուրբ Հոգին առնեն: Որովհետեւ դեռ նրանցից ոչ մէկի վրայ չէր իջել, միայն մկրտուել էին Տէր Յիսուս Քրիստոսի անունով: Այնժամ ձեռքները նրանց վրայ դրեցին, եւ նրանք ընդունում էին Սուրբ Հոգին» [Գործ. Ը 14–17]:

Այսպէս է նաեւ Եփեսոսում պատահածը. սուրբ Պօղոս առաքեալը հանդիպում է Յովհաննէս Մկրտչի կողմից մկրտուածներին, որոնք չէին ընդունել Սուրբ Հոգին. «Եւ երբ Պօղոսը նրանց վրայ ձեռք դրեց, Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ» [Գործ. ԺԹ 1–6]: Նոյն Պո-

դոս առաքեալը գրում է. «Ստեփանոսի ընտանիքն էլ մկրտեցի» [Ա Կոր. Ա 16]:

Նոյն սրբազան առաքեալը գրում է այս խորհրդի մասին եւս. «Եւ Նա, Ով ձեզ հետ միասին հաստատեց մեզ ի Քրիստոս եւ օծեց մեզ, Աստուած է. Որը եւ կնքեց մեզ ու Հոգու առհաւատչեան դրեց մեր սրտերի մէջ» [Բ Կոր. Ա 21–22]:

Ահա այսպէս աղօթքով եւ օծմամբ դրոշմուողները ներքուստ ընդունում են Սուրբ Հոգու օծութիւնն իբրեւ սուրբ Եկեղեցուն Սուրբ Հոգւով որդեգրուած անդամներ եւ Աստուծոյ հոգեկիր զաւակներ. «Այլ ստացաք որդեգրութեան Հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա՛, Հա՛յր: Նոյն Ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, թէ Աստուծոյ որդիներ ենք: Եւ եթէ որդիներ ենք, ապա եւ ժառանգներ. ժառանգներ Աստուծոյ եւ ժառանգակիցներ Քրիստոսի» [Հռոմ. Ը 15–17]:

Մկրտող եպիսկոպոսները, վարդապետները կամ քահանաները սրբագործուած իւղով խաչաձեւ դրոշմում են մկրտուողի ճակատը, աչքերը, ականջները, հոտոտելիքը, բերանը, ձեռքերը, սիրտը, մէջքը եւ ոտքերը խորհրդաւոր եւ վսեմ աղօթքներով հանդերձ. օրինակ՝

Ճակատը - «Իւղ անոյշ յանուն Յիսուսի Քրիստոսի հեղեալ ի վերայ քո՝ կնիք երկնատոր պարգեւացն անապականութեան»:

«Քրիստոսի անունով քեզ վրայ հեղուած անուշ իւղը երկնաւոր անապական պարգեւների կնիքն է»:

Աչքերը - «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի լուսաւորեսցէ զաչս քո, զի մի՛ երբէք ննջեսցես ի մահ»:

«Քրիստոսի անունով այս կնիքը թող լուսաւորի աչքերդ, որպէսզի երբէք չննջես մահով»:

Ականջները - «Օծումն սրբութեան եղիցի քեզ ի լսելութիւն աստուածային պատուիրանացն»:

«Այս սուրբ օծումը թող քեզ լսել տայ աստուածային պատուիրանները»:

Հոտոտելիքը - «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ հոտ անուշութեան կենաց ի կեանն»:

«Քրիստոսի անունով այս կնիքը թող լինի քեզ անուշահոտութիւն կեանքից կեանք»:

Բերանը - «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ պահպանութիւն բերանոյ եւ դուռն ամուր շրթանց քոց»:

«Քրիստոսի անունով այս կնիքը թող լինի պահպանութիւն քո բերանին եւ ամուր դուռ՝ քո շուրթերին»:

Ձեռքերը - «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ պատճառ բարեգործութեան, ամենայն առաքինի գործոց եւ վարուց»:

Քրիստոսի անունով այս կնիքը թող լինի քեզ պատճառ բարեգործութեան, բոլոր առաքինի գործերի եւ վարքի»:

Սիրտը - «Կնիքս աստուածային սիրտ սուրբ հաստատեսցէ ի քեզ եւ հոգի ուղիղ նորոգեսցէ ի փորի քում»:

«Այս աստուածային կնիքը թող սուրբ սիրտ հաստատի քո մէջ եւ ուղիղ հոգի նորոգի քո ներսում»:

Մէջքը - «Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ վահան ամրութեան, որով կարասցես զամենայն նետս մուխս չարին շիջուցանել»:

«Քրիստոսի անունով այս կնիքը թող լինի քեզ ամուր վահան, որով կարողանաս չարի բոլոր այրող նետերը հանգցնել»:

Ոտքերը - «Կնիքս աստուածային ուղղեսցէ զգնացս քո ի կեանս յաւիտենից, զի մի՛ սասանեսցիս»:

«Այս աստուածային կնիքը թող ուղղի քո ընթացքը դէպի յաւիտենական կեանք, որպէսզի չսասանուես»:

Յետոյ մկրտողն ասում է դրոշմուածին. «Խաղաղութի՛ւն ընդ քեզ, փրկեա՛լդ Աստուծոյ, խաղաղութի՛ւն ընդ քեզ, օծեա՛լդ Աստուծոյ»:

Դրոշմի խորհուրդը նոյնպէս չի կրկնւում, քանզի կրկնելն անարգութիւն ու թշնամութիւն է Աստուծոյ նկատմամբ: Խօսքը վերաբերում է միայն դրոշմին եւ ո՛չ թէ ձեռնադրութեանը, քանի որ օծուած քահանան կամ վարդապետը կարող են ձեռնադրութեամբ օծուել եպիսկոպոս եւ կաթողիկոս:

Գ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Եկեղեցու երրորդ խորհուրդը Ապաշխարութիւնն է, որ հաստատուել է Յիսուս Քրիստոսի կողմից. «Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղաւորներին՝ ապաշխարութեան» [Ղուկ. Ե 32]:

Այս խորհուրդը կատարելու եւ ապաշխարողներին մեղքից ազատելու իրաւունքը Յիսուս տուել է միայն Եկեղեցու հոգեւոր պաշտօնեաներին[2] *այս խօսքերով. «...նրանց (առաքեալների) վրայ փչեց եւ ասաց. «Առէ՛ք Սուրբ Հոգին*[3]*: Եթէ մէկի մեղքերն արձակէք, արձակուած կլինի նրան, եթէ մէկի մեղքերը կապէք, կապուած կլինի»» [Յովհ. Ի 22–23]: Յիսուս Քրիստոսի սոյն հրամանին հետեւելով է գրուել Հայաստանեայց Ս. Եկեղեցու ընդունած «Ողորմեսցի»-ն, որի մէջ խոստովանահայրն ասում է.* «Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան եւ հրամանաւն աստուածային, թէ՝ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս, նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց» *(Ժամագիրք):*

2 Կաթողիկոսներին, եպիսկոպոսներին, վարդապետներին եւ քահանաներին:

3 Յիսուս Քրիստոս «Առէ՛ք Սուրբ Հոգին» խօսքով առաքեալներին տալիս է ոչ թէ Սուրբ Հոգին, այլ միայն իշխանութիւն, որովհետեւ եթէ արդարեւ Սուրբ Հոգին տուած լինէր, հարկ չէր լինի կրկին երկնքից իջնելու առաքեալների վրայ: Ս. Հոգին Հօր կողմից պիտի ուղարկուէր յետոյ [Յովհ. ԺԴ 26 եւ Գործ. Ա 4]:

«Եւ ես քահանայական իշխանութեան կարգով եւ աստուածային հրամանով, թէ՝ որ մեղքն արձակէք երկրի վրայ, արձակուած կլինի երկնքում, նոյն խօսքով արձակում եմ քեզ քո մեղքերի ողջ մասնակցութիւնից»:

Առաքեալներից փոխանցուելով՝ մեզ է հասել այս խորհուրդը, որը նոյնութեամբ պահել է Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին:

Ինչպէս Մկրտութիւնը լուանում եւ ջնջում է մեր սկզբնական մեղքը, *իսկ Դրոշմը՝ Սուրբ Հոգու օծութեամբ սրբում եւ վերածնում է մեր հոգիները, այնպէս էլ ճշմարիտ ապաշխարութիւնն ու զղջումը սրբում են մեր* ներգործական մեղքերը[4] *եւ վերահաստատում մեզ Աս-*

4 Նախաստեղծների պատուիրանազանցութիւնը կոչւում է *սկզբնական մեղք* կամ *առամական մեղք*, որի հետեւանքով մարդկային բնութիւնը դատապարտուեց մահուան եւ ապականութեան: Մկրտութեամբ մեր հոգիները յարութիւն են առնում մեղքի մահուանից եւ դառնում Սուրբ Երրորդութեան բնակարան, իսկ մեր մարմինների մէջ սերմանւում է անապականութիւնը, որպէսզի անապականութեան մարմնով յարութիւն առնենք համընդհանուր յարութեան ժամանակ: *Ներգործական* են կոչւում այն մեղքերը, որ գործում ենք մկրտուելուց յետոյ գիտութեամբ կամ անգիտութեամբ:

տուծոյ որդեգրութեան մէջ, եթէ միայն ճշտութեամբ ենք կատարում մեզանից պահանջուող ապաշխարութեան պայմանները, որոնք են՝ կատարեալ զղջում, արտասուախառն աղօթք, անկեղծ խոստովանութիւն եւ քահանայական արձակում:

Զղջումը կատարեալ է, երբ ամբողջ սրտով ցաւում ենք մեր անվայել արարքների համար, երբ զզւում ենք դրանցից եւ զգում, որ յանցաւոր ենք Քրիստոսի՝ մեր մեղքերը քաւելու համար կրած չարչարանքների, թափած աստուածային արեան դէմ եւ երբ «մեղա՛յ» դոչելով ընկնում ենք Աստուծոյ գիրկը, ինչպէս արեց անառակ որդին եւ վերահաստատուեց որդեգրութեան մէջ [Ղուկ. ԺԵ 14–22]:

Մեր աղօթքն արտասուախառն է լինում, երբ մեր խղճի խայթը ներգործում է մեր զգայարանների վրայ, երբ մրմռում են մեր հոգու վէրքերը, երբ աճապարանքով գնում ենք Յիսուս Բժշկապետի ոտքը, երբ զննութեան ենք ներկայացնում մեր ներգործական մեղքերի վէրքերը եւ երբ լաց լինելով ասում ենք. «Ո՛վ երկնային Բժշկապետ, Քեզանից բացի ուրիշ բժիշկ չունենք, բժշկի՛ր մեր վէրքերը եւ

հանգստացրո՛ւ մեր խիղճն ու հոգին»: Այսպէս արդարացաւ այն մեղաւոր կինը, որ դիմեց Յիսուսին, արտասուքով թրջեց Փրկչի ոտքերը, իր մազերով սրբեց թափած արտասուքը եւ լսեց Քրիստոսից այս մխիթարական խօսքը. «Քո մեղքերը քեզ ներուած են» [Ղուկ. Է 37–48]:

Խոստովանութեան գոյութիւնը շատ հին է: Աստուած հրաւիրում է մարդկանց խոստովանելու իրենց մեղքերը եւ ասում է. «Եթէ ձեր հոգիները մեղքերով սեւացած լինեն ինչպէս մուր, կսպիտակեցնեմ ձեան նման, եթէ մեղքերով կարմրած լինեն ինչպէս որդան կարմիր, մաքուր կդարձնեմ սպիտակ բրդի նման» [Ես. Ա 18], եւ թէ՝ «Նախ դու խոստովանի՛ր քո անօրէնութիւնները, որ արդարացուես» [Ես. ԽԳ 26]: Քահանայի մօտ խոստովանելով մեր մեղքերը՝ ասում ենք «մեղա՛յ Աստուծոյ» եւ ոչ թէ՝ «մեղա՛յ քահանային»: Ուրեմն, քահանաներին խոստովանելով՝ մենք կատարում ենք Աստուծոյ պատուէրը եւ յարգում քահանայութիւնն ու այն հաստատող Քահանայապետին՝ Յիսուս Քրիստոսին. «Ով ձեզ ընդունում է, Ինձ է ընդունում» [Մատթ. Ժ 40]: «Ով ձեզ անարգում է, Ինձ է անարգում» [Ղուկ. Ժ 16]:

«Այն ժամանակ նրա (Յովհաննէս Մկրտչի) մօտ էին գնում բոլոր երուսաղէմացիները, ամբողջ Հրէաստանն ու Յորդանանի շրջակայքի ժողովուրդը, ...խոստովանում էին իրենց մեղքերը» [Մատթ. Գ 5–6]:

Խոստովանութիւնն անկեղծ է, երբ մենք մեր մեղքերը խոստովանում ենք իսկութեամբ եւ ճշմարտութեամբ: Անկեղծ խոստովանութեամբ արդարացան Դաւիթ մարգարէն [Բ Թագ., ԺԲ 1–13], բազմաթիւ մեղաւորներ Քրիստոսի, առաքեալների եւ նոյնիսկ մեր ժամանակներում: Այս պատճառով Յակոբոս առաքեալը պատուիրում է. «Ձեր մեղքերը միմեանց խոստովանե՛ք եւ միմեանց համար աղո՛թք արէք» [Յակ. Ե 16]:

Խոստովանութիւնը կեղծ է, երբ ծածկագէտ Աստուծոյ առաջ խոստովանում ենք՝ ծածկելով մեր մեղքերը. կա՛մ պատճառները գցում ենք այլոց վրայ, կա՛մ թաքցնում մեր մեղքերը եւ կա՛մ էլ ի ցոյց մարդկանց խոստովանում: Այսպիսի խոստովանութիւնը շարժում է Աստուծոյ բարկութիւնը, իսկ խոստովանողները փոխանակ արդարանալու պատժւում են Աստուծոյ արդար վրէժխնդրութեամբ, ինչպէս

պատժուեցին Ադամը, Եւան, Կայէնը, Սաւուղ թագաւորը, Քարմէի որդի Աքարը, մատնիչ Յուդան, Անանիան ու Սափիրան եւ այլ տղամարդիկ ու կանայք: Պետրոս առաքեալը, յանդիմանելով Անանիայի եւ Սափիրայի կեղծ խոստովանութիւնը, ասում է. «Անա՛նիա, ինչո՞ւ սատանան լցրեց քո սիրտը, որ խաբես Սուրբ Հոգուն... մարդկա՛նց չստեցիր, այլ Աստծո՛ւն» [Գործ. Ե 1–11]:

Ապաշխարութեան գործնական օրինակ են նինուէացիները, որոնք փրկուեցին ծոմապահութեամբ, զղջմամբ, արտասուքով, խոստովանութեամբ եւ աղօթքով [Յվն. Գ–Դ]: Աստուած ողորմած է, չի կամենում մեղաւորների մահը, այլ կամենում է, որ մարդիկ դառնան իրենց չար ճանապարհներից եւ ապրեն անմահ հոգով: Այս է պատճառը, որ Հանգանակում դաւանում ենք՝ հաւատում ենք «ապաշխարութեան, մեղքերի քաւութեան եւ թողութեան»:

Դ. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Եկեղեցու չորրորդ խորհուրդը Հաղորդութիւնն է, որ հաստատեց Ինքը Յիսուս Քրիս-

տոս վերնատանը Պասեքի ընթրիքի ժամանակ: Փրկիչը, օրհնելով բաղարջ (անխմոր) հացը, մանրեց, տուեց աշակերտներին եւ ասաց. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է Իմ Մարմինը»: Եւ վերցնելով անապակ (մաքուր, անջրախառն) գինով լցուած բաժակը՝ գոհացաւ, տուեց նրանց եւ ասաց. «Խմէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է Նոր ուխտի Իմ Արիւնը, որ հեղւում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար» [Մատթ. ԻԶ 26–28]:

Նոր ուխտ ասելով՝ Նա դադարեցնում է Հին ուխտի կենդանիների արեամբ զոհագործութիւնը մեղքերի քաւութեան համար, որովհետեւ տուեց Նոր ուխտի Մարմինը եւ Արիւնը, որովհետեւ Ինքն էր Աստուծոյ Գառը եւ փրկութեան Զոհը, որովհետեւ Իր Մարմինը, Արիւնը եւ Պատարագը, աստուածային լինելով, գերազանց են ո՛չ միայն կենդանիների զոհերից, այլեւ մարդկանցից. «Ո՞րչափ առաւել արիւնը Քրիստոսի, որ յաւիտենական Հոգու միջոցով Ինքն Իրեն որպէս անարատ պատարագ մատուցեց Աստծուն» [Եբր. Թ 14]: «... Նրա արեան հեղումին, որ աւելի խօսուն է, քան արիւնն Աբէլի» [Եբր. ԺԲ 24]:

Այս Սրբարար խորհուրդը, ինչպէս Յիսուս Քրիստոս անխմոր հացով եւ անապակ գինով աւանդեց առաքեալներին եւ նրանք էլ՝ իրենց հետեւողներին, մինչեւ հասաւ մեզ, սրբութեամբ պահել է Հայաստանեայց Ս. Եկեղեցին՝ իբրեւ քրիստոսաւանդ խորհուրդ:

Հաղորդութեան սրբարար խորհուրդը ինչպէս մեր մարմնի, այնպէս էլ հոգու աչքերի առաջ պատկերում է Փրկչի մարմնանալը, չարչարանքը, խաչի վրայ կրած տանջանքը, թափած աստուածային արիւնը, մահը, թաղումը եւ յարութիւնը՝ քաւութեան եւ թողութեան համար: Այս պատճառով՝ հաղորդուելու ժամանակ մեզ համար յոյժ կարեւոր է ունենալ հեռեւեալ պատրաստութիւնը.

Ա. Կատարեալ հաւատով մերձենալ ս. Հաղորդութեանը:

Բ. Ապաշխարութեամբ պատրաստուած մերձենալ, ինչպէս պահանջում է նախորդ խորհուրդը:

Գ. Մեր մտքի աչքերի առաջ պատկերացնել Յիսուս Քրիստոսի՝ մեզ համար կրած բոլոր դառն տանջանքները:

Դ. Մտովի քննել մեր արժանաւորութիւնն ու անարժանութիւնը:

Ե. Հաշտուել բոլոր նրանց հետ, ումից խռովուած կամ նեղացած ենք եւ կամ քէն ունենք:

Այս հանգամանքները նկատի ունենալով է գրում Պօղոս առաքեալը. «Որովհետեւ ես ընդունեցի Տիրոջից, ինչ որ աւանդեցի ձեզ. այն, որ Տէր Յիսուս այն գիշերը, երբ մատնուեց, հաց վերցրեց, գոհացաւ, կոտրեց եւ ասաց. «Այս է Իմ Մարմինը, որ ձեզ համար է, արէ՛ք այս Իմ յիշատակի համար»: Նոյն ձեւով էլ ընթրիքից յետոյ վերցրեց բաժակը եւ ասաց. «Այս բաժակը նոր ուխտ է Իմ Արիւնով. արէ՛ք այս Իմ յիշատակի համար, քանի անգամ էլ որ խմէք»: Քանի անգամ որ այս հացն ուտէք եւ այս բաժակը խմէք, պատմէ՛ք Տիրոջ մահը, մինչեւ որ Նա գայ: Ահա թէ ինչու, ով որ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ այս բաժակն անարժանօրէն, պարտական պիտի լինի Տիրոջ Մարմնին ու Արեանը: Թող մարդ նախ ինքն իրեն փորձի եւ ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից. որովհետեւ ով ուտում է եւ խմում անարժանօրէն, իր իսկ դատապարտութիւնն է ուտում եւ խմում, քանի որ չի տարբերում Տիրոջ Մարմինը: Դրա համար իսկ ձեր մէջ բազում հիւանդներ ու ցաւագարներ կան, եւ շատերն էլ մեռած են: Որովհետեւ եթէ մենք մեզ քննէինք, ապա չէինք դատապարտուի: Իսկ եթէ դատուում ենք, Տիրոջից խրատուում ենք, որ աշխարհի հետ չդատապարտուենք» [Ա Կոր. ԺԱ 23–32]: Առաքելական խրատի այս տողերը մեզ համար պէտք է լինեն ամենամեծ զգուշութեան քարոզ, որ անպատրաստ կամ ի ցոյց մարդկանց չմերձենանք այս սրբարար խորհրդին:

Առանց հաղորդուելու ո՛չ կարող ենք Քրիստոսի հետ միանալ եւ ո՛չ Նրա չարչարանքներին մասնակից լինել, ո՛չ կարող ենք կեանք ունենալ եւ ո՛չ խղճմտանքի հանգստութիւն, ինչպէս վճռաբար ասում է Փրկիչը. «Եթէ չուտէք Մարդու Որդու Մարմինը եւ չըմպէք Նրա Արիւնը, ձեր մէջ կեանք չէք ունենայ: Ով ուտում է Իմ Մարմինը եւ ըմպում Իմ Արիւնը, յաւիտենական կեանք ունի. եւ Ես նրան Վերջին օրը յարութիւն պիտի տամ... Ով ուտում է Իմ Մարմինը եւ ըմպում Իմ Արիւնը, կընակուի Իմ մէջ, եւ Ես՝ նրա մէջ» [Յովհ. Զ 54–57]:

Մկրտութեամբ սկզբնական մեղքից ազատուած եւ դրոշմի օծմամբ Սուրբ Հոգու շնորհ-

ները վայելած մանկանց եւս պէտք է տալ սուրբ Հաղորդութիւն, որպէսզի նրանք չզրկուեն այս անզուգական պարգեւից: Մանուկներին հաղորդելու սովորութիւնը մինչեւ այսօր պահպանուել է Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցում:

Ահա այսպիսի պատրաստութեամբ եւ զգուշաւոր դիտակցութեամբ հաղորդուողները սրբւում են իրենց ներգործական մեղքերից, ժառանգում յաւիտենական կեանք՝ քաւութեամբ եւ թողութեամբ: Իսկ անարժանութեամբ, անխորութեամբ եւ անպատրաստութեամբ հաղորդուողները ժառանգում են դատաստան, դատապարտութիւն, պատիժ, հիւանդութիւն, յաւիտենական մահ եւ կրակ. «Քանզի մեր Աստուածը ոչնչացնող կրակ է» [Եբր. ԺԲ 29]:

Քրիստոսի սրբարար Մարմնին եւ Արեանը հաղորդուելով՝ մօտենում ենք Աստուածութեանը եւ միանում Նրան Յիսուս Քրիստոսի շնորհիւ. «Իսկ այժմ Յիսուս Քրիստոսի միջոցով դուք, որ մի ժամանակ հեռացած էիք, մերձաւորներ եղաք Քրիստոսի Արեամբ, որովհետեւ Նա է մեր խաղաղութիւնը, Նա, որ երկուսը մէկ դարձրեց. Իր մարմնով քանդեց թշնամութեան միջնորմը» [Եփես. Բ 13–14]:

Ե. ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՊՍԱԿ

Եկեղեցու հինգերորդ սրբարար խորհուրդը Ամուսնութիւնն է, որը հաստատել է Ինքն Աստուած, Ադամի հաւանութեամբ: Երբ Աստուած Եւային բերեց Ադամի մօտ, Ադամը հաւանելով գոչեց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչուի կին, որովհետեւ իր ամուսնուց ստեղծուեց» [Մն. Բ 22–23]: Ադամի հաւանութիւնից յետոյ Աստուած, օրհնելով նրանց ամուսնութիւնը, ասում է. «Աճե՛ք, բազմացե՛ք եւ լցրե՛ք երկիրը» [Մն. Ա 27–28]:

Սուրբ Գիրքը մատնացոյց է անում, որ բազմակնութիւնը նախ սկսուել է Մաթուսաղայի որդի Ղամէքից [Մն. Դ 19] եւ տեւել մինչեւ Քրիստոսի քարոզութեան օրերը: Բազմակնութիւնն իր հետ բերեց նախանձութիւն, թշնամութիւն, խռովութիւն եւ արիւնահեղութիւն խաղաղ գերդաստանի մէջ, այնպէս որ տօնելի համարուած մարդկանց, ինչպէս Յակոբ նահապետի, Դեդէոնի, Դաւթի, Սողոմոնի եւ այլոց

գերդաստաններն անգամ ազատ չէին այս դառն աղէտներից: Թշուառ եւ անտանելի էր կնոջ վիճակը, քանզի ստէպ հանւում էր տնից, եւ նրան յաջորդում էր մէկ այլ կին կամ բազմաթիւ կանայք: Վերջապէս, ամուսնութիւնը չմնաց իր սրբարար դերի մէջ մարդկանց պատուիրանազանցութեան պատճառով:

Որպէսզի ամուսնութեան սրբարար խորհուրդը վերահաստատուի, ծառայի Աստուծոյ սահմանած նպատակին, օրինաւոր ճանապարհով մարդկութիւնն աճի, եւ ամուսնութիւնը վերստին սրբագործուի միակնութեամբ, Յիսուս Քրիստոս վճռեց. «Ով սկզբից ստեղծեց, արու եւ էգ արեց նրանց եւ ասաց. «Դրա համար տղամարդը պիտի թողնի հօրն ու մօրը եւ պիտի գնայ իր կնոջ ետեւից. եւ երկուսը մէկ մարմին պիտի լինեն»: Ապա ուրեմն ոչ թէ երկու, այլ մէկ մարմին են: Արդ, ինչ որ Աստուած միացրեց, մարդը թող չբաժանի» [Մատթ. ԺԹ 4–6]:

Ահա այսպէս Յիսուս Քրիստոսի շնորհիւ սուրբ Եկեղեցու կողմից արգելուեց բազմակնութիւնը, սրբուեց ընտանեկան յարկը, վերահաստատուեց կնոջ իրաւունքը. վերստին գերդաստանի մէջ մտան սէր, խաղաղութիւն եւ քաղցր կեանք, քանզի ինչպէս ի սկզբանէ մարդը գերդաստանի մէջ համարւում էր թագաւոր, նոյնպէս էլ կինը համարուեց թագուհի: Հէնց այս է պատճառը, որ Հայաստանեայց Ս. Եկեղեցին պսակելու ժամանակ թագազարդում է փեսայի եւ հարսի գլուխները, թագաւոր անուանում փեսային եւ թագուհի՝ հարսին: Փեսան հրապարակաւ ուխտում է ցմահ տէր լինել հարսին, եւ հարսն ուխտում է ցմահ հնազանդ լինել փեսային: Ս. Պօղոս առաքեալն ամուսնութեան սրբարար խորհրդի մասին գրում է. «Այս խորհուրդը մեծ է, բայց ես ասում եմ Քրիստոսի եւ Եկեղեցու վերաբերեալ» [Եփես. Ե 32]: Սուրբ Գիրքը շատ տեղերում ս. Եկեղեցին նմանեցնում է հարսի, իսկ Քրիստոսին՝ փեսայի (յատկապէս Երգ Երգոցը). Քրիստոսի եւ Եկեղեցու, Աստուծոյ եւ մարդու միութիւնը եւ փոխյարաբերութիւնը նկարագրւում է հարսի եւ փեսայի սիրոյ օրինակով: Ինչպէս անբաժանելիօրէն միացած է Բանն Աստուած մարդու հետ, եւ մարդը՝ Բանի Աստուածութեան հետ, նոյնպէս էլ անանջատ միանում են փեսան եւ հարսը ամուսնութեամբ եւ լինում

մի մարմին: Ահա այս է պատճառը, որ Յիսուս Քրիստոս վճռաբար ասում է. «Ինչ որ Աստուած միացրեց, մարդը թող չբաժանի»:

Որովհետեւ անլուծելի է պսակը, ուստի Պօղոս սրբազան առաքեալն ասում է. «Կանայք իրենց այրերին թող հնազանդ լինեն, ինչպէս կհնազանդուեն Տիրոջը, որովհետեւ այրն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է Եկեղեցու եւ Ինքն է Փրկիչն այդ մարմնի: Եւ ինչպէս Եկեղեցին հնազանդուում է Քրիստոսին, նոյնպէս եւ կանայք թող հնազանդուեն իրենց այրերին ամէն ինչում: Այրե՛ր, սիրեցէ՛ք ձեր կանանց, ինչպէս որ Քրիստոս սիրեց Եկեղեցին եւ Իրեն մատնեց նրա համար, որ սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով, որպէսզի Նա Իր առաջ փառաւոր կերպով կանգնեցնի Եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղութիւն կամ նման բաներից ոչինչ չունենայ, այլ լինի սուրբ եւ անարատ» [Եփես. Ե 22–27]: Խրատում է ամուսնացողին, որպէսզի տեղի չտան գժտութեան եւ ատելութեան, այլ երկուստեք անքակտելի պահեն սէրը, որպէսզի ցմահ անքակտելի մնայ եւ կենակցութեան կապը, որի մէջ է երջանկութեան քաղցրութիւնը:

Որպէսզի ամուսնութիւնն օրինաւոր լինի, պսակը՝ վաւերական, եւ ամուսնացողների մէջ անքակտելի մնայ սիրոյ կապը, Հայաստանեայց Ս. Եկեղեցին ամուսնացողներից պահանջում է հետեւեալ անհրաժեշտ պայմանները.

Ա. Ամուսնացողները պէտք է լինեն չափահաս, որպէսզի կարողանան ինքնաճանաչ որոշմամբ վճիռ ընդունել:

Բ. Երկուստեք ազատ կամքով ու համահաճ պէտք է լինի ամուսնացողների միաւորութիւնը եւ ո՛չ ակամայ եւ հարկադրաբար:

Գ. Ամուսնացողները պէտք չէ ունենան ազգակցական մերձաւորութիւն, այսինքն արիւնակցական հեռաւորութիւնը չպէտք է լինի եօթ պորտից պակաս:

Դ. Պսակը պէտք է լինի յայտնի, Եկեղեցու սահմանած օրերին եւ քահանայի ձեռքով եւ ոչ թէ գաղտնի, արգելուած օրերին, անյայտ քահանայով կամ որեւիցէ ապօրինի միջոցով:

Այս պայմանները պահանջւում են ո՛չ միայն կոյս, այլեւ այրի ամուսնացողներից:

Սուրբ Գիրքը շուն է անուանում այն մարդուն կամ կնոջը, որ թողնելով իր օրինաւոր

կենդանի ամուսնուն՝ ուրիշ կին կամ ուրիշ մարդ է առնում. «Արդ, ինչ որ Աստուած միացրեց, մարդը թող չբաժանի: ...Եթէ մի մարդ արձակի իր կնոջը եւ ուրիշին առնի, շնութիւն արած կլինի: Եւ մի կին, եթէ թողնի իր ամուսնուն եւ ուրիշ մարդու կին լինի, շնութիւն արած կլինի» [Մարկ. Ժ 9–12]: Բայց եթէ վախճանւում է երկուսից մէկը, կենդանի մնացողն ազատ է, կարող է Աստուծով անարգել ամուսնանալ: Սակայն եթէ այրն ու կինը կենդանի են եւ բաժանուած, նրանք կա՛մ պէտք է հաշտուեն եւ ապրեն միմեանց հետ եւ կա՛մ ցմահ մնան առանց ուրիշի հետ ամուսնանալու [Ա Կոր. Է 10–11]:

Զ. ԿԱՐԳ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Եկեղեցու վեցերորդ սրբարար խորհուրդը Քահանայութեան կարգն է կամ Ձեռնադրութիւնը. այն հաստատուած է շատ վաղուց: Քահանայութեան մասին առաջին սուրբգրային յիշատակումը գալիս է Աբրահամի եւ Մելքիսեդեկի հանդիպման դրուագից, ուր վերջինիս մասին ասւում է, որ նա «Բարձրեալ Աստուծոյ քահանայ էր» [Մն. Ժդ 18]: Քահանայական կարգը Իսրայէլի տան մէջ աստուածային հրամանով հաստատւում է Մովսէս մարգարէի միջոցով [Ել. Խ 13—14], որը շարունակաբար պահպանւում է մինչեւ Աստուծոյ Որդու ծնունդը ս. Կոյսից: Յիսուս Քրիստոս լրումն էր Հին օրէնքի եւ մարգարէների. նրանով դադարում են Հին ուխտի բոլոր քահանայագործական կերպերը՝ կենդանիների զոհաբերութիւնները եւ այլն: Յիսուս Քրիստոս՝ ճշմարիտ Քահանայապետը, խաչի վրայ Ինքն Իրեն զոհաբերելով մեր մեղքերի համար, հաստատում է նոր անարիւն քահանայագործութիւն եւ Իր ընտրեալ աշակերտներին լիակատար իշխանութիւն տալիս այդ քահանայագործութիւնը հաստատելու երկրի վրայ:

Առաքեալները, հետեւելով իրենց Քահանայապետի՝ Յիսուս Քրիստոսի աւանդած օրինակին, սկսեցին նախ վիճակով ընտրել արժանաւորներին [Գործ. Ա 23—26] եւ ապա ձեռնադրել՝ աղօթելով եւ ձեռք դնելով ընտրեալների վրայ: Այսպիսի զգուշաւոր ընտրութեամբ ձեռնադրեցին սարկաւագներ [Գործ. Զ 5—6], երէցներ [Գործ. ԺԴ 22], վարդապետներ [Գործ. ԺԴ 1, Ա

Կոր. ԺԲ 28] եւ այլն, եպիսկոպոսներ [Փիլպ. Ա 1, Ա Տիմ. Գ 2] եւ դպիրներ [Տիտ. Գ 13]:

Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին, իբրեւ սրբազան աւանդ, պահպանել է նաեւ այս աւանդութիւնը:

Եւ որովհետեւ այս սրբարար խորհրդին կոչուածները նուիրւում են աստուածային պաշտօնի եւ Եկեղեցու սրբարար խորհուրդների մատակարարութեան, այդ պատճառով էլ Առաքելական Եկեղեցին այդ կոչումին հրաւիրուած բոլոր ձեռնադրուողներից (ստորին աստիճաններից մինչեւ ամենաբարձրը) պահանջում է հետեւեալ անհրաժեշտ պայմանները.

Ա. Ձեռնադրուողները պէտք է ծնուած լինեն օրինաւոր ամուսնութիւնից:

Բ. Իրենց մարմնի որեւէ մասի վրայ պէտք է չունենան բնական թերութիւն:

Գ. Պէտք է հմուտ լինեն Սուրբ Գրքի ուսուցման եւ գիտութեան մէջ:

Դ. Պէտք է հասարակութեան (ծխականների) կողմից վկայուած լինեն առաքինի վարք ու բարքով եւ կենցաղավարութեամբ:

Ե. Պէտք է ունենան առաքելական եւ հայրապետական ուղիղ դաւանութիւն, հեռու լինեն եւ ուխտեն հեռու մնալ հերետիկոսական եւ հերձուածողական աղանդներից ու խմորներից:

Զ. Պէտք է լինեն չափահաս, կարողանան ըստ օրէնքի հովուել իրենց ընտրած ժողովրդին [Ա. Տիմ., Գ 2–6]:

Է. Պէտք է իսպառ հեռու լինեն սիմոնականութիւնից (դրամով հոգեւոր կոչում ստանալու ախտից):

Ահա այս պարագաները նկատի ունենալով՝ սուրբ Պօղոս առաքեալը պատուիրում է իր կողմից ձեռնադրուած Տիմոթէոս եպիսկոպոսին. «Պարտաւորեցնում եմ քեզ Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի ու ընտրեալ հրեշտակների առաջ, որ այդ բոլորը պահես առանց նախապաշարումի՝ աչառութեամբ ոչինչ չանելով: Ձեռքերդ շտապով որեւէ մէկի վրայ մի՛ դիր եւ ուրիշների մեղքերին մասնակից մի՛ եղիր, քեզ մաքո՛ւր պահիր» [Ա Տիմ. Ե 21–22]: Եւ թէ՝ «Նա պէտք է ունենայ բարի վկայութիւն նաեւ դրսեցիներից, որպէսզի չլինի թէ ընկնի նախատինքի տակ եւ սատանայի որոգայթների մէջ» [Ա Տիմ. Գ 7]:

Առաքեալի խօսքից պարզ է, որ կարգի կամ ձեռնադրութեան կատարումը տրուած է եպիսկոպոսներին: Ս. Գիրքը տգէտ քահանայացուների մասին վճռում է Աստուծոյ բերանով. «Քանի որ դու մերժեցիր գիտութիւնը, ես էլ քեզ կմերժեմ, որ քահանայութիւն չանես Ինձ համար» [Ովս. Դ 6]: Ահա այսպէս ե՛ւ Հին, ե՛ւ Նոր Կտակարանները զգուշացնում են բնաւ չձեռնադրել անարժաններին. ամենեւին չձեռնադրել «անպարկեշտ, հպարտ, անբարոյական, թշնամանող, բռնացող, կռուասէր, արծաթասէր, տգէտ» եւ այսպիսի այլ յատկանիշներով անձանց, այլ ձեռնադրել պարկեշտ, հեզ, խոնարհ, հիւրասէր, ուսուցանող, բարոյական, խաղաղասէր, անընչասէր, մարդասէր, չափահաս, խնամածու եւ Սուրբ Գրքին հմուտ կոչուածներին [Ա Տիմ. Գ 13], որոնց այդ առաքինի յատկութիւնների մասին արդարութեամբ վկայում է նաեւ ծխական ժողովուրդը:

Ս. Գիրքն Աստուծոյ բերանով հրամայում է այս զգուշաւորութիւնն ունենալ այն պատճառով, որ «քահանայի շուրթերը զգոյշ լինեն գիտութեան համար, մարդիկ պիտի օրէնքներ փնտրեն նրա բերանից, քանի որ նա է ամենակալ Տիրոջ պատգամաբերը» [Մաղ. Բ 7]: «Պատրա՛ստ եղէք պատասխան տալու ամէն մարդու, որ կհարցնի ձեր մէջ եղած յոյսի պատճառը» [Ա Պետ. Գ 15]:

Ս. Գիրքը հոգեւոր հովիւներին պատուիրում է հաւատարիմ սպասաւոր լինել Աստուծոյ պաշտօնի մէջ, հաւատարիմ լինել Աստուծոյ Եկեղեցու ծառայութեան մէջ. «Արածեցրէ՛ք Աստուծոյ այն հօտը, որ ձեզ է յանձնուած՝ վերակացու լինելով ոչ թէ հակառակ ձեր կամքի, այլ յօժարակամ, ըստ Աստծու, ոչ թէ շահախնդրութեամբ, այլ յօժարութեամբ, ոչ թէ տիրելով նրանց, այլ օրինակ լինելով հօտին» [Ա Պետ. Ե 1–4]:

Այս սրբարար խորհուրդն իր մէջ ունի հետեւեալ աստիճանները. Ա. դռնապանութիւն, Բ. դպրութիւն, Գ. երդմնեցուցչութիւն, Դ. ջահնկալութիւն, Ե. կիսասարկաւագութիւն, Զ. սարկաւագութիւն, Է. քահանայութիւն, Ը. վարդապետութիւն, Թ. եպիսկոպոսութիւն, Ժ. կաթողիկոսութիւն:

Եպիսկոպոսների, վարդապետների եւ քահանաների պարտականութիւնն է շարունակ քարոզել Աստուծոյ խօսքը ժողովրդին, քարո-

զել պարզ եւ ժողովրդին հասկանալի լեզուով, ժողովրդի միջից հեռացնել մոլութիւնները, անկարգութիւններն ու նախապաշարումները, առաջնորդել նրան դէպի աստուածային ճշմարտութիւններ. «Որովհետեւ եթէ աւետարանում եմ, այդ ինձ համար պարծանք չէ, քանզի պարտաւորութիւն է դրուած ինձ վրայ: Բայց վա՛յ է ինձ, եթէ չաւետարանեմ: Եթէ կամովին եմ անում այդ, վարձ կայ ինձ համար, իսկ եթէ ակամայ, պարտականութիւն է ինձ յանձնուած» [Ա Կոր. Թ 16–17]: Որովհետեւ Նա, Ով Իր երկնային Հօրից ստացել էր առաքելութեան եւ քահանայապետութեան պաշտօնը, գործով կատարեց Իր քարոզածը. «Ես եմ լաւ հովիւը. լաւ հովիւը իր կեանքն է տալիս ոչխարների համար: Իսկ վարձկանը, որ հովիւ չէ, եւ ոչխարներն էլ իրենը չեն, երբ տեսնում է, որ գայլը գալիս է, թողնում է ոչխարներին ու փախչում: Եւ գայլը յափշտակում է նրանց ու ցրում» [Յովհ. Ժ 11–12]: Ահա այսպէս իրենց բանաւոր հօտի համար իրենց անձն էին դնում առաքեալները, աշակերտները, շատ հայրապետներ, եպիսկոպոսներ, վարդապետներ եւ քահանաներ:

Է. ԿԱՐԳ ՀԻՒԱՆԴԱՑ

Եկեղեցու եօթերորդ սրբարար խորհուրդը կոչւում է Կարգ հիւանդաց: Առաքեալներն ու աշակերտները, որոնք Քրիստոսի կողմից ուղարկուել էին բժշկելու հիւանդներին եւ ցաւագարներին, իւղով օծում էին հիւանդներին ու բժշկում. «Եւ նրանք ելան եւ քարոզում էին, որ մարդիկ ապաշխարեն: Եւ բազում դեւեր էին հանում, բազում հիւանդների օծում էին իւղով ու նրանց բժշկում» [Մարկ. Զ 12–13]: Այս սովորութեանը հետեւելով է Յակոբոս առաքեալը գրել. «Հիւա՞նդ է ձեզանից մէկը, թող կանչի եկեղեցու երէցներին, եւ նրանք նրա վրայ թող աղօթք անեն, թող իւղով օծեն նրան Տիրոջ անունով: Եւ հաւատով եղած աղօթքը կփրկի հիւանդին, եւ Տէրը նրան ոտքի կկանգնեցնի: Եւ եթէ մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներուի» [Յակ. Ե 14–15]:

Յիսուս Քրիստոս այս խորհուրդը կատարել էր միայն հաւատք պահանջելով ցաւագարներից եւ հիւանդներից, կատարել էր միայն աղօթելով ու ձեռք դնելով [Մատթ. Ը 3–15, Թ 18, 25, Մարկ. Զ 5, Ը 25, Ղուկ. Դ 41 եւն]: Առա-

քեալներն ու աշակերտները, հետեւելով Յիսուս Քրիստոսի օրինակին, բժշկութիւն էին կատարում նաեւ առանց իւղի գործածութեան՝ հաւատով, աղօթքով եւ ձեռք դնելով [Գործ. Գ 7–8, Թ 40–41, ԻԸ 8]: Յիշեալ հատուածներում նկարագրուող գործողութիւններից յայտնապէս երեւում է, որ ոչ թէ իւղն էր տալիս բժշկութիւն հիւանդաց, այլ միաւորուած հաւատքը, աղօթքը, ձեռք դնելը եւ Յիսուս Քրիստոսի անուան զօրութիւնը. այս է վկայում նաեւ Սարգիս Շնորհալին. «Ոչ թէ իւղն էր հիւանդին առողջութիւն տալիս, այլ Տիրոջ անունը»:

Հայաստանեայց Եկեղեցին այս խորհուրդը նախապէս կատարել է օրհնուած իւղի գործածութեամբ: Սակայն յետագայ դարերում մեր Եկեղեցու հայրերը նպատակայարմար գտան օծման արարողութիւնն անջատել աղօթական մասից, միաւորել Դրոշմի խորհուրդին եւ այն դարձնել մէկ անգամ կատարուող խորհուրդ քրիստոնեայի կեանքում: Իսկ Հիւանդաց կարգը սկսեց կատարուել աղօթքով, Աւետարան կարդալով, ձեռք դնելով՝ առանց օծման: Քահանան նախ հիւանդի կողմից ջերմեռանդութեամբ կարդում է Զ Սաղմոսը. «Ողորմեա՛ ինձ, Տէ՛ր, զի հիւանդ եմ», «Տէ՛ր, մի՛ սրտմտութեամբ Քով յանդիմաներ զիս» եւ այլն, ապա կարդում մի բժշկութեան աւետարան, ապա՝ «Վասն հիւանդաց» եւ «Փարատեա», ինչպէս սահմանուած է «Մաշտոցի» մէջ:

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՔԵՌ ՊԱՀԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Ի Քրիստոս շինուած սուրբ Եկեղեցին հոգեւոր տապան է այս աշխարհի ծովի մէջ, որ մեր հոգին փրկում է մեղքի ջրերից»:

(Գր. Տաթեւացի, Գիրք Հարցմանց)

Եկեղեցի բառը երկու գլխաւոր իմաստներով է գործածւում: Առաջինը՝ աննիւթական եկեղեցին է կամ Քրիստոսի խորհրդական մարմինը, որի գլուխը Ինքը՝ Քրիստոս է, իսկ հաւատացեալներն այդ հոգեւոր շինութեան կենդանի քարերն են: Երկրորդը՝ նիւթական եկեղեցին է կամ տաճարը, որը կոչւում է Աստուծոյ տուն կամ աղօթքի տուն: Այս իմաստով եկեղեցին այն վայրն ու շինութիւնն է, ուր հոգեւորականներն ու հաւատացեալները հաւաքւում են աղօթքի, ծիսակատարութեան, խոստովանութեան, հաղորդութեան եւ այլ բարեպաշտական նպատակների համար: Հնուց ի վեր թէ՛ եկեղեցու կառուցման վայրը, թէ՛ ճարտարապետութիւնը տրուել են յայտնութեամբ: Եկեղեցիների շինութիւնը յատուկ արարողակարգով սրբագործուել է, որից յետոյ այդ կառոյցը ստացել է իր յատուկ անունը եւ դարձել սրբավայր:

Եթէ որեւէ աշխարհիկ հաստատութիւն ներկայանալիս այցելուներից պահանջւում է վարքագծի, հագնուածքի եւ այլ պահանջներ, ապա որքան առաւել եկեղեցի մտնողները պէտք է հետեւեն որոշակի կանոնների, որովհետեւ մտել են Տիրոջ սրբազան տաճար: Եկեղեցի մտնելիս պէտք է խաչակնքուել[1]: Ներսում պէտք է խոնարհուել եւ խաչակնքուել սուրբ սեղանի առջեւ՝ յիշելով, որ այնտեղ խորհրդաբար եւ էապէս ներկայ է Աստուած, եւ աղօթել: Եկեղեցի մտնողը պէտք է քաջ գիտակցի, որ

1 Խաչակնքուելը կարեւոր նշանակութիւն ունի քրիստոնեայի համար: Այն նախ ամենակարճ դաւանութիւնն է կամ հաւատքի խոստովանութիւնը, ինչպէս նաեւ՝ ամենակարճ աղօթքի տեսակը, որով արտայայտում ենք մեր հաւատքն Ամենասուրբ Երրորդութեան նկատմամբ եւ յիշում, որ մեր Տէրը խաչի վրայ պատարագուեց մեր փրկութեան համար: Խաչակնքուելը նաեւ պաշպանիչ զօրութիւն ունի. մենք խաչի նշանով կնքում ենք մեզ ընդդէմ չարի փորձութիւնների: Խաչակնքուելիս պէտք է յիշել նրա խորհուրդն ու իմաստը, որպէսզի այդ սրբազան գործողութիւնը չվերածուի ձեւական երեւոյթի եւ անհոգի սովորութեան:

ինքը եկել է կանգնելու Աստուծոյ առաջ, բացելու սիրտը եւ աղօթելու: Երբ կանգնած ես տիեզերքի Թագաւորի առջեւ, վայել չէ, որ միտքդ այս ու այն կողմ թափառեցնես եւ խորհես երկրորդական բաների մասին, այլ պէտք է հաւաքես խորհուրդներդ ու մտքերդ եւ ծայրագոյն ուշադրութեամբ աղօթես:

Մեր աւանդութեան համաձայն՝ եկեղեցում աղօթում են կանգնած կամ ծնրադրած[2]: Աղօթքը երբեմն ուղեկցւում է խոնարհումներով եւ երկրպագութիւններով: Ըստ ս. Գրիգոր Տաթեւացու՝ ծնրադրել նշանակում է մեր ամբողջ կեանքը եւ կամքը, այսինքն՝ մեր մարմինն ու հոգին Քրիստոսին ի հնազանդութիւն յանձնել: Երբ մարմինդ չարչարում ես աշխատութեամբ, այնժամ չար խորհուրդը փախչում է քեզնից, եւ արտասուքն ու ծունր իջնելը աղօթքը համարձակ ու հաճելի են դարձնում:

Հարկ է եկեղեցի մտնել պատշաճ, վայելուչ եւ մաքուր հագուստներով՝ տղամարդիկ՝ գլխաբաց, իսկ կանայք՝ գլխաշորով՝ ըստ Պօղոս առաքեալի հրամանի [Ա Կոր. ԺԱ 4]: Երբէք չմտնել եկեղեցի ոչ վայել՝ կարճ ու բաց հագուստներով. խստիւ արգելւում է մ՛այդպիսի հագուստով եկեղեցում երեւալ. մտնելուց առաջ հաշիւ տանք մեզ, որ Աստուծոյ ներկայութեան առջեւ ենք կանգնելու, որ ասում է. «Նայի՛ր քեզ, զգո՛յշ եղիր քո անձի համար. դուցէ սրտիդ մէջ ծածուկ անօրէն բան լինի» [Բ Օր. Դ 9, Ը 11, ԺԱ 16]:

Հոգեւորականի հանդիպելիս պէտք է յարգալիր գլուխ տալ՝ թեթեւակի խոնարհուելով, եւ դիմել իւրաքանչիւր կարգի համար ընդունուած ձեւով. վեհափառին՝ «Աստուած օգնական, վեհափա՛ռ տէր», արքեպիսկոպոսին եւ եպիսկոպոսին՝ «Աստուած օգնական, սրբազա՛ն հայր», վարդապետին եւ աբեղային՝ «Աստուած օգնական, հա՛յր սուրբ», քահանային՝ «Օրհնեցէ՛ք, տէ՛ր հայր»:

Եկեղեցում ծանօթների հանդիպելիս չի կարելի ձեռքով բարեւել, զրուցել եւ տեղից տեղ անցնել: Պէտք է եկեղեցի գնալ մինչեւ արարողութիւնների եւ յատկապէս՝ մինչեւ սուրբ Պատարագի սկսուելը, իսկ ուշանալու դէպքում

2 Վերջին շրջանում մեր եկեղեցում գործածութեան մէջ են դրուել աթոռներ եւ նստարաններ, սակայն առանց անհրաժեշտութեան ցանկալի չէ նստել եկեղեցում եւ մարմնական հանգստի տրուել:

մանել անաղմուկ եւ առանց ներկաներին խանգարելու տեղ գրաւել: Սուրբ Պատարագի եւ ժամերգութիւնների ընթացքում պէտք է աղօթակից լինել հոգեւոր դասին, սակայն ոչ բարձրաձայն՝ կողքիններին չխանգարելու համար: Իսկ երգեցողութեանը մասնակցելիս պէտք է մեղմ ձայնով եւ ոչ թէ աղմուկ-աղաղակով երգել. պէտք է նախապէս սերտել երգեցողութիւնը՝ մարդկանց ուշադրութիւնը սխալ երգեցողութեամբ չշեղելու եւ արարողութեան վեհութիւնը չխանգարելու համար: Եթէ վստահ չես, որ ճիշտ ես երգելու, աւելի լաւ է մտքով հետեւես երգեցողութեանը:

Սուրբ Հաղորդութեանը պէտք է մօտենալ «միայն զգուշութեամբ, միայն զղջմամբ, միայն մաքրութեամբ, միայն ապաշխարութեամբ, միայն երկիւղով, ամօթխածութեամբ եւ հոգեւոր պատկառանքով, միայն տքնութեամբ եւ արթնութեամբ, միայն ողորմածութեամբ եւ բարեգործութեամբ... Ոչ յուսահատութեամբ հրաժարուելն է բարի եւ ոչ յանդգնութեամբ խիզախելը, այլ ընտրողութեամբ վայելելը» (Եղիշէ):

Կիրակի օրը, տէրունական տօներին եւ Զատկից մինչեւ Հոգեգալստեան օրը արգելուում է ծունկի իջնել, այլ պէտք է կանգնած աղօթել. այդ արգելքը դրուել է Առաջին տիեզերական ժողովի 20-րդ կանոնով, այն կրկնում են նաեւ I–V դարերի Եկեղեցու Հայրերը (Բարսեղ Մեծ, Եպիփան Կիպրացի եւ այլք): Այդ օրերին աղօթքի ժամանակ կանգնած լինելը, ըստ սուրբ Բարսեղ Կեսարացու, նշանակում է մեր՝ Քրիստոսի հետ յարութիւն առնելը: Սա վկայուած է նաեւ մեր Եկեղեցու Հայրերի կողմից: Յովհան Մանդակունին ասում է. «Զատկից մինչեւ Հոգեգալուստ բոլոր օրերը որպէս կիրակի են, չի հրամայւում ծունր դնել, այլ ոտքի կանգնած եւ երկրպագութեամբ աղօթել» (Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ): Իսկ սուրբ Գրիգոր Տաթեւացին կիրակի օրը մեղքերից, առուվաճառքից, զուարճալիքներից, դաւերից, արբեցողութիւնից եւ անկողնու հեշտութիւններից հեռու մնալու մասին խօսելիս նշում է. «Կանոն է սահմանուել ծունկի չիջնել կիրակի օրը, որովհետեւ Քրիստոս յարութիւն առաւ մեռելներից եւ մեզ կանգնեցրեց» (Ամարան):

Իսկ երբ կիրակի կամ տէրունական օրերին սարկաւագը քարոզում է. «Աստուծոյ երկիրպագեսցուք» (երկրպագենք Աստծուն), ապա այդ օրերին պէտք է խոնարհուել եւ մատների ծայրով դիպչել գետնին եւ ոչ թէ ամբողջական երկրպագութիւն կատարել (Գրիգոր Տաթեւացի):

Երբ պատարագիչ հոգեւորականը բերում է ս. ընծան, պէտք է խոնարհել գլուխը եւ ընծան բերող հոգեւորականի հետ աղօթել, որ Աստուած յիշի մեզ Իր արքայութեան մէջ:

Երբ հոգեւորականը ներկաներին խաչակնքում է աջով (տեառնագրում), խաչով, Աւետարանով կամ սկիհով, որի մէջ մեր Տիրոջ Մարմինն ու Արիւնն է, պէտք է խոնարհուել եւ խաչակնքուել: Պէտք է խոնարհուել եւ խաչակնքուել նաեւ, երբ խնկարկում են քեզ: Մոմերը պէտք է վառել արարողութիւններից առաջ կամ յետոյ. յարիր չէ մոմեր վառել սուրբ Խորհուրդի կամ ժամերգութիւնների կատարման ընթացքում՝ եկեղեցում աւելորդ իրարանցում չառաջացնելու եւ արարողութեան ժամանակիցներին չխանգարելու համար:

Սուրբ Մնդեան տօնի Ճրագալոյցի Պատարագին եւ Մնդեան բոլոր օրերին, երբ հոգեւորականն աւետիս է տալիս՝ ասելով. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Զեզ եւ մեզ մե՛ծ աւետիս», բոլորը պէտք է խաչակնքուեն եւ ասեն. «Օրհնեա՛լ է Մնունդն եւ Յայտնութիւնն Քրիստոսի»: Իսկ Զատկի Ճրագալոյցին եւ Յարութեան բոլոր օրերին, երբ պատարագիչ հոգեւորականը խաչը ձեռքին խնկարկում է եւ ասում. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», պէտք է խաչակնքուել եւ ասել. «Օրհնեա՛լ է Յարութիւնն Քրիստոսի»: Այդ օրերին նաեւ բոլոր քրիստոնեաներն իրար հանդիպելիս պէտք է նոյն ողջոյնները յղեն միմեանց:

Հոգեւորականից օրհնութիւն ընդունելիս պէտք է համբուրել նրա աջը՝ ի յարգանս նրա օծման ու անձի:

Սուրբ Պատարագի աւարտից յետոյ, երբ մոտենում են Աւետարանը համբուրելու, պէտք է համբուրել նաեւ հոգեւորականի աջը՝ ասելով. «Մեղա՛յ Աստուծոյ: Ցիշեսցէ Տէր զամենայն պատարագս քո եւ զուխտս քո ընդունելի արասցէ»:

ԻՆՉՊԷՍ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ

Աղօթքի ժամեր. *Հայ Առաքելական Եկեղեցին ունի ընդհանրական աղօթքի ինը ժամեր՝ Գիշերային, Առաւօտեան, Արեւագալի, Ճաշու՝ երրորդ, վեցերորդ եւ իններորդ, Երեկոյեան, Խաղաղական եւ Հանգստեան, եւ իւրաքանչիւր ժամի համար հաստատուած է եկեղեցական պաշտամունքի արարողակարգ, որը կոչւում է ժամերգութիւն կամ ժամասացութիւն: Աստուածպաշտութեան այս ժամերը պատահաբար չեն հաստատուած, այլ իւրաքանչիւր ժամ ունի իր ուրոյն խորհուրդը եւ առնչուած է մեր փրկագործութեան տարբեր տնօրինութիւնների հետ: Այժմ որոշ ժամերգութիւններ կատարւում են միասնաբար, իսկ մի մասն էլ նախատեսուած են Մեծ պահքի շրջանի համար: Ցանկալի է, որ իւրաքանչիւր քրիստոնեայ հնարաւորութեան դէպքում մասնակցի եկեղեցական կամ հաւաքական աստուածպաշտութեանը: Բացի ընդհանրական աղօթքից իւրաքանչիւր քրիստոնեայ պէտք է ունենայ առանձնական աղօթքի ժամեր: Նկատի ունենալով մերօրեայ մարդու կենսակերպը, ինչպէս նաեւ աւելի ուշ շրջանի աղօթագրքերի դասակարգումները՝ այս Աղօթագրքում ներկայացուած են առանձնական աղօթքի չորս ժամեր՝ ա) առաւօտեան, բ) կէսօրուայ, գ) երեկոյեան, դ) հանգստեան:*

Քրիստոնեայի համար շատ կարեւոր է օրը սկսել աղօթքով, որպէսզի Աստուծոյ օրհնութիւնը, օգնականութիւնը եւ պահպանութիւնը նրա հետ լինեն օրուայ ընթացքում: Ինչպէս մարմնական մարզանքը ամբողջ օրուայ ընթացքում առոյգ եւ առողջ է պահում մարմինը, այնպէս էլ առաւօտեան աղօթքը արթուն եւ զուարթ է պահում հոգին: Շատ յաճախ առաւօտուայ ջերմեռանդ աղօթքն ամբողջ օրուայ ընթացքում պահպանում է հոգին զանազան դիւային ներգործութիւններից եւ փորձանքներից: Քնից արթնանալուն պէս պէտք է յիշել Տէր Աստծուն, բացել հոգին Նրա անչափ սիրոյ եւ ողորմութեան առջեւ, կատարեալ խոնարհութեամբ հնազանդուել Նրա ամենախնամ կամքին, որպէսզի Նա Ինքն առաջնորդի մեզ օրուայ ընթացքում:

Կէսօրին, երբ մարդ ընդմիջում է իր մարմնաւոր աշխատանքը՝ հանգստանալու եւ մարմ-

նաւոր կարիքները հոգալու համար, կարեւոր է, որ նախ թարմացնի եւ զօրացնի իր հոգին: Կէսօրին հոգին թուլացած է լինում աշխարհիկ հոգսերից եւ դիւային փորձութիւններից, եւ անհրաժեշտ է, որ մարդը դիմի Աստուծոյ օգնականութեանը, որպէսզի զերծ մնայ չարի որոգայթներից եւ պահպանի հոգու արթնութիւնն ու զգօնութիւնը:

Երեկոյեան, երբ մարդ հեռանում է աշխարհիկ գործերից, պէտք է նախ եւ առաջ խաղաղեցնի իր հոգին եւ ոչ թէ տրուի սոսկ մարմնաւոր հանգստի: Օրուայ ընթացքում մարդու հոգին լցւում է զանազան մեղսահակ տպաւորութիւններով եւ յիշողութիւններով, որոնցից պէտք է արագ թօթափուել աղօթքով: Երեկոյեան կարեւոր է նորոգել հոգեւոր գիտակցութիւնը եւ զերծ մնալ ոչ քրիստոնէավայել անհոգութիւնից, կեղծ հանգստից եւ հաճոյքներից, որովհետեւ չարը քնած չէ: Յատկապէս երբ մարդը թուլացած վիճակում է գտնւում, դիւրութեամբ որսւում է դեւերի կողմից: Հնարաւորին չափ պէտք է խուսափել հեռուստացոյցի առջեւ առանց կարեւոր պատճառի նստելուց եւ ժամանակ անցկացնելուց: Երեկոյեան

ցանկալի է հոգեւոր գրականութեան ընթերցանութիւնը:

Աղօթքը յատկապէս կարեւոր է քնելուց առաջ: Ինչ խորհուրդով մարդը ննջում է, նոյն խորհուրդով էլ արթնանում է: Պէտք է զղջալ օրուայ ընթացքում գործած մեղքերի համար, յատակեցնել խորհուրդները, նորոգել հաւատքը եւ փրկութեան յոյսով անկողին մտնել: Խաւարի ուժերը, որոնք մշտապէս պայքարում են մեր դէմ, յատկապէս փորձում են տկարացնել հոգեւոր գիտակցութիւնը գիշերային հանգստի ժամանակ: Սակայն երբ մարդ հոգեւոր խորհուրդով է ննջում, այնժամ ողջ գիշեր նա լինում է Տիրոջ ամենազօր պահպանութեան ներքոյ, եւ չարը չի կարող մերձենալ նրան:

Աղօթքների ընտրութիւնը. Տարբեր ժամերի համար նախատեսուած աղօթքներ կան ժամագրքում, որից եւ առանձնացուած են այս Աղօթագրքի աղօթքները՝ օրուայ տարբեր ժամերի համար: Սակայն իւրաքանչիւր մարդ կարող է յաւելել իր աղօթքները՝ ըստ իր ցանկութեան: «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, ըստ մեր Եկեղեցու աւանդութեան, սահմանուած է հանգստեան ժամի համար, սակայն ցանկալի է

այն ասել նաեւ աղօթքի միւս ժամերին, ինչպէս ցոյց են տալիս մեզ հասած տարբեր խրատներ: Բացի այս, սոյն Աղօթագրքում առաջադրուած են դաւանական, ապաշխարութեան, բարեխօսական եւ այլ բնոյթի աղօթքներ, որոնցով ցանկալի է հարստացնել մեր աղօթքները: Նախընտրելի են այն աղօթքները, որոնք առաւել հոգեհարազատ են տուեալ մարդուն. այսինքն իւրաքանչիւր ոք ունի սիրելի աղօթքներ, որոնք ջերմեռանդութեան եւ հոգեւոր նորոգութեան առիթ են ընձեռում Աստծուն դիմելիս: Առանձնական աղօթքի կարեւոր աղբիւր է նաեւ Սաղմոսագիրքը, որը բաժանուած է ութ կանոնի ըստ ութ ձայների (գիշերային հսկման համար): Օրուայ տարբեր ժամերի համար իւրաքանչիւր ոք կարող է առանձնացնել նաեւ սաղմոսներ՝ առաջնորդուելով հիմնականում ժամագրքով: Աղօթելիս կարելի է նաեւ դիմել հոգեւոր երգերի (շարականներ, տաղեր), եթէ դրանք նպաստում են աղօթքի պտղաբերութեանը եւ ջերմեռանդութեանը:

Իւրաքանչիւր մարդ պէտք է ունենայ աղօթքի իր որոշակի նուազագոյն կանոնը եւ այն անխափան կատարի ամէն օր, իսկ հնարաւորութեան դէպքում ընդարձակի այդ կանոնը այլ աղօթքներով, սաղմոսներով եւ հոգեւոր երգերով:

Աղօթքներն ընտրելիս պէտք է հեռու մնալ այսպէս կոչուած մոգական գիտակցութիւնից, երբ աղօթքներին վերագրում են որոշակի գերբնական յատկութիւններ եւ յոյսը դնում դրանց կրկնութեան վրայ: Անշուշտ աղօթքներն ունեն զօրութիւն, որովհետեւ Սուրբ Հոգով են տրուել մեր հայրերին՝ մեր փրկութեան համար: Սակայն պէտք է յիշել, որ աղօթքի զօրութիւնը կախուած է նախ եւ առաջ այն բանից, թէ ինչպէս ենք մենք աղօթում: Իւրաքանչիւր աղօթք, որ ասուում է հաւատքով, զօրաւոր է եւ նպաստում է մեր փրկութեանը, եւ հաւատքի զօրութիւնից է գալիս աղօթքի ուժը եւ մարդուն վերափոխելու կարողութիւնը: Ուրեմն ընտրենք այնպիսի աղօթքներ, որոնք աւելի խոնարհեցնում են մեզ, փշրում են մեր սիրտը եւ սիրով լցնում մեր հոգին, որպէսզի զօրանանք Տիրոջով, որ բնակւում է հեզ եւ խոնարհ սրտերի մէջ:

Աղօթքի տեւողութիւնը. Սուրբ Գիրքը եւ եկեղեցու հայրերի խրատներն ուսուցանում են

մեզ անընդհատ աղօթել: Քանի որ ոչ վանական կեանքում հնարաւոր չէ իրագործել այս հրահանգը, սահմանուած են աղօթքի ժամեր: Մարդը որքան երկար է մնում աղօթքի մէջ, այնքան աւելի կենդանի է լինում նրա հոգին Տիրոջ առաջ: Եթէ աղօթքը ջերմ է լինում, ապա այն շարունակւում է սրտի մէջ ամբողջ օրուայ ընթացքում՝ քայլելիս, գործելիս, մարդկանց հետ յարաբերուելիս եւ այլն, եւ այդպիսով մարդը սկսում է իրագործել անընդհատ աղօթելու հրամանը: Ուրեմն աղօթքի կանգնելիս պէտք չէ սոսկ ձեւականօրէն կատարել կանոնը, այլ ներքնապէս ջանալ ձեռք բերել Սուրբ Հոգու կենդանի շնորհը. այն ժամանակ մեր աղօթքը կլինի արգասաբեր եւ անընդհատ:

Աղօթքի տեղի ընտրութիւնը. Աղօթքի վայրը Եկեղեցին է, որը նաեւ կոչւում է աղօթքի տուն: Եկեղեցին յատուկ նուիրագործուած վայր է, որտեղ էապէս ներկայ է Աստուած. այդ պատճառով Եկեղեցում աղօթելը շատ օգտակար է մարդու համար: Երբ մարդ հնարաւորութիւն ունի գնալ եկեղեցի, թող գնայ եւ աղօթի այնտեղ, անկախ այն բանից՝ այդ պահին եկեղեցում որեւէ աստուածպաշտական կարգ

կատարւում է, թէ ոչ: Ցանկալի է նաեւ, որ հնարաւորութեան դէպքում իւրաքանչիւր մարդ իր տանն ունենայ աղօթքի անկիւն, որը կարելի է զարդարել օրհնուած խաչով կամ սրբապատկերներով եւ այլ նուիրագործուած իրերով: Այն ամէնը, ինչ նպաստում է մարդու ներքին ուշադրութեան եւ հոգեւոր ջերմութեան զօրացմանը, խրախուսելի եւ ցանկալի են, օրինակ՝ մոմ կամ կանթեղ վառելը, խունկ ծխելը եւ այլն:

Այնուամենայնիւ, պէտք է յիշել, որ աղօթել կարելի է ամէնուր: Ամէն տեղ կարելի է դիմել Աստծուն, եւ կարեւորը՝ երկիւղով, մաքրութեամբ եւ խորհուրդների յստակութեամբ աղօթելն է: Սուրբ սրտից բխող աղօթքն Աստծուն հաճելի անուշահոտութիւն է, ուր էլ որ լինի աղօթողը:

Սուրբ Գրքի ընթերցանութիւն. Սուրբ Գրքի ընթերցանութիւնը նոյնպէս աստուածպաշտութեան կարեւորագոյն տարրերից է: Մեր Եկեղեցին ամէն օրուայ համար ունի սահմանած սուրբգրային ընթերցուածներ, որոնց կարելի է հետեւել Տօնացոյցով: Ցանկալի է, որ իւրաքանչիւր քրիստոնեայ ծանօթ լինի այդ օրուայ համար նախատեսուած սուրբգրային

պատգամներին, օրուայ ընթացքում խորհրդածի դրանց շուրջ եւ ջանայ իրագործել դրանք իր կեանքում: Աղօթելիս կարելի է դիմել նաեւ Սուրբ Գրքի ընթերցանութեան՝ աղօթքներն ընդմիջելով, աղօթքից առաջ կամ յետոյ: Այն ամէնը, ինչ որ ասուած է աղօթելու համար, անհրաժեշտ է նաեւ Սուրբ Գրքի ընթերցանութեան համար, եւ միայն երկիւղով ու սրբութեամբ, սեփական անարժանութիւնը գիտակցելով պէտք է մօտենալ Տիրոջ կենդանի եւ կենդանարար խօսքի ընթերցանութեանը: Տանը պէտք է ունենալ օրհնուած Նոր Կտակարան կամ Աստուածաշունչ եւ պահել միշտ վայելուչ տեղում: Աստուծոյ խօսքն ընթերցելուց առաջ եւ յետոյ պէտք է համբուրել Սուրբ Գիրքը:

Խոկում. Աստուածպաշտութեան կարեւոր ոլորտներից է խոկումը, երբ մարդ ներքին ուշադրութեամբ խորհում եւ կենտրոնանում է մի հոգեւոր թեմայի շուրջ, օրինակ՝ սեփական մեղաւորութեան եւ անարժանութեան գիտակցման, առաքինութիւնների, աստուածային փրկարար տնօրինութիւնների (յատկապէս մեր Տէր Յիսուս Քրիստոսի կեանքի շուրջ), վախճանաբանական ապաստանների (ահեղ դատաստանի, յաւիտենական տանջանքների, փրկութեան եւ այլն): Խոկումը պահանջում է ներքին մեծ ուշադրութիւն, մտքի եւ խորհուրդների սթափութիւն, որպէսզի այն արդասաւոր լինի, եւ մեր հոգին տպաւորուի երկնային իրողութիւնների ու յաւիտենական կեանքի տպաւորութիւններով եւ թոթափուի մեղքի պատրանքներից: Կարելի է նախընտրութիւն տալ այն թեմաներին, որոնք արթնացնում են մեր մէջ հոգեւոր ապրումներ, այսինքն՝ ապաշխարութիւն, խոնարհութիւն, եղբայրասիրութիւն, անյիշաչարութիւն եւ այլն:

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I. [1] *Արդ, նախ, ամենից առաջ, հոգ տար խորհուրդների մաքրութեան համար, որի մասին ասում է մարգարէն. «Աստուած փառաւորուած է իր սուրբերի խորհուրդներում» [Սաղմ. ՁԸ 8]:* [2] *Ինչպէս որ ծառան սպասում է իր տիրոջ հրամանին, այնպէս [էլ] բոլոր զգայարանները կառավարւում են խորհուրդների միջոցով, քանզի բարին նախ խորհում են եւ ապա գործում, ինչպէս դարձեալ ասում է մարգարէն. «Ցղացաւ ցաւեր եւ ծնեց անօրէնութիւն» [Սաղմ. Է 15]:* [3] *Եւ նախ խորհուրդներով են սիրում եւ ապա տալիս պարգեւներ, ինչպէս որ նախ Յովնաթանի հոգին կապուեց Դաւթին, եւ ապա հանելով իր հանդերձները՝ հագցրեց նրան:* [4] *Եւ նախ խորհուրդներով են ատում եւ ապա սպանում, ինչպէս որ Յովսէփի եղբայրները նախ ատեցին Յովսէփին եւ ապա [նրան] վաճառեցին Եգիպտոս:* [5] *Արդ, յայտնի է, որ բոլոր զգայարանները գործում են խորհուրդների միջոցով. ուստի դու ողջ զօրութեամբդ ջանա՛ եւ խորհուրդներդ մաքրի՛ր բոլոր աներեւոյթ շնչական ախտերից:* [6] *Եւ առաւել զգուշացի՛ր պոռնկական խորհուրդներից, որի մասին էլ ասում է Տէրը. «Շնացաւ իր սրտում» [Մատթ. Ե 28]:* [7] *Եւ զգո՛յշ եղիր տեսնելիս ու լսելիս, քանզի տեսնելն ու լսելը խորհուրդների դուռն են:* [8] *Այս մասին է ասում առաքեալը. «Ոչ մի պղծութիւն ու պոռնկութիւն թող չլսուի ձեր մէջ, ինչպէս վայել է սուրբերին» [Եփես. Ե 3]:* [9] *Ինչպէս որ երբ մէկը քաղցած է, եւ քաղցը մոռացութեան է տրուել, բայց երբ առատ սեղան է տեսնում, այնժամ քաղցը բորբոքւում է եւ ստիպում ուտել, եւ դարձեալ՝ երբ մարդը ծարաւ է, եւ ծարաւը մոռացութեան է տրուել, բայց երբ յստակ աղբիւր է տեսնում, այնժամ ծարաւը բորբոքւում է եւ ստիպում խմել, այնպէս էլ մարդու մօտ՝ ցանկութիւնը, որ լռելով դադարում է, բայց երբ [մարդ] գեղեցիկ դէմք է տեսնում եւ կամ պոռնկական երգեր լսում, այնժամ ցանկութիւնը բորբոքւում է եւ ստիպում մեղանչել:* [10] *Ուստի դու արգելի՛ր տեսանելիքդ ու լսելիքդ, որպէսզի խորհուրդների պատերազմ չբարձրանայ քո դէմ:* [11] *Արդ, ինչպէս որ արծիւը թռչում է եւ թա-*

կարդի մէջ կերակուր տեսնում, զօրութեամբ
իշնում է կերակուրը ճանկելու, եւ մագիլի ծայ-
րը մնում է թակարդում, եւ այդ փոքրիկ մասի
պատճառով նրա ողջ զօրութիւնը թուլանում
է, այնպէս էլ պատահում է մարդու հետ, որ
բռնւում է մի չնչին նայուածքով: [12] Եւ դար-
ձեալ՝ եթէ կամենում ես պոռնկական խոր-
հուրդները յաղթել, հրաժարուի՛ր աւելորդ կե-
րակուրներից ու ըմպելիքներից: [13] Այս մասին
է ասում Երեմիա մարգարէն. «Քեզ յաղեցրի,
Իսրայէ՛լ, իսկ դու բոլոր քաղաքներում
պոռնկանոցներ շինեցիր» [Երեմ. Ե 7]:

II. [1] Աղտեղի խորհուրդների պատճառ է լի-
նում այն, որ չարախօսում ես եղբօրից, բամ-
բասում, ատում կամ հպարտանում. այնժամ
Քրիստոս Աստուած խորհուրդներին թոյլ է
տալիս վրայ հասնել ու խաւարեցնել միտքդ:
[2] Իսկ երբ լինում ես հեզ, խոնարհ, ողորմած,
մարդասէր, խաղաղաբար, այնժամ հալածում
է խռովարար խորհուրդները, եւ միտքդ լուսա-
ւորւում է: [3] Աղտեղի խորհուրդների պատճառ
է նաեւ այն, որ ծուլանում ես աղօթքից եւ աշ-
խատասիրութիւնից, քեզ տալիս քնի ու
հանգստեան. այնժամ սատանան խորհուրդնե-
րի որոմը սերմանում է սրտիդ մէջ ու միտքդ
խաւարեցնում: [4] Իսկ երբ լինում ես արթուն,
սթափ, աղօթող եւ խոհեմ, այնժամ գարշելի
խորհուրդները հալածւում են, եւ միտքդ լու-
սաւորւում է: [5] Աղտեղի խորհուրդների պատ-
ճառ է եւ այն, որ առաւել զբաղւում են երկրա-
ւոր հոգսերով. այնժամ այլ խորհուրդների հետ
խառնուած նաեւ պոռնկական խորհուրդներ են
մտնում եւ խաւարեցնում միտքդ: [6] Իսկ երբ
քեզ զսպում ես մարմնաւոր խորհուրդներից,
այնժամ յարատեւում ես հոգեւորի մէջ, եւ
միտքդ լուսաւորւում է: [7] Երբ խորհուրդները
գալիս են, դու զարհուրի՛ր, մարտնչի՛ր, խոստ-
ովանի՛ր եւ ապաշխարի՛ր, որ [նրանց] չընտ-
ելանաս ու սովորես, այլ յաղթես: [8] Այս մա-
սին է ասում առաքեալը. «Քակտում ենք խոր-
հուրդներն ու խորհուրդների ամէն բարձրու-
թիւն, ամէն միտք գերում ենք ի հնազանդու-
թիւն Քրիստոսի» [Բ Կոր. Ժ 5]:

III. [1] Արդ, ինչպէս որ դողն իբրեւ զէնք ու-
նենալով՝ գալիս է գողանալու, այն-
ժամ երբ լոյս են բերում, լոյսից զարհուրում
ու հալածւում է, այնպէս էլ սատանան գող է
եւ թուլացնում է [քեզ], երբ միտքդ խաւարած

է տեսնում, այնժամ դու Քրիստոսի լոյսը ծագեցրո՛ւ մտքիդ մէջ, եւ սատանան կհալածուի, եւ միտքդ կլուսաւորուի, ինչպէս որ Քրիստոս ասաց. «Ես եմ աշխարհի լոյսը» [Յովհ. Ը 12]: [2] Եւ մի փոքր ժամանակ իսկ մի՛ թող, որ պոռնկական խորհուրդները յապաղեն քեզ մօտ, յիշի՛ր տէրունական ահարկու խօսքերը, որ ասաց, թէ՝ «Շնացաւ իր սրտում» [Մատթ. Ե 28]: [3] Եւ ինչպէս որ մինչեւ թշնամիների գալը նախ քաղաքը պարսպում են, այնպէս էլ դու նախ պահքով, աղօթքով ու արտասուքով պարսպի՛ր միտքդ. Ասուած ջանքդ կտեսնի եւ միտքդ կլուսաւորի:

IV. [1] Փոքր մի՛ համարիր խորհուրդների յանցանքները, քանզի հպարտութիւնը, նախանձն ու ատելութիւնը խորհուրդներով են լինում եւ մեծամեծ մեղքեր են: [2] Ինչպէս որ քանի դեռ թշնամին ամրոցից հեռու է, դիւրաւ կարելի է զգուշանալ նրանից, իսկ երբ յարձակուելով գրաւի ամրոցը եւ ներս մտնի, այնժամ դժուար է այնտեղից նրան հանել, այդպէս եւ դու, քանի դեռ խորհուրդների պատերազմը մտքիդ ամրոցից հեռու է, զգուշացի՛ր նրանից, իսկ երբ յարձակուելով գրաւի ամրոցդ եւ ներս մտնի, այնժամ առաւել նեղութիւն կպատճառի քեզ: [3] Ուստի դու զօրացի՛ր ու խորհուրդները միշտ աստուածահաճո՛յ պահիր, որպէսզի Սուրբ Հոգու տաճար դառնաս, քանզի Նրան վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս. ամէն:

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

ԽՐԱՏ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

I. [1] Արդ, ինչպէս ասում է առաքեալը. «Ամենայն խոնարհութեամբ միմեանց պէտք է աւելի լաւ համարել, քան ինքներդ ձեզ» [Փիլ. Բ 3]: [2] Արդ, «ամենայն» ասելով՝ յայտնում է, որ խոնարհութեան մասերը շատ են. կան ոմանք, որ խոնարհութիւնից քիչ մաս ունեն, ոմանք՝ շատ, եւ միւսները՝ ամբողջը:

II. [1] Արդ, նախ եւ առաջ՝ խոնարհութիւն է՝ որ [մարդ] ինքն իրեն անարժան է համարում բոլոր մարդկանցից, ինչպէս մաքսաւորը, որ չէր կամենում աչքերը երկինք բարձրացնել, որի համար Տիրոջից դրուատուեց: [2] Խոնարհութիւն է եւ հնազանդութիւնը, որ [մարդ] ինքն իրեն ծառայի կարգին է դասում եւ ծառայում ընկերոջը, ինչպէս ասում է առաքեալը. «Քրիստոսի երկիւղով միմեանց հնազա՛նդ եղէք» [Եփես. Ե 21]: [3] Խոնարհութիւն է սուգն ու արտասուքը, որ [մարդ] ինքն իրեն վարձկան չի համարում, թէպէտ առաքինութիւն է գործում, որի մասին Տէրն ասում է. «Երբ կատարէք առաքինութեան բոլոր գործերը, ասացէ՛ք, թէ՝ «Անպիտան ծառաներ ենք. ինչ որ պարտաւոր էինք անել, այն արեցինք» [Ղուկ. ԺԷ 10]: [4] Խոնարհութիւն է՝ որ [մարդ] համբերում է եղբօրը բարկութեան ժամին եւ իրեն է յանցաւոր համարում, քանզի զայրանալը եւ ընդդիմանալը հպարտութիւն է, ինչպէս ասում է Սողոմոնը. «Ամբարտաւան մարդը նախատինքների չի համբերում» [Հմմտ. Առակ. ԺԴ 7]: [5] Խոնարհութիւն է լռութիւնը՝ որ [մարդ] իրեն արժանի չի համարում առաջ գալ եւ բազմութեան առջեւ խօսել, ինչպէս ասում է Տէրը. «Ով իր անձից է խօսում, իր անձի փառքն է որոնում» [Յովհ. Է 18]: [6] Խոնարհութիւն է՝ երբ մեծարում են ընկերոջդ եւ քեզ անտեսում, դու չես արտօնում, այլ այսպէս ես ասում, թէ՝ «Սրան էլ արժանի չեմ, ինչ ունեմ», ինչպէս ասում է Սողոմոնը. «Մեծամեծներին մի՛ ձգտիր, այլ չափի մէ՛ջ պահիր քո անձը եւ Տիրոջ առջեւ շնորհներ կգտնես» [Տե՛ս Առակ. ԺԶ 3]: [7] Խոնարհութիւն է՝ որ ընկերոջը ծառայ չի պահում, այլ ինքն է նրան ծառայում, ինչպէս ասում է Տէրը. «Մարդու Որդին չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու» [Մատթ. Ի 28,

Մարկ. Ժ 45]: 8 Խոնարհութիւն է՝ երբ տեսնում
ես որեւէ մէկի յանցանքը եւ չես բամբասում
եւ ոչ էլ դատում նրան, այլ այսպէս ասում, թէ՝
«Ես յանցաւոր եմ, ուրիշ մեկին չեմ կարող դա-
տել», որի մասին Տէրն ասում է. «Մի՛ դատէք,
որպէսզի չդատուէք» [Մատթ. է 1]: 9 Խոնար-
հութիւն է եւ եղբօրը սիրելը, քանզի սիրոյ պա-
տուիրանները հետեւեալն են՝ խոնարհ լինել
ընկերոջ առջեւ, հիւանդութեան դէպքում ցա-
ւակից լինել, տրտմութեան ժամանակ մխիթա-
րել, [սեփական] անձը ծառայութեան տալ:
10 Իսկ հպարտն այսպէս չի անում եւ արժանի
չի համարում եղբօր առջեւ խոնարհուելու, այլ
իրեն բոլորից վեր է համարում: 11 Այս մասին
գրուած է, թէ՝ «Խոնարհութիւնը որպէս աղ հա-
մեմիչ է ողջ առաքինութեան, եւ ուր սէր եւ
խոնարհութիւն չկայ, առաքինութիւնը նեխած
է եւ անարգ»: 12 Խոնարհութիւն է՝ որ ինչ առա-
քինութիւն էլ գործում ես, չես խորհում [այդ
մասին] եւ հպարտանում, ինչպէս փարիսեցին,
այլ խորհում ես մեղանչածներիդ մասին եւ խո-
նարհեցնում միտքդ, ինչպէս առաքեալն էր
իրեն յանցաւոր համարում եւ ասում. «Հայհոյիչ էի եւ հալածիչ եւ ոտնձգութիւն գործ»[Ա

Տիմ. Ա 13]. 13 եւ դարձեալ, թէ՝ «Մոռացել եմ
յետեւում մնացած առաքինութիւնները եւ
ձգտում եմ դէպի առջեւումս եղածները» [Փիլիպ.
Գ 13]: 14 Խոնարհութիւն է՝ երբ մարդիկ քեզ
փառաբանում են եւ պարգեւներ տալիս, [սա-
կայն] դու քո անձի արժանիքներին չես վերա-
գրում, այլ Աստծուն ես փառաբանում, Աստ-
ծուց գոհանում եւ ասում, թէ՝ այն Քո ողորմութիւնից է եւ ոչ ըստ իմ արժանիքների, ինչպէս ասում է Սողոմոնը. «Որչափ մեծութեան էլ հասնես, քեզ խոնարհ պահիր եւ շնորհ եւ ողորմութիւն կգտնես Աստծու առջեւ» [Առակ. ԺԶ 3]: 15 Խոնարհութիւն է՝ երբ վշտի ես հանդիպում, եւ նեղութիւն է քեզ վրայ հասնում, դու չես տրտմում, այլ գոհանում Աստծուց. «Ըստ իմ մեղքերի ես ոչ միայն այսչափ, այլեւ բազում պատիժների եմ արժանի, եւ օրհնեալ է Աստուած, որ այս անցաւոր կեանքում եւ մահկանացու մարմնի մէջ ինձ վշտի արժանացրեց», ինչպէս ասում է առաքեալը. «Ցօժար եմ նեղութիւնների, վշտերի, չարչարանքների, որովհետեւ երբ տկարանում եմ, այդժամ զօրանում եմ» [Բ Կոր. ԺԲ 13]: 16 Խոնարհութիւն է անշուք հանգերձը, որ [մարդ] թանկարժէքն

ու փառաւորը չի հաղնում, որովհետեւ մարդիկ փառքը հանդերձից են որսում. այս մասին գրուած է. «Մի՛ ցոփացէք մեղկ եւ ամբողջովին պճնուած զգեստներով, որոնց գեղեցկութիւնն ապաշնորհ է» [Գրիգոր Աստուածաբան, Ճառ Մնդեան. տե՛ս կակուղ, ՆԲՀԼ, հ. Ա, էջ1036]: 17 Խոնարհութիւն է՝ երբ օրը խաղաղութեամբ է անցնում, հասնում ես երեկոյին [եւ] գոհանում Աստծուց, թէ՝ «Մարդկանցից եւ սուրբերից շատերն իսկ անհանգիստ եւ կարօտ են, իսկ ինձ, որ անարժան եմ, հաց եւ կերակուր տուեցիր եւ օրս խաղաղութեամբ անցկացրեցիր, այդ Քո ողորմութիւնից է եւ ոչ ըստ իմ արժանիքների», որի մասին մարգարէն ասում էր. «Ո՞վ եմ ես, Տէ՛ր իմ, Տէ՛ր, եւ իմ ազգականի տունն ի՞նչ է, որ այդչափ սիրեցիր ինձ» [Բ Թագ. է 18]: 18 Խոնարհութիւն է՝ երբ կամենում ես առաքինութիւններ գործել, սկսելու եւ աւարտելու համար քեզ բաւարար չես համարում, այլ Աստծուց ես առաքինութիւն եւ օգնականութիւն խնդրում, թէ՝ «Օգնի՛ր իմ տկարութեանը, որ կարողանամ կատարել Քո կամքը», ինչպէս եւ Տէրն է ասում. «Ով հաստատուած է Իմ մէջ, եւ Ես՝ նրա մէջ, նա շատ

պտուղ է տալիս, որովհետեւ առանց Ինձ ոչինչ անել չէք կարող» [Յովհ. ԺԵ 5]: 19 Խոնարհութիւն է, երբ սիրտդ զայրանում է, դու արգելում ես ցասումը եւ քեզ արժանի չես համարում ընդդիմանալ եղբօրը, ինչպէս ասում է Սողոմոնը. «Խոնարհամիտը միայն ողջիչ խօսքերով է աղաչում, իսկ հպարտը յանդուգն պատասխան է տալիս» [Առակ. ԺԸ 23]: 20 Խոնարհութիւն է՝ երբ սիրում ես ոչ միայն նրանց, որ փառաւորուած են մարդկանցից, այլ խոնարհւում ես աղքատների առջեւ եւ մխիթարում պանդուխտներին, ինչպէս Տէրն էր անում: 21 Պիղատոսը խօսում էր, եւ Նա պատասխան չէր տալիս, իսկ աւազակի հետ զթութեամբ խօսում եւ պարգեւներ էր տալիս. երբ կոյրերը աղաղակում էին, կանգ առաւ եւ դիպչելով նրանց աչքերին՝ բացեց: 22 Խոնարհութիւն է՝ որ միշտ քո կամքով չես գործում, այլ վարդապետներից եւ առաջնորդներից խրատ ես վերցնում, ինչպէս Մովսէսը, որ չանտեսեց Յոթորի խրատները, այլ ընդունեց եւ բոլորը կատարեց: 23 Խոնարհութիւն է՝ որ [մարդ] բոլոր դրժելի իրերից զարհուրում, զգուշանում եւ չի հպարտանում՝ ասելով. «Ո՞վ ինձ կյազ-

թիւ», որի մասին Սողոմոնն ասում է. «Սպառնալիքները փշրում են իմաստունների սրտերը, իսկ հպարտն, ինքն իրեն ապաւինելով, որոգայթի մէջ է ընկնում» [Հմմտ. Առակ. ԺԷ 10]: 24 Խոնարհութիւն է՝ երբ առաքինութիւն ես կատարում, չես խորհում, թէ՝ «Իմ անձով եւ զօրութեամբ կատարեցի, այլ՝ Աստծու օգնականութեամբ», ինչպէս ասում է առաքեալը. «Ո՛չ ես, այլ Աստծու շնորհը, որ իմ մէջ է» [Հմմտ. Ա Կոր. ԺԵ 10]: 25 Խոնարհութիւն է՝ որ առաջ չես ձգտում եւ ունեցածիցդ աւելի բարձր աստիճան չես վերցնում, այլ առաջնորդների կողմից կանչուելով ես ընդունում, ինչպէս ասում է առաքեալը. «Ոչ թէ նա է ընտրեալ, ով ինքն իրեն է գովում, այլ ում Աստուած է գովում» [Բ Կոր. Ժ 18]:

III. 1 Արդ, ողջ առաքինութեան հիմքը խոնարհութիւնն է, եւ բոլոր սուրբերը խոնարհութեամբ են հաճոյ եղել Աստծուն: 2 Ինչպէս Աբրահամն էր խոնարհւում եւ ասում. «Ես հող եմ ու մոխիր» [Ծն. ԺԸ 27], դրա համար նահապետների գլուխ եղաւ: 3 Այսպէս եւ Դաւիթն էր ասում. «Ես որդ եմ եւ ոչ մարդ, նախատինք եմ մարդկանց համար» [Սաղմ. ԻԱ 7], դրա համար Աստծուց մարգարէութեան շնորհ ստացաւ եւ կանչուեց ժողովրդին թագաւորելու: 4 Այսպէս եւ Եսային էր ասում. «Վա՜յ ինձ, որովհետեւ պիղծ շուրթեր ունեմ» [Ես. Զ 5], դրա համար աստուածաբան կոչուեց մարգարէների մէջ: 5 Այսպէս եւ Կարապետն էր ասում. «Արժանի չեմ արձակելու Նրա կօշիկների կապերը» [Յովհ. Ա 27, Մարկ. Ա 7], դրա համար արժանի եղաւ Քրիստոսին մկրտելու: 6 Այսպէս եւ Պետրոսն էր ասում. «Հեռո՛ւ գնա ինձանից, Տէ՛ր, որովհետեւ մեղաւոր մարդ եմ ես» [Ղուկ. Ե 8], դրա համար երկնքի [արքայութեան] բանալիները ստացաւ եւ Եկեղեցու հիմք եղաւ: 7 Այսպէս եւ Պօղոսն էր ասում. «Արժանի չեմ առաքեալ կոչուելու» [Ա Կոր. ԺԵ 9], դրա համար երկինք թռաւ եւ դրախտը տեսաւ:

IV. 1 Արդ, քանզի խոնարհութիւնն է ողջ առաքինութեան գլուխը, ուստի մարգարէն ասում է. «Աստուած չի արհամարհում խոնարհ հոգին եւ սուրբ սիրտը» [Սաղմ. Ծ 19]: 2 Եւ Եսային ասում է. «Ես որտե՞ղ բնակուեմ, եթէ ոչ հեզերի, խոնարհների մէջ» [Ես. ԿԶ 2]: 3 Եւ նոյն ինքը՝ Տէրն ասում էր. «Ով խոնարհեցնում է [իր] անձը, կբարձրանայ» [Ղուկ. ԺԴ 11]:

4 Եւ Պօղոսն ասում է. «Ամենայն խոնարհութեամբ միմեանց պէտք է աւելի լաւ համարել, քան ինքներդ ձեզ» [Փլպ. Բ 3]: 5 Եւ վարդապետներից անթիւ վկայութիւններ կան խոնարհութեան մասին, քանզի ոչ ոք Աստծուն այնպէս սիրելի չէ, ինչպէս նա, ով խոնարհ է եւ իրեն յետին է համարում յանուն Քրիստոսի, որովհետեւ Նրան վայել է փառք եւ իշխանութիւն այժմ եւ յաւիտեանս. ամէն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՄԷՆՕՐԵԱՑ ԱՂՕԹՔՆԵՐ 7
Առաւօտեան ժամ 8
Տէրունական աղօթք 8
Մաղթանք 8
Օրհնութիւն Երից մանկանց 8
Սաղմոս ՃԺԸ 10
Աղօթք Ա 12
Աղօթք Բ 14
Աղօթք Գ 14
Աղօթք Դ 16
Աղօթք Ե 16
Ճաշու ժամ (միջօրէ) 18
Մաղթանք 18
Սաղմոս Ծ 18
Աղօթք Ա 22
Աղօթք Բ 24
Աղօթք Գ 24
Աղօթք Դ 26
Աղօթք Ե 26
Երեկոյեան ժամ 28
Մաղթանք 28
Սաղմոս Դ 28
Աղօթք Ա 32
Աղօթք Բ 34

Հանգստեան ժամ (յառաջ քան զննջելն) 34
Մաղթանք 34
Սաղմոս ԻԲ 36
Սաղմոս ԻՋ 38
Աղօթք Ա 42
Աղօթք Բ 44
Աղօթք Գ 44
Աղօթք Դ 46
Աղօթք Ե 46
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
Բան ԺԲ. Մաղթանք զօրաւորք
արիաւրաց գիշերայնոց 48
Բան ԽԱ. Աղօթք զօրաւոր 52
Բան ՂԴ. Մաղթանք ի դիւաց պահպանութեան 54
Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Աղօթք իւրաքանչիւր անձին
հաւատացելոց ի Քրիստոս 58
Օրինութիւն սեղանոյ 76
Գոհութիւն զկնի ճաշու 78
ԴԱՒԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ 81
ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Աղօթք 82
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
Բան ԽԴ 86
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ
Աղօթք առ Որդին Միածին 92
Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ
Մաղթանք առ Սուրբ Հոգին Աստուած 96

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ 99
Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ
Աղօթք ապաշխարութեան 100
ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
Աղօթք 110
Աղօթք Մանասէի թագաւորի 120
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ
Աղօթք զկնի «Տէր ամենակալին» 126
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
Բան ԻԷ 132
ԲԱՐԵԽՕՍԱԿԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ 145
Աղօթք առ սրբուհի Աստուածածինն 146
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ
Աղօթք 146
Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Ճգնաւորք Աստուծոյ 150
ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ
Աղօթք առ սուրբ Խաչն աստուածընկալ 154
Աղօթք սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյ
առ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ 156
Աղօթք առ երկնային զօրսն 158
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
Բան Զ. Աղերս առ Տիրամայր ս. Աստուածածինն 160
Բան ՁԱ 168
Բան ՁԲ 174
ՏԱՐԲԵՐ ԱՂՕԹՔՆԵՐ 191
Աղօթք, յորժամ յորոգայթ անկանի ոք՝ ասացեալ
սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին 192

Աղօթք վասն կապանաց դիւաց եւ կախարդաց
եւ վասն աղանդաւորաց 196
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
Բան ԻԸ. Աղօթք ընդդիմամարտ դիւաց եւ
դիւասարսուռ ջերմնատագնապ
ախտաւորութեանց Աստուծով փարատիչ 198
Բան ԽԲ 202
Բան ԽԳ 206
Բան ՁԹ 210
Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Առաւօտ Լուսոյ 210
Աղօթք, յորժամ ի գործ ինչ ձեռն արկցես 218
Աղօթք երանելոյն Յովհաննու Գառնեցւոյ
վասն ճանապարհի 218
Աղօթք առ դրան սուրբ եկեղեցւոյ սրբոյն
Յովհաննու Ոսկեբերանի 220
Աղօթք վասն հասարակ ննջեցելոց եւ մանաւանդ՝
վասն ընտանեաց եւ երախտաւորաց 220
Աղօթք վասն թշնամեաց եւ չարակամաց 222
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ
Աղօթք առ Հայր 226
Աղօթք առ Սուրբ Երրորդութիւնն 226
ՀԱՒԱՏԱՄՔ 231
ՋՂՋՈՒՄՆ 237
ՅԱՒԵԼՈՒԱԾ 245
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉՆ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ 247
ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԸ ԵՒ
ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՆ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ 251

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ 251
Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՑ ՀԱՅՐԱՊԵՏ 253
Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ 259
Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ 261
Ս. ՄԱԿԱՐ ՄԵԾ 263
Ս. ՍԵՐԱՊԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ 266
Ս. ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑԻ 267
Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ 268
Ս. ԵՂՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ 271
Ս. ՆԵՂՈՍ ՍԻՆԱՅԵՑԻ 272
Ս. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ 281
ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ 282
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՂԵՄԱՔՈՍ 289
ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ 292
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ 295
ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ 297
ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ 298
Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ 298
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ 299
ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ 300
ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՈՐՑԻ 303
Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ 306
ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ 315
ՊՕՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ 319
Ս. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ
«Հայր մեր» աղօթքի մասին 326
ԻՆՉՊԷՍ ԱՂՕԹԵԼ 342

ԱՂՕԹՔԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԵՒ ՊՏՈՒՂՆԵՐ 357
ԱՂՕԹԱԿԱՆ ՆԵՐԱՐՈՒԵՍՏ 361
ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ 369
ԻՆԸ ԵՐԱՆԻՆԵՐ 402
ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱՐԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ՄԱՍԻՆ 427
ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՋԵՋ ՊԱՀԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ 468
ԻՆՉՊԷՍ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼ
ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ 476
ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ
Խորհուրդների մասին 486
Խրատ խոնարհութեան մասին 492

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի փառս Ամենասուրբ Երրորդութեան՝
Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու,

լոյս տեսաւ այս աղօթագիրքը
փրկչական 2000 թ. յուլիսի 8-ին,
մեր սուրբ հայր Գրիգոր Լուսաւորչի
Նշխարների գիւտի մեծ տօնին,

բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի,
սուրբ Յովհաննէս Մկրտչի,
սուրբ Ստեփանոս Նախավկայի,
սուրբ Գրիգոր Լուսաւորչի
եւ բոլոր սուրբերի:

Ո՛վ աղօթարար, երբ այս գիրքը քո ձեռքը
վերցնես եւ աղօթես առ Աստուած,
յիշի՛ր քո աղօթքներում այս գիրքը
պատրաստողներին եւ նրանց
ննջեցեալների հոգիները:

Պատվեր 55
Տպաքանակ 5000
70×108/64

«Հակոբ Մեղապարտ տպագրատուն» ԲԲԸ